# ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
# ՎԻՐԱԼԻ ՍԻՐԱՔԱՅ

891.99
Մ 75

ԳՐԵՑ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

1885 ՄԱՅԻՍ 20

ՅԵԴԵՍԻԱ

25

MASSIS BOOK STORE
187½ EAST 27th ST.
NEW YORK, U.S.A.
M. MAMASIAN



LIBRAIRIE ACHEMIAN

Զմիւռնիա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1886

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

**Ուղեւորութիւն Հէրամ Մէրոյ**: Սիրաքայ սոյն ուղեւորութիւնը հաւաքածու մի է հինեւնոր կատակաբաններէն , ողջամիտ իմաստասիրական գրուածներէն, ընտիր վէպերէ եւ սրամտութիւններէ , սրտաշարժ եւ ախորժելի բանաստեղծութիւններէ եւ դիցաբանութիւններէ : Որքան որ ուղեւորաց անունները կեղծ են. այնքան ալ պատմութիւնը անկեղծ եւ հրահանգիչ է ։ Սոյն աշխատութիւն ամփոփեալ ունի իւր մէջ վճռական խօսքեր, ընտիր խրատներ , թշուառաց մրմունջներ , հալածեալ եւ հարուածեալներու ըրածները , եւ նոցա գթութեան արժանի դառն վիճակները, մոլիներու եւ առաքինիներու գործերը եւ նոցա նկարագրութիւնները, նոցա կեանք եւ կենցաղավարութիւնները , մարդկութեան նախնական երջանիկ եւ անմեղ կեանք, նոցա վերջի անկումը եւ կրած տառապանք ու թշուառութիւնները , եւ յուսահատ կեանք , ամուսնութիւն եւ իւր զեղծումները , տնտեսագիտական դասերը , եւ կառավարելու ձեւերը , ազգաց եւ ժողովրդոց միմեանց հետ ունեցած առնչութիւն, նոցա վարք բարք բնաւորութիւնն, բնութեան եւ երկնային էակաց տեսարանի նկարագրութիւն . մարդկանց աշխատութեան ձեւը եւ եղանակը , նոցա ուսմունք եւ գիտութիւն, արհեստ եւ մշակութիւն , ագէտներու ողորմելի կեանք եւ թշուառ վիճակը , ծովու տեսարանք եւ նորա ալեկոծութիւն ու խաղաղութիւն : Մարդկանց Աստուծոյ հետ ունեցած առնչական սիրոյ կապը , նորա չնորհք եւ ողորմութիւն , հանճար եւ իմաստութիւն , խղճի դատողութիւն , նախախնամական տնօրէնութիւն , նորա զօրութիւն եւ արարչագործութիւն :

Այս ուղեւորութիւն մը պարզ հայելի է, անոր նայողը թէ իր խակական պատկերը կը տեսնէ եւ թէ կարող կը լինի իւր մարմնոյ եւ հոգւոյ վրայ տեսնուած արատաւոր բիծերը սրբել եւ մաքրել ։ Գործոյս շարժառիթն է, բնութեան տեսարանի գեղեցիկ նկարագրութիւն, մարդկանց գործերը, Աստուծոյ սքանչելագործութիւնները ի հանդէս ածել, բանասիրաց սրտի եւ մտաց առաքինութիւնները դրուատելով եւ ախորժելի եւ հաճելի ցոյց տալով։ Իսկ նպատակն է մարդկային ընկերութեան բարոյական ուժին զարգացման տալ՝ մոլութիւնները հարուածելով եւ զզուելի ցոյց տալով։ Կարելի եղածին չափ հոգ տարուած է հետաքրքրական եւ սրտաշարժ ու միանգամայն ախորժելի ընել. անոր համար երբեմն բանաստեղծական կտորներու մէջ ճշմարտութենէն զարտուղիլ հարկ եղած է, սակայն ճշմարտանմանէն լինելէ ալ դադրած չէ, որ վիպասանի մը համար ներելի է ։ Նաեւ խնամք տարուած է լեզուն եւ ձեւը քաղցր եւ ախորժելի ընելու ։ Այս աշխատութիւն ոչ մեր նիւթական շահուն համար է եւ ոչ բանաստեղծ հեղինակի մը փառաց ձգտելու. անձնչմամբ է . այլ պարզապէս պարտք մի է զոր կատարելով կը յանձնեմ ամէն հայ բանասէրներուն ։

**ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ**
**ՄԽԻԹԱՐԵԱՆ**

# ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՎԻՐԱՅԻ ՍԻՐԱՔԱՑ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

[illegible]

Անորոշ ժամանակի մը մէջ գիս յանկարծակի փառազարդ պարտիզի մը մէջ գտայ, ուր անթիւ և անհամար զանազան քաղցրահամ պտուղներով բեռնաւորեալ բարձրաբերձ ծառեր կային, որոց ոստերու վրայ սոխակներու թռչտիլը և զմայլելի երգելը հոն գտնուող հոգիներուն զմայլումն կուտային ։ Հոն յորդահոս և սրընթաց գետերը, հանդարտաքայլ առուակները կարկաչահոս վտակներ հոսելով՝ սոյն յարազուարճ վայրը կ՚ոռոգէին ։ Հոն հեզասիւք գարնանային զեփիւռները այն պղպջահոս աղբիւրներու հետ լծորդուած սահելով կերթային և կենսական ու հրճուողական զօրութիւններ կը սփռէին այն գեղածիծաղ վայրերուն վրայ, դալարիները և գոյնզգոյն մանիշակագոյն կանաչագեղ անմահութիւն բուրող ծաղիկները հոն գտնուող նոր սրտերուն նոր բերկրութիւն զուարթութիւն և երջանկութիւն կը մատակարարէին, և իրենց զմայլեցուցիչ և միանգամայն թմրեցուցիչ զօրութեամբ քնոյ քաղցր հանգստութեան կը հրաւիրէին առհասարակ հոն գտնուողները ։

Սոյն անուշահոտութիւն բուրող դարաստանի մէջ մշտադուարթ և յարափթիթ դալարիներու վրայէն սահող անցնող գարնան զովացուցիչ հովերը կերթային կը խառնուէին անհամար թռչնոց քաղցր երգերու հետ, և կըկազմէին այն զմայլելի տեսարանը, որ սրտերու մէջէն կըքաշէր կըհանէր և կըհալածէր ամէն տխրութիւնները։

Հոն մուտք չունէր ամառնային հրատապ ջերմութիւն, արեւու կիզումը, հիւանդութեան ախտը և ոչ ալ ձմեռնային ցրտութեան սաստկութիւնը կընար իր ազդեցութիւն հոն հասցունել։ Ամպ, փայլակ և որոտումն ձիւն, և անձրև ու հեղեղները անծանօթ էին հոն. միշտ գարուն էր պայծառ և զուարթ. մեղք և յանցանք անծանօթ էին, անմեղութիւն և անարատութիւն էր այն տեղի կեանք և կենցաղավարութիւն. հոն չկար ոչ արիւնահեղ պատերազմ, ոչ նախանձ, ոչ թունաւորիչ օձ, ոչ մեղանչական սէրս, ոչ ընդունայն բաղձանք, ոչ երկիւղ։

Գիշերը իր քօղ կարող չէր հոն տարածել, զի միշտ պայծառ լոյս էր։ Մահը անծանօթ էր այն տեղի համար, հոն ամէն բան անմեղութեան, սրբութեան մէջ էր, երկնային լուսոյ ճառագայթներով զարդարեալ երջանիկ կեանք մը կըտիրէր հոն։

Այն տեղը դասուողները անմեղութեան սիրուն զգեստներով զարդարուած, երկնային շնորհական լոյսէն նորանոր բերկրութիւններ կ'առանային։ Փափաք և կարօտութիւն չկար հոն։ Անփոփոխելի երջանկութիւնը հոգիները և սրտերը կը փառազարդէր։ Հոն մարդկանց հասակ անայլայլելի կըպահուէր, աստուածապարգև փառք անմեղ երեսներու վրայ տպաւորուելով, առաքինութեան վսեմ ճաշակը սրտերը ցնծութեամբ կը լեցունէր և նոցա զգացմանց զմայլումն կուտար։ Հոն խորհրդոց միութիւն, ձայնի միութիւն, կամաց միութիւն, սրտի միութիւն, հոգիներու ներդաշնակութիւն կը փայլէր։ Կեանքի հոն իմաստութիւն կ'առաջնորդէր և արդարութիւն կը թագաւորէր անմեղ կենաց վրայ։

Այս ամէն փառաց և ուրախութեանց մէջ երջանիկ էինք ես և իմ ընկերներս։ Օր մը, քնոյ թմրութիւն զիս անզգայ վիճակի մէջ դրած միջոցին, չեմ գիտեր թէ ո՞ր աներևոյթ զօրութիւն զիս այն փառազարդ վայրէն վերածած և բարձր լե-

ուան մը գլուխ ապառաժի մը վրայ դրած էր ։ Երբ քունէս արթնցայ, այն փառաւորդ պարտիզի մէջ գտնուող չնաշխարհիկ այր և կինը, ինձ պէս արտաքսուած և կերպարանափոխ եղած, տեսայ պատառատուն զգեստներով, և զանազան ախորժակներ արթնցած կըտեսնուէր անոնց վրայ․ ինչպէս են, քաղց, ծարաւ, զանազան պէտք և պիտոյք, մտատանջութիւն, սրտայուզութիւն, յուսահատ վիճակ ։ Վերջապէս անմխիթար էին նոքա, իրենց կորսնցուցած անմեղութեան և երջանկութեան վրայ կ'ողբային ։ Նոցա այս յուսահատ վիճակի մէջ մառախլապատ ամպ մը լեռը կըծածկէր։ Ուրկէ ծագում առաւ ահաւոր որոտում, ահացուցիչ կայծակը, կիզանողական հուր, ժահահոտ ծծումբ․ որք լեռները և ձորերը կը թնդացունէին և հեղեղի նման անձրևներ և հեղեղներ ծառերը արմատախիլ ընելով և ամէն բան իրենց հոսանաց հետ գլորելով դէպ ի ծովը կըտանէին անհետացընելու ։ Այն աղմկալի վիճակի մէջ, ես գիս մերթ կորստեան մատնուած լինել կը հաւատայի, մերթ փրկութեան և ազատութեան երազներով կը դառանցէի ։ Այն ահաւոր ամպի մէջէն առ մարդիկ ձայն մը ուղղեալ կ'ըսէր ։ Գթութեան և ողորմութեան ապերախտ և անարժան մարդիկ, ձեր հպարտութեան մեղաց ի պատիժ մահ պիտի տիրէ ձեզ ։ Դո՛ւք ձեր ունեցածով գոհ չեղաք և երկնային փառաց նախանձեցաք․ այն նախանձը կորսնցուց ձեր փառք պատիւ, կենդանեաց վրայ ունեցած իշխանութիւն, անմեղութիւն, շնորհք և երջանկութիւն, յարազուարճ բերկրութիւն, երկնային մխիթարութիւն, անաշխատ կեանք, անկարօտ վիճակ և անմահութիւն․ պիտի մեռնիք և հողի դառնայք դուք և ձեր սերունդ ։ Ձեր հաց քրտամբ և աշխատութեամբ պիտի ուտէք, ցաւօք և հեծութեամբ լի պիտի լինի ձեր կեանք, տրտմութեան որդիներ պիտի ծնանիք վասնզի անօրէնութեամբ յղացայք ։ Այն խօսքերէն վերջ անձրև և որոտումներ մեղմանալով կը հեռանային․ արեգակնային լոյսը և ջերմութիւն թէ գիս և թէ զանոնք կը կազդուրէր ։ Այս վայրկեանէն սկսեալ կերպարանափոխ աշխարհ մը և նոր կեանք մը երևան եկաւ ։ Մարդիկ սկսան իրենց աշխատութեամբ և քրտամբ առնուլ նախախնամութենէն իրենց հոգեպահիկ սնունդ ։ Այսպէս ալ ծնանելը աստուածային ներ-

գործական հրամանէն բնութեան մէջ հաստատուած օրէնքներով սկսաւ մարդկութեան շղթան հիւսել, ինչպէս որ բնութեան հեղինակը սահմանադրած էր ։ Դէպքերը ուսուցիչ եղան մարդկանց աշխատութեան ։ Եղն պատրաստ էր լուծի տակ գլուխ խոնարհեցունելու, ինչպէս որ տնօրինած էր Նախախնամութիւն ։ Մարդն սկսաւ վարել, ցանել, հնձել, շտեմարանել և վայելել ։ Այն կոյս երկիր խիստ առատօրէն կը պարգևէր իւր արգաւանդ ծոցէն այն ամէն բարիքները, որք կը սերմանուէին աշխատասէր ձեռքերէն ։

Օրմը, սալարթախիտ անտառի մը մէջ քաշուած, փոքր առուակի մը գլուխ նստած, մարդկանց առաջին և վերջին վիճակը մտքիս առարկայ ըրած կը խորհէի ։ Եւ ահա խոժոռ հայեցուածք ունեցող, գժգոյն դէմք կրող ուրուական մը . . . մերձենալով խորխոտ կերպով մը ինձ կըդիտէր . Հետաքրքրութեամբ հարցուցի իրեն թէ, դուք ո՞վ էք ։ Պատասխանելով ըսաւ. զիս պիտի ծածկէի ձեզմէ, եթէ դուք օտարական մէկը չլինէիք. զձեզ չճանաչելով հանդերձ՝ գիտեմ՝ իմ գաղտնիքս ուրիշին չէք յայտնէր, ուստի կը յայտնեմ ձեզ թէ ես նախանձն եմ, որ երբև օդային շունչ սողալով հրեշտակաց սիրտ մտայ և անոնք Աստուծոյ փառաց դէմ գրգռելով գահավէժ ընել տուի ։ Կնոջ սիրտ հրապուրելով՝ զայն փոխանակ փառաց, անարգութեան և թշուառութեան անդունդները գլորեցի ։ Հոս, սիրտս խռովեցաւ և զայրացայ այս պատմութեան վրայ, ու կուզէի վրէժխնդիր լինել, բայց չհամարձակեցայ ։ Վասնզի զնա ինձմէ զօրաւոր կըտեսնէի ։ Ցաւելցուց ըսել, ահա պիտի երթամ երրորդ պաշտօնս կատարել։ Ո՞րն է երրորդ պաշտօնդ, հարցմանս պատասխանեց ։ Այս անտառէն դուրս երկու եղբայրներ կան, որոց մին հովիւ միւսն երկրագործ է, պիտի երթամ մէկի սրտին մէջ նախանձու հունտ սերմանել, որպէսզի իւր եղբօր վրայ նախանձ շարժի և զայն սպաննէ ։ Այս խօսքը վերջացունելէն յետոյ, ըսաւ, ահա որսս կուգայ, և իրաւցնէ մարդ մը այլանդակ դէմքով և յամր քայլերով առաջ կուգար։ Ահա այս է, ըսաւ, զոր կը տեսնես։ Պատասխանեցի. ուրեմն զինք կրնամ զգուշացնել որ քու թակարդիդ մէջ չմտնէ. արդէն մտած է ։ Ես այնպիսի մի առաձգական զօրութիւն ունիմ որ

իմ Թոյնս աշխարհի մէկ ծայրէն միւսը կը ներգործէ , ըսելով աներևոյթ եղաւ : Այն յամր քայլերով եկող մարդն ալ նորա ետևէն վազելով գնաց : Ըսի ես ինձ , ով անիծեալ նախանձ , Աստուծոյ դէմ կըկռուի , հրեշտակայ գունդը յանգունդս կը գլորէ , մարդիկ անմահական կեանքէն կը զրկէ , և զանոնք իրենց փառքերէն կը մերկացունէ , Թշուառ կեանքի մը կ'ենթարկէ , եղբայր եղբօր դէմ յարուցանելով մահ կը մածանէ աշխարհի մէջ: Հարուած մը որ բնաւ բժշկութիւն չունի :

Թախծեալ սրտիւ անտառէն դուրս ելլելով գնացի գեղջկական խրճիթի մը առաջ հասայ , ուր աղբիւրի մը գլուխ համեստ կոյս մը նստած , ձեռքերը իրարու կցած , հեղեղի պէս արտասուքները կըհոսէր , որք կերթային Թափուած անմեղ արեան հետ կը խառնուէին . անմեղ արիւնը անմեղ արտասուք գիրար գրկախառնեալ դաշտերը կըներկէին. Անկէ կըբղխէր բողոքոյ ձայն մը յերկինս բարձրացեալ. Վրէժխնդրութիւն և արդար հատուցում : Տեսայ հոն ոճրագործ եղբայրասպան , որու աչքերը արիւնով լեցուած երեսը այլայլեալ ներքին յուզմունքներէն խռովեալ և յուսահատեալ իր գործած չարութեան վրայ զղջացած , իր կենաց հետ կը մարտնչէր խռովեալ սրտիւ : Մահ իրեն օգնութեան կը կանչէր , ըսելով. անմեղ արիւնը Թափեցի , եղբայրասպան եղայ , երկրագունդի վրայ չար յիշատակ ձգեցի երկինք , կարճէ յուսահատ կեանքս , տո՛ւր գործածս ոճրագործութեան փոխարէն մարդասպանի պատիժը : Աս խօսքերը արտասանած ժամանակ լեզուն կը կապկապէր , մարմինը կըդողդոջէր , սիրտը ալէկոծեալ ծովերու պէս կը յուզուէր և տագնապներու մէջ կը ծփար :

Այն մարմինը որ տակաւին արեան ճապաղի մէջ կըկայտռէր , յոյս կուտար այն սուգերով լեցուած կոյսին Թէ կը բժշկուի և կ'ողջանայ. Այնպէս պէտք էր հաւատալ , զի տակաւին առաջին արիւնը , առաջին սպանումը , և առաջին մահն էր , որ կըտեսնուէր : Տրտմութեան վիշտը , որ փոխադրական է , զիս ալ հոգւով չափ վիրաւորեց , աչքս չէր արտասուէր , սակայն սիրտս կարեվէր խոցուեցաւ :

Կըսէր քոյր մեռելոյն , կցկտուր և հեկեկան ձայնիւ , մեռա՛ւ եղբայրս , մեռա՛ւ անմեղն , այլ ես կենդանութիւն չունենուիր

նորա վրայ ․ Ո՞հ ահա կը դողէ իր աչքերը և կերթայ դէպ ի յաւիտենականութիւն ։

Ա՜հ ․ անիծեալ հարուած ․ այն կեանք՝ զոր դու չ՛տուիր, ինչ պէս համարձակեցար զայն բառնալ ․ Երկինք ․ քեզ կը յանձնեմ իմ անմեղ եղբօրս վրէժխնդրութիւն ․

Այն պահուն, ես որ բնութենէն սորված էի գործերէն հետեւցունելով սիրտ կարդալ ․ գրուած տեսայ սպանողի սրտին վրայ ։ «Այս է նախանձուէն շարժեալ եղբայրասպան, և մահուան առաջին հեղինակը. ասոր ձեռքով մահ մտաւ աշխարհ և ասոր ձեռքով հաստատուեցաւ դժոխք» ։ Սպանեալի թաւամեալ դէմքի վրայ գրուած կըտեսնուէր «Անմեղ զոհ էր Ն---ի-նչ---» Փախիր, ըսին ինձ, փախիր, զի նախանձու մահը երկիրն ապականեց. մեռաւ անմեղութիւն, կենդանացաւ չարութիւն. հեռացիր այս անհանդուրժելի տխուր տեսարանէն ։ Հեռանալով այն վայրերէն ելայ բարձրադիտակ լեռան մը գլուխ, ուրկէ դիւրութեամբ կըդիտէի երկրագունդի վրայ և կըտեսնէի ամէն կատարուած գործերը. կըտեսնէի մարդիկ, որք թէև տրտում տխուր իրենց կորսնցուցած փառաց և շնորհաց համար՝ սակայն դարձեալ իւրաքանչիւր անձն այլևայլ մասնաւոր աշխատութեամբ իւր ապրուստ կըհայթայթեր, ոմն երկիր մշակելով, ոմն հովուական կենօք, ոմանք որսորդութեամբ, ոմանք պարզ և ամենապիտանի արհեստներով կապրէին, պէտքէն աւելի չէին փնտուէր, և խիստ պարզ կենօք կապրէին. մարդիկ այս վիճակին հետզհետէ ընտելանալով իրենց առաջին վիճակը մոռացան ։ Բայց ես միշտ կըցաւակցէի նոցա վրայ ․ երբ անոնց առաջին և վերջին կեանք իրարու հետ կըհամեմատէի ․ Խիստ շատ կը ցաւէի նոցա կրած տառապանաց վրայ, և կ՛ըսէի ես ինձ թէ ․ Այս կեանք անտանելի է, բայց կրկին երջանիկ են մարդիկ, որ կարողացած են մոռացութեան ձիրքը բնութենէն յափշտակել ․ Քնոյ թմրեցուցիչ օշարակը ժամանակ մը գիս այս լեռան գլուխ անզգայ վիճակի մէջ պահելէն յետոյ, յանկարծ սթափեցայ այն պահուն երբ արշալոյս առաւօտեան դռները կը բանար և արեւու ճառագայթներու նախանձող աստղները նորա լոյսէն հալածուելով կերթային իրենց աղօտ լոյս ծածկելու ․

Պայծառ կերպով կըտեսնէի որ մարդիկ ծաղիկներու պէս ա-

ռաւօտեան պահուն կը փթթէին և կը բացուէին երեկոյեան ժամուն կը թարշամէին և չորանալով դէպ ի յաւիտենականութիւն կերթային ։ Ժամանակը զանոնք իր հոսանաց մաղիլներու մէջ առած հոլովելով կը տանէր և չկար ձեռք մը որ անոր մաղիլներու զօրութեան դէմ դար և մարդկանց կեանք նորա մաղիլներէն ազատէր ։

Մանուկներու դեռափթիթ գեղեցիկ հասակը , գեղածիծաղ շնորհք , և սիրուն զուարճութիւն , անզգալի կերպով կը փոխուէին ։ Նոցա առողջութիւն և գեղեցկութիւն ու զուարճութիւն ստուերակերպ երազներու պէս կուգային կը սահէին կերթային և իրենց տխուր յիշատակ միայն կը թողուին իրենց մնացորդներուն ։

Դէպք և պատահար , յաջողութիւն և ձախորդութիւն , ժամանակի փոփոխութեան հետ մարդկանց վիճակ ևս կը փոփոխէին և զանոնք անիւի պէս կը հոլովէին , աղքատը կը հարստացունէին , հարուստը կաղքատցունէին , զօրաւորը տկարութեան կենթարկէին , տկարն կը զօրացունէին , մինն իմաստուն , միւսն տկարամիտ , մինն զօրաւոր , միւսն անզօր , մինն առողջ , միւսն հիւանդ աներևոյթ ձեռք մը , մէկէն կառնուր միւսին կուտար , և շատ անգամ բարիքները արժանաւորէն առնելով անարժանին կուտար․ չարիքները և պատիժները արդարներէն անպակաս էին իսկ յանցաւորները բարեաց մէջ կը թափառէին , Խիստ շատ խուզարկեցի իմանալու համար թէ , ո՞վ է մարդկանց վիճակը փոխելու պաշտօն ունեցող մատակարարը . բայց չկարողացայ վերահասու լինիլ ․ զի Աստուծոյ անիմանալի գաղտնիքներու մէջը պահուած էր այն աներևոյթ ձեռք ։

Բայց ասկէ , երիտասարդական զուարճութեանց ոխերիմ թշնամի անգութ ծերութիւնը կուգար մարդկանց երեսը կը խորշոմեցունէր , մարմինը կը տկարացունէր նոցա սրտի մէջ գտնուող ուրախութեան աղբիւրները կը ցամաքեցունէր , նոցա կեանք զանազան ցաւերու ենթարկելով զայն տաղտկալի և յուսահատական կընէր ։

Այն ամէն մարդիկ , որք կը ծնանէին և աշխարհ կուգային , նոքա երևոյթի մը պէս կերևնային , և դէպ ի յաւիտենականութիւն իրենց գլուխ կը խոնարհեցունէին ։ Գնացողներու զաւակ-

ները իրենց հարց կը յաջորդէին ․ Մահը վերնախնամ տեսչութեան մէկ վճիռն էր, և մեր գլուխ խոնարհելը հարկ մի էր։ Սակայն անխմանալի գաղտնիք մը սիրտս կը յուզէր թէ, ինչու մահուան մանգաղը անհաւասար կը հնձէր մարդկանց կեանք․ մերթ ծերերը, մերթ երիտասարդները, մերթ աղայք մերթ մանուկները կը մեռնէին․ Այս գաղտնիք Աստուածային խորհրդոց մէջ ծածկուած իրողութիւններէն մէկը լինելով, միայն կարօղացայ վերահաստ լինիլ թէ՝ ողջախոհ կեանք և անարատ վարք ունեցողները, այսպէս և կերակուրներու մէջ չչափազանցողները և կանոնաւոր աշխատողները երկայնակեաց կը լինէին․

Բնութիւնն անխմանալի զօրութեամբ մը մարդկութեան կեանք շղթայի պէս կը հիւսէր, մահն ալ, կուան ի ձեռին, շարունակ պտոյտ և շրջան ընելով իր դէմն ելլողները անխտիր կերպով կը հալածէր և կը մահացունէր։ Անոնք որ փախուստ կուտային, առ առաւելն մինչև հարիւր տարի կրնային իրենք զիրենք թագուն պահել մահուան հարուածէն․ Մահուան անհաւասար հարուածը ուղղութեան սահմանին տարադէպ երևցաւ ինձ, բայց ով կարող է երկնային սահմանադրութեան խորերուն թափանցել և այս անհասանելի գաղտնեաց հասու լինել։ Մինչ ես մտախոհութեամբ մարդկանց վիճակի վրայ ցաւակցելով թախծներու մէջ էի, ահա հովերու քաղցր հնչումներու հետ թեթև ամպի մը վրայ նստած հինօրեայ ծերունի մը, որ վեհ և պատկառելի դէմք մը կը կրէր՝ ինձ մօտեցաւ, որու սիրտ խիստ ազնիւ և կրթուած ու առաքինութեանց մէջ զօրացած կը տեսնուէր․ Նորա միտք իմաստութեան և ուղղութեան լուսով զարդարուած էր, նա բնութեամբ բարի էր և անկեղծ, անմեղութեան նշանները կը տեսնուէր նորա վեհ և փայլուն երեսներու վրայ․ Նա պերճ և իմաստուն հանդարտ և զօրաւոր կերպով մը սկսաւ ինձ հետ խօսիլ, նա մարդկային բուռն զօրութեամբ միտքս ուշադրութիւնս և սիրտս յինքն կը գրաւէր։ Նորա վեհ և ծանր շարժումները մահկանացուներուն վրայ տեսնուածէն խիստ տարբեր էին։ Ըսաւ նա․ Աստուած արդար է և արդարութիւն կը սիրէ, դուք կը վշտանայք մարդկանց կրած տառապանաց վրայ․ և իրաւունք ունիք, սակայն գիտէ՞ք նոցա անհաւատարմութիւն և ապերախտութիւն․ Նոքա Աստուծոյ պատուէրն արհամարհե-

ցին . Նորա ձրի պարգևած շնորհաց դէմ ապերախտ գտնուեցան և երախտամոռ եղան . և պահ մը իրենց արարած լինելը մոռնալով արարչապետի անկապտելի աթոռոյն թեկնածու եղան ։ Տէ՛ս մարդկանց տեղ և խառնագնաց կեանք, որով անբարկանալին Աստուած ի բարկութիւն կըշարժէին ։ Նոյն միջոցին օդը հանդարտ էր և զուարթ , բնութիւնը իւր սքանչելի տեսարաններով լեռները և դաշտերը կըզարդարէր . բայց մարդիկ աշխատութենէ ձեռնթափ եղած իւրաքանչիւր ոք իւր հաճոյք կըփնտռէր այն զարդարեալ դաշտերու երեսը սփռուած ։ Այն դաշտավայր , ախորժելի և անախորժ տեսարան մը կընծայէր , ախորժելի էր, ինչ որ բնութեան կըվերաբերէր . անախորժ էր . ինչ որ մարդկանց տղայամտութեանը կըվերաբերէր ։

Այն լայնածաւալ դաշտի երես շրջան կը կատարէին անխոհեմութիւն, իւր թերի և անկատար գործերով . խորամանկութիւն , իւր խորամածուկ մեքենաներով , վէհերոտ իւր կաղ ոտքով . յանդուգն, իւր աւերիչ և կործանիչ ձեռներով , թմրեալն իւր մեռելատիպ կերպարանաւ . անբարեխառնութիւն, իւր խառնաշփոթ գործերով . ագահութիւն իւր անյագ ցանկութեամբ ։

Համեստութեան թշնամի և ցանկութեան բարեկամ, շռայլութիւն, ամէն բան իւր հեղեղներու հետ տանելով անյատակ խորերու մէջ կըթաղէր ։ Մեծ դեր կըկատարէր հոն հպարտութիւն և փառամոլութիւն , որք մարդիկ հրապուրելով լեռներու գագաթները կըհանէին , և անկէ զանոնք գահավէժ ընելով անդունդներու մէջ կըգլորէին և իրենք հաճոյք կըզգային ։ Բարկութիւն , զմարդիկ իրենց բնական դիրքէն հանելով, զանոնք անասնոց և կենդանեաց շարքի մէջ կըդասէր ։ Հոն կըտեսնուէին կեղծողները և ճառասողները իրենց խաբերայ գործերով . շողոքորդները և մարդահաճները պաշտօն ունէին մաքուր խիղճերու վրայ քող քաշել , որպէսզի արդարութիւն և ճշմարտութիւն չ'տեսնուի , և իրենք այն մթութեանց մէջէն իրենց նըպատ շահերը կ'ակնկալէին ։ Ծուլութիւն ևս մարդիկ կանդամալուծէր և զանոնք անգործութեան կըդատապարտէր . սիրտ միտք և կեանք կրծող նախանձը ամենամեծ աւերումներ կըգործէր ։ Հոն կըտեսնուէին սիրտ թունաւորող չարութիւնները , արիւնարբու վրէժխնդրութիւնները , սուտ զրպարտութիւնները ,

անիրաւ մատնութիւն և ատելութիւնները , յուսահատ անձնասպանութիւնները , ոխակալութիւն , և անգթութիւնները , նենգ խարդաւանող ապերախտները , չարասիրտ և չարախօսները , ցանկասէր և հեշտասէրները , վերջապէս ամէն մոլութիւնները և զեղխութիւնները հոն անպատկառ կերպով կըգործուէին ։

Այս խառնաշփոթ կեանք տեսնելով՝ ըսի , «բնութիւն անիրաւած է առ մարդկութիւն , այս հնարքները անոնց տալով» ։ Ինձ կըպատասխանէր ծերունին թէ բնութեան հեղինակ Արարիչը մարդկանց բանական հոգւոյ հետ զանազան շնորհքներ ևս տուաւ բարի խորհելու , բարի գործելու համար , ինչոր պէտք էր՝ այն տուած է և անխաբ դատաւոր խիղճ մը ևս նոցա սրտի մէջ հաստատած է , որ անոր ձայն լսեն և նորա խորհրդով գործեն ։

Իսկ մարդիկ իրենց կամաց բացարձակ ազատութեամբ խղճի ձայն իրենց կրից տակը քողարկելով բանականութեան խորհըրդոյն և խղճի ձայնին չհետևեցան , այլ անզուսպ բաղձանաց և կոյր կամաց հետևողութեամբ իրենց նախկին անմեղ վիճակէն ելլելով այս վտանգաւոր վիճակի մէջ գրին իրենք զիրենք ։ Բնութիւն մարդկանց սեռի տեսակը միայուն պահելու համար , (ըստ հրամանի հեղինակին) հեշտական սէր տուաւ ։ Մարդկանց հիւանդութեան կամ ծերութեան մէջ հանգիստ ապրելու համար ինչք և ստացուածք ունենալու փափագ տուաւ . --յն -էր և ------ներ , մարդիկ չ՚կարողացան չափաւորութեան մէջ պահել , հետևաբար չափազանցելով գնաց այս աղէտալի հետևանաց հասաւ զորս կըտեսնէք ։ Այս ամէն զեղծումները այդ երկու արմատներու շառաւիղներն են , որ առաջ բերին նախանձ , բռնութիւն , յայտնի յափշտակութիւն , գաղտնի գողութիւն , զրկանք ևայլն ևայլն ևայլն ։

Մարդիկներէն անոնք՝ որք կարողացան իրենք զիրենք բանականութեան ուղիղ սահմանի մէջ պահել , և խղճի ձայնին լսելով չափազանցութեան չ՚դիմեցին և մերժեցին վայրենի կրից և բաղձանաց առաւելազանցութիւնները , նոքա զերծ մնացին ամէն վնասակար հետևանքներէն և հաճելի հանգիստ մարդկանց և Աստուծոյ ։ Կ՚ըսէր ինձ ծերունին . կըտեսնե՞ս այդ խառնակենցաղ ժխորներու մէջէն ինքզինք ուղղութեան մէջ պահող առաքինի

ծերունին , որ ամենուն խրատ և յորդոր կըկարդայ · սակայն լսող չ՚կայ · և պիտի տեսնես թէ այդ մարդ և իր ընտանիք միայն պիտի փրկուին , ու մնացեալները իսպառ բնաջինջ պիտի լինին , և իրենց անպատիւ գործերու տխուր յիշատակը միայն պիտի մնայ ապագայ սերնդոց ։

Ծերունին սոյն խօսքերէն վերջ յանկարծակի քովէս հեռանալով գնաց այն ցոյց տուած ծերը և իր ընտանիք այն բազմութեան մէջէն առնելով տարաւ գեղեցկաշէն տապանի մը մէջ դրաւ և ինքը աներևոյթ եղաւ ։

Սոյն միջոցին կարծես թէ աներևոյթ զօրութիւն մը ոյժ կուտար մարդկանց մոլութեանց աձման , որպէսզի աւելի սաստկապէս պատժուին · Այն բազմութեան մէջէն ձայներ կըլսուէին՝ որք կըսէին միմեանց՝ մարդու որդիներ , ձեր կեանք սակաւ է և այն հազարաւոր ցաւերով լի · գերեզմանէն մէկը եւ չ՚դարձաւ որ պատմէր թէ ի՞նչ կայ հոն ։ Դուք յանկարծակի երևցաք և քիչ մը վերջ իբրև չեղեալ պիտի նկատուիք · ձեր շունչ ծուխ մի է , ձեր սրտի շարժման խօսքերն ալ կայծակի պէս կըփայլատակին և կանհետանան , և ձեր մարմինը մոխիր կըդառնայ ։ Ձեր կեանք ամպի ստուերի պէս կանցնի կերթայ և հողին յօդս կըցնդի , ձեր անուն յաւիտենականութեան մէջ պիտի թաղուի և անհետանայ և ո՞վ պիտի յիշատակէ ձեր գործերը , չիկայ մէկը որ կարողանայ ձեր կեանք երկարել կամ պակսեցունել , վասնզի այնպէս կնքուած է ։ Ուրեմն քանի որ ժամանակ կայ , եկէք վայելեցէք ամէն ուրախութիւնները և զուարճութիւնները ու հաճոյքները , զի քիչ մը վերջ դարնան ծաղիկներու պէս պիտի թառամիք ։ Ինչ որ վայելէք , այն կըմնայ ձեր բաժինը անխրատութեամբ աղքատը բռնադատեցէք , այրիներուն բնաւ մի խնայէք , բռնութիւն թող լինի ձեր օրէնք , արդարոյն դէմ որոգայթներ լարեցէք , որ ձեր գործերուն չհակառակի և զձեզ չ՚նախատէ , ու ձեր հեշտալի մեղքերու համար զձեզ չ՚բամբասէ · Այն հրապուրիչ խօսքերուն վրայ առհասարակ ամէն մարդ իւր սրտի ցանկութեան ետևէն կըդնար նման այն ձկանց՝ որք թռչտելով և ուրախութեան կայտառումներով կըլողան և կը վազեն դէպ ի այն մահուան թակարդն , ուր որ ներս մանելէն վերջ անկարելի կըլինի նորա դուրս ելլել ·

Մտքէս կանցնէր թէ, Նախախնամութիւն իւր բարիքները փոխանակ ասոնց տալու, լաւ չէ՞ր լինէր որ այն տապանի մէջ պատսպարուող մարդկանց տար, որք հոն սովամահ պիտի մեռնին ։

Ձայն մը ինձ կըպատասխանէր, Նախախնամութիւնը իւր մեծութիւն չարատուրէր, զի Աստուծոյ արեգակը չարերը և բարիները հաւասարապէս կըլուսաւորէ, երկնային անձրեւի արգաւիքը և պտուղը անխտիր կըտրուին չարերուն և բարիներուն, Նախախնամութիւն ամենատես աչք մը ունի և կըտեսնէ օդի մէջէն թռչող թռչունները, ովկիանոսներու յատակ ծածկուած ձուկերը, լերանց խոռոչներու մէջ ծածկուած չքստի ժժմունքները, և անոնց ամենք կըխնամէ կըկերակրէ, և մի թէ կըտկարանայ՝ տեսնելու և խնամելու տապանի մէջ պատսպարեալ մարդիկը ։ Աստուած ինքնին կըղեկավարէ և կառաջնորդէ անոնց, մինչև այն նաւահանգիստ որ պատրաստուած է նոցա համար ։

Այն միջոցին օդ զայրացած տարերք իրարու դէմ կըմարտընչէին, խոր լռութեան մը ամպամած խաւար մը կըյաջորդէր ։ ամպ, որոտումն, փայլակ, կայծակ, հուր և ծծումբ երկնից սահանները բացուած, անձրև, ձիւն, կարկուտ, մրրիկ և ջուրերը երկիր կ՚ողողէին, և մարդիկ կ՚ապականէին ։ լեռներու գլուխ բնակող կենդանի և գազանները անգամ, հեղեղներն իրենց հօտանաց հետ կըտանէին ։ Ջուրերը ամենէն բարձր լեռները ծածկեցին ։ Սոյն միջոցին անիմանալի զօրութիւն մը զիս ամպերու թևերու վրայ բարձրացուցած կըպահէր և կըպաշտպանէր այն համատարած ջրհեղեղի վտանգէն՝ թէև հողմերու հետ կըշարժէի բայց անհաստատութեան վրայ հաստատուն կըպահուէի ամենազօր ձեռքով մը՝ ականատես եղայ ջրհեղեղի ամէն անցքերուն, բայց ի տապանի մէջ բնակողներէն, զորս երկնային հեղինակութիւնն ծածկած էր ինձմէ ։

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Նոր սերնդոց աճումը և բազմանալը, մարդկանց կրկին [illegible]-նը և [illegible] կենդանագործութիւն, [illegible]ութիւն, [illegible] խառ-նակումը, մարդկանց բաժանումը, [illegible]ութեանց և [illegible]ութեանց նկա-րագրութիւն, Բելեանայն կռուերը, Աստուծոյ Նախախնամութիւն, [illegible]ութիւն, [illegible]ութիւն և Բելեանայն կռուերը:

Ջրհեղեղի տեսարանը երկար ժամանակ տեւելէն յետոյ բնութիւնը իւր հանդարտութեան վերադարձաւ, նոր ցամաք և նոր աշխարհ երեցաւ։ Ռուաքինին տապանէն ելլելով նոր շինութիւն, նոր բնակութիւն, նոր մշակութիւն և աշխատութիւն, նոր ընտանիք և նոր ցեղեր ու ազգեր սկսան առաջ գալ հետզհետէ: Քաղցր էր նոցա վիճակ և ուրախ ու զուարթ. վասնզի ոչ թէ միայն նահապետական ընտանիք՝ այլև Նոյի հետ ազատուող թռչուն և կենդանիներ հլու հպատակութիւն ցոյց կուտային նոյն պատկառելի ծերունւոյն և նորա որդւոցը։ Աստուծոյ շնորհք և հաշտարար զօրութիւն արագապէս կաճեցունէր այն ընտանիքը, և քիչ ժամանակի մէջ մեծ ազգեր լինելով ժողովուրդներ կազմելով երկրագունդի երեսը սփռուեցան։

Թէպէտ ջրհեղեղը մոլինները ջնջեց, բայց մոլութիւնները և կիրքերը չ՚ջնջուեցան, մեռան և ապականեցան մեղաւորները, բայց կենդանի մնացին մեղքերը: Վասնզի ժառանգական մեղք և մոլութիւնները մարդկանց արեան մէջ ծածկուած մնացին, և երբ զմարդիկ տկար տեսան, մոխրի տակ ծածկուած կրակի պէս կրկին երեւան ելան վերակենդանութիւն ստացան, և սկսան նոր սերնդոց սիրտ և միտք ապականել առաջինէն աւելի սաստկագոյն։

Ջրհեղեղի տխուր յիշատակը աւանդաբար հայրերէն իրենց որդւոց փոխանցելով, ծնաւ աշտարակաշինութեան տգիտութիւն, որուն Աստուած չ՚հաճելով տուաւ մարդկանց լեզուաց խառնակումը և շփոթութիւն։

Ասկէ վերջ սկսան այլևայլ երկիրներ գաղթել, այլևայլ լեզուներով, այլևայլ ազգեր ցեղեր և վարչական ձևեր կազմակերպել:



ԳՐԱԴԱՐԱՆ

Անհաստատ տեսայ մարդկանց վիճակը , և միշտ փոփոխութեան ենթակայ ։ Բարձր տեղերը կը բնակէի մարդկանց վիճակը աչքիս առաջը ունենալու համար անոնց վրայ շատ բաներ տեսայ և լսեցի , բայց շատերը ակամայ մոռացութեանս կուտամ համեստութիւն չներէր ինձ ուրիշներու սրտին տաղտկութիւն պատճառող խօսքեր հրապարակ հանել ։ Իմ միայնութիւնս մխիթարելու համար առանձին փոքր բլրակի մը գլուխ քաշուեցայ , որուն աւանդութեամբ եդեմական դրախտի տեղ լինելը ինձ հաւատացնել կուզէին ։ Այն ծաղկաւէտ դաշտի դալարիներու վրայ հանգիստ առի ։ Այն դաշտը թէև բնաւ նմանութիւն չունէր այն նուիրական և անմահութիւն բուրող անմեղութեան որօրան եղող դրախտին , սակայն կարծես թէ նորա աւերակաց կընմանէր ․ զի այն փլատակներու մէջէն երկնային լուսոյ ճառագայթներն և անուշահոտութիւններն կը բուրէին ։

Հոն յանկարծակի տեսայ այն պատկառելի ծերունին , զոր ջրհեղեղէն առաջ տեսայ և կորսնցուցած էի ։

Նա կ'ըսէր ինձ , կըտեսնես , մարդիկ դարձեալ իրենց կոչմէն կըհեռանան և խաղողի փոխարէն փուշ և տատասկներ կը բերեն և տիրոջ սիրտը կը վիրաւորեն իրենք ալ անհանգիստ կերպով կըծփան աշխարհի ալեկոծութեանց մէջ ։ Կիրքերը զիրենք մարդկութեան սահմանէն հանելով անասնոց նուաստ վիճակի մէջ դրած են ։ Մարդիկ յԱստուծոյ իրենց առանձնաշնորհեալ վսեմ բանականութիւն մերթ բնազդման հետ կըշփոթեն , մերթ զայն իբրև գործիք կըգործածեն իրենց հաճոյքները ձեռք բերելու , անոր անստգիւտ արժէք կորսնցունելով և ամենէն անհանդուրժելին այն է որ , արարածները արարչի տեղ դրած կըպաշտեն . որով երկնային աստուածպետական հեղինակութիւն և արարչապետութիւն կանպատուեն , և իմաստունները իսկ շատ անգամ մոլորութեան ետևէն կերթան . վասնզի ոմանք զԱստուած նիւթի , ոմանք զօրութեան , ոմանք հանճարի մէջ կը փնտրեն փոխանակ ամէն բան Աստուծոյ մէջ փնտրելու ։

Հանճար և զօրութիւն Աստուածային կարողութիւններն են , ինչպէս որ նիւթն ալ նորա ստեղծական հարկաւորտարրն է ․ և միմեանց հետ առնչական կապ ունին և այս երեք զօրութեանց մինոր վերցունես , տիեզերական սահմանադրութիւն կըխանգա-

րուի ։ Ջի արտադրելու համար նիւթ պէտք է, շարժման մէջ պահելու համար զօրութիւն պէտք է ։ Կառավարելու համար հանճար պէտք է ։ Աստուածային սէր մը եւ կայ՝ որ ասոնք իրարու հետ կը շաղկապէ ։ Վերցուր զօրութիւն, նիւթը անկենդան դիակ մը կը դառնայ ։ Վերցուր նիւթը․ այն ատեն զօրութիւն անգործութեան կը դատապարտուի․ զի զօրութիւն նիւթի վրայ կը ներգործէ ։ Եթէ նիւթի և զօրութեան հետ հանճարը չմիանայ, այն ժամանակ գործերը խոպան դիպուածական և պատահական կըլլինին, և ուղղութենէն կըղարտուղին, զի հանճարն է որ ամէն բանին ուղղութիւն կու տայ ։

Համոզուիլ պէտք է թէ՝ երկնի և երկրի արարիչ և ստեղծիչ ամենակարող և ամենազօր ու ամենիմաստ Աստուած մը կայ, և ամէն բան նորա արարչագործութեան պտուղներն են ։ Ուրեմն զայն միայն պաշտել պէտք է, և անոր ծունր կրկնել պէտք է և ոչ թէ արարածներուն և անշունչ ու անզգայ կուոց և նիւթից ու տարերաց ։ Թէ ով է նա, և ի՞նչ է նա, այն մեր մտաց ներքևը չգրուիր․ Աստուծոյ յայտնածները մեծարել պէտք է, այն բան որ ինքը մահկանացուներէն ծածկել ուզած է, հետաքըրքիր լինելու չէ զայն իմանալու ։ Վասնզի յանդուգն հետաքրքրութիւն կերթայ յիմարութեան վախճանին կը հասնի ։ Այսպէս ալ մահկանացուներուն փոփոխական վիճակին վերահասու լինելը մարդկանց մտքէն բարձր է, և անթափանցելի կերպով Աստուծոյ իմաստութեան մէջ ծածկուած կը պահուի․ Աստուծոյ գաղտնեաց հետամուտները խորհրդոց հասանքներէն մղուելով կերթան զառանցանքներու եզրակացութեան կը հասնին ։

Գաղտնիքներ կան, որք Աստուծոյ խորհրդոց մէջ պահուած կը մնան, գաղտնիքներ եւ կան՝ զորս բնութիւնը իւրն կը վերապահէ․ տգիտութեան մէջ պահուած գաղտնիքներ եւ կան, զորս իմաստութիւնն կը լուծէ ․

Կը ճառէր ծերունին Նախախնամութեան և արարչագործութեան վրայ հետևեալ կերպով, կըսէր նա․ Արարչագործութիւնը հրաման է․ ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան և այս հրամանն է որ կը շարունակուի, որու ծայրը դարձեալ Աստուծոյ գաղտնեաց խորերու մէջ թաղուած է․ իսկ Նախախնամութիւնն պաշտօն ունի արարածներու էութիւն և գոյութիւն

պաշտպանելու համար անոնց սնունդ պատրաստել և տալ, և զոյգ կ'ընթանայ արարածներու հետ ։ Նախախնամական տնօրէնութիւն կառատաձեռնէ ստեղծեալները ապրեցնելու, և իբրև հիւրըն-կալ՝ եկողները կըկերակրէ, և անոնց հետ կ'ընկերանայ մինչև գերեզմանի դուռը ․ անկէ ետ դառնալով կուգայ ուրիշ եկողները հիւրընկալելու ․ ինքը մշտնջենաւոր է․ բայց ուրիշները մշտըն-ջենաւորութեան մէջ պահելու երաշխաւոր չէ, նա նիւթ չտար զի արդէն արարչագործութեան ժամանակ տրուած է ․ բայց նիւթին հիւթ կուտայ, որով տեսքերը կըկերակրուի ։

Բնութիւնն պաշտօն ունի շինելու հիւսելու, լուծելու քան-դելու ․ բայց պաշտօն չունի ստեղծելու, կամ ստեղծեալները ոչնչացնելու ։

Բնութիւն շատ բաներու վրայ իշխանութիւն ունի, բայց ինքը իւր հեղինակի իշխանութեան և հրամանին տակ կըգործէ․ տես-նուած է երբեմն որ երբ սքանչելիքները կըհրաշագործեն, հոն բնութիւն տեղի տուած է իւր Արարչի հրամաններուն ։

Կըսէր նա, մարդկութիւն նոյնութիւն է ։ Ամեն մարդ մի և նոյն կաւէն կազմուած է, միևնոյն խաւարն է ծնելէն առաջ․ միևնոյն մարմինն է կենդանութեան ժամանակ, միևնոյն աճիւնն է մահուանէն վերջ գերեզմանի մէջ ։ Նախախնամական տնօրէնու-թեան մէջ բնաւ տարբերութիւն չկայ ․ բայց տգիտութիւն մը կայ, որ կըխառնուի մարդկութեան խմորի հետ, և զայն կը-սեցունէ, և անբաժանելի կըմնայ մարդկան սրտի մէջ․ ու նոցա մտաց խորհուրդներու վրայ ծաւալելով կըյղանայ և կըվիժէ ամէն տեսակ մոլութիւնները և չարիքները ։ Տգիտութիւնը կիրքերը կըբորբոքէ, որոցմով իրողութիւնք առաջ կուգան և շղթայի պէս միմեանց հետ հիւսուելով չարերուն յաջորդական ծնունդ կուտան լաբիրինթոսները կըկազմուին, վերջալոյս խաւարի կըփոխուի, և մարդիկներէն շատերը չ'տեսնելով խորխորատներու մէջ կիյնան․ ուր կըվխտան զրկանք, անիրաւութիւն, չարութիւն, զրպարտու-թիւն, մատնութիւն, ստութիւն, ոխիր, դաւադրութիւն գործոց մթութիւն, վարմունքներու և բարքերու ապականութիւն, մեռ-լատիպ պատկերները, մեքենայական շարժումները, անխորհուրդ համակերպութիւն, ակամայ զիջումները, գաղտագողի եղեռ-թիւնները, խղճի բռնաբարութիւն, մտաց անդամալուծութիւն

այն ժխորներու մէջ աշաղին ձմեռ մը կը կազմուի , ուր շարունակ կը տեղայ ձիւն , անձրեւ , կարկուտ , հուր, փայլակ, որոտումն տարբերաց խառնակումն ։ Այս թշուառները, որոնք որ այս տխուր օրերուն կը հանդիպին , ճնշման ներքեւ օրերը կանցունեն առանց հացի , շաբաթները կանցունեն առանց գործի , կրակարաններ կունենան կրակ չեն ունենար . այն նեղութեան մէջ ընդարձակութեան երազներով կը զուարճանցեն, և կըսպասեն քաղցր յուսով գարնան զուարթարար արշալոյսին ։ Ձմեռը՝ այս մարդկանց սրտի թախծումներէն մէկ մասը առնելով իր հետ կը տանի ։ Գարունը ամառուան արշալոյսն է երբ նա իր բարութեան դռները կը բանայ , բնութեան զմայլելի նշոյլներով առժամանակեայ դրախտ մը սքանչելի տեսարան մը կը կազմէ , զի երկնից ամպերու ցօղերով և անձրեւի կաթիլներով մարգագետինները կը թրջէ , խոտերը կը մաքրէ և արեւու ճառագայթները ծառերու և ծաղիկներու վրայ կը տարածի անուշահոտ բուրումներ շնչելով տխուր սրտերը կը զուարթացնեն ։ Ժամանակը բնութեան պարգեւները բերելով աշխատասէր ձեռքերուն կը մատուցանէ , և անոնց աշխատութեան և տքնութեան վարձը կը փոխարինէ , նոյա արտասուքները սրբելով նոր կեանք նոր հրճուանք նոր բերկրութիւն կը մատակարարէ ։ Հեզասիւք զեփիւռները նոր սիրտ նոր ոգի նոր խորհուրդ նոր զգացումն և նոր կեանք կը սփռեն նոցա թարմ մտաց և սրտի վրայ ։

Կարգ մը մարդիկ կան , որք միշտ ձմեռներու մէջ կանցունեն իրենց կեանք առանց ամառուան քաղցրութիւն ճաշակելու . մարդկան այս մասը , կարծես թէ աստուածային արդարութենէն պատժուած վաղեմի դատապարտեալներ են ։ Երբ ի մօտոյ կը շօշափես մարդկութեան վիճակը կ՚ուզես հաւատալ թէ , այս աշխարհ յատուկ պատրաստուած է մարդկութեան մեծ մասը դատապարտելու և պատժելու համար ։ Վասնզի որ կողմ որ դառնաս՝ պատիժ կ՚զգաս. ամէն օր տրտում և տխուր . ամէն օր կը հալիս և կը մաշիս ու կը հալածուիս , եթէ հալածիչ չունենաս , խիղճդ քու խթանով սիրտդ կը խոցէ և կը վիրաւորէ ։ Եւ պէտք է որ այսպէս լինի , վասնզի առաքինութեան պտուղ բերելու համար ստեղծուած մարդիկ մոլութեանց պտուղներով աշխարհ ապականեցին ։ Մոլութիւնները շարունակ կ՚աշխատին Լե-

ր—ն գլէ—— բարոյականութեան այն երկնային և Աստուածային մեծ չէմք քանդել և ապականել, և շատ անգամ կը յաջողին նորա անխախտելի քարերը քանդելով լերան գլխէն զայն լերան ստորոտ իջեցունել և առաքինութիւնն կըտկարանայ իւր ջանքերով ղանոնք կրկին իրենց տեղ հանելու ։ Այս աշխարհ պատերազմ մի է, որ պիտի շարունակուի մինչև ի կատարած աշխարհի. զի կիրքերը մարդկանց զգալի ախորժակները գրգռելով դէպի մոլութիւնները կը քաշեն. խիղճ և բանականութիւն զմարդիկ դէպ ի կատարելութիւն և բարոյական առաքինութիւն կառաջնորդեն ։ Հոս մարդիկ կըտարակուսին և չեն գիտեր թէ ո՛ր կողմ երթան, զի մինն կաշխատի մարդիկ Աստուածային սիրոյն հետ կապելու, միւսն կըձգնի նոցա ախորժակները գըրգռելով հաճոյքներու և ցանկութեանց հետ կապելու ։

Առաքինութիւնք և մոլութիւնք միշտ պատերազմի մէջ են. մերթ կը յաղթեն, և մերթ կը յաղթուին ։ Երկնային գաղտնեաց վրայ հմտութիւն չունեցողները կըկարծեն թէ տիեզերաց հեղինակի կամքն այսպէս հաճած է որ առաքինութիւն և մոլութիւն ի միասին բնակին և զիրար ջնջեն ։ Ո՛րսեն մոլութեանց կուսակիցները, ի՞նչ ապացոյց կայ որ մոլութիւնները ևս Աստուծոյ յատուկ թոյլտուութեամբ չէ որ կամին և կըղօրանան, եթէ այսպէս չ՛լինէր միթէ երկնային հեղինակութիւնը իւր մէկ ակնարկով կարող չէ՞ր ղանոնք ջնջել։ Ո՛րսեն նորա. իրաւունք զօրաւորին է. եթէ չէք հաւատար, առէք արծուոյ թևերը, ելէք թեթև ամպերու վրայ նստեցէք, յերկինս գիտեցէք Արգոսի աչօք և օդային բոլոր թռչնոց վիճակը քննեցէք, հոն պիտի տեսնէք զօրաւորին՝ տկարներ յափշտակելը կեղեքելը դի՛շատելը, նոցա նորածին ձուոց և ձագուց յափշտակուիլը ։

Մտէք Ովկիանու կէտ ձկան որովայն, ընկղմեցէք ովկիանոսներու յատակներ, քննեցէք զննեցէք, հոն ալ պիտի տեսնէք թէ զօրաւոր ձուկերը և ծովային կենդանիները անզօրները կըկլանեն ։ Վառեցէք Դիոգինէսի լապտերը, շրջան կատարեցէք երկրագունդիս բոլորտիք, լեռներու գլուխ, քարայրներու մէջ, անտառներու և մացառներու խորերը, հոն տեղերն ալ խուզարկեցէք, դարձեալ միևնոյն բան պիտի տեսնուի ինչ որ կըգործուի մարդկանց մէջ ։

Ուրեմն արարածներու Արարիչն այսպէս սահմանել ուզած է, և կամ այս դիպուածական դրութեան հաւանութիւն տուած է, և կամ թէ բնութեան հեղինակը արարածոց համար ուղիղ սահման գծել զանց ըրած է. ինչու այդ ափ մը հողմարդկանց՝ չափէն աւելի կարևորութիւն կըտրուի, որոց կեանքը ստուերի պէս կուգայ կանցնի և կերթայ յաւիտենական մթութեան քողի տակ կըծածկուի :

Ուրիշներու կարծիքները առաջ բերելէն յետոյ վրայ բերաւ ծերունին թէ չարերը խիստ յաջողակ են իրենց մեղքերը ծածկելու համար իրաւունք փաստաբանել այն ճարտարութեամբ, որով շատ անգամ բարիներն անգամ կըխաբուին նոյա դիւթիչ լեզուներէն : Ես այդ տեսակներուն կ'առաջնորդեմ իրենց սրտի մէջը մտնել, և իրենց խիղճ ու միտք քննել իմանալու համար թէ՝ մոլի՞ գործերուն հաւանութիւն կուտայ խիղճ և միտք, թէ առաքինի գործերուն, մարդու մը կեանք շնորհած ժամանակ կ'ուրախանայ, թէ զայն մեռցուցած ժամանակ։ Սիրտ մը վիրաւորած միջոցին կըխռովի, թէ բժշկած ժամանակին : Մէկի մը չարիք ըրած ժամանակին կուրախանայ, թէ բարիք ըրած միջոցին. ուրիշի մը գթութիւն և ողորմութիւն ըրած ժամանակին կըմխիթարուի, թէ զանոնք կեղեքած-և անգթութեամբ վնասած միջոցին, չար գործած ժամանակ խիղճ զինք կըխայթէ և կըդատապարտէ, թէ բարի գործած ժամանակին. Ո՞ր կըզղջան մարդիկ, մոլութեանց վրայ թէ առաքինութեանց վրայ : Ո՞չ ապաքէն մարդիկ միշտ կըզղջան և ետ կըդառնան մոլութեան ճանապարհներէն : Ուրեմն մոլութիւնները այն որոմներն էին որ, կրից և չափազանց ցանկութեանց ձեռքով ցանուեցան տիրոջ մաքուր ագարակի մէջ. ո՞վ է մարդ որ չ'ճանաչէ իւր անիրաւելը, կեղեքելը, հարստահարելը, և չ'զղջայ ուշ և կամ կանուխ : Անոնք որ ձեռքի սրով իրենց եղբայրները վիրաւորած են նոքա խղճի խայթով իրենց սիրտ խոցած են. Կրից չափազանցութենէն թելադրեալ մոլիները շարունակ կըյանդիմանուին իրենց ներքին խղճի ձայնէն. նոքա միշտ անհանգիստ և տխուր են. և կըճանաչեն թէ իրենք պատժապարտ են, խղճի խայթէն ազատելու համար հնարք կըփնտրեն. սակայն ուր երթան զիրենք պատժող սլաքը իրենց սրտի մէջն է.

Ասոնց հակառակ առաքինիները միշտ ուրախ են և զուարթ իրենց բարի գործերով. նոքա ունին խաղաղ կեանք, խղճի հանդարտութիւն սրտի ուրախութիւն, միշտ մխիթարեալ են իրենց անմեղութեան մէջ. ուրախ են իրենց բարեգործութեանց վրայ. արդէն ըսուած է թէ՝ մարդկանց անսահման ազատութեան առիթ տուաւ կիրքերու չափազանցութիւն. կիրքերը առաջ բերին անզուսպ բաղձանքները. այդ բաղձանքներն են Ընչասիրութիւն, Հեշտասիրութիւն, և Փառամոլութիւն, որք այս երկրագունդս իւր բնակիչներով մեկտեղ ալէկոծութեանց մատնած վեր ի վայր տապալեցին, նորա հանգստութիւն, խաղաղութիւն և հանդարտութիւն խռովեցին։ Փողովէ՛ բովանդակ աշխարհի ճոխութիւն և հարստութիւն տո՛ւր ընչասիրին, նա գոհ չլինիր և նորանոր հարստութիւններ կըփնտրէ։ Բովանդակ տէրերաց իշխանութիւնը տո՛ւր փառամոլին. նա գոհ չլինելով նոր տիեզերք մը կըփնտրէ, նորա վրայ ևս իշխելու։

Փողովէ՛ հեշտութեան բովանդակ ծաղիկները, մատո՛ հեշտասիրին, նա գոհ չլինելով նորանոր հեշտութիւն կըփնտրէ. կիրքերը ցանկութեանց անյագութիւն կուտան, եթէ բանականութեան սանձիւ չսանձահարուին։

Մարդիկ երբ այն ամէն փառաց և ցանկութեանց կըհասնին երջանիկ լինելու յուսով և կըտեսնեն թէ փոխանակ երջանկութեան աւելի ապերջանկութեան անդունդներու մէջ գլորուած են հոն պէտք է որ համոզուին թէ այս աշխարհիս մէջ ճշմարիտ երջանկութիւն չկայ. ուրեմն մոլութեան ճանապարհներէն ետ դառնալով և խղճի ձայնին հետևելով առաքինութեանց ճանապարհի մէջ մտնելու է. նա խիստ ուղիղ կառաջնորդէ զմարդիկ դէպ ի երջանկութիւն։ Մարդկանց փնտրած ճշմարիտ երջանկութիւն՝ այն Աստուածային տեսութեան երանական փառք և շնորհքները ու անմահ և անմեղ կեանքն է՝ զոր մարդկութեան նախամայրն կորսնցոյց Եդեմական դրախտի մէջ. նորա յիշատակը և պատկեր նախամօր սրտի վրայ տպուած և նորա արեան մէջ փոխանցուած իւր սերնդոց ևս փոխադրուեցաւ։

Մարդիկ զայն կըփնտրեն որ ամէն երանութեանց լրումն է, սակայն զայն չեն տեսած. ուստի անոր ինչ լինելն ևս չգիտնալով ողորմելի տգիտութեամբ մը իրենց ունեցածը կըկորսնցունեն։

Մինն՝ զայն հեշտութեան, միւսն՝ փառաց, ուրիշ մը՝ ընչասիրութեան մէջ փնտրելով՝ կըհալին և կըմաշին, կ'սպառին կերթան և իրենց տգեղ գործոց տխուր յիշատակը միայն կըթողուն։ Ուրեմն ամէն մարդ իւր բաղձանաց բովանդակ լրումն իւր սրտի մէջ փնտրելու է. խիղճը մատնանիշ և բացորոշ ցոյց կուտայ թէ իրենց փնտրածը՝ Աստուծոյ թագաւորութեան մէջ պահուած է. և առաքինութեան ճանապարհէն գնացողներն միայն կրնան անոր հասանիլ։ Մարդիկ դէպ ի ուղղութիւն վարելու համար մշակել պէտք է նոցա միտք, կրթել պէտք է նոցա ոգին, ազնուացունել պէտք է նոցա սիրտ։

Ճշմարտութեան և արդարութեան հունտերը սերմանելու է նոցա թարմ սրտերու մէջ, և մոլութեանց ու կրից փուշերը արմատախիլ ընելու նոցա սրտէն. հեզութեան խոնարհութեան. սիրոյ, երկիւղածութեան և Աստուածպաշտութեան սկզբունք զետեղելու է նոցա ուղեղի մէջ։ Ամենայն մարդկան հետ սիրով և խաղաղութեամբ ապրելու, և երկայնամիտ լինելու եղանակները ուսուցանելու է անոնց։

Նոցա կիրքերը չափաւորութեան մէջ պահելու համար նոցա միտք զարգացնելու է վսեմ գաղափարներով. որպէսզի կարողանան չարին և բարւոյն պատուաւորին և անպատուոյն գեղեցկին և տգեղին մէջ տեղ զանազանութիւն դնել։

Ուրեմն տգիտութեան կիրքն է որ կ'ըսէ. իրաւունք զօրաւորին է. իսկ Աստուծոյ իմաստութիւն և ուղիղ բանականութիւն կըսեն, իրաւունք անմեղին և արդարին է։

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

[illegible]

*Տեսէք այդ երկու սէռի խումբ մը անփորձ հիւծեալ և ծիւրեալ երիտասարդները թէ ինչպէս իրենց կեանք սիրտ և ոգին ու մարմինը մաշեցուցած չափազանց սիրոյ հաճոյքներով կը տոչորին և իրենց երիտասարդութեանց հասակի մէջ իրենց գերեզմանը իրենց ձեռքով կը փորեն :*

*Այդ ողորմելիները բնաւ տարբերութիւն չունին այն նորածին մանուկներէն, որք չ'զգալով՝ կրակի փայլունութեան սիրահարուելով նորա հետ կը խաղան և կ'այրին : Դոքա մարդ քաղել ուզած ժամանակ նորա փուշերէն չ'զգուշանալով կը խոցուին և կը վիրաւորին : Իրականութիւն փնտրած ժամանակ՝ ստուեր կը գտնեն, չափազանց հաճոյքներու ետևէն վազելով ուրախանալու տեղ կը տրտմին առողջանալու տեղ կը հիւանդանան, երջանիկ լինելու տեղ թշուառ կը լինին պատուաւոր երևնալու տեղ անպատուութեանց մէջ կիյնան, շահիլ ուզած միջոցին կենաց վնասը վրայ կուտան : Ատոնք կը նմանին այն ճանճերուն, որք մեղրի վրայ նստելով կ'ուտեն հեշտանալու համար, բայց մեղր իւր մածուցիկ զօրութեամբ զանոնք կը կաշկանդէ և նոյա համար մահուան թակարդ կը դառնայ, կեանքը կը դերէ իբրև վարձ հեշտութեան : Ինչպէս որ թիթեռնակ կրակին չափազանց մօտենալով թևերը կ'այրին, դոքա ալ սիրոյ չափազանց մօտենալով, սիրտերնին կ'այրի և կը մարի, հեշտական սէրը, որչափ որ առաջին անգամ զօրաւոր է և բորբոքիչ, այնչափ ալ շուտով կը մարի · զի նորա կեանք խիստ կարճ է, բոլոր կրից մէջ սէրը եսական է : Նա մարդկանց աչք կապելով շարունակ զանոնք իւր ետևէն կը քաշէ · երբ սիրտն է սահող . . . մարդն չ'կայ չառնուր գլխիվայր գլորելէ :*

*Սէրը յատկութիւն մը ունի, որ չուզեր տեղ մը մնալ, այլ միշտ սաւառնիլ և թափառիլ · Այն որ պահ մը առաջ սիրոյ ա-*

ռարկայէն բաժնուիլ չէր ուզէր , պահ մը վերջ անկէ զզուելով նորա երեսը նայիլ չուզեր ։ Երբ դէպք և պատահար , բնութիւն և ժամանակ , սիրոյ առարկայի դէմքը կը փոխեն , դէմքի այլայլութեան հետ սէրն ալ կայլայլի ։ Հաճոյք պատճառող առարկան զզուանք պատճառելու առարկայ կը դառնայ ։ Սիրոյ նետերէն խոցուողները կերակուր ուտելու հարկն անգամ կը մոռնան մտատանջութիւն շարունակ զիրենք կը մաշէ ։

Քաղցր քուն որ ամէն վշտաց և ցաւոց հանգստութիւն տուող բժիշկն է , նոցա դառնակսկիծ վիշտերը և սրտի վէրքերը ամոքելու չզօրեր և կը տկարանայ ։ Անոնք այնքան յափշտակուած են , որք իրենց շուրջ դառնաող և զիրենք դիտողներ չեն տեսներ ։ Ատոնք խրատ և յորդոր լսել չեն ուզեր , ականջնին կը խցեն որ իրենց բարեկամաց խրատու ձայն չլսեն ։ Թաղուն մնալ կուզեն , որ բարեկամաց պզուշական խօսքերը իրենց վիրաց վրայ նոր վէրքեր չաւելցունեն ։ Մահ կը նախընտրեն , քան թէ սիրոյ հակառակ խօսք մը լսել ։ Նոքա չեն գիտեր թէ չափազանց սէրը թունաւոր օձ մի է , որ գեղեցիկ հառաւէտ ծաղիկներու տակ պահուած կ'սպասէ իր մահացու թոյն նենգ դաւաճանութեամբ անզգալի կերպով ներգործել զինք հաւատացողներու սրտին , և նոցա կեանք ու պատիւ ի միասին կապականէ ։ Սէրը մահացուցիչ խժ մի է , զինք սիրողներու սրտի մէջ պահուած , որ տաքցած ժամանակ անողջանալի վէրք մը կը բանայ իր բնակած տեղը ։ Գեղեցկութիւն ամբարտաւան է . զինք սիրողը կապշեցունէ և կարհամարհէ . ինքը շատ անգամ չսիրեր , բայց ուրիշները կը բռնադատէ (իր գեղով) զինք սիրելու . Նոցա շատերու աչք սիրոյ նշան է , բայց սիրտը չարահնար, շրթունքները քաղցրաւենի և անուշակ , բայց խօսքերը թոյնի չափ դառնութիւն կը ներգործէ . կերպարանք կը ժպտի իսկ սիրտը դառնութեամբ լի է, ձեւք նազելի է , իսկ ապտակը մահահրաւէր, նոցա մատուցած քաղցրահամ օշարակներու մէջ մահացուցիչ թոյն կայ պահուած ։ Բայց ի՞նչ օգուտ , երբ կը տեսնեմք անոնց գեղէն յափշտակեալները մահուան կը յօժարին և իրենց հաճոյքներէն զատուիլ չեն ուզեր ։ Որ և է սուր այնչափ շեշտակի չներգործեր երիտասարդի սրտին , որչափ որ խոր կը ներգործէ ցանկական սէրը . զի կանանց հրաշագեղ մարմնոյ

հետ ընծորդեալ կ'ողջքեն նաև մնաց հրապոյրները ։ Այդ դեղանիները երբ իրենց սիրոյ տարիքն տհաճ տեսնեն, յուսահատելով՝ սէրը վրէժխնդրութեան կըփոխեն. և այս վտանգաւոր պարագայի մէջ առաքինութիւն պէտք է, որ համեստներու սիրտը պաշտպանէ մոլի սիրոյ նետերու դէմ, սիրոյ վէրքերը միայն առաքինութեամբ կարելի է բժշկել ։

Երբ ական լի է վառօդով, և հրդեհ պարտաստ, հոն մէկ հայեցուածք բաւական է զայն բռնկեցունելու. նայուածք ճախարակի կընմանի. յանկարծակի մարդն անոր մագիլներէն կըբռնուի. երբ երիտասարդ այն գաղտնի զօրութեան շրթունքներէն անզգուշաբար կըբռնուի գրեթէ անկարելի կըլինի անկէ ազատիլ. զի անիւներու ակռաներէն մէկէն միւսի տակ հոլովելով վիշտէ ի վիշտ տանջանքէ ի տանջանք այնչափ կընեղուի, որ իւր այս թափառական վիճակի մէջ իւր խորհուրդները կորսնցունելով՝ կեանք հարստութիւն և պատիւ իբրև տուգանք վրայ կուտայ ։

Բնութիւն անխօս լեզու մը տուած է մարդկանց, որ սրտէ ի սիրտ ցոլանալով սիրոյ վերաբերեալ ամէն բան յական թօթափիլ կըհասկըցունէ, ո՛րչափ զգուշութիւն պէտք է ուրեմն մարդկանց, որ այս մագնիսական զօրութենէն չբռնուին, ինչ որ կըներգործէ ջերմ՝ հիւանդին միևնոյն կըներգործէ անկարգ սէրը իւր ենթակային, բնութեան ներգործութենէն ի զատ երկու զօրաւոր պատճառներ ևս կան, որք կանանց համեստութիւն կըվիրաւորեն. այն է՝ պճնասիրութիւն՝ որ զանոնք կըքաջալերէ, աղքատութիւն՝ որ կըհարկադրէ. աղքատութիւն բռնաւոր մի է որ ամէն թշուառներ կըհարկադրէ իւր լծոյն խոնարհելու, և շատ մի անկարգութիւններ բռնի կերպով գործել կուտայ անոնց ։

Հեշտական կեանք ամուսնական քաղցր լծոյ տակ միայն կընայ բարեխառնիլ. սոյն կեանք ոչ թմրեալներու պէս մերժելու է և ոչ անբարեխառներու պէս չափէն աւելի մօտենալու է որ այլ-այլ իբրև բարեխառն ընդունելու է որչափ որ պէտք է. մերժելու է երբ դէպ ի վնասը երեսս կըդարձունէ ։

Բանաւորն ընդունելու է ամուսնական սուրբ սահմանի մէջ, իսկ երկու անբան ծայրերը մերժելու է. Վասնզի թմրեալն մարդկութեան սեռը ջնջելու կ'սպառնայ. անբարեխառն իւր

կեանք մարդկութեան սեռի հետ մէկտեղ ջնջելու չափ առաջ կերթայ՝ իսկ բարեխառն՝ թէ կեանքը պահել գիտէ և թէ մարդկութեան սեռը ։ Չափազանց սիրոյ կարծեցեալ երջանկութիւնը մէկ աչքով երիտասարդները կ'ուրախացնէ միւս աչքով կը տխրեցունէ ։ Ատիկայ փայլակ մի է, որ կը փայլատակի և կ'անհետանայ, կայծակնահար չ'լինելու համար զգուշանալ պէտք է ։

Ստոյգ է թէ՝ նոցա դէմքի քաղցրութիւն և պերճութիւն, վայելուչ հասակը, սիգաձեմ քալուածքը, անփորձ սիրտը մոլելու չափ զօրութիւն ունին, բայց նոցա դէմքի վրայ փայլատակած սրտի ուրախութիւնը կեղծ համեստութեան քողով ծածկուած կը ներկայանայ սրտերը պատրելու ։ Իմաստութիւն և առաքինութիւն քաջ գիտեն թէ ի՛նչ հնարքներ կան ասոնց մէջ լարուած. նոցա պարկեշտ երեցած գեղեցկութիւնն անգամ վտանգաւոր է ։ Զի մարդիկ զայն սիրած ժամանակ կը կարծեն առաքինութիւն կը սիրեն. սակայն անզգալի կերպով կը լից հրապուրանաց թոյներուն կը մատնուին, և այն ժամանակ միայն կրնան զգալ իրենց սխալմունքները, երբ այն թոյներէն ձերծանիլը անկարելի կը լինի ։

Այդ թակարդի մէջ բռնուողներ հնարք կը հնարեն փաստեր գտնելու և իրենք զիրենք չ'քմեղ հանելու. բայց չեն գտներ, ամէն ճիգ կը թափեն իրենց միտք խաբելու և խղճի ձայն լռեցունելու ։ Գեղանի կնոջ փաղաքուշ ձայնը կայծակի արագութեամբ կը սողոսկի կը մտնէ երիտասարդի սիրտ և միտք կը հրապուրէ. ամէնեն զօրաւոր առաքինութիւն անգամ կը սոսկայ և կը դողայ գեղանիներու ժպիտներէն և դիւթիչ խօսքերէն ։ Անոր հետ պատերազմելէն աւելի փախչիլն է ազատութեան զօրաւոր միջոցը ։ Նոցա շորթիչ հայեցուածք քող կը ձգէ սրտի ազնուական պարզութեան, սիրելի ամօթխածութեան և առաքինութեան հրաշալի համեստ տեսարանին վրայ ։

Նոքա կիրքերը գրգռելու որոգայթները կը լարեն, հեշտութեան ախորժակները սրտերու մէջ վառ պահելու բնական արհեստ խիստ լաւ գիտեն ։ Նոքա ոչ մտաց ուղղութիւն և ոչ առաքինութեան յիշատակն ունին. նոցա հրապուրիչ թոյն երակէ երակ փոխադրուելով մինչև ոսկերաց ծուծը կը ներգործէ. որոյ

ենթակաները ծերութիւն ու մահ և գերեզման կ՚աղաղակեն սոյն ամօթապարտ որոգայթներէն ազատելու համար. զի ուր որ երթան, զիրենք վիրաւորող նետը իրենց ետևէն կերթայ, լեռները կ՚անցնին, ծովերը կ՚անցնին ազատութեան համար, բայց որքան հեռանան, այնչափ աւելի կ՚այրին կը տոչորին:

Այս ճանապարհներէն գնացողներու բոլորն ալ ի հոգի վիրաւորեցան և անոնց սիրտ և միտք ծովու հողմակոծեալ ալեկներու կը նմանին, որ ամէն հակառակ հողմերէն ալէկոծեալ կը ծփան. Նոքա մերթ տխուր կ՚երևին, մերթ ուրախ. մերթ յուսահատ, մերթ յուսալի, դէմքերնին այլայլեալ տխրութեան զուարթութեան և ազնուութեան նշանները չեն տեսնուիր նոցա երեսի վրայ. Անոնք՝ որ այս ծուղակի մէջ իյնալէն առաջ մէկ մէկ գարնան ծաղիկներ էին նոքա սոյն թակարդի մէջ մտնելէն յետոյ թառամեցան և թարշամեցան խարշակներէն: Համեստութիւն այս տեսակները լռութեամբ կը դատապարտէ. զի այդ ախտը ամօթխածութեան քողը անզգալի կերպով կը բառնայ անոնց վրայէն. սոյն քաղցր և հաճելի երևոյթի տակ դառնութեան թոյնաւոր նետերը կան պահուած որք անողջանալի վիրօք կը վիրաւորեն:

Սէրը բնութեան մէկ օրէնք է. անկէ իսպառ զերծ մնալ գրեթէ անհնարին է. բայց կրից բռնութիւններէն մղուելով անդր քան զսահման չափազանցել արժանապատուութեան հետ կեանքը վտանգի ենթարկել է: Ի սիրոյ հարուածեալները երբ իրենց սիրելիներէն կը բաժնուին, միշտ զանոնք իրենց երևակայութեան մէջ կը տեսնեն. սակայն այս ես վիրաց վրայ վէրք աւելցունել է:

Ուրեմն այս ամէն մաշեցուցիչ ախտերէն զերծ մնալու համար ողջախոհութիւն ժուժկալութիւն և սուրբ ամուսնութիւն պէտք է: Ամուսնութիւնն միայն գիտէ այդ անշիջանելի ջահը շիջուցանել. զի ամուսնութիւն մի բնական օրէնք է. զոր բնութիւն (աստուածային հրամանաւ) մարդկանց գոյութեան մէջ անկած է: Արարչապետն զամուսնութիւն նուիրագործեց երբ աճելու և բազմանալու հրամանը տուաւ. այն երկու գեղափթիթ սրտերու մէջ հաստատուած ամուսնական սուրբ սիրոյ պտուղն եղաւ մարդկութեան շղթայի օղակը, զոր ծնունդ կը հիւսէ մահը կը քանդէ:

Ամուսնական օրինաց զօրութիւնն բնական սէրն է իսկ նպատակը՝ մարդկութեան տեսակին աճումն է ։ Պէտք չէ որ օտար սիրոյն թոյլտուութիւն լինի որ գայ այն նուիրական սուրբ սիրոյն սահմանը կոխոտէ ․ զի օտար սէրը կրից և բնազդման ծնունդն է ․ իսկ ամուսնական սէրը արարչաւանդ է և բանականութեան և բարոյականի ուղիղ գծերու վրայ սահմանուած է , բնական պէտք և մարդկութեան շղթան հիւսելու համար պարկեշտ և անխռով մեթոտներով ։ Եթէ չ՚լինէր բնական և ամուսնական սուրբ սէրը , մարդկութեան շարունակութիւն կըդադրէր , եթէ չ՚կանոնաւորէր սէրը , բնութիւն կըմեռնէր ․ զի մարդկութեան հիմը ամուսնական սիրոյն վրայ հաստատուած է ։ Ամուսնութիւն երկրորդ արարչութիւն մը է - (Արարչի անօրինական սահմանի մէջ) բնական սիրոյ ձայնը , մինն կըկանչէ հայր լինելու միւսն կըպատրաստուի մայր լինելու ։ Նոյն սէրը ազատ և կամաւոր դաշամբ այր և կին միմեանց հետ կըկապէ փոխադարձ պարտուք և իրաւամբք ։ Ամուսնութիւն կըծնանի որդիները որոնցմէ կըկազմուի ընտանիք․ ընտանիքէն կըբաղկանայ ժողովուրդ , ժողովուրդէն ազգերը առաջ կուգան , և ազգաց միութենէն կըծնանի համաշխարհական ընկերութիւն ։ Ուրեմն ընկերական աշխարհի շէնքը ամուսնութեան վրայ հաստատուած է ։ Վերցուր ամուսնութիւն , և ահա աշխարհ իր նախկին գատարի վիճակին կըվերադառնայ ։ Ամուսնութեան ծառի պտուղներ են իշխան և դատաւոր , սոսկական և տիեղերական , այր և կին , ծնողք զաւակ , քոյր և եղբայր հարուստ և աղքատ ․ (բացառութիւն կըհամարուի շնորհական օրէնք ․ ուրկէ որ տեղի կուտայ բնական օրէնք) ։ Այս բացառական օրէնքէն դուրս , ամուսնական սահման խանգարողները աստուածային վճռոյն և բնական օրինաց դէմ կըմեղանչեն ։

Բարի է ամուսնութիւն , եթէ երկու կենակիցները պահեն իրենց հաւատարմութիւն և համեստութեան ․ երկու այլևայլ մարմինները մէջ մէկ սիրտ մէկ հոգի և մէկ սէր կըբնակին ․ քաղցր է երբ ամուսնացեալք ողջամիտ , առաքինի , պարկեշտ , համեստ, աշխատասէր և զաւակասէր լինին ։ Յաջողութեանց մէջ միմեանց ուրախակից , ձախորդութեանց մէջ ցաւակից և վշտակից լինին ։ Ամուսնացելոց մինն արեգակը է , միւսն լուսին․ եր-

կուքն ալ ի միասին պէտք է որ անբիծ լինին ։ Կնոջ անունը անմահացուցողը իր համեստութիւնն է , նա թող պարծի իր համեստութեան զարդերով . այրն թող ուրախանայ իր անարատ սիրոյն պարզ ճառագայթներով ։ Անկեղծ հարսի հաւատարիմ նշանաբանը իր բարոյականն է . զի աշխարհի բովանդակ հարստութիւն չկրնար հաւասարիլ ամուսնական սուրբ սիրոյն ։ Սիրոյ կեանք երկու սրտից միութիւնն է . եթէ սիրահարը բաժնուին , սէր կըմեռնի ։ Երջանիկ են այն երկու լծակիցները , քանի որ սիրտերու միացուցիչ վէմը անշարժ կըպահեն ։ Ամուսնութեան սէրը գարնան ծաղիկ, վայելուչ պարտէզ, ծաղկազարդ բուրաստան է . բայց խիստ զգուշանալ պէտք է մարդկութեան թշնամի զարաւոր օձէն , որ ծաղիկներու մէջ ծածկուած , դիպող ժամանակի կ՚սպասէ , որպէսզի ամուսնութեան պտուղը թունաւորելով քայքայէ այն աստուածադիր սուրբ սահմանը ։ Բնութիւն իբրև օժիտ կուտայ մայրերուն բնական և ծնողական բուռն սէրը , մեծագործ սիրտը , դիւրաշարժ զգացումը ։ Նոքա այս քաղցր զգացմամբ կըմոռնան իրենց կրած վիշտ և ցաւեր խիստ յօժարութեամբ կըտանին իրենց զաւակաց հոգ և խնամք։ Այն սէրն է՝ որ սիրտ և ոգին ու միտք խնամատարութեան սերտ կապով նորա որդւոյն հետ կըկապէ , և մոռցունել կուտայ մօր իր կրած վիշտ և նեղութիւն , տքնութիւն, սրտմաշութիւն։ Մայրերը իրենց ծննդաբերութեան ժամանակին սիրով կըյաղթանակեն մահու . հարցանելով թէ ինձմէ ծնած զաւակս ո՞ղջ է , հոգ չէ որ ես մեռնիմ ։ Շատերը իրենց զաւակը կ՚ընծայեն աշխարհին և իրենք յօժարութեամբ կերթան աշխարհէն դէպ ի գերեզմանը ։ Ամուսնութիւն չէ՝ այլ բնազդումէ այն ամուսնութիւն , երբ լծակիցներէն մինն կըգրժէ իր սուրբ ուխտը և խառնակ կեանք մը կըվարէ . նա Աստուածային կապ խզելով ծնունդ կուտայ անխիղճ զրպարտութեան . անմեղ սպանման , բարոյական անպատուութեան , պարկեշտութեան և համեստութեան դէմ հարուած և նախատինք , ընչից և ստացուածոց վատնում , պատուոյ և կենաց սպառում և չար օրինակ տալ ողջամիտ մտաց և ընկերական աշխարհին։ Ամուսնութիւն պատուաստ մի է , որ ոմանց համար կըկանանչի և ոմանց համար կըչորանայ ։ Ամուսնական սուրբ ուխտի դէմ կըմեղանչեն այն կիները

Երբ իրենց երիկներու դառն տանջանքով, քրտնաջան աշխատութեամբ ձեռք բերած վաստակը յումպետս կըվատնեն և գեղխութեամբ կըշռայլեն, ուղղութեամբ և խնայողութեամբ չեն տնտեսեր: Չեն մտածեր թէ որչափ աշխատութեամբ և արհամարհանքներով կրցած են այն նիւթական պէտք և վաստակ ձեռք բերել, իրենց այրական պարտք կատարելու, և ընտանեկան պատիւը պաշտպանելու համար: Ընդհակառակն անտնտեսագէտ կանայք իրենց շռայլութեամբ այն բարիքները հեղեղներուն կուտան և պճնասիրութեան և փառամոլութեան մէջ կընկըղմեն:

Այս տեսակները ամուսնական ծաղիկները թարշամեցունող խորշակներ են և քաղցր սիրոյ մէջ թոյն խառնողներ. նոցա ընտանեկան վիճակ պատերազմի թատր կըդառնայ. այն սիրոյ կապը, որ ամուսնական միաբանութեան հայր էր, նա անմիաբանութեան մայր կըդառնայ:

Յետ այնորիկ համակրական սէրը կաշխատի ամուսնութեան ջահը վառել. բայց վերահաս ատելութիւն կըձգնի զայն շիջուցանել. ասոր հետ կըմիանայ արդար ցասումը, վրէժխնդրութեան ոգին, սրտմտութիւն և բարկութիւն, պատուոյ և իրաւանց պաշտպան սուր ձայնը, զէնք կառնու ամուսնական սիրոյն դէմ, մերթ յաղթելով, մերթ յաղթուելով. սէրը հոն մահամերձ կըլինի, եթէ գթութիւն և ողորմութիւն միջնորդութեան ձեռք չ'կարկառեն և արանց մեծասրտութեան ոգին չ'շարժեն: Այրերը շատ անգամ իրենց ներողամտութեան վերարկուով կըծածկեն իրենց այս տեսակ կիները իբրև իրենց պատիւը:

Ասոր հակառակ՝ քաղցր է ամուսնութիւն. երբ այրն իբրև արտաքին վաստակաւոր սրտով մտքով մարմնով և կամաց յօժարութեամբ կըձգնի կ'աշխատի և իւր վաստակոց արդար արդասիք կըբերէ կըշտեմարանէ: Կինը տնտեսական խնայողութեան կշիռք ձեռքին վաստակաւորի աշխատութեան ծանրութիւն և իրենց զաւակաց ապագայ վիճակը կշռելով խնայողական արդար չափով կ'սկսի տնտեսել. որու վրայ նախախնամութիւն կուրախանայ. երբ կըտեսնէ որ իւր պարգևները յարգանօք կըպահուին և արժանապէս կըտնտեսուին հաւատարիմ մատակարարի ձեռքով. Խիստ վայելուչ է ամուսնութեան վիճակը, երբ մինն հայրենեաց

բարւոյն համար կ'աշխատի , միւսն տուն նստած հայրենեաց զաւակները կը խնամէ և երենց հարց յաջորդներ կը հասցունէ ։

Այր կերակուր կը բերէ անյարդ և անպատրաստ . կինը զայն կը յարդէ և կը պատրաստէ և իր առտնին գործերը կը կատարէ , զաւակաց դաստիարակութեան պէտքերը կը հոգայ . այրը իր արտաքին վաստակոց վայրէն , կինը իր առտնին ներքին ընտանեկան զբաղումներէն , զաւակները իրենց դաստիարակութեան վայրէն որոշեալ ժամանակին ի հանգիստ ի սեղան կը հրաւիրուին երամովին . և կը վայելեն իրենց արդար վաստակոց պտուղները նախախնամութեան պարգևը փառք տալով պարգևողին ։

Ո՞վ կրնայ կնոջմէն աւելի իր էրկան ցաւերուն ցաւակից և ուրախութեան ուրախակից լինիլ . ո՞վ քան զայն աւելի երկայնամիտ է իր ընկերոջ հիւանդութեան տխուր օրերու մէջ . ո՞վ կրնայ կնոջմէն աւելի մխիթարիչ լինիլ իր էրկան վշտաց , չարչարանաց և տառապանաց ։

Լաւ է ամուսնութիւն . վասնզի նաւահանգիստ է ։ Բայց նորա խռովութիւն , ովկիանոսի ալէկոծութենէն մեծ է , ուրեմն լաւ ընտրութիւն պէտք է . վասնզի միմեանց հետ անքակտելի կերպով կապուած մինչև ի գերեզման պիտի երթան . կանանց յատուկ պակասութիւնները կան որք շուտով չեն տեսնուիր և վերջէն տեսնելն ալ անօգուտ է . անզգամ կինը երկու օր միայն երջանկութիւն ցոյց կուտայ իր էրկան , մինն հարսանեաց , միւսն թաղման . զի անզգամ կին սեղանակից գազան , միաբանութեան ապականիչ ցեց , եղբայրական սիրոյ եղծիչ , խաղաղութեան ժանտախտ , բարւոյն խափանարար , չարութեան արծարծիչ , հանապազօրեայ պատերազմ , մահացուցիչ կենակից է ։ Բնութիւնն կենդանեաց ոմանց թոյն տուաւ , անզգամ կնոջն ալ չարախօսութիւն զէնք պաշտպանելու համար ։ Նոքա ամուսնութեան քաղցրութեան մէջ դառնութիւններ կը խառնեն ։

Անպարկեշտ կինը ամօթ և նախատինք կը բերէ , պարկեշտի գոռոզութիւն անտանելի է , աղքատը վայրապար ծախսերը կը սիրէ , հարուստը՝ գոռոզ և ամբարտաւան կը լինի , մանկամարդը պճնասէր կը լինի , տգեղը՝ անհաճոյ է իր ընկերին . գեղեցիկը նաև հաճոյ է ուրիշներուն , որու պաշտպանութիւն խիստ դժուար է ։ Ուրեմն լաւ է չամուսնանալը ։ Սակայն եթէ խանգարէ

ամուսնութիւն , նաեւ կը խանգարի մարդկութեան շղթայի օղակը։ Աստուածային հրամանը , բնութեան օրէնք , ազգաց իրաւունք և համեստութիւն . պարտաւորիչ ըրած են այն նուիրական դաշինքը . եթէ չ՝լինէր ամուսնութիւն , բնութեան հրաշալիք անծանօթ պիտի մնար և Աստուծոյ ամենակարող և ամենազօր ներգործութիւնները մեզ թագուն պիտի մնային . ուրեմն ոչ խոպան մերժելու է , և ոչ կոյր գկոյրայն ընդունելու է . ընտրելէդ վերջն ալ խիստ զգուշութեամբ պահելու է . որանց կատարելութիւն պէտք է , որ կանայքը ուղղութեան մէջ պահէ . կնոջ գեղեցկութենէն աւելի համեստութիւն փնտրելու է : Այն կինը որ գեղեցիկ է տեսլեամբ և ազնիւ իր գործերով . նա գեղեցկապտոյտ թունաւորիչ օձ է : Կնոջ գեղեցկութիւն ոչ թէ կերպարանաց վայելչութիւնն է , (զոր կը թառամեցունեն դէպք և պատահար . հիւանդութիւն և ծերութիւն) , այլ համեստութիւն , պարկեշտութիւն , աշխատասիրութիւն , հաւատարմութիւն , զաւակասիրութիւնն է . որք միշտ զուարթ են և չեն թառամիր :

Կինը ոչ աղախին է և ոչ իր էրկան տէրը , այլ ընկեր է . ամուսնական մատանին գերութեան շղթայ չէ , այլ ընկերութեան կապ է . այր՝ եթէ կուզէ որ իր կինը պարկեշտ լինի , նախ թող ինք պարկեշտ մնայ : Կինը իւր էրկան պատիւը պահած ժամանակ իւր պատիւը կը պահէ . զի մի են . և իւր պատիւ պահած ժամանակը իւր էրկան պատիւը կը պահէ , որ իրարմէ անմեկնելի են : Այրեր ալ կան որք իրենց ամուսնական պարտականութիւնները չ՚ճանաչելով վաստակնին յումպէտս կը վատնեն . զեղխ կեանք վարելով ընտանեկան թշուառութեանց պատճառ կը դառնան :

Կան համեստ կիներ , որ չարաչար կ՚աշխատին իրենց զաւակներու և զեղխ էրկան պէտքերը պատրաստելու և հոգալու : Տեսնուած են կանայք որք մինն իր ծծի կաթը , ուրիշ մը իր գլխի մազերը , միւս մը իր ակռան քաշած վաճառած են իրենց զաւակաց կեանք փրկելու համար : Տեսնուած են մայրեր , որք հարկէն ստիպեալ անվայել արարմանց մէջ գտնուած են , իրենց զաւակաց ոգեպահիկ հայթայթելու համար . Այն տեսակներու այրերը ամուսնական պարտականութեան սահման կոխոտող հրէշ-

ներ են ։ Այս այլանդակ , և անհամաձայն պարագաներէն բնա-
կանաբար առաջ կուգայ ամուսնական սիրոյ մահը , թշնամութիւն ,
ատելութիւն , բողոք , դատաստան , գրպարտութիւն , անպատխ-
չարախօսութիւն , ամուսնական պատուոյն դէմ նախատինք ։ Ըն-
տանեկան քողի տակ ծածկուած ամօթապարտ գաղտնեաց երևան
ելլել եայլն եայլն ։

Սէրը՝ կենդանի չէ , որ մեղքերը ծածկէ . երբ սէր կըմնայ
յետ այնորիկ աշխարհի քաղցրութեան բովանդակ ճաշակը ան-
կարող կըգտնուի դառնացեալ սրտերը քաղցրացունել և մեռեալ
սիրոյն կենդանութիւն տալ . իմաստուն են անոնք , որ գործը այս
աղետալի հետևանաց չ'հասցուցած խոհեմութեամբ կըվարուին ,
և կըպահեն ամուսնական հաւատարմութիւն , ու կ'ունենան հա-
մեստ և չափաւոր կեանք ։ Փոխադարձ սէրն , տնտեսագիտու-
թիւնն , ժրաջան աշխատութիւնն հեռատեսութեամբ կըհոգան ա-
մէն անհրաժեշտ պէտքերը ամրապինդ կըպահեն ամուսնական
կապը , խաղաղ և հանգիստ կապրին այս առժամանակեայ հե-
րանոց աշխարհի մէջ , և խաղաղ կելլեն աշխարհէս բարի և քա-
ղաքակիրթ զաւակներ թողլով ի յիշատակ ընկերական աշխար-
հին ։

# ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Պարզեցէք հայրերը և համեստ մայրերը՝ Նոցա ֆիզիքական դարմանք և կերակուրք, Նոցա համաձայնութիւն և տնտեսագիտութիւն. Զաւակաց խնամք և դաստիարակութիւն։

Կրթեցէ՛ք այդ համեստ կանայք, որք արտաքին զարդերէն աւելի ներքին պարկեշտութեան և համեստութեան զարդերով զարդարուիլ կը սիրեն։ Դոքա գիտեն թէ՝ արտաքին զարդերը միայն երևութական ծածկոցներ են և նոցա հնանալը և պատառիլ մըկութեան մէկ նշանն է. իսկ համեստութեան և պարկեշտութեան զարդեր մնայուն են և տևական և մինչև ի գերեզման պայծառ և զուարթ կը մնան. և բնութեան պարկեշտութեան քողով զարդարուելոյն համար ուրիշ զարդերու կարևորութիւն չեն ընծայեր։ Կ՚ըսեն նոքա, եթէ կին մը բնութեան գեղեցկութիւն ունենայ, և համեստ ու պարկեշտ չ՚ըլլայ. բնութիւն իւր տուածը ետ առած ժամանակ իրենք ինչո՞վ պիտի զարդարուին։ Նոքա խրատ կուտան ուրիշ մայրերուն որ իրենց զաւակաց ներկայութեան անպատշաճ շարժումներ չ՚ընեն և ցոփ չխօսին. զի նորափթիթ միտք ինչ որ տեսնէ զայն կ՚ընդօրինակէ։ Ծնողաց մէն մի տըգեղ խօսքերը մէկ մէկ գերեզման կը դառնան իրենց զաւակաց։ Չդաստիարակեալ զաւակները մարդ չեն ըլլիր, այլ կը մնան բընազդեցական կենդանիներ. զուրկ բարոյական հանգամանքներէ, որք հաշտութեան պտուղներ կ՚անուանուին քան թէ ամուսնութեան որդիներ։

Երբ նորածին զաւակը աշխարհ կու գայ, բնութենէն պատրաստուած ծիծ և կաթ առնչական կապ մը կըլինի մօր և զաւակի մէջ տեղ. զաւակը իւր անբարբառ հեկեկանօք իւր կարօտութեան պէտքերը բացատրելով մայրական գութ և սէրը իւր վրայ կը հրաւիրէ և կ՚առնու այն ամէն իրաւունքները, որք մօր բնական պարտքերն են։

Զաւակը թևերը կապուած, այն կաշկանդուած խանձարուրի մէջէն լալով իւր իրաւունքները կը փաստաբանէ, լալոյ մէկ ա-

նորոշ ձայնով ամէն բան կըհասկցունէ իւր մօր գթութեան և գորովանաց ։ Կաթ կ'ուզէ , որ իւր կեանք պահպանող սնունդն է . խնամք կուզէ , որ իւր կենդանութիւն պահողն է ։

Գգուանք կուզէ որ իւր ծնողաց սէրը և զաւակի հաճոյքն է. զաւակը իւր մօրմէն ի զատ ուրիշը չգիտեր և չճանաչեր , բնութեան սքանչելի դպրոցէն կ'սկսի ծնողաց և զաւակաց փոխադարձ պարտք և իրաւունք ։

Զաւակաց խնամք չ'տանող մայրերը թող երթան լերանց և անտառներու մէջ թափառին . հոն պիտի տեսնեն թէ , արծիւը իւր կորիւնը իւր կաթով կըկերակրէ . կովը իւր հորթ . մաքին իւր գառնուկը . հաւ իւր ճիտը . թռչունները իրենց ձագերը կըսիրեն և կըսնուցանեն ։ Շունն անգամ իւր լակոտը կըսիրէ բնական սիրով և կըսնուցանէ ։ Զաւակը իւր ծնողաց հոգւոյն հատորն է . նորա պարտիզի հարազատ ծաղիկն է . նոցա ծոցի բոյս և արմատոյն ծիլն է ։ Ուրեմն խնամել պէտք է . դարմանել պէտք է , զի իրենք են իրենց զաւակաց էութեան և գոյութեան պատճառը ։

Եթէ չ'լինէին ծնողք , զաւակներ անգոյ անծնունդ և անսընունդ կըմնային . եթէ չ'լինէին ծնողք · զաւակը զրկեալ պիտի մնար աշխարհի վայելքներէն , տեսարաններէն և լուսոյ ճառագայթներէն ։ Ծնողն է որ իւր անձը իւր զաւկի անձին , և հոգին նորա հոգւոյն փոխան կուտայ ։ Զաւակները պէտք է որ ճանաչեն այս ամէնը , իրենց սրտով խղճով և խորհրդով այս մեծ բարեաց և երախտեաց փոխարէն իրենց ծնողները յարգեն պատուեն և մեծարեն . և անոնց պէտքերը հոգան և կատարեն ։ Պարտաճանաչ զաւակի աչքին միշտ իւր ծնողք իրեն համար յարգի և մեծարելի են . հոգ չէ թէ նոքա ծառայ, ստրուկ , կամ աղքատ լինին . որդւոյն համար իւր ծնողք արքունի պալատանց մէջ բնակողներէն աւելի գերազանց յարգի են ։ Ծնողասիրութիւն , և առ այն ունեցած պարտուց կատարումը բնութիւն ինքը կըսովրեցունէ , և ամենէն քաղաքակրթեալէն սկսեալ մինչև յետին ռամիկն ամէնքն ալ այս սկզբունք ընդունած և յարգած են ։

Զաւակաց պարտքն է սիրել մեծարել և երախտագէտ լինիլ իրենց ծնողացը , նիւթապէս օգնել, բարոյապէս օգնել նոցա

ձախորդութեանց և չքաւորութեանց մէջ. վշտակից և մխիթարիչ լինիլ նոցա հիւանդութեան ժամանակ ։ Մեր գորով և խնամք տանել նոյա ծերութեան ժամանակ. խաղաղ և անվրդով պէտք է պահեն իրենց ծնողները և անոնց վերջի օրհնութիւնն առնելով տանին հասարակաց մայր գերեզմանին իբրև աւանդ յանձնեն . Հրէշ են այն զաւակները , որք իրենց ծնողաց սիրոյն գորովանաց , գգուանաց . բարեաց և երախտեաց դէմ սուր և սլաք կըգործածեն նոցա սիրտ և հոգին վիրաւորելու . զրկեալ ծնողաց աչաց արտասունքներ նոցա սրտի դառնութեան հետ խառնուելով խորշակի պէս ապերախտ զաւակները կըթառամեցունէ ։ Ստոյգ է թէ կան այն տեսակ ծնողներ , որք իրենք են իրենց զաւակաց չար լինելոյն պատճառը . վասնզի իրենց զաւակները մանկութեան ժամանակ չ'խնամելով և չ'դաստիարակելով , իբրև վայրենի ծառ կըմեծցունեն ի հարկէ որ վայրենի ծառոյն պտուղը անհամ կըլինի ։ Ի՞նչ իրաւամբ կընան ծնողք իրենց զաւակներէն կատարելութիւն պահանջել , երբ իրենք անկատար են իրենց ծնողական պարտուց մէջ , և իրենց զաւակաց շատ մը մոլութեանց պատճառները իրենք եղած են անզգուշաբար . Երբ ծընողք զանցառու կըլինին և չեն գիտեր թէ իրենց զաւակը իւր մատաղ հասակի մէջ ուր կերթայ , ընդ ում կըտեսնուի , դպրոց կըյաճախէ՞ թէ ոչ . կ'ուսանի թէ կըխաղայ , կ'իմաստասիրէ , թէ կ'իմաստակէ . ի հարկէ այս տեսակ սանձարձակ բարձի թողի եղողներէն մարդկային կատարելութիւն չէ կարելի յուսալ ։

Այն մայր՝ որ ի տուն նստած իւր դեռահաս աղջկան ներկայութեան ցոփ կ'ըխօսի , կըհայհոյէ , կընախատէ , կ'անիծէ , խուլութիւն և աղմուկներ կըհանէ , կըբամբասէ կըզրպարտէ , անվայել և անհաճոյ կեանք մը կըվարէ . միթէ հնա՞ր է այս տեսակ կնոջ աղջիկ զաւակէն համեստութիւն , պարկեշտութիւն , և կնոջ մը վերաբերեալ կատարեալ յատկութիւններ յուսալ ։ Եթէ պատահած է երբեմն փուշի վրայ վարդ բուսնիլը . այն մասնաւոր բացառիկ տնօրէնութիւն մի է . երբ խաչափառը իւր խոտորագնաց որդին կըյանդիմանէր թէ ինչու ուղիղ չես քալեր . որդին կըպատասխանէր իւր ծնողաց թէ՝ այնչափ ուղիղ կընամ գնալ , որչափ որ դուք ուղիղ կ'երթաք .

Բնութիւն ինքնին կ'ուսուցանէ թէ զաւակաց նախնական դըպ-

բոյը իրենց մայրենի բնակարանն է․ Նոցա ուղղութեան վարժապետը իրենց ծնողներն են, որք միանգամայն հեղինակ են իրենց զաւակաց։ Բնապէս Ճարտար տղայի մէկն ըսած է․ ուրիշ վարժապետի պէտք չունիմ, անոնցմէ պիտի ուսանիմ որոնցմէ որ կեանք առած եմ։ Ծնողք պէտք է զետեղեն իրենց զաւակաց դատարկ շտեմարանի մէջ և նոցա մաքուր սրտի վրայ պատկերացունեն լոյս և Ճշմարտութիւն, գիտութիւն և իմաստութիւն, ուղղութիւն և արդարութիւն, բարին և բարոյականը, վայելուչն և օգտակարն, պարտք և իրաւունք․ Նաև հեռի պահել զանոնք չարէն և վնասակարէն, խաւարէն և տգիտութենէն․ կրթել պէտք է նոցա սիրտ և հոգին, ազնուացունել պէտք է նոցա զգացումները, վսեմացունել պէտք է նոցա խորհուրդները, նոցա կամք մշակելով առողջ վիճակի մէջ դնել։ Առաքինութեան հունտերը սերմանել նոցա սրտի և մտաց մէջ, միշտ խօսել անոնց ներկայութեան այն բաները՝ որք համեստ են և բանական և օգտակար․ եթէ պատահի որ մոլի և տգեղ իրաց վրայ խօսուի, անոնց զզուելի և վնասակար լինելն ալ անմիջապէս հասկցունելու են իրենց զաւակաց։ Տղայոց միտքը ընտրութեան մասին կոյր է․ ուրեմն ծնողաց պարտքն է կոյր միտքը իմաստութեան և գիտութեան լուսով լուսաւորել, նոցա բարի զգացումները արթնցունել, նշանաւոր երևելի և աշխարհաշէն մարդկանց բարի գործերը նոցա սրտի վրայ պատկերացունել, նշանաւոր հեղինակներու ողջամիտ կտորները կարդալ և կարդացունել տալ․ բարի անձանց առաքինի գործերով, վեհանձն և մեծագործական օրինակներով նոցա միտք հրահանգելու է․ օգտակար և պիտանի արհեստներու վրայ ազդեցիկ կերպով խօսելու է և նոցա ուշադրութիւն առ այն հրաւիրելու է։ Եթէ չ՚լինին ծնողական այս դասերը, տղան բարոյական առաքինութեան շէնքէն անջատուելով՝ կը գլորի կերթայ մոլութեանց շարքի մէջ կը դասուի ի նախատինս իւր ծնողաց և ի վնաս ընկերական աշխարհի։ Զաւակները իրենց ծնողաց խօսքերէն աւելի նոցա գործերը կընդօրինակեն․ նոցա մէկ տգեղ վարմունք կարող է զաւկի ամբողջ կեանքն ապականել․ անհրահանգ զաւակն բնազդմամբ ապրիլ կ՚ուզէ քան թէ բանականութեամբ, պատուաւորէն աւելի հաճոյականի ետևէն գնալ կ՚ուզէ խորհուրդէն աւե-

լի բաղձանաց կը համակերպի․ կամաց կոյր խորհրդոյն հետևելով քարեկամը կը մերժէ․ Թշնամւոյն եանէն կը գնայ ։ Այս տեսակ զաւակները եթէ ունենան անբաւ հարստութիւն, շատ շուտով կուտան զեղխութեան, շռայլութեան, փառամոլութեան, անկարգ ցանկութեան ։ Այս տեսակ տղէտ վարմունքները, որք մէկ մէկ անպարտելի թշնամիներ են, խիստ շուտով կը յափշտակեն այն անսպառելի գանձերը նոցա ձեռքէն ։ Այս տեսակները ճոխ կը ծնանին, բայց աղքատ կը մեռնին, ազնուական կը ծնանին, ստրուկ կը մեռանին․ իրենց հայրենի հարստութիւնը իրենց մոլութեանց մէջ կը թաղեն և իրենց ազնուատոհմի փառաւոր անունը անարգանաց ծախելով նոցա յիշատակը կը ջնջեն․ Որբեմն անկիրթ զաւակին համար գանձ և հարստութիւն անօգուտ է․ հեռատես ծնողք գանձ կը վաստկեն, զաւակ կը կրթեն զի կրթեալ զաւակը կրնայ հարստութիւն ձեռք բերել․ իսկ անկիրթ զաւակը եղածը կը վատնէ։ Անկիրթ ազնուականը իւր տոհմի ազնուականութիւն կը կորսնցունէ․ իսկ կրթեալ ռամկականը իւր տոհմի ազնուականութեան հիմնադիր կըլլայ ։ Լաւ է աղքատ, բայց իմաստուն զաւակ թողուլ, քան թէ փարթամ և տղէտ ։ Զաւակները իրենց հօր առաքինութենէն աւելի իրենց մօր մոլութեանց կը հետևին ։

Զանցառու ծնողք լաւ է եթէ լան իրենց զաւակաց շիրմի վրայ քան թէ նոցա մոլութեանց վրայ, վասնզի մահուանը՝ ողբ մի է, բայց մոլութեանցն՝ բազմատեսակ ։ Զաւակը չափէն աւելի փափկասուն պահելը նորա կեանք թունաւորել է, ծնողական սէրը յայտնելէն աւելի թաքուն պահելն է գովելի, չափազանց սէրը մեծ թշնամիէն աւելի կը վնասէ տղայոց ։ Զաւակի պակասութեանց աչք գոցելը մոլութեանը դռներ նորա առաջ բանալ է ։ Մօրու կը համարուին այն մայրերը, որք գիտեն զաւակ ծնանելը և չեն գիտեր զանոնք կրթել․

Հեռատես ծնողք իրենց զաւակաց դաստիարակութիւն կը յանձնեն ոչ միայն իմաստնոյն՝ այլև առաքինւոյն․ ինչպէս որ ձէթը դրոյ կարծարծէ, այսպէս չափազանց ազատութիւն երիտասարդի հաճոյքները գրգռելով կը բորբոքէ․ որդւոց մոլութիւնը իրենց ծնողները դէպ ի բարոյական մահ կ'առաջնորդէ․ Ծնողաց առաքինութիւնները իրենց մոլի զաւակաց ագեղ գործերու

մէջ թաղուելով կըմահանան․ աղջկանց համեստութիւն ապակի է․ կոտրելէն վերջ՝ այլ ևս առողջանալը անկարելի է ։

Բարի ծնողաց զաւակները իրենց ծնողաց փառք և պատիւ կաւելցունեն, որոնցմէ որ ուսան բարի լինելը ։ Զգայուն ծնողաց համար ընչից և ստացուածոց կորուստը այնչափ ցաւ չազդեր, որչափ որ կ՚ազդէ իրենց զաւակաց ամօթխածութեան կորուստը։ Կ՚ըսեն նաև․ կորուսածք ինչք և ստացուածք կարելի է կրկին ձեռք բերել․ իսկ զաւակի կորսնցուցած ամօթխածութիւնը այլ ևս անկարելի է ձեռք ձգել․ հաճոյքները վայրկենական են, բայց ամօթխածութեան ցաւը մշտնջենական է ։ Փայտի երկիւղէն աւելի պատուոյ զգացումը զետեղելու է մանկանց սրտի մէջ ։ Զգայուն տղայ մը աւելի կըներգործէ խոժոռ նայուածք մը քան թէ փայտի մը հարուած ։ Ծնողներ կան որք իրենց զաւակաց կրթութիւնը իրենց անկրթութենէն կ՚սկսին․ մոլի զաւակները ցորեն ապականող որոմներ, պտուղ ապականող թրթուրներ, մեղր յափշտակող իշամեղուներ, այգի ապականող աղուէսներ, ընկերական աշխարհի հրէշներ, զգեստ ապականող ցեցեր, հայրենեաց պատուոյն նախատադիրներ են ։

Կատարեալ ծնողք անոնք են, որք կ՚ուսուցանեն իրենց զաւակաց ամէն մոլութիւններէն խորշիլ և առաքինութեան ետևէն գնալ ։ Նաև կուսուցանեն զԱստուած սիրել, հայրենիք սիրել, ընտանիք սիրել, ծնող, քոյր, եղբայր, ազգական, բարեկամ սիրել և յարգել․ թշնամեաց չարին բարի փոխարինել․ Նոյն ատելութեան սուրը իրենց քաղցր սիրով խոնարհեցունել, եկեղեցի սիրել, դպրոց և կրթութիւն սիրել, մարդասէր լինել, ազգի զաւակները սիրել, լոյս գիտութիւն ճշմարտութիւն և արդարութիւն սիրել ։ Խղճի ձայնին լսել, խորհրդով գործել, կրից բաղձանքներէն հեռի մնալ կարելի եղածին չափ ։ Ուրիշին փաս չ՚տալ, օգնել աղքատին և տնանկին, մէկի մը զրկանք չ՚ընել և միշտ բարի խորհիլ և բարի գործել, ժուժկալ և պարկեշտ լինիլ, զեղխութիւններէն խոյս տալ և հրաժարիլ, տնտեսագիտութեամբ ապրիլ․

Այս տեսակ զաւակ ունեցող ծնողները երջանիկ են և ընկերական աշխարհի բարեկամ ու բարերարներ ։ Նոյն զաւակները իրենց ծնողաց շիրմի վարդերն են, և իրենց ծնողաց յիշատակին

անմահացունող և հայրենեաց անունը փառաւորողներ են ։

Ասոնց հակառակ մոլի զաւակները փոխանակ վարդի՝ փուշով կըպսակեն իրենց ծնողաց գերեզմանը և փոխանակ փառաց՝ նախատինք և արհամարհանք, անէծք և դառնութիւններ կըտեղացունեն անոնց գերեզմանի վրայ, ու անոնց յիշատակը անարգանաց մէջ կըթաղեն ։

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Զաւակաց դաստիարակութիւն, Ծնողաց և զաւակաց ընտանեկան կեանք և նոյն ժողովուրդի դերը և կրթութեան ։ Ծնողաց իշխանութիւն, և զաւակաց հնազանդութիւն ։

*Զաւակները կըզարգանան, կ'ամուսնանան և իրենց ծնողաց կը յաջորդեն . ու ընտանեաց հայր կը լինին ։ Անոնք որ լաւ դաստիարակեալ են, բարեպէս կառավարեն իրենց ընտանիք և զաւակները ։ Իսկ անոնք որ յոռի դրութեան մէջ մնացած են, թէ իրենք թշուառ կըլինին և թէ իրենց ընտանիք կըթշուառացունեն։*

*Ընտանեաց հայրերը պէտք է որ լինին խոհեմ, ուղղախոհ և առաքինի, ճշմարտութիւն, արդարութիւն և ուղղութիւն իրենց առաջնորդ և ղեկավար ընտրեն ։*

*Նոքա պարտին ունենալ մեծ սիրտ, վեհանձն ոգի, սուր միտք, հեռատես աչք, բարձր խորհուրդ, անվեհեր արիութիւն։ Իրենց արդար ցասման հետ պէտք է որ խառնեն մարդասիրական գթութիւն, վեհանձն ողորմութիւն. Նոքա պէտք է որ անխտիր կերպով սիրեն իրենց եղբայրները, ընտանիք և զաւակները, ողորմած և գթած լինին իրենց դիմողներուն և իրենց թևերու տակ պատսպարուողներուն ։ Նոքա իրենց նեղ պարագաներու մէջ պէտք է որ խորհուրդ առնեն իրենցմէ աւելի փորձառու ծերերէն . զի փորձառու ծերերը հնութեանց թանգարաններ և կենդանի արձանագրութիւններ են ։ Նոքա իրենցմէ աւելի ծերերուն պէտք է որ տան հայրական պատիւ, հասակակիցներուն համակրական սէր, տղայոց գութ, գորով և գգուանք. պէտք է որ քաջալերեն իրենց եղբայրներ, և աշխատաւորներ բանիւ և արդեամբ ։ Հեռատես լինին տնտեսելու մէջ, ի նկատ առնուն տեղը, ժամանակը և պարագաները ։ Ընտանեաց հայրն պէտք է որ ունենայ անարատ կեանք և կենցաղավարութիւն, որպէսզի իւր ստորադրեալները զայն արատաւոր տեսնելով անկէ չ'խորշին կամ զզուին ։*

*Իմաստուն հայր ուրիշներու պաշտպանութեան չկարօտիր . զի ինք կըպաշտպանուի իւր անմեղութենէն և առաքինութենէն ։*

Սորա կընմանին այն պտղատու ծառերուն որք իրենց առաքինական պտուղներով իրենց ընտանեաց հանգիստ և երջանիկ կեանք վայելել կուտան ։ Նորա պէտք է որ լաւ ճանաչեն իրենց մէն մի ընտանեաց բարք և բնաւորութիւն , և ըստ այնմ վարուին նոցա հետ ։ Զի երիտասարդները հաճոյք և վայելք կըփընտռեն . կատարեալները՝ օգուտներ կ'որոնեն . ծերերը՝ պատիւ և հանգիստ կըփնտռեն . փառամոլները՝ պերճութիւն ։ Հայր մը պէտք է որ ունենայ այն սիրտ և ոգին , որոնցմով կարողանայ մէն մի ընտանեաց սիրտ յինքն գրաւել ։ Վասնզի մէն մի ընտանիք կուզէ իւր հօր սիրտը յինքն գրաւել ։ Հոս մեծ կատարելութիւն և բարձր հանճար պէտք է . որ կարողանայ իւրաքանչիւրի սիրտ ճանաչել և ըստ այնմ սիրտ տալ անոնց և նոցա համակրանք վաստըկիլ , որպէսզի միշտ հլու մնան իւր հրամանները կատարելու ։

Տանուտէր պէտք է որ անբիծ լինի հայելիի պէս , որպէսզի իւր ընտանիք նորա վրայ նայած ժամանակ իւր դէմք արատաւոր չ'տեսնէ ։

Ընտանիք անմեղ գառնուկներ են . եթէ հայրն չ'հսկէ արթուն աչօք , գայլեր զանոնք կըյափշտակեն ։ Երբ իւր գառակները և եղբայրները իւր օրինաւոր հրամաններու դէմ կ'անսաստեն , զանոնք մերթ յորդորելով , մերթ յանդիմանելով , մերթ թեթև պատիժներով յուղղութիւն բերելու է ։ Բայց պատիժները միշտ հայրական գորովներով և գթութեամբ բարեխառնելով տալու է ։ Երբեմն երկիւղները հարկաւոր են . բայց առանց ատելութեան . վասնզի հօր մը համար ատելութիւն բնական չէ ։ Երբ օրուան գիշերը կը յաջորդէ՝ ոչ ոք հետաքրքիր կը լինի , իսկ երբ արեգակը և լուսին կըխաւարին՝ ամէն մարդ հետաքրքրութեամբ կընայի և պատճառն իմանալ կ'ուզէ ։ Այսպէս և սովորական մարդկանց թերութեանց վրայ ոչ ոք չնայիր , իսկ ընտանեաց հօր թերութեանց վրայ ամէն մարդ խոշորացոյցով կընայի . վասնզի արատաւոր հայելիի մէջ մէկը կարող չէ իւր իսկական պատկերը պայծառ կերպով տեսնել ։ Նորա մէկ պակասութիւն , կընայ մեծամեծ աղէտներ յառաջ բերել ։ Խոհեմ հայր իւր ընտանեաց միտք իմաստութեամբ կըճոխացնէ , սիրտ միաբանական սիրով կըվառէ , սոյն միաբանական սիրոյ մէջ խորութեան ոգին կարող

չէ մուտք գտնել, վասնզի հայրը իւր ընտանեացն է ընտանիք՝ իրեն. երբ ընտանեաց մէն մի անհատ իւր սիրտ և ոգին իւր հօր հոգւոյն հետ կըպահէ, նեղ պարագաներու մէջ միթէ կարելի՞ է որ իւր ունեցած ինչք և ստացուածք անկէ խնայէ. Հետաստես հայրերը անսպառելի գանձէն աւելի իմաստուն յաջորդներ կըփափագին թողուլ: Վասնզի իմաստունը կըշինէ, իսկ տգէտն կըքանդէ, իմաստունը կըժողովէ. իսկ տգէտն ժողովածները կըցրուէ: Անարժէք է տան մը հարստութիւն երբ ընտանեաց սիրտ անմիաբան է: Ընտանեկան կազմութիւն, քնարի կընմանի, որու լարերը պէտք է որ ներդաշնակ լինին. եթէ լարերէն մին զարտուղի, ներդաշնակութիւն կըխանգարի. Հետեւաբար անհամաձայնութեան սխալ քողը կըծածկէ ընտանեկան ներդաշնակութիւն: Ներքին ցեցը եկամուտ մուկէն աւելի շուտով կըյաջողի հանդերձները ապականելու: Բարի հայրն ինք չար չգործեր, հետեւաբար ուրիշներու չարէք հասցունելէն ալ չվախնար, և ինչու պիտի վախնայ, երբ վարժուած է չարերու չարեաց դէմ բարիք փոխարինելը: Երբ ընտանեաց ներքին կապերը ամրապինտ են, արտաքին որոգայթները չեն կարող նոցա մէջ մուտք գտնել և իրենց ձախորդ դերը կատարել: Իսկ եթէ ներքին կապեր թոյլ են, արտաքին թշնամին պարագայներէն օգուտ քաղելով տեղ կըգտնէ ընտանեաց մէջ մտնելու և նոցա խաղաղութիւնը խռովելու. որու հետեւանք շատ անգամ կըլինի ընտանեաց կործանումը: Հայրեր կան՝ որք զիրենք կառավարելու հեղինակութիւն չունին, միշտ ուրիշներու խորհրդով կըկառավարին. նման այն թռչնոց որք ուրիշի թեւերով կըթռչին. և երբ ուրիշները իրենց թեւերը չպարզեն, նոքա անգործութեան կըդատապարտուին: Հայր մը յանդուգն չնկատուելու համար խորհուրդ առնուլ պէտք է, և օգտակար իսկ է՝ ինք անխորհուրդ չ՚հրատարակուելու համար իւր հասուն խորհրդոց շտեմարանեն ծնանելու է օգտակար խորհուրդներ, և զանոնք ի գործ դնելու է ի հարկին. զոր խորհուրդները խորհրդականաց ամէն խորհուրդներէն բարձր ու վսեմ և գերազանց պէտք է որ լինին:

Իմաստուն հայր իւր ընտանեաց ամէն բանծները կըլսէ, բայց լսածներու ամէնքը գործադրելէ կըզգուշանայ. վասնզի գիտէ

թէ խորամանկները սովոր են իրենց յատուկ հանգամանքներով մեծի սիրտը պատրել և սուտն իբրև ճշմարիտ, Փաստակարն իբրև օգտակար ընդունել տալու փորձ փորձել։

Հետատեսն իրեն ներկայացած խնդիրը լաւ կը քննէ և անոր ամէն մանրամասնութիւնները ի նկատի կառնու. հաւատարիմ և պատուաւոր վկաներ կուզէ և միևնոյն խնդիրը այլևայլ ժամանակներու մէջ քանի մը անգամ խօսիլ կուտայ թէ լաւ ըմբռնելու թէ սուտեր չխառնուելու համար, եթէ սուտեր խառնուած են. ժամանակի փոփոխութիւնէ զանոնք կը սրբագրէ. վասնզի սուտն ճշմարտի պէս մարդկանց մտաց մէջ միշտ անփոփոխելի չմնար, թէ կը մոռցուի և թէ կը փոփոխի։

Բարի և ընտանեսէր հայրը իր կենաց պահպանութեան պահապանները չփնտրեր, զի իր ընտանեաց սէրը զինք շրջապատած կը պահպանէ։ Եւ ինչո՞ւ չպահպանէ, քանի որ իր խաղաղութիւն և երջանկութիւն նորա իմաստութիւնէն կախեալ է։ Ընտանիք. նորա կեանք պահպանելով իր խաղաղութիւն և երջանկութիւն կը պահպանէ և զայն կորսնցուցած ժամանակ իր խաղաղութիւն կորսնցունէ։

Երեզակը իր լոյսով տիեզերք կը լուսաւորէ, հայր իր իմաստուն խօսքերով իր ընտանեաց մտաց մէջէն խաւարները կը հալածէ և զանոնք ճշմարիտ լուսով կը լուսաւորէ։ Ինչպէս որ աշխատաւոր վաստակաբեկները տերևալից ծառերու հովանւոյն տակ նստելով հանգիստ կառնուն, այնպէս ալ վաստակաբեկ ընտանիքը իր խնամատար հօր քաղցր և անկեղծ սիրոյն հովանւոյն ներքև նստած հանգիստ կեանք և երջանկութիւն կը վայելէ։

Իսկ ասոր հակառակ, կարճատես հայրը՝ ծառի պտուղները քաղած ժամանակ նորա ճիւղերը կը խորտակէ, առանց դիտելու թէ գալիք տարուան պտուղներէն կը զրկէ ինքզինք և իր ընտանիք. նոքա ոչխարի կաթն և բուրդ առնելէն վերջ ոչխարն ալ կը մորթեն, առանց զգալու թէ գալիք տարուան մէջ կաթ, բուրդ և ոչխար ի միասին կը կորսնցունեն։

Ընտանիք պէտք է որ ակնածէ իր մեծէն. մեծն ալ վերնախնամ Տէրութիւնէն։ Մեծը պէտք է որ ակնածէ իր ընտանեաց հասարակաց իրաւացի տրտունջներէն։ Գլուխ մը առանց մար-

մնոյ անկենդան է . մարմինը առանց գլխոյ դիակ մը է . ուրեմն կենդանութիւնը գլխոյ և մարմնոյ միաբանութեան մէջն է , միաբանութիւնն է որ տունը բարեկարգութեան մէջ կը պահէ ։ Երբ գլուխն հիւանդ ըլլայ , ամբողջ մարմինը անգործութեան կը դատապարտուի ։ Ընտանեաց մը համար միաբանութիւն պէտք է , միաբանութեան համար անկեղծ սէր , առողջ միտք , հաւատարմութիւն և հաւասարութիւն պէտք է ։ Մեղուները միաբանական սիրով կապուած կ'աշխատին և ընկերական աշխարհին մեծ բարիք կը մատակարարեն ։ Ասոր հակառակ՝ իշամեղուներն իրենց անմիաբանութեամբ կը քանդեն և կը փճացնեն ։ Պարտուց և իրաւանց սահմանը պէտք է որ ըլլայ կառավարչի նշանաբան ։

Եթէ կայ աշխարհիս մէջ դժուար բան մը , այն ալ ընտանիք կառավարելն է ։ Վասնզի բնութիւն զմարդիկ միապէս չարտադրելոյն համար խղճի օրէնք ամենուն վրայ հաւասարապէս ներգործեր , սրտից տարբերութիւն , խորհուրդներու տարբերութիւն , զգացմանց տարբերութիւն , զմարդիկ այլեայլ ոլորուն ճանապարհներու կառաջնորդեն , ուրկէ կը ծնանի մարդկանց կարծեաց անհամաձայնութիւն ։ Այս անհամաձայնութիւն յառաջ կը բերէ խառնուրդ գաղափարներ , վէճ և խռովութիւններ ու ալեկոծութիւններ , որոց մէջէն ելլելու համար մեծ հանճար , հեռատեսութիւն և խոհեմութիւն պէտք է ։

Ինչպէս որ մարմին առողջ պահող տարերաց համաձայնութիւնն է , այնպէս ալ ընտանիք մը անվնաս պահող մեծին խոհեմութիւնն է ։ Ուր խոհեմութիւն կը պակսի , հոն մեծ և փոքր միապէս կ'սկսին ծփալ յաջողութեան և ձախորդութեան , վշտաց և ցաւոց , յուսոյ և երկիւղի , կենաց և մահու , հանգստութեան և մրրիկներու մէջ առանց հանգիստ գտնելու ։ Հոն տանուտէրն վերահաս վտանգները տեսնելով ցամաք և ազատութիւն կ'աղաղակէ . սակայն պատուղ չկայ ։ Մինչ փորձառուն իր կապանքէն արձակուիլ կուզէ այն տաղտկալի վիճակէն , անփորձն արտաքին փայլերէն խաբուելով հազարաւոր հնարքներ ի գործ կը դնէ այն տառապանաց տունը մտնել ։ Երջանիկ են անոնք՝ որք այդ լուծին գլուխ չխոնարհեցուցին , իմաստուն են նոքա՝ որք անվնաս մնան այդ ցաւոց տուն և անվնաս դուրս ելան ։ Թշուառ են անոնք՝ որք ներս մտան և բազմազլխի խայծերով վերաւորած

կիսամեռ մնացին ։

Մարդկանց վիճակ անստոյգ և անհաստատ է․ այս աշխարհի հիմունք անհաստատութեան վրայ հաստատուած է և միշտ շարժման մէջ է մարդկանց սրտի, մտաց և գործերու պէս ։ Մարդիկ շարունակ կըհոլովուին անիւի պէս յաջողութեան և ձախորդութեան․ փառաց և անարգաց, աղքատութեան և հարըստութեան, առողջութեան և հիւանդութեան, առաքինութեան և մոլութեան առանցքներու վրայ․ ոմանք բարձրէն կըխոնարհին, ոմանք խոնարհէն կըբարձրանան․ բաղդ իւր բարիքներով խաղ կառնէ զմարդիկ․ վասնզի այսօր կուտայ և կ'ուրախացնէ, վաղը կառնէ և կըտրտմեցունէ ։ Բաղդի հետ խաղացողներու վիճակ միշտ անստոյգ է և կասկածելի․ նա շատ անգամ իւր բարիքները արժանաւորներէն առնելով անարժաններուն կուտայ ։

Բնութիւն մարդկանց ժրութիւն, գեղեցկութիւն, առոյգ վիճակ մը շնորհելով, զանոնք կուրախացնէ և երեւութական երջանկութիւն և զուարճութիւն կուտայ․ սակայն յետոյ յական թօթափել դէպք և պատահար, հիւանդութիւն և ծերութիւն կըկապտեն և կըկողոպտեն զմարդիկ բնութեան այս ձիրքերէն ։ Կան գեղխութիւն և մոլութիւններ ևս՝ որք զմարդիկ գարնան ծաղիկներու պէս բացուած տեսած ժամանակ իրենց աշնանային խորշակներով կըխամրեն և կըգօսացունեն և արմատախիլ կ'ընեն ։

Այն հարուստները՝ որք հոյակապ պալատներու մէջ նստած և ամէն բարիքներով լեցուած երջանիկ կըկարծեն զիրենք, անոնցմէ շատերը բախտէն հարուածեալ թշուառներու կարգն անցան․ ոմանք աղքատութեան, ոմանք հալածանաց և տարագրութեան մատնուած․ ուրեմն վերջին օրն է որ ցոյց կուտայ թէ մարդիկ երջանիկ են թէ ապերջանիկ․ Նախանձը իւր որոգայթ կըլարէ հարուստի արկղի տակ և դիպող միջոցի կ'սպասէ ․ Հաճոյքներու ետեէն գնացող հարուստը ինչպէս կրնայ այս խարդաւանութիւնները տեսնել և նոցա առաջն առնուլ․ ուրեմն առաքինութիւն միայն է՝ որ կարող կըլինի զմարդիկ յաւիտենականապէս երջանկացունել ։ Առաքինութիւն թշուառաց արտասուքները կըսրբէ, վիրաւորեալներուն վէրքերը կըբժշկէ ․

Ինչպէս որ մէն մի հպատակ ծառայ է իւր մեծին, այնպէս ալ մեծը ծառայ է մէն մի հպատակին․ զի ամենու աչք անոր

կընայի և ամենու անխղճութիւն անկէ է․ Ընտանեաց համակրութիւն չ'վաստկող հայր կ'ուրծքի հիւանդութիւն ունեցող ախտաւորներուն կընմանի, որուն յաղթելու համար արտաքին թշնամոյն պէտք չկայ։ Վասնզի նա ներսէն հիւծուելով իւղ չունեցող ճրագի պէս կըմարի և կ'անհետանայ․ Բախտն և ճակատագիր կ'ուզեն զմարդիկ հալածել ընդ ծով և ընդ ցամաք և թշուառութեանց ենթարկելով իրենք կըզուարճանան։ Բայց շատ անգամ կըյաղթուին նոցա առաքինութիւններէն, զի համբերութիւն խիստ լաւ գիտէ յաղթել զինք հալածող բախտին։

Չհամբերողը մեծասիրտ չէ․ Բախտ կըսիրէ ծաղր ընել ըզմարդիկ և նոցա թշուառութեանց վրայ ուրախանալ․ մանկական եռանդ և սնոտի զուարճութեանց ախորժակ անփորձները առաքինութեան գրկէն կըհեռացունէ, սակայն մարդիկ երբեմն թըշուառութեամբ կ'զգաստանան և կուսանին այն ամէն բաները՝ որոց յառաջագոյն չէին ուզեր հաւատալ։

Բախտի անողորմ հարուածները երբեմն մարդիկ ուղղելով կ'երջանկացունեն։ Համեստ հայրերը պատկառելով կըհրաժարին չափազանց գովեստներէն և գովեստները իրենց արժանիքէն բարձր կըդատեն, շատ կ'զգուշանան որ հպարտութեան անելանելի խորերու մէջ չ'գլորին։ Նոքա ոչ չափազանց հարստութեան և ոչ մեծութեան կըփափաքին․ Նոցա փափաքն է արդարութիւն և առաքինութիւն փնտրողներուն օգնել և զանոնք քաջալերել։ Այն թշնամիները՝ որ ասոնք կըհալածեն յանդէտս կուտան անոնց այն երջանկութիւն, որ աշխարհի մեծափարթամ ճոխութիւններն անգամ չեն կրնար տալ․ վասնզի այն հալածման մէջ նորա գտնեն խղճի հանդարտութիւն, վարուց անարատութիւն, պարզ կենցաղավարութիւն, անմեղ կեանք և խաղաղասէր հանգստութիւն ժառանգել։

Ուրախ կըլինին որ հեռացած են ստախօս, նենգամիտ, խաբեբայ, շողոքորթ, ապերախտ և տգէտ մարդիկներէն․ Նոցա ցանկութիւնն է ճշմարտութեան հաճոյանալ, հոգ չէ որ անհաճոյ երևնան մոլորամիտներուն։

Նոքա այն արկածներու մէջ եթէ վիշտ և նեղութիւն ևս կրեն, դարձեալ մխիթարեալ են, և զայն վիշտերը կըմեղմացունեն իրենց համբերատար երկայնմտութեամբ, իմաստու-

թեամբ, խոհեմութեամբ և առաքինութեամբ։

Կ'ըսեն նորա. Աստուծոյ ողորմութիւն զմեզ ազատեց այն ողորմելի մարդիկներէն, որք ոչ պարտք կը ճանչեն և ոչ իրաւունք, ոչ տեղը կը ճանչեն և ոչ ժամանակը. ոչ խորհիլ գիտեն և ոչ խօսելու եղանակը, ոչ համոզել գիտեն և ոչ համոզուիլ կըսիրեն. նորա շինելու տեղ կը քանդեն, շահելու միջոցին կը վնասեն. բժշկելու տեղը կը մահացունեն, ընաւ բան մը չեն գիտեր, ամէն բանին գիտակ կը ձևանան։ Ասոնք ոչ բարեկամ կը ճանաչեն և ոչ թշնամին, ոչ բարերար և ոչ չարարար, ոչ պատիւ և ոչ անպատուութիւն, կը վիրաւորեն առանց գիտնալու թէ վիրաւորեցին ու չեն զգար։ Թշուառութեան մէջ կը տառապին, չեն իմանար թէ թշուառ են, միևնոյն է իրենց համար ծառայութեան կապը և ազատութեան գահը. ամէն բան դէպքին կու տան, թշուառութիւնները Աստուծոյ չ'կամեցողութեան կու տան։

Իսկ ասոնց հակառակ երջանիկ են այն հայրերը, որք ունին իրենց թևերու տակ պատսպարեալ այնպիսի ընտանիք՝ որ իրենց պարտուց և իրաւանց սահմանը թէ լաւ կը ճանաչեն և թէ կը կատարեն. հօն գործաւոր կը փառաւորուի իր քաղցր աշխատութեամբ, կանայք կը պարծին իրենց տնտեսագիտութեամբ, պարզութեամբ և համեստութեամբ. տունը կը փառաւորուի իր որդւոց միասիրտ գործունէութեամբ։ Հոն սիրով ամէնք գիրար գրկախառնելով կը կազմեն մի սիրտ մի հոգի ընտանութիւն մը։ Այս միակամ և համամիտ համակրութեան մէջ չեն կրնար մուտք գտնել ոչ ատելոյն թոյնը, ոչ խորամանկի ձեռք, ոչ շողոքորդի լեզուն։ Ասոնց զաւակները ի մանկութենէ կ'ուսանին կառավարելու ձևը և եղանակ, պարտք և իրաւունք, շահ և վնաս. ասոնք իրենց անկատար հասակէն կ'սկսին իրենց կատարեալ խոհեմութիւն և հեռատեսութիւն ի գործ դնել։ Կ'ուսանին իրենց ծնողներէն ողջախոհ կեանք, անարատ վարք, սակաւապետ ընթացք, համբերատար երկայնմտութիւն։ Ծերերէն կ'ուսանին խորհրդապահութեան փորձառական գործնական հրահանգները, զչարն բարեաւ յաղթելու ձևը և եղանակ, ձախորդութեանց մէջ երկայնամիտ համբերութիւն. ասոնք սուր կը լինին լսելու մէջ, երկայնամիտ վճռելու մէջ, կ'ըսեն ասոնք. ընտանիքի մը կեանք տուողն հողն է, և հողագործութիւնը մի

ուղիղ ճանապարհ է . այն՝ որ հող չունի , նա կեանք չունի . հող չունեցողն որքան որ աշխարհի մէջ կ'ըբնակի բայց արտաքոյ է աշխարհի : Այն՝ որ պատսպարուելու համար տուն չունի, նա աշխարհի մէջ անթաղմեռեալ մի է . վարձով ուրիշի տուն նստողները ոչ թէ կ'ըբնակին այլ կ'ըպանդխտին , իրենց կահ կարասիք կորմնցունելով՝ օդ կ'ըգնեն : Ապրելու համար հող պէտք է , բնակելու համար տուն պէտք է . կենաց ապահովութեան համար աշխատութիւն պէտք է , տուն կառավարելու համար հանճար պէտք է . խաղաղ և համեստ ու պատուաւոր ապրելու համար մաքի մշակութիւն և սրտի ազնուութիւն պէտք է, և ասոնց ամէնքը ձեռք բերելու համար դպրոց և դաստիարակութիւն անհրաժեշտ պէտք է և հարկաւոր իսկ է : Խոհեմ տանուտէրը առանց հարկի իր զաւակները չվշտացուներ . զի մարդասիրութեան իրաւանց դէմ կ'ըհամարի , եթէ հարկէն ստիպուի, այն ժամանակ իր յանդիմանութիւն քաղցրութեամբ բարեխառնելով առանձին կ'իմաստացանէ , որպէսզի նորա դիւրազգածութիւն չ'վիրաւորի . անմեղներու սիրտ ակամայ վիրաւորած ժամանակ հայրական սիրոյ սպեղանիքով շուտով մը զայն կ'ըբժշկէ : Թշնամւոյն թշնամութեան շատ անգամ աչք կ'ըգոցէ , զի գիտէ թէ նոքա աշնան տերեններու պէս ինքնին կ'ըթափին և մարդկանց ոտից կոխան կ'ըլլինին : Նա զմարդիկ Աստուծոյ հետ կապող կրօնքը ամէն բանէն վերադաս կ'ըբռնէ , զի գիտէ թէ կրօնքը մարդկանց բարոյականութեան խարիսխ և կապն է :

Առաքինի հօր փառք կ'սկսի իր իմաստութենէն, արդարասիրութենէն , բարեկամաց անկեղծ սէրէն . Նորա համբաւը կ'ըթռչի և տիեզերաց վրայ սփռելով իր յիշատակը կ'անմահացունէ . Նա շատերու գաղտնեաց աւանդապահն է, վստահութեամբ շատերու սրտին կ'իշխէ . հեռաւոր և մերձաւորները միշտ պատրաստ են նորա առաքինութիւնները պաշտպանել , համոզուելով թէ՝ զայն պաշտպանելով առաքինութիւն և իրենց խաղաղութիւն կ'ըպաշտպանեն :

# ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Գինի և արբեցութիւն. Ինչք և ստացուածք. Մոլութեան նկա-րագրութիւն. Մարդկան կեանք, դատաստան և հարստութեան ազդեցու-թեան և անոր զեղծումներուն նկարագրութիւնը.

Գինի և արբեցութիւն շատ անգամ առիթ տուած են չփոթու-թեանց. արբեցութիւն ինքը մոլութիւն չէ. բայց մարդկանց ո-րովայն մտնելով նոցա կիրքերը դէպ ի մոլութիւն կարթնցունէ. և ամէն չարիքները գործել կուտայ. անհոգութիւն և պերճու-թիւն տեսակ մը ցեցեր են, որք գործը և գործի տէրը ի միա-սին կապականեն. Մարդկանց կիրքերը պիտանի են և օգտակար երբ մարդիկ զանոնք կարողանան ըստ հեղինակի սահմանին գոր-ծածել. զի բարկութիւնը մարդկանց արիութիւն կըզօրացնէ. բաղձանաց փափաքը մարդիկ միմեանց հետ սիրով կըկապէ. ո-րոգմէ փոխադարձ բարիք առաջ կուգայ ի շահ մարդկութեան. Երկիւղը յանդգնութեան չափ և սահման կըդնէ, փառասիրու-թիւն զմարդիկ մեծագործութեան կըմղէ, ցաւը զմարդ բարե-խառն վիճակի մէջ կըպահէ և չարիքէն կ'զգուշացնէ. սրտմտու-թիւն զմարդ վրէժխնդրութեան կըվառէ, բարիքներու վնաս հասցունող չարերը պատժելու համար. Այս տեսութեամբ կիր-քերը օգտակար են, քանի որ ուղիղ բանին հպատակ են. բայց երբ մարդկանց բուռն բաղձանքները չափազանցելով և կիրքերը իրենց սահմանէն հանելով բանականութեան դէմ կապստամբե-ցունեն, այն ժամանակ դէպ ի մոլութիւնները գնալով վնասա-կար կըլլին.

Ինչք և ստացուածք ունենալ պէտք մի է, բայց ագահու-թիւնը բացարձակ մոլութիւն մի է. վասնզի շատերը պիտի մա-հացունէ. որպէսզի ինքը կենդանի մնայ. Ագահը գանձ կըժո-ղովէ որ երջանիկ ապրի. սակայն նոյն գանձը իրեն թշուառու-թեան պատճառ կըդառնայ. վասնզի ունեցածը չկորսնցունելու երկիւղը միշտ զինք անհանգիստ կընէ և վարանման մէջ կըթողու:

Նորա սրտի մէջ ուրախութենէն աւելի սարսափ և կասկած

կըմնէ . փոքր կասկած մը անոր մեծ մտատանջութիւն կըպատճառէ . դէմք կայլայլի . կերակուրներու համեղութիւն իրեն դառն կ'ազդէ , շարունակ երկիւղներով կըպաշարուի , նա կըվախնայ իւր բարեկամներէն , սիրելիներէն և զաւակներէն , և անոնց ամէնքը իւր ստացուածոյ թշնամի կըկարծէ . իւր սիրտ և հոգին կըբանտարկէ այն արկղի մէջ , ուր որ իւր գանձը բանտարկած է . նա կըժողովէ որ իւր որդին երջանիկ ապրի . բայց նորա շռայլ որդին զայն կըվատնէ և թշուառ կապրի . ագահ իւր սիրտ մաշեցունելով կեանք կըկարճէ . գանձը կորնչուցած ժամանակ , կեանքն ևս հետը կըկորնցունէ :

Ընկերական վիճակին խաղաղութիւնը վրդովող կարգ մը խորամանկներ կան , որք կեղծ ու պատիր ձևերու տակ իրենք զիրենք ծածկելով առաքինական դիմակով կըներկայանան . դորա նենգ խորհուրդները իրենց սրտի մէջ թաքուն ծրարեալ պահելով դիպող ժամանակի կ'սպասեն , որ զանոնք իբրև զէնք գործածեն ի շահ իրենց և ի վնաս ուրիշներուն . ասոնք իրենց շահերը միշտ ուրիշներու վնասուն մէջ կըփնտրեն ասոնց համար փոքր է , բայց փափաքները անսահման է .

Կարգ մը վեհերոտ մարդիկ կան , որք իրենց շահ և բարիքն իրենց երկիւղներու մէջ կըթաղեն . ասոնց հակառակ յանդուգները ևս բնաւ բանէ մը չվախնալով ամէն բան ծայրահեղութեան և չափազանցութեան կըտանին կըհասցունեն . շահելու տեղը կըվնասեն , շինելու տեղը կըքանդեն . այդ մարդիկ կրից բորբոքմամբ կըգործեն . և իրենց ծայրահեղութիւն միում կուտայ իրենց սնափառութեան , շահասիրութեան և ատելութեան: Ասոնց գործելու եղանակն անեղանակ է . զի ասոնք մերթ սրտոտ , մերթ վատասիրտ , մերթ ահեղասաստ , մերթ խոնարհեալ , մերթ աճարկու , մերթ երկչոտ են . յաղթութեան մէջ չափէն աւելի կըխրոխտան , պարտութեան մէջ շուտով կըվհատին և կըլքանին . ասոնց գործերը միշտ վտանգաւոր են . եթէ յաջողութեան մը հանդիպին , այն ալ բախտին է և ոչ թէ իրենց խորհրդական կամ ուղիղ գործելուն . դոքա պատիւ և փառք ուրիշին կըթողուն . իրենք գոհ կըլլին իրենց անձի պաշտպանութեամբ , դոքա իրենց ծայրահեղութեան մէջ օր մը աչք ուրիշ օր մը ձեռք օր մնալ բոլոր զգայարանքները և ըղ-

դայութիւնք կորսնցունելով կեանքը վրայ կուտան արատաւոր հետք մը թողլով։

Կրթեսնե՜ս այդ գունաթափ և հիւծեալ մարդիկն, որք շարունակ ուրիշներու բարի անուան և բարի գործոց վրայ նախանձելով զանոնք կըվատահամբաւեն և գործնական կերպով կըճնշեն, բարի մարդկանց չարիք կընիւթեն և նոցա արժանապատուութիւն կըվիրաւորեն. ասոնք կընախանձին ուրիշի բարի գործոց, ընչից և ստացուածոց, ուժի և գեղեցկութեան, պատուոյ և փառաց, արհեստի և գիտութեան և ամէն բարենպատակ գործոց և առաքինութեան, լաւ ձիրքերու և յաջողութեանց ու կատարելութեանց վրայ։ Սակայն շատ անգամ դոցա չարակամութեան թոյն իրենց անձի վրայ դառնալով զիրենք կըճնշէ, կըխանձէ և կըտոչորէ։

Ասոնք հիւծեալ են, զօրութիւն չունին, որ գործով վնասեն բայց լեզուաւ թէ կըխայթեն և թէ կըվնասեն. այդ խումբը ուրիշ բանէ չյաղթուիր բայց միայն առաքինիներու բարեգործութիւններէն և համբերութիւններէն, որք փուշի պէս նոցա աչք մտնելով կըկուրացունէ և նոցա լեզուն կըկապէ. ասոնք կիրքերու քողով նախ իրենց խիղճ կըծածկեն. յետոյ կ'սկսին առանց խղճի խայթել և խածատել. Նոցա նպատակն է՝ ուրիշներու գործ և համբաւն արատաւորել և նոցա բարի գործերու դէմ արգելքներ հանել. ասոնք չեն ուզեր աշխատիլ բարի ձիրք և կատարելութիւն ստանալու այլ կաշխատին ուրիշներու ունեցածը ոչնչացունել։ Երբ չ'յաջողին ուրիշներու վնասելու, կ'սկսին իրենք զիրենք տանջել թէ ինչու չ'յաջողեցանք. սակայն ամպ մը արեգական երես ծածկելու որչափ զօրութիւն ունի, անոնք ալ այնչափ կարող են իմաստնոյն և առաքինւոյն համբաւն արատաւորել. նոցա սիրտը դժոխքէն աւելի խոր է, անոր համար մարդկանց միտք շատ անգամ կըտկարանայ հոն թափանցել և նոցա գաղտնի մեքենաները տեսնել. ասոնց սիրտն այլ է, լեզուն այլ է, ասոնք մահացու թոյն իբրև առողջարար դեղ կըմատուցանեն և մարդկանց կեանք կապականեն. կարելի չէ ասոնց սրտի խորերէն ճշմարտութիւն գտնել և դուրս հանել։

Լաւ գիտէ այդ չափէն աւելի բարկացողները, որք երբ իրենց անձի հարուածը, ընչից վնասուիլը, պատուոյ դէմ եղած

անարգանքն , բարեկամի վնասն տեսնեն . իրենց ցասումը սրտի բոլորտիք եռալով արիւնը կը տաքցունէ և զգալի ցնցումներով սիրտ կը վառէ վնասակարի դէմ. այն ժամանակ իրենց արտաքին կարողութիւններով վրէժխնդրութեան կը շարժին , բնական բարկութիւն այդ մարդկանց ներգործած ժամանակ բոցերով կը վառին , աչք կրակ կը կտրին . մազերը կը ցցուին . լեզուն կը թոթովէ . խօսքերը կը կապկապին և կ'սկսին բանականութեան , պատուոյ պաշտպանութիւն մոռանալը . հակառակ մրցումներ և շարժումներ կ'ընեն ։ Մէկ կողմէն կը վառին , միւս կողմէն կը սառին , նոյն դէմք մերթ կը շառագնի և երբեմն կը թալկանայ , աչաց փայլատակներէն հուր և ջուր կը վազեն , սաստիկ ցաւէն կ'արտասուեն , քիթէն ծուխ կարձակէ , շրթունքները կը դողդոջեն . իրենց անձի վրայ ցաւագին ուրախութիւն և տրտմագին ցաւեր կ'զգան , քինու վնասով վրէժխնդրութեան հետ կը մրցին. ցուլի պէս կը բառաչեն , առիւծի պէս կը մռնչեն , վիշապի պէս կը շչեն , ուրիշ կենդանեաց պէս ձիրան կ'արձակեն , ոտք գետին զարնելով երկնից դէմ սպառնալիք կ'որոտան , իրենց թըշնամին չ'գտած ժամանակնին իրենք զիրենք կը խոշտանկեն . որչափ տգեղացած կը լինի առանց հոգին , որ այսչափ իրենց մարմինը կ'այլանդակէ . սոյն բարկութեան հիւանդութիւն զօրաւորներէն աւելի տկարաց վրայ կը տեսնուի . ատոնց կիրքերը շուտով կը բորբոքին և շուտով ալ կը վերջանայ . այս տեսակ բարկութեանց սուր անմտութիւն , հարևանցի սրտմտութիւն , հոգւոյ արբեցութիւն և առօրեայ բռնութիւն կ'ըսուի ։

Սոյն բարկութեան գործնական մի պատկեր կը համարուի կին մը որ իւր Յասոնէ այրէն անպատուած և մերժուած էր ։

Յասոնի կինը չ'կարողանալով իւր էրիկէն վրէժ լուծել , էրկան վրէժը իւր երկու զաւակներէն լուծեց , որք Յասոնէն ծընած էին . սոյն կինը կուզէր իւր զաւակները մեռցունել ի վրէժխնդրութիւն Յասոնի , առաջ բերելով թէ այս զաւակները թէև իմս սակայն նաև Յասոնին են ։ Այս մայրը երկար ժամանակ կը ծփար սիրոյ և բարկութեան կիրքերու ալէկոծութեան մէջ. կը սիրէր այն զաւակները վասնզի իրմէն ծնած և իւրն էին , կատեր զանոնք և մեռցունել կուզէր , վասնզի զինք նախատող Յասոնէն ծնած էր զանոնք . այս կնոջ սէրը և բար-

կութիւն իրարու հետ կը մրցէին . մին զմիւսն յաղթանակել կ'ուզէր . մէկ կողմէն սիրոյ բոցը . միւս կողմէ բարկութեան բոցը . երկու բոցերու մէջ տեղը որդիներու մայրը կ'այրէր և կը տոչորէր . նախանձաւորութիւն սիրոյ հետ կը միանար , բարկութիւնը ատելութեան հետ , երկիւղը համարձակութեան դէմ կը զինէր , համարձակութիւն յուսահատութեան հետ կը մրցէր · յուսահատութիւն ևս երկիւղի հետ կը մրցէր · սիրող և թշնամի, ահաբեկ և խրոխտ , աղեգորով և անգորով , ի վերջոյ բարկութիւն յաղթեց սիրոյն . մայրը մոռացաւ իւր մայրութիւն , սէրը և գորով կենազրաւ ըրաւ Ցասմնի որդիքն . որք իւր էին . Ցասմնի վրէժը իւր զաւակաց մահուամբ լուծեց թէ և կիրքերը հանդարտելէն վերջ զղջաց մայրը . բայց ի՛նչ օգուտ կորուսան անդարմանելի մնայ ։

Բարկացողներէն զատուող ցասումներով լի խումբ մը ևս կայ, որոց թոյն միշտ թագուն է իրենց սրտի մէջ . բարկացողները բոց են , իսկ ատոնք մոխրի տակ ծածկուած կրակներ են . բարկացողք առաջ կը գործեն , յետոյ կը մտածեն . բայց ատոնք ամէն վնասակար միջոցները խորհելէն և պատրաստելէն վերջ կը գործեն ։

Բարկացողները թէ բանիւ և թէ գործով զիրենք մատնանիշ կ'ընեն . իսկ ցասուցեալները առանց վրդովման մբրիկ կը պատրաստեն . կեղծ լռութեամբ միջոցներ կը հնարեն և յանկարծական դաւադրութեամբ իրենց անզգոյշ ոսոխի վրայ կը յարձակին, բարկացողները յորդորի կը լսեն . իսկ ցասուցեալները իրենց ականջ կը խցեն որ բարեկամաց յորդորները չ'լսեն . բարկացողները կը զղջան կ'արտասուեն . և վիրաւորեալի վէրքը կը լուանան արտասուքով . ցասուցեալները կը գիշատեն և անոնց բեկորներու վրայ ցասման թոյն կը թափեն ։ Բարկացողները զիրենք բարկացնողներէն միայն վրէժ կ'առնուն . իսկ ցասուցեալք նոցա բոլոր զարմը կը հալածեն և կը ջնջեն . բարկացողն ցաւերու դէմ կը տոկայ . բայց անարգանաց դէմ կը խոժոռի . նախատուողի խոնարհիլը՝ յորդանքներով և իւր առած վէրքերը ծածկելով միայն կը բժշկուի , և կըսէ այնչափ մեծարանք պէտք է նախատուողին որչափ որ արհամարհանք եղաւ բարկացող նուաստին՝ հողմերուն հետ կը կռուի , ջորեպանը անասնոց հետ , երկրագործն եզներու

հետ կըմարտնչի . ասոնք իրենց բարկացած միջոցին կըկարծեն թէ զգայուն կենդանեաց , անգգայ տարբերաց խօսք պիտի հաս-կացունեն և կամ թէ այդ կենդանիները պատուոյ զգացումներ ունին , որք նախատուելով պիտի զգաստանան :

Կեղծող և Ճառատողներ ալ կան . մինն Ճշմարտութենէն բարձր կըթռչի , միւսն իր արժանաւորութենէն աւելի կընուաստանայ . մինն բան մը չգիտեր կըպարծի թէ ամէն բան գիտեմ . միւսն շատ բան գիտէ և կըկեղծէ թէ բնաւ բան մը չեմ գիտեր . աղ-քատն իբրև հարուստ կըպարծի . հարուստն իր աղքատ լինելը առաջ կըբերէ թէ բան մը չունիմ . կեղծողի խօսքերն այլ է , միտքն այլ է , և շարունակ իր խիղճին գոյն կըփոխէ . Ճառա-տողն չափազանցութեամբ իր ունկնդիրները կըտաղտկացունէ . այս երկու կարգի անձանց գործերն ալ խաբէական են . ուրեմն զգուշութիւն պէտք է այս տեսակներու հետ բարեկամական կա-պով կապուելու մասին :

Հակառակախօսներ ալ կան , որք ուղղութեան սահման խան-գարելով շարունակ կըհակառակին . դու եթէ գովես , նա կը-պարսաւէ . եթէ պարսաւես , նա ընդհակառակն կըգովէ . եթէ բանի մը համար դու ըսես թէ ուղիղ է , նա կըպնդէ թէ սխալ է . եթէ մէկը արհամարհես , նա կըսիրէ . եթէ առատաձեռ-նես , նա զեղծ շռայլ կանուանէ : Հակառակասէրը ոչ թէ վարձ մը առնելու համար կըհակառակի , այլ իր կարծիքը ուրիշ կարծիքէն նախադասելու համար է որ կըհակառակի . բնութիւնն կըսորվեցունէ չարերուն մէջէն բարին ընտրել . իսկ հակառա-կասէրը բարիներու մէջէն չարերը կընտրէ . Նոքա պարսաւանօք չեն խօսիր , այլ մարդկանց բարի ձիրք և յատկութիւնները թուելէն վերջ , Բայց կ'ըսեն : Այն Բայց բառով հիւսածները կը քանդէ . և ամէն բան վեր ի վայր կըտապալէ , ասոնք կընմա-նին այն մեղուներուն , որոնք քաղցր մեղր իրենց բերանը և թոյ-նը իրենց պոչի ծայրը կըպահեն . մեղրով կըքաղցրացունեն թոյնով կըմահացունեն . մեծ բարիք մի է մարդկանց որ այս տեսակները իրենց խօսքերէն և գործերէն շուտով կըճանաչուին .

Տես այդ արբեցողները . որք մարդկային բնութիւն փոխած տեսակ տեսակ բնութիւններ առած են : Արբեցութիւն գոյա-մնաց լոյս կըխաւարէ , նոցա բարք փոխելով պատիւը և առա-

քնութիւնները կըկալուպուէ և շատ մը չարեաց պատճառ կը-դարձունէ զանոնք . երբեմն նոքա խելագարներու պէս ոչ իրենց գործերը կը ճանաչեն և ոչ խօսքերը . մերթ անզգայ մեռելոց շարքի մէջ կը գտնուին մերթ թշնամին և բարեկամը իրարմէ զանազանելու անկարող կը գտնուին , մերթ կը խածնեն և կը մի-բռնորեն , մերթ իբրև կապելի խեղկատակութիւն կ'ընեն , մերթ յիմարական խօսքեր կը խօսին , մերթ կուլան և մերթ կը խօսին , մերթ կը զուարճանան մերթ տխուր լռութիւն մը կը պահեն , մերթ խուլութիւն յարուցանելով ճիչ և աղաղակներ կը բառնան , իրենք զիրենք կամ ուրիշները կը վիրաւորեն , ամօթալի գաղտնիքներ կը խօսին , անբարեխառն կեանք անպատկառ լեզուաւ պարծանք կը խօսին , ուրիշ մոլութիւնները մարդկանց միտք կը խանգարեն , իսկ արբեցութիւնը զայն կապականէ և կը մահացունէ ։

Ուրիշ կարգ մը հիւանդամիտ մարդիկ կան , որք խօսքով զճշմարտութիւն կը մեծարեն , բայց գործով կանարգեն զայն ։ թէպէտ և իրենց ձախորդ նպատակին կարող չեն հասնիլ , վասնզի ճշմարտութիւն թէև կը հիւանդանայ , սակայն չմեռնիր . կը ծանկանի , բայց չապականիր և չանհետանար , սուտութիւն և անիրաւութիւն զայն կը հալածեն , բայց նա ծպտեալ կերպարանաւ զինք սիրողներու սրտի մէջ կը ծածկուի և անոնցմէ չբաժնուիր , ճշմարտութիւն և արդարութիւն կը բողոքեն , երբ արդարութեան ախտու նուաղները իրենց վրայ ճնշումներ կը բանեցունեն ։

Կարգ մը փառամոլներ կան , որք թիթեռնիկի պէս այնչափ կը մօտենան փառաց՝ որք կայրին և կը մխասուին . առանց հակառակ փորձերնին ալ գիշերային ճճիններու ... լոյսէն այնչափ կը հեռանան , որ խաւար միայն կը մնայ իրենց բաժինը . փառամոլի սէրն առաքինութենէ կը հեռանայ , միտքն ալ իմաստութենէ խոյս կուտայ . նոքա միայն փառամոլութեան հողմերով կ'անուանեն , փառքերը իրենց կենաց վտանգէն չեն վախնար , բայց իրենց պատիւը արատաւորելէ խիստ շատ կը զգուշանան ։

Փառամոլներու համարձակութիւն իրենց արժանիքէն աւելի է . փոքրոգիներու արժանաւորութիւնն ալ իրենց համարձակութենէն աւելի է . փառասէրն վրէժխնդիր կ'ըլլի . իսկ փոքրոգին ինք իր մէջ կ'այրի և կը տոչորի ։

Երկուքն ես ծայրայեղեն . դի մինն իւր արժանիքէն աւելի բարձր կըթռչի այնչափ որ ինքզինք կըվնասէ , միւսն իւր արժանիք ծածկելով , կենդանեաց մէջ մեռեալներու կեանք կըվարէ :

Փառամոլները կըհաւատան թէ , երբ իրենց նպատակին հասնին կ'երջանկանան , բայց երբ իրենց ուզած տեղը կըհասնին հոն կ'զգան թէ ոչ թէ երջանկութեան , այլ թշուառութեան հասած , վասնզի նոքա շարունակ կըծփան զմարդիկ շարժող բաղձի ալէկոծութեան մէջ , մերթ ցաւոց , մերթ երկիւղի , մերթ գովեստներու , մերթ նախատանաց . նոքա միշտ անհանգիստ են իրենց երեւակայական հանդստութեան մէջ , համաշամ՝ կերկուրները թողնէն աւելի դառն կըներգործեն իրենց , կասկածանաց երեւակայեալ վտանգները նոցա ճշմարիտ քաղցրութիւնները կըդառնացունեն , բախտի հաւատարմութիւն , մտաց վստահութիւն թէեւ կըճգնին նոցա սրտէն կասկածանաց երկիւղները փարատել . սակայն երեւակայական վտանգները զանոնք միշտ արհաւրալի և թշուառ կըպահեն :

Օգոստոս ունէր մեծ իմաստութիւն և առաքինութիւն , քաղցր և վայելուչ ու չափաւոր կեանք , նա ունէր իւր ճոխ հարստութեան հետ մեծ ապահովութիւն , կինը հաւատարիմ , և բարեկամները անկեղծ էին , ժողովրդեան սէրը և յարգանք նորա առաքինութիւն կըհաստատէին . բայց դէպք խաղաղ և անվրդով կեանք յանկարծակի յեղաշրջեց և զայն անհնարին ցաւերու ենթարկեց : Օգոստոս օրէնք դրած էր շնացեալները պատժելու - իւր աղջիկը նոյն յանցանաց մէջ գտնուելով աքսորուեցաւ , յետ այնորիկ այն որ իւր հօրէն աքսորուեցաւ , ամօթն ալ իւր երեսէն աքսորեց , այն յանցանք որ առ երկիւղի գաղտագողի կըգործէր , աքսորուելէն յետոյ սկսաւ հրապարակաւ գործել : Օգոստոս իւր տան գաղտնի պակասութիւնները ծածկել չկարելով համար ինքը անխոհեմ նկատուեցաւ և իւր բոլոր երջանկութիւնները թշուառութեան փոխուեցան :

Մարդիկ կան , որոց միտքն առողջ է , բայց կամքն անառողջ . գիտեն բարի խորհիլ , բայց չեն կամիր բարի գործել . ատոնք կարողութիւն ունին երկինք և աշխարհ քննելու և կըքննեն - բայց իրենց գործերը ամենեւին քննութեան առարկայ ընել չեն ուզեր , ատոնք մոլի գիտուններ են , որք իրենց կեանք ձրի կը-

վաճառեն զեղխութեան ։

Կան ուրիշ կարգ մը մարդիկ , որք իրենց նուաստ շահը ձեռք բերելու համար մարդկութեան վեհ նշանաբանը կընուաստացնեն . ասոնց գոյնն է ուրիշները մանաւանդ մեծ մարդիկը շողոքորթել . ասոնք կիրքերը կը շոյեն , չարին բարի կըսեն մարդիկ ուղղութեան սահմանէն կը խոտորեցնեն . նոքա իրենց լեզուն շարունակ դէպ ի անփորձներու հաճոյք կը շարժեն և նոցա փոքր գործերը իբրև սքանչելիք և հրաշալիք կը դրուատեն . կուտան անոնց այն անուն և համբաւը , որոց հարիւրին մէկը չունին . շողոքորթները միշտ կ՚աշխատին որ ողջամիտ մարդիկ հեռու պահեն իրենց որսէն . ասոնք այն տեսակ վարանման մէջ կը պահեն մարդիկը , որք չեն կարող ճանաչել թէ զիրենք շողոքորթողները ճշմարիտ բարեկամ են թէ ստութեան տիպար . հաւատարիմ են թէ նենգաւոր . անձնուէր են թէ դաւաճան . ասոնք մարդիկ կառաջնորդեն դէպ ի հրճուանք , հեշտութիւն և զուարճութիւն . որով մարդկանց կեանք այսպէս կապականեն , որ յետ այնորիկ երկնաւոր բժիշկ մը միայն կրնայ նոցա ապականարար հիւանդութիւնները դարմանել . ասոնցմէ թունաւորեալները ճշմարտութեան մտնել չեն սիրեր . ուրեմն մեծ հանճար պէտք է որ ճշմարտութեան յարգանքներու մէջ ծրարելով ըզգուշութեամբ մատուցանէ հիւանդին և զայն առողջացունէ ։

Շողոքորթք , ըստորում ճշմարիտ բարեկամ չեն , առ երեսս բարեկամ կը ձևանան , միւս կողմէն որոգայթներ կը լարեն . երբ նոցա դաւաճանութի յայտնութիւն , օձի պէս լեզուներն հանելով կաղաչեն . լալով չքմեղ հանդիսանալ կուզեն և իրենց ոճիրներու պատճառը ուրիշներուն կը վերագրեն , որք անմեղ են . ասոնք կը խրատուին բայց չեն զգուշանար . կը յանդիմանուին , բայց չեն պատկառիր . ասոնք քսակի ցեցեր են . շողոքորթութիւն , այն տեսակ մի վաճառականութիւն է , որ գնող և վաճառող հաւասարապէս նախատելի և անպատիւ կըլնէ . մարդահաճոյն զքեզ չսիրեր . բայց ուր որ երթաս նա ստուերի պէս ետևէդ կուգայ , բնաւ կամացդ չհակառակիր , դու ինչ բան որ կըսիրես , նա ալ զայն սիրել կը ձևացնէ . և ինչ որ ատես , նա ալ զայն ատել կը կեղծէ .

Եթէ դու լաս , այն ալ կուլայ , եթէ ուրախանաս՝ այն ալ

կուրախանայ․ եթէ յանդուգն ես, նա զքեզ արի կանուանէ․ եթէ երկչոտ ես, խոհական անուն կուտայ քեզ․ եթէ փառասէր՝ վեհանձն ես կ'ըսէ․ խիստ դժուար է զանոնք ճանաչել և ճանաչելէն վերջն ալ գրեթէ անկարելի է անոնց ձեռքէն ազատիլ։

Ասոնք իրենց խակական պատկերը այնչափ կըփոխեն, մինչև որ սրտիդ գաղտնեաց բանալին գտնեն․ այն բանալին ձեռք բերելէն վերջ կ'սկսին քու կենացդ և մահուան տէր դառնալ․ ․ ․ ․ վասնզի այն գաղտնեաց բանալիով իրենց ուզած ժամանակ սիրտըդ բանալով անոր մէջէն ամենէն կարևոր և իրենց պիտանին հանելով աչքիդ դէմ կըբերեն բռնելով․ կեանքդ և պատիւդ անոր մէջն է, որ մեր ձեռք կըզգենուի․ ասոնք կեղծ դիմակաւորուած են՝ զորս չես կրնար ճանաչել թէ մոլի են արդեօք թէ առաքինի․ համեստութիւն կըխոժոռի սոցա լիրբ յաղթանակի վրայ։

Այս տեսակներու հետ խիստ զգուշութեամբ վարուելու է, և ծածուկ եղանակներով աշխատելու է զանոնք դէպ ի լաւն առաջնորդել․ մէջը լաւ մարդիկ փնտրել բռնական չէ․ այլ չարեր ես լաւերու շարքի մէջ գտնելու աշխատիլ պէտք է․ մարդիկ կան որք առաքինութեամբ կարող եղած չեն իրենց ապրուստ հայթայթելու, որով հարկադրուած են զայն մոլութեամբ ձեռք բերելու․ մարդիկ պէտք է որ իմաստութիւն և առաքինութիւն մէկ տեղ փնտրեն․ առաքինիները գանձէն աւելի համարումը կը սիրեն․ երջանիկ են անոնք որ կըհանգչին այն տեսակ մարդկանց որք կունենան անյողդողդ միտք, հաստատուն կամք, համեստ և պարկեշտ ընթացք, ճշմարիտ սիրտ և սէր ու առաքինական գործ․ մեծարելի են առաքինական գործերը, արդար որոշումները, արի ձեռք, խոհեմ ընթացք, հաստատուն սկըզբունք, նպատակաւոր շարժում, որք լինին հասարակաց շահ և օգուտ, բարի և պատուաւոր․ զի խոհեմները և բարիները ուրիշներու բարի ձիրքերը գովեստիւք կըհռչակեն․ իսկ չարիքները կարեկցութեամբ կըծածկեն և դիպող ժամանակ կըփնտրեն զայն բժշկելու․ կըսեն նոքա զքեզ չսիրողը սիրել՝ չարին բարիք փոխարինելը, արդարութեան օրինաց և բնական զգացմանց թէև հակառակ է, բայց սիրով կատարել պէտք է․ վասնզի առաքինութեան կայանք և յաղթութեան դաշը անոր վրայ հաս-

տատուած է . առաքինին առանց աշխատութեան կը թմացուրէ շատերու սրտի վրայ , այսպէս եւ առանց պատերազմելու կը յաղթէ իր հակառակորդներուն . բնութիւն քիչով կը բաւականանայ , սակայն չափազանց ցանկութիւն զմարդն անյագ կընէ . զի պէտքերն ուրիշ պէտքերու ծնունդ տալով կը տանի զմարդն անսահմանութեան կը հասցունէ . ուրեմն առաքինութիւն պէտք է որ պատուաւոր լինի սոյն անսահմանութիւն . և մարդիկ չափաւորութեան մէջ պահէ ու անոնց հիւանդ կիրքերը բժշկէ ։

## ԳԻՐՔ ՀՕԹՆԵՐՈՐԴ

[illegible]

Աշխարհ իր առաջ գծուած ուղիղ ճանապարհ մը ունի, սակայն չ՚յօժարիր այդ ճանապարհէն դ՚ալ. մէկ մը կայ որ կու-զէ զանոնք ուղղել. բայց խիստ փշոտ արգելքներու կը հանդիպի. տե՛ս այդ օրինակ բնաւորութեան տէր պանծալի և հիանալի մարդը՝ որ անհամեմատ առաքինութեան ծիրքերով զարդարեալ մարդիկներէն խապառ տարբեր եղանակաւ բնութենէն վեր կը-խորհի և բարձր կը գործէ ու կը խօսի. առնկայ բնութիւն ծնշելով իր բարձր կամքը կը հնազանդեցունէ. գորա բարձր հասակ սիրուն և վեհանձն դէմք, շնորհալի երեւոյթ, աննկարագրելի յատկութիւններն, վայելուչ շարժումն, անբիծ տեսիլը, բերնի վայելուչ չափաբերական համեմատութիւնն, ամենակատարեալ խորհուրդները, քաղցր և համեղ խօսքերը, աչաց դեղեցիկ և վառվռուն պայծառութիւնն, վեհ և իշխանական դիրքն. նորա երկնային իմաստութեամբ լի էակ մը լինելոյն յայտնի և ճշգրիտ մեծ ապացոյցներն են. բնութիւն իսկ կ՚ապանշանայ և կը շարժմանայ առոր վրայ երբ իր յեղաշրջումը կը տեսնէ առոր հրամաններէն.

Դորա կեանք անմեղ է և անարատ, սիրտն պարզ է և անկեղծ. նա յանդիմանած ժամանակ իշխանական վեհութեամբ կը վարուի խրատած ժամանակ մեղմութեամբ առ ինքն կը հրաւիրէ. մեղմ և համոզողական քաղցր ոճով և կենդանի բանիւ և արդեամբ. նա անզգալի կերպով աշխարհ կը յեղափոխէ առանց խռովութեանց. նորա սրտէն կը չափուի իր մեծութիւն. նա երկնային էակի մը յատուկ եղած վայելուչ և կատարեալ վսեմութիւնն ունի. կը գործէ և կը խօսի այն բաները՝ որք մարդիկներէն ցարդ անծանօթ էին. նա զինք հալածողները կորհնէ, չարին բարի կը փոխարինէ, ատելին սիրով ուղղութեան կը բերէ և կաղօթէ անոնց

համար չարերը չմերժեր այլ զանոնք խրատելով կըսիրաշահէ ․
արդարութիւն կըզարմանայ նորա գերադաս անյիշաչարութեան
վրայ ․ կարճատեսները նորա անսահման համբերութիւն չճանա-
չելոյն համար զայն անզգայ կըկարծէին ․ դա լոկ խօսքով հի-
ւանդները կըբժշկէ, կոյրերու աչաց լոյս կուտայ, խուլերու ա-
կանջ կըբանայ ․ կաղերը կըգնայնէ , ախտաժէտները կառողջա-
ցունէ , մեռելները գերեզմանէն հանելով անոնց վերակենդա-
նութիւն կուտայ ․ եօթն հացով եօթն հազար ժողովուրդ կըկե-
րակրէ ․ մարդկանց սրտի գաղտնիքները կիմանայ և կըկարդայ ․
մարգարէներու պէս ապագան կըգուշակէ խիստ պարզ կերպով․
տարերաց ծովու և ցամաքի հետ իշխանաբար կըվարուի և խա-
ղաղելու հրաման կուտայ ․ նորա ալ կըհնազանդին, չեղաւ մէկը
որ ատոր խնդալը տեսներ , նա յաճախ արտասուքներ կըթափէ
այնչափ աղւոր և սրտաշարժ , որ նորա սրտի գթութիւնները
շատերուն փոխանցելով՝ համակրաբար իրեն հետ կ'արտասուէին.
նա իր աղքատիկ կենաց օրինակով աղքատները կըմխիթարէ և
թշուառներու արտասուքները կըսրբէր ․ նորա համեստ և մաքրա-
կենցաղ կենաց մէջ արդարութիւն և ճշմարտութիւն կըփայլէին.
այն սկզբունքները իրեն խիստ սիրելի և հաճելի էին. նա աղ-
քատիկ այրի մը մէջ ծնաւ և ծնած օրէն սկսաւ հովիւ և թագա-
ւոր հաւասար ճանաչել ․ այս արտաքոյ կարգի և չ'նաշխարհիկ
կատարելութիւն ունեցող էակը թէև ինքը տիեզերաց մէջ կե-
րևի , սակայն տիեզերաց բովանդակութիւնը նորա սրտի մէջ կը-
փայլի ․ վասնզի ծովու և ցամաքի սահման գծող և անհաստա-
տութեան վրայ հաստատուն հիմն դնող հեղինակի խորհրդակիցն
է ․ այդ երկնային մարդը աշխարհի լոյսն և լոյսն է , մարդիկ
Աստուծոյ հետ կապող սէրն է , մարդկանց ուղղութեան ճանա-
պարհ ցոյց տուող առաջնորդն է , հանճարոյ և զօրութեան հե-
ղինակն է , չկայ մարդիկներէն մէկը որ համարձակի նորա վրա-
յօք իրաւացի արտունջ մը յայտնել, բայց ապերախտ աշխարհ
զայն չճանաչելով նորա բարեաց չարիք փոխարինեց ․ նորա
համբերութեան սահմանը իմանալու համար նորա չարչարանքնե-
րը և նախատինքները բազմապատկեց ․ և զայն խիստ աժան գնոյ
վաճառեց ․ այդ հեզութեան խոնարհութեան և համբերութեան
ճշգրիտ պատկերը ամեն սիրով և յօժարութեամբ կըտանի վշտայ

և ցաւոց . ահա իբրև անմեղ գառն մահուն գործիք նախատական խաչ մը իւր ուսն առած անխռով կերպով դէպ ի կախաղան կըդիմէ . Նորա մահուան մէջ իւր յաղթութիւն կըփայլէ տարերք կերպարանափոխ կըլինին անմեղ սպանման վրայ . սակայն մարդկութեան տգէտ ոգին և ապերախտ սիրտը չճանաչեր թէ ո՛վ է . Նա իւր մահուամբ կըխայտառակէ տգիտութիւն . ստութիւն և անիրաւութիւն և անոնց կեղծիքները աշխարհի ցոյց կուտայ . չարասիրտները կըկարծեն թէ նա կարող չէ իւր անմեղութիւն փաստաբանել . այն անմեղի կեանք և կենցաղավարութիւն մարդկանց համար մի գործնական դաս է . այս աշխարհի մէջ ապրելու համար նորա կենցաղավարութեան մէջ իբրև ի հայելւոջ կըտեսնուի պարզ կերպով թէ մարդիկ ինչպէս ապրելու և գործելու են ։

Անոր օրինակին հետևող և նորա սիրով կապուած խումբ մը մարդիկ տես թէ ինչպէս իրենց պանծալի աշխատութեամբ և առաքինական բարեգործութեամբ իրենք զիրենք այն բարձր կատարելութեան գլուխ կըհանեն . ուր կըգտնեն սրտի հանգստութիւն , մտաց խաղաղութիւն , երջանիկ կեանք , անկողոպտելի ճշմարիտ փառք , անմեղութիւն և հանգստութիւն , այդ անձինք մոռացած չեն իրենց նախնի փառաւոր վիճակը , զոր նախանձ կողոպտեց . այդ մեծ մարդուն հետևողները ամէն համեստ և պատուաւոր միջոցները ի գործ դնելով այն գերակայ բարձր աստիճանին հասնելու փափագ կըտածեն , ուր անմահութիւն և երանութիւն մշտատև է , նոքա լաւ համոզուած են թէ աշխարհի տուածը կրկին աշխարհի վրայ կըմնայ և կըցանկան երկնային փառաց հասնելու օժանդակ բարեգործութիւնը իրենց ժամանակաւոր կեանքէն քաղելու և պատրաստելու ։

Անոնք իրենց սիրտ և միտք երկնից տուած և անոր հետ կապած իրենց բաղձանք հաճոյք և յօժարութիւն միշտ չափաւորութեան մէջ կըպահեն . կիրք և կամք բանին կըհպատակեցունեն. նոքա պարկեշտ և համեստ սահմանի մէջ կըսիրեն և կըգործեն այն բաները , որք վայելուչ և ուղիղ են . Նոքա աշխարհի բաւանդակ փառք պատիւ և ճոխութիւն ամենափոքր առաքինութեան մը հետ չեն փոխեր . զի գիտեն թէ աշխարհի բարիք անցաւոր են . իսկ առաքինութիւնը մնայուն . անոնք երկրի վրայ

ծրինաքաղաքացի են և բնութիւն ու բախտի բարիք իրենց հաճոյքները գոհացնելու համար չեն գործածեր , այլ իրենց բարձր նպատակին կը ծառայեցունեն . ուր որ սեւեռուած է իրենց սիրտ և ոգին դէպք և պատահար եթէ անոնց առաքինական գործերը խանգարեն , նոքա կը մխիթարուին իրենց կենդանի ունակութեամբ . դոյա միտք անցեալ գործերու շտեմարան , ապագայի պատրաստախօս , արհեստներու գործարան , գիտութեան և իմաստութեան գանձարան էր և իրենք այս չափով գոհ չ'լինելով կը ցանկան զայն առաքինութեան տաճար հանդիսացունելու . քանզի իրենց բոլոր բաղձանաց լրումն և Աստուածային պատկերը այն տաճարի մէջ կը տեսնեն . դոքա կիրքերէն աւելի իմաստութեան և խոհեմութեան կը ծառայեն . երկիւղը , սպառնալիք , բանտ , աքսոր , կարող չեն անոնք իրենց նպատակէն յետս կասեցունելու . այսպէս ալ աշխարհի ինչք և ստացուածք , իշխանութիւն և պատիւ , հաճոյք և փափաք , չեն զօրեր անոնց վրայ տիրապետելու . նոքա մօտ յերկինս վերասլացած Աստուծոյ մեծութիւն և փառք , բարձր հեղինակութիւն , նախախնամական տնօրէնութիւն տեսնելով կ'սքանչանան . և այն մեծ փառաց հաղորդ լինելու մէջ քաջալերուելով կը բազմապատկեն իրենց բարեգործութիւնք . նոքա ոչ թէ երջանկութիւն բերկրութեան մէջ կը փնտրեն , այլ բերկրութիւն երջանկութեան մէջ կը տեսնեն և անմահ փառք մը ձեռք բերելու կ'աշխատին ։

Միևնոյն նպատակաւ ուրիշ խումբ մը իրենց երանական փառաց հասնելու յոյսը հաւատոյ վրայ հաստատած՝ մարդկանց ընկերութենէն որոշուած տարօրինակ կեանք մը կը վարեն , առանձնակեցութեամբ լերանց խորշերու և քարայրերու մէջ մնած երկնից ճանապարհ կը փնտրեն . զգալի աշխարհի մէջ իմանալւոյն սիրով կը ճենճերին . նոքա սրտի յօժարութեամբ կ'երթան դէպ ի չարչարանք , հալածանք , նախատինք և արհամարհանք, նոքա իրենց պարծանք իրենց աղքատութեան մէջ կը փնտրեն ։

Անոնք երկնային անմահական փառք մնաց սրատեսութեամբ չեն փնտրեր . այլ սրտի քաղցր զգացմամբ կը մերնեն , նոքա սրտի սէրը լծորդուած է երանական փառաց սիրոյ հետ . նոքա չեն քններ , այլ կը հաւատան և հաւատով կը ճանաչեն զԱստուած և անքակտելի կապով կապուած են նորա սիրոյն հետ . կըսեն

ատոնք · Աստուած մարդկանց փառազարդ պալատներու և գեղեցիկ շէնքերու մէջ չբնակիր · այլ անմեղ և անարատ սրտերու մէջ կը բնակի · անոր համար միտքէն աւելի սրտով զԱստուած կը փնտռեն · և կ՛ըսեն զԱստուած սիրելը և զայն առանց սիրոյ լոկ ճանաչելն իրարմէ խիստ տարբեր սկզբունքներ են , ճանաչողներ չեն որ զայն կը վայելեն · այլ սիրողները և նորա կամք կատարողներն են որք կը վայելեն զինք և նորա մխիթարական շնորհքները ·

Կըտեսնե՞ս այդ կարգ մը մարդիկ , որք բարեկամութեան և բարեսրտութեան անկեղծ սուրբ սիրով միմեանց հետ կապուած մի սիրտ , մի հոգի , միաձայնութեամբ աշխատասէր մեղուներու պէս շարունակ կը գործեն յօգուտ իրենց և ընկերական աշխարհին , դորա առաքինական բարի պտուղներով արգասաւորեալ միմեանց հետ կապուած երջանիկ կեանք կը վայելեն · այն սէր՝ որ ատոնց միացուցիչ կապը եղած է , անիկա բնութեան հեղինակի սրտէն բխած այն զօրաւոր և անտեսանելի լարն է · որ մագնիսական զօրութեամբ հեռուէն երկու առարկաները քաշելով կը բերէ · միմեանց կը մօտեցունէ և կը միացունէ · ատիկա չինմանիր այն մերժողական ատելութեան մագնիսին , որ երբեք դարձունելով կը մերժէ և կը հերքէ ու անմիաբանութեան հրէշ զաւակները կը վիժէ · որու հետևանք կըլինի խանգարումն շինութեանց և ամէն ձեռնարկութեանց · սոյն սիրոյ արժանիք խիստ լաւ կը ճանաչեն մեղուները , որոց սիրոյ միացումը կը ծնանի բարեհամ և քաղցրաճաշակ մեղրն · այդ մարդկանց սիրոյ միութեան մէջ որ և է թշնամանք կամ ատելութիւն կարող չեն մուտք գտնել · զի զկնի Աստուծոյ իրենք մեծազօր և ամենազօր են ·

Ատոնց սիրոյն և համակրանաց առարկաներն են հանդարտ խոհեմութիւն , վեհ ծանրութիւն , պարկեշտ զգաստութիւն , անաչառ և անկաշառ արդարութիւն սրտի դիւցազնական արիութիւն · դորա չարէն խորշելով հասարակաց բարիք ձեռք բերելու միջոցները խորհելը և գործադրելը իրենց համար սուրբ և նուիրական պարտք կը համարին · ատոնք ըստ տեղւոյն և ժամանակին մերթ զուարթ երեսով , մերթ աչաց քաղցր արտասուքով

մերթ շրթանց անուշ ժպիտներով իրարու սիրտ կըկարդան և սիրտ սրտի հետ , կամք կամաց հետ միացուցած անբաժանելի սիրոյ զօրութեամբ կըխորհին և առաջ կըբերեն այն հիանալի գործերը , որոց վրայ բնութիւն իսկ կ'սքանչանայ . այդ մարդիկ բնաւ չեն զիջանիր սէրը կեղծել . և շահու ակնկալութեամբ միակողմանի սիրել . այլ կըսիրեն փոխադարձ բարոյական բերկրութիւնները ձեռք բերելու տենչմամբ :

Ատոնք բարեկամի բարւոյն ուրախակից և նոցա ձախորդութեանց վշտակից և ցաւակից են . բարեկամի ունեցածը իրենց ունեցածի պէս կըսիրեն և կըպահպանեն . ատոնք միայն աչքով չեն նայիր իրենց սիրելիներուն . այլ նոցա հեռացած ժամանակ սրտով իրենց սիրոյ զօրութիւն հոն կըղրկեն ուր որ կըգտնուի իրենց սիրելին . ատոնց սէրը անսահման է . լեռները կարող չեն անոր դէմ պատուար լինել . այրեցած գօտին կարող չէ նորա թեւերն այրել , ովկիանոսները չեն կրնար զայն խորասուզել :

Նա կըհոլովուի և կըսաւառնի կ'երթայ իւր նպատակին կըհասնի . միջանկեալ առարկաները կարող չեն պատուար լինիլ երկու սիրելւոյն մէջ տեղը . զի սէրը ատոնց ամէնք կըկտրէ , կ'երթայ իւր սիրելւոյն կըհասնի . կըմխիթարէ զայն կըմխիթարուի անկէ .

Կըտեսնե՞ս այդ խումբ մը խոհեմ մարդիկ , որք կարծիք և կասկածներէ զերծ և ազատ , ոչ խաբել կըսիրեն և ոչ խաբուիլ . այլ ուղիղ և անխոտոր ընթացքով կ'երթան կըհասնին իրենց սիրելի և Աստուծոյ հաճելի նպատակին : Այդ մարդիկ երկար ժամանակ փորձառական , իմաստասիրական բարձր խորհուրդներու մէջ հոլովուելով՝ տեղւոյն և ժամանակի ու պարագայից համաձայն կըգործեն , ի կշիռ դնելով մարդիկը և իրենց բնաւորութեան պարտքերը և պէտքերը , սովորութիւն և բաղձանքները և ըստ տեղւոյն հարկաւոր կըգտնեն ուղղութենէն զարտուղել , առանց նորա ուղիղ գիծը և նպատակ կորսնցունելու .

Այդ մտախոհ մարդիկ , ուր որ իրենց զօրութիւն , ուղղակի չիներգործեր բանաւոր կըգտնեն ոլորուն ճանապարհներէն

պտոյտներ ընելով գործը կրկին իր համեստ և բարի վախճանին բերել հասցունել . ասոնք չեն հրամայեր , այլ երկայնամիտ համբերութեամբ կը համոզեն և հրամայողներէն աւելի հզօրեղապէս կիշխեն սրտերու վրայ ։

Ասոնք իրենց ամէն գործառնութեանց մէջ առանց գիտութեան և խառնակութեան ամէն կնճռոտ խնդիրները կը լուծեն . առանց բանակի խաղաղութիւն կը պահպանեն և հասարակութեան երջանկաւէտ սքանչելի գործերը երեւան կը բերեն , սոքա մեծ զօրութիւն ունին իրենց անձի և գործերու ու կրից և բաղձանքներու վրայ իշխելու . լաւ գիտեն թէ կիրք հաճոյք և չափազանց ցանկութիւն զմարդիկ կընկղեն , քան թէ կը հանգստացունեն . ասոնք իրենց կիրքերը կամաց՝ և կամքը իրենց բանականութեան կուզեն հնազանդեցունել ։

Ասոնց միտք խոհեմութեամբ և սիրտը առաքինութեամբ զարդարուած է . ուստի տգիտութիւն և չարութիւն կարող չեն ատոնց մտաց ուղղութիւն մոլորեցունել , ասոնք շատ կը խորհին , ծանր կը շարժին և քիչ կը խօսին ու համր կորոշեն . յաջողութիւնն անյուսալի նկատուած գործերուն շուտով չեն ձեռնարկեր այլ զայն դիպող ժամանակի կը պահեն . ասոնք գուշակներու ճաշակն ունին զի խնդրոյն ապագայ դիպուածները և առաջ գալիք դժուարութիւնները հեռատես մտախոհութեամբ կը քննեն և կիմանան ու կը զգուշանան այն արգելիչ պարագաներէն , նոքա իրենց ձեռնարկելի գործի յատակագիծները նախապէս կը պատրաստեն և յետոյ կը ձեռնարկեն . ասոնք մեծ լոյս կառնեն իմաստութեննէն , անցեալ գործերու օրինակներէն , ծերոց փորձառութեննէն , նոյն պատմական օրինակներէն , խրատներէն , անցեալ դէպք և պատահարներէն . նոքա եղանակ կը պահեն , վայելչութեան մէջ չեն չափազանցեր . իրենց բարկութեան սանձ կը դնեն և միշտ գործերու վախճանին կը դիտեն . սոքա ունին արթուն յիշողութիւն , որով անցեալ նմանօրինակ գործերը իբրև կենդանի պատկեր աչքի առաջ բերելով կը խուզարկեն կստուգեն թէ ինչպէս սկսուած է . ասոնք մարդկանց մէջ պատուաւոր հանդիսանալու համար ամէն յատկութիւններն ունին . իրենց մտախոհ հանճարով և վայելուչ յարմարութեամբ։

Կը տեսնե՞ս այդ երեք կարգի բաժնուած բարեխառն յանդուգն և վեհերոտ մարդիկ . բարեխառն շնորհալի կերպով կը պահէ և կը պաշտպանէ իւր շահ և պատիւ . իսկ վեհերոտը ամէն բանէն կը վախնայ , յանդուգն ալ չափազանց առաջ գնալով՝ գործերը շինելու տեղ կը խանգարէ . բարեխառն չի հատիր ձեռնարկել բանի մը՝ ուր որ երկիւղ կայ . չի վախնար այն պարագաներու մէջ ուր որ վտանգները անհետացած են . վեհերոտն շատ խորհելով գործ կը մոռցունէ . յանդուգն բնաւ չխորհելով խորհուրդ կը մոռցունէ . իսկ բարեխառն թէ չափաւոր կը խորհի և թէ չափաւոր կը գործէ , որով կենդանի կը պահէ թէ խորհուրդ և թէ գործը . յանդուգն նեղութեան մէջ կը քրտնի , վեհերոտն կը դողայ , իսկ բարեխառն ոչ կը քրտնի և ոչ կը դողայ , գիտէ ըստ ժամանակին խոժոռիլ և ըստ տեղւոյն քաղցրանալ գիտէ տխրիլ և գիտէ զուարճանալ ։

Բնութիւն մարդկանց մարմինը պահել կ՚ուզէ , որպէսզի մարմինը ծառայէ հոգւոյն . բարեխառն մարմնով զհոգին և հոգւով զմարմինը կը զօրացունէ . անբարեխառն՝ աւելորդներով կը նեղուի . Թմրեալն ամէն հարկաւորներն անգամ զանց կընէ . բարեխառնի հարսանեաց և թաղման օրը միենոյն է . Ձէթը լապտերին սնունդ կուտայ . չափազանցն կը շիջուցանէ . բարեխառներն հեշտութիւն ժողոված ժամանակ համեստութիւն չեն հալածեր . ատոնք հաճոյքը հոգւոյն մէջ կը փնտրեն , ոչ թէ հոգին հաճոյից մէջ , իրենց սիրած առարկան հեռացած ժամանակ չեն շփոթիր և ոչ ալ կը յուսահատին , զի իրենց մօտ եղած ժամանակ չափէն աւելի չմօտեցան որ այրին . ատոնք կրնան առանց հաճոյից ապրիլ , բայց չեն կարող առանց առաքինութեան ապրիլ . վասնզի իրենց փնտրած հաճոյքները առաքինութեան մէջ կը տեսնեն . Թմրեալն է վանողական մագնիս . իսկ անբարեխառն՝ ձգողական . մինն կը մերժէ , միւսն յինքն կը քաշէ . բարեխառն թէ կընդունի և թէ կը մերժէ . կընդունի որչափ որ պէտք է և վայելուչ , կը մերժէ երբ զայն վնասակար կը տեսնէ ։

Բարեխառներն հաճոյքը կենաց համար չեն սիրեր , այլ կեանքը հաճոյքներու համար կը սիրեն , սէրը եթէ նետի զօրութեամբ ճեշտալի ներգործէ թմրեալի սրտին , նա բան մը չզգար . իսկ անբարեխառն՝ զայն աշխարհի մէկ ծայրէն միւս ծայր թէ

կըտեսնէ և թէ կըգրգռէ . անբարեխառն՞ սաստիկ կըսիրէ և սաստիկ կ'ատէ . Թմրեալն ոչ երախտիք գիտէ և ոչ վնասին դէմ կըխռովի . վասնզի երկուքն ալ չ'զգար :

Անբարեխառն թմրեալէն լաւ է . վասնզի կենդանին մեռցունել հեշտ է . բայց մեռեալն կենդանացունել անհնարին է .

Լաւ գիտէ այդ առատաձեռներու խումբը . այս տեսակ մը շռայլ և ագահները : Առատաձեռն խիստ լաւ կըմատակարարէ զոսկին , որ ամէն բանի գին կըլլենի . բայց անոնք որ զայն չարաչար կըգործածեն , ոսկին նոցա ձեռքի մէջ շատ չարեաց պատճառ կըլինի : Ոսկին ոչ շռայլը կըսիրէ և ոչ ագահը . վասնզի շռայլը իւր պատիւ և ոսկւոյ արժէք չ'ճանաչելով երկուքն ի միասին կըկորսնցունէ . ագահն զայն սաստիկ սիրելով կըթաղէ . ոսկին ծածուկ մնալով իւր արժանիքն ալ ծածուկ կըմնայ . իսկ առատաձեռն թէ կըվայելէ և թէ կուտայ համեստ եղանակաւ մը ուր որ արժան է տալ . կըխնայէ այն տեղէն ուր որ պէտք չէ տալ . նա սիրով կ'առնէ և թէ սիրով կուտայ . զի եթէ չառնէ չ'կրնար տալ . ոչ թէ անոր համար կուտայ որ առնէ . այլ կ'առնէ տալու համար : Առատաձեռն իւր հարստութիւն ոչ շռայլի պէս կ'անարգէ և ոչ ագահի պէս չափազանց կըյարգէ . զի եթէ անարգէ՝ չպիտի կարողանայ ունենալ . եթէ չափազանց յարգէ՝ չպիտի կարողանայ տալ . չանարգեր այն բանը՝ զոր սիրով կընդունի . շատ չյարգեր զայն՝ զոր յօժարութեամբ կուտայ :

Աննախատեսութիւն զմարդիկ շռայլ կընէ . զօշաքաղութիւն ագահ կընէ . իսկ առաքինական համեստութիւն զմարդն առատաձեռն կ'ընէ . առատաձեռնի տուրքն տուողի սրտի և ընդունողի արժանիքին կընայի՝ մեծագործի գործոյն պէս գործողի պատուոյն և գործոյն մեծութեան չնայիր . մեծագործը կրնայ նաև առատաձեռն լինել , բայց առատաձեռն կարող չէ մեծագործ լինել , առատաձեռնի նպատակը երախտաւորել է : Ոսկին շռայլի ձեռք վտանգաւոր է , ագահի ձեռք անպէտ է . առատաձեռնի ձեռք թէ անվտանգ է և թէ պիտանի , զի գիտէ նորա գործածելոյն եղանակը : Առատաձեռն եթէ ունի՝ կուտայ . եթէ չունի կըհրաժարի , երկուքն ալ երախտիք է . վասնզի յոյս տալով

քարեր չտալով յուսացողը չտանջեր ։ Նուաստաձեռնն աղքատաց շտեմարանն է , առաքինիներուն վարձահատոյց. ծերերը կըզարմանան նորա գործոց վրայ , ողջոյն կ'ուսանին , երիտասարդները կընդօրինակեն նորա կեանքը . նա զերծ և ազատ է նախանձու չարերէ և թշնամանքներէ . զի երբ կըպարգեւէ ու փոխարէն չ'ստանար կամ չ'սպասեր՝ ո՞վ պիտի նախանձի անոր ։ Երբ նա զամենքը կըսիրէ , ո՞վ կըյանդգնի ատել զնա . երբ ինքը հասարակաց բարեկամ է՝ ո՞վ պիտի լինի նմա թշնամի .

Շռայլութիւնը երիտասարդաց մոլութիւնն է , ագահութիւնն ալ ծերոց ։ Շռայլն իր վստահութեան մէջ կըսխալի , ագահն իր երկիւղներու մէջ . մինն իր կեանքէն առաջ գանձը կ'սպառէ . միւսն իր գանձը պահելով՝ թշուառ կ'ապրի և թշուառ կըմեռնի . շռայլն վատնելով աղքատ կըմեռնի . ագահն պահելով աղքատօրէն կըմեռնի . շռայլն բարեկամ կ'ունենայ , գանձ չունենար . ագահն գանձ կ'ունենայ , բարեկամ չունենար . առատաձեռն իբրև միջասահման՝ թէ գանձ կ'ունենայ և թէ բարեկամ . ուրեմն երջանիկ են նոքա որք երկու ծայրերէն այսինքն ագահութենէն և շռայլութենէն հրաժարելով առատաձեռնութեան միջասահմանի մէջ կ'ապրին և կըգործեն . նոքա անմահ յիշատակ կըթողուն աշխարհի վրայ , և երանութեան փառաց վարձը՝ զառաքինութիւն հետեւողին առած աշխարհէն կըհրաժարին դէպ յաւիտենական երջանկութեան հասնելու և վայելելու իբր վարձ իրենց բարեգործութեանց .

Կըտեսնե՞ս այդ իմաստուն և հեռատես մարդիկ , որք ոչ թէ տգէտներու պէս ոտքերնին քարին զարնելէն վերջ կ'զգան , այլ նախատեսութեամբ խիստ հեռի եղածները կըգիտեն . կըքննեն և կիմանան . ու անոնցմէ կ'զգուշանան . ատոնք գուշակներու պէս գալիքները իմաստութեամբ կընախատեսեն , և ձեռնարկելի գործերու ինչ վախճանի հասնիլը կիմանան և ըստ այնմ կըձեռնարկեն . մարդկանց մէջ ամենէն մեծ կատարելութիւն ունեցողներն են դոքա , որք արեգական պէս լոյս կըսփռեն մարդկանց սրտի մէջ և խաւարեալ միտքերը կըլուսաւորեն . ատոնք տկարները զօրաւոր կընեն և տգէտները իմաստուն ։ Գիտութիւնները , արհեստները , կառավարելու եղանակը , գործելու և շահելու

միջոցները · դոցա խորհրդաւոր գլխէն և հանճարէն կըբխին · ատոնց մնաց սրութիւնը ամէն խնդրոյ և գաղտնեաց խորերը թափանցելով ամէնէն կնճռոտ խնդիրները անգամ կըլուծեն · դոքա արծուոյ պէս յերկինս կըվերասլանան մտօք · բնութիւն ու նորա գաղտնիքները կըքննեն · արեգակն լուսին աստղները և նորա շարժումները կ'իմանան և շօշափելի կերպով ցոյց կուտան. յական թօթափել տիեզերաց մէկ ծայրէն միւս ծայր կարծիք առնել և կարծիք տալ և գործողութիւնները իմանալ · ասոնց ամէնքն ալ ատոնց հանճարի շնորհքն է · կըտեսնես այդ բնութեան տարերայ ծովու ալէկոծութեանց և խռովութեանց հետ մարտնչող և յաղթող շոգենաւերը · կըտեսնես այդ թռչնոց հետ մրցող շոգեկառքերը , այդ հրաշալի դետ , ատոնց գլխուն մէջէն բղխած է , կըտեսնես բնութեան տեսարաններէն դուրս գտնուող արտաքոյ կարգի սքանչելարուեստ շէնքերը և հոյակապ պալատները · այդ բոլորն ալ ասոնց մտքի և հանճարի ծնունդներն են , ատոնք ամէն բան գիտեն , բայց խոնարհաբար կըխոստովանին թէ խիստ քիչ բան գիտեն · ասոնք բնաւ չեն նմանիր այն ողորմելի տկարամիտներուն , որք բնաւ բան մը չեն գիտեր և կըպարծին թէ ամէն բան գիտեն. ատոնք իրենց մտաց լոյսը երկնային իմաստութենէն կ'առնուն , որով աշխարհս կըլուսավորուի ·

Իսկ այդ տգէտները երբ նախախնամական տնօրէնութեանց մէջ մասնաւոր զարտուղութիւն կըտեսնեն , զայն երկնային առատաձեռնութեան նուազումը կըհամարին · չեն գիտեր նոքա թէ նախախնամութիւն հաւասարապէս կ'առատաձեռնէ չարեաց և բարեաց · իսկ այն մասնաւոր զարտուղութիւնք բնութեան տարերաց և դէպքերու մէկ արդիւնքն է ։

Այդ խորիմաստ խմբի ձիրք և հանճարն բնութեան չեն՝ այլ արարչապետի՝ մարդկանց յատուկ առանձնաշնորհեալ գերբնական մի պարգեն է , որ մարդկանց հաւասարապէս տուած է · այլ խնդիր է որ տկար աչքերը կարող չեն արեգական լոյսը պայծառ տեսնել ·

Այդ իմաստուն խումբը քննելով և գործերէն հետեցունելով գտաւ ամէնազօր և ամէնակարող բնութեան հեղինակը և ամէն արարածոց արարչապետն · ատոնք ընչեցին կուռք և կռապաշ-

տութիւնները և մեհեանները քանդելով Աստուծոյ փառաց տաճարներ կանգնեցին , ատոնք գիտեն , կը ճանաչեն և կ'որոշեն բնականը գերբնականէն, ժամանակաւորն մշտնջենաւորէն, նիւթը աննիւթականէն , գոյացութիւնը պատահմունքէն , սեռը տեսակէն , տեսակը անհատէն ։ Դոքա կը քննեն մարդկանց հոգին և բնական զօրութիւնները . անոնց առանձին առանձին ներգործութիւնները , թէ ինչպէս կ'զգան . ինչպէս կը խորհին . ինչպէս կը կամին . և ինչպէս կը գործեն , կիրքով , թէ խորհրդով, բնազդմամբ թէ բանին առաջնորդութեամբ . կամայ թէ ակամայ չա՛ր կը գործեն թէ բարի . գեղեցիկ թէ տգեղ . վայելո՞ւչ թէ անվայել , դոքա լաւ կը ճանաչեն առաքինին և մոլին . ատոնց միտք միշտ շարժման մէջ է , ովկիանոսի խոր յատակը կ'իջնէ , յերկինս կը սլանայ , երկրի վրայ և օդի մէջ կը հետազօտէ և նորանոր ճշմարտութիւններ գտնելով աշխարհին ցոյց կու տայ , այդ խումբը անբան անասուններու բնազդեցական արհեստներէն իսկ օգուտներ քաղելով մարդկանց սորվեցոյց . շերամէն ուսան և ուսուցին պատուական հիւսուածները , բեհեզները , մանելու եղանակը , ծիծեռնակէն՝ պալատներու յօրինումը , մեղուներէն՝ ճարտարապետութիւնը , մրջիւններէն՝ աշխատասիրութիւն . սոխակներէն՝ երաժշտական գեղգեղումը և նուագածութիւն . կաքաւներէն՝ նաւարկութիւն , օձէն՝ նետաձգութիւն , նապաստակէն՝ ականահատութիւն , ատոնք բնաւ չեն նմանիր այն խումբ մը դատարկաշրջիկ հետաքրքիր մարդկանց , որք իրենց վերաբերեալ գործերը ձգած հրապարակներու վրայ թափառելով աշխատաւէրներու թանկագին ժամանակ կը գողնան և զանոնք անգործութեան կը դատապարտեն , այդ ողորմելիները հրապարակի սուտ և սխալ լուրերը մուրալով կը տանին տկարամիտներուն կը ծախեն , նոցա սրտերու մէջ չար որոմներ ցանելով հասարակաց հանգստութիւն կը վրդովեն ։

Կը տեսնե՞ս այդ իմաստութեամբ լեցուած ուղղախոհ մարդիկ , որք արդարութեան կշիռ ի ձեռին անաչառապէս կը չափեն և կը կշռեն . պարտք և իրաւունք իւրաքանչիւրի բաժին կը հատուցանեն արդարութեան տեսակէտով ։

Իմաստունն հրահանգ տուած է ատոնց՝ արդարութեան աթոռը

բազմած ժամանակ իրենց աչքը գոցել, որպէսզի մեծին, փոքրին, իշխանին, իշխեցեալի, տէր ու ծառայի դատաստանի մէջ աչառութիւն չընեն, ատոնք ոչ թէ մարդկանց՝ այլ խնդրոյն կը նային, մտաց աչքով կը քննեն, խղճի օրինօք կը վճռեն։

Ատոնք կամաւ խուլ կը լինին որ աղերսանք չլսեն, խղճի ձայնը միայն կը լսեն և անոր ետևէն կը գնան. ատոնց օրէնքները սրտաւոր կը լինին, զի անզուսպ կիրքերն և անսահման բաղձանքներն չափաւորութեան մէջ կը պահեն։

Դոցա օրինաց հիմունք ուղղութեան և բարոյական առաքինութեան վրայ հաստատուած են, որով մոլիները և անիրաւները կը պատժեն, առաքինւոյն և արդարոյն իրաւունքները կը պաշտպանեն և նոցա անմեղութիւն կը վարձատրեն. ատոնց օրինաց անաչառութիւնն շատ անգամ մոլիները առաքինի կընէ։

Ատոնք իրենց դատաւորական բարձր պատույն հետ ունին նաև վարուց անարատութիւն, վեհ գիրք և ծանր շարժում ու սակաւախօսութիւն, այնպէս որ հասարակութիւնն նոցա աչաւոր դէմքի վրայ կը կարդայ նոցա արդար օրէնքները։ Ատոնք իրենց իշխանական աթոռոյն վրայէն կուտան ոմանց շնորհք պսակ է ձեռքին, ոմանց վրէժխնդրութիւն սուր ի ձեռին. ատոնց արդարութիւնը միշտ դէպ ի ուղիղն կը հայի. ատոնք ի ներքուստ իրենց խղճի խայթէն կը վախնան. արտաքուստ թէ օրինաց պատիժներէն և թէ իրենց անձնական պատույ զգացումէն, ուրիշներուն վէրք տալէ կ'զգուշանան. դորա իրաւացին և արդարն օգտակարէն վերադաս համարելու պաշտօն ունին. և օրինաց առաջը միևնոյն են իշխան և սոսկական. վասնզի ատոնք ոչ թէ զմարդիկ, այլ մարդկանց գործերը կը դատեն. տես ատենց դատաստանին ներկայացած ամօթխածները թէ ինչպէս կը կարմրին և կը շառագնին, ու թաքուն տեղեր կը փնտռեն իրենք զիրենք ծածկելու. որպէսզի այդ դատաւորաց վեհապետական աչք զիրենք չտեսնէ, փախուստի հնարք չգտնելով՝ ամօթոյ քողով երեսնին կը ծածկեն։

Բնութիւն գթալով ատոնց, արին կը ղրկէ նոցա պատուոյ տեսարան եղող երեսը ծածկելու. այդ ամօթխածները իրենց ամօթոյ տեսարան եղող աչքը ձեռքով կը գոցեն. որպէսզի չտեսնեն և ոչ տեսնուին զիրենք դատող դասաւորին, դառնա-

եալ սրտի աչքերնին յերկիր խոնարհած ծածուկ տեղեր կը-փնտրեն իրենց պակասութիւնները ծածկելու . մահ կըխնդրեն . քան թէ արատաւոր կեանք . մանիկ կուզեն ու իրենց գործոց տխուր յիշատակը լսել չեն ուզեր .

Տես նաև այդ զուարճախօսները , որք հաճոյական կերպով ա-ռանց խայթի և դառնութեան խորհուրդ կուտան և խորհուրդ կառնեն առանց կռիւ . Իրենց նպատակը դէպ ի հասարակաց բարին կընայի . ատոնք մեղմ և քաղցր խօսքերով զիրար կըհա-մոզեն , ուղիղ բանականութեան օրէնքներով՝ համեստ և պատ-շաճ առարկաները իրենց նիւթ ընտրած՝ հաճելի օրինակներով իրենց բարեկամները կըհամոզեն դէպ ի բարին և վայելուչն . ա-տոնք միշտ ծերերը կըյարգեն , երիտասարդաց հետ եղբայրական քաղցրութեամբ կըվարուին , տղայոց սիրոյ գգուանք . ցոյց կուտան այդ անձինք իրենց զուարճալի քաղցր խօսքերով բարկացողներու դայրոյթ կըշիջուցանեն . կռիւ բռնութիւնները կըմեղմացունեն . և մեծամեծ չարեաց առաջը կառնեն . ատոնք շողոքորդներու սիրու և ոգին չունին . այլ միշտ կըսիրեն և կըսիրուին անկեղծօ-րէն . ատոնց խօսքերը չափազանցութենէն հեռի է և միշտ կըշա-գատեալ կիրթ հրահանգներով և ուղիղ մեթոտներով ճշմար-տութեան ճանապարհի մէջ կըքալեն , խիստ կզգուշանան այլոց վնասելէ . ուստի ուրիշները եւ կըպատկառին ատոնց վնաս հաս-ցունելէ . չարերէն խոյս կուտան , մոլիներէն կըհեռանան , տգի-տութեան անհաշտ թշնամի են , իսկ ճշմարտութեան մտերիմ բարեկամ են , արդարն կըսիրեն , անիրաւէն փախուստ կուտան , տգեղ խօսքերով ուրիշներու ականջը ապականել չեն ուզեր . սուտ անիրաւ առասպելներ լսել չեն սիրեր . Նողկալի և ան-պարկեշտ պատմութիւններէ կըզգուին , ուրիշներու թերութիւն-ները և պակասութիւնները լսելէ խիստ կ՚զգուշանան , ուրիշները նախատելը և անպատուելը խիստ ծանրէ իրենց .

Թշուառներուն սրտի յօժարութեամբ կըկարեկցին և կօգնեն ու զանոնք կըմխիթարեն , ձեռնհասներու գթութիւն կըշարժեն աղքատաց աչաց արտասուքները սրբելու . ատոնք ամէն ողջամիտ մարդիկներէն յարգանք կ՚ստանան , ատոնք Աստուծոյ փառաց նախանձախնդիրներն են , պատմութեան ոգին են , դէպք և պա-

տաճարներու իսկական պատկեր, անցեալին հաւատարիմ վկաներն են. զի ատոնց խօսքերը իրենց սրտի անկեղծութեան թարգմանն են. անաչառութիւն խիստ ծանրելի է ատոնց համար. որ և է շահ և փառք կարող չէ ատոնք ուղղութենէն զարտուղել. չեն ուզեր ստել ոչ խօսքով և ոչ գործով. ատոնք ճշմարտութեան հակառակ չեն խօսիր, բայց վտանգաւոր պարագաներու մէջ փոխանակ ճշմարտութիւն խօսելու լռութիւն կը պատուեն. առաջ բերելով թէ ծանր չարիք մը ցրուելու համար լռելը՝ խօսելէն օգտակար է. նաև անպատեհ կը դատեն թէև ճշմարիտ բայց ամօթալի խօսքերը և գործերը յայտնել, որք պարկեշտ մարդկանց զզուանք կը պատճառեն. ատոնց խորհուրդները պարզ են և անկեղծ. նոցա սրտի մէջ նենգութիւն խարդաւանութիւն չ՛կայ. նոցա սիրտը իրենց քաղցրահայեաց աչաց մէջ կը տեսնուի. նոքա իրենց հոգւոյ գեղեցկութեամբ կը զարդարեն իրենց մարմինը. ինչ բանի որ ձեռնհաս են սիրով կը կատարեն. իսկ իրենց կարողութենէն բարձր գործոյ ձեռնարկելէ համեստութեամբ կը հրաժարին իրենց անկարողութիւնը խոստովանելով. ատոնց սէրը և ատելութիւն անպատրուակ են, շատերը կը պատկառին ատոնցմէ, բայց մոլիները դոցա երեսը տեսնել չեն ուզեր և խոյս կուտան ատոնցմէ.

Լաւ գիտէ այդ խումբ մը ամենէն աւելի բարձր դիրք ունեցող վեհապանծ մարդկանց. և տես թէ ինչպէս կը փափաքին իրենց գործերը իրենց մեծութեան հաւասարեցունել. ատոնք թէ իրենք մեծ են և թէ իրենց գործերը.

Ատոնք բնաւ նմանութիւն չունին փառամոլներուն, որք հասարակաց շահէն աւելի իրենց փառք կը փնտրեն. այդ մեծագործ մարդիկ իրենց անունը թագուն կը պահեն, չեն դրոշմեր իրենց գործոց վրայ. բայց գործոց մեծութիւն և վսեմութիւն հետաքրքիրներու իղձ կը շարժէ թագուն պահած անունը շքեղ փառաւորութեամբ երեւան բերելու և ցոյց տալու աշխարհին. անհեռատեսները մեծագործութեան կ՛սկսին, բայց անկարող գըտնուելով գործը և իրենց անունը անկատարութեան մէջ կը թաղեն.

Լաւ գիտէ այդ մեծամիտ և մեծահոգի մարդկանց վրայ. թէ

Ինչպէս անխռով կերպով կ՚իշխեն ամէն ձախորդ դիպուածոց վրայ . և իրենց անձի վրայ մեծամեծ առաքինութիւններ ցոյց տալով ճոխ պատիւներու և յարգանաց կ՚արժանանան . ատոնք կ՚իշխեն իրենց կամաց և կրից վրայ . ամենաբարձր խորհուրդներ նոցա մտքէն աղբերաբար կըբղխեն . ատոնց սիրտը համեստութեան սեղան է , ախորժակը հասարակաց ախորժակէն տարապայման կերպով տարբեր է . ատոնց խօսքերը բանաւորութեան չափէն չխոտորիր . ատոնց խոհեմութիւնն ճշմարտութեան ջահ և երկբայութեան մանգաղ է . դոցա վսեմ միտք՝ առաքինութեան ատրճան՝ և գործնական գիտութեանց ճեմարան է . ատոնց մէկ ակնարկը ընդարձակ ճառերէն աւելի ներգործիչ է և ազդու . բովանդակ առաքինութեանց ամփոփումը ատոնց անձի վրայ կըկեդրոնանայ . ատոնց բարեմասնութիւնները հասարակաց կամք և յօժարութիւն կըգրգռեն , և իրենց վսեմ հանճարով իբրև տէր և իշխան հասարակաց մէն մի գործոց ուղղութիւն կուտան . ատոնք իրենց ներքին կատարելութեանց հետ հոգւոյ առաքինութիւն ևս ունին . ատոնք իրենց վեհապանծ շարժումներով անծանօթ բազմութեան մէջէն խիստ շուտով կըճանաչուին զիրենք տեսնողներէն . շատերը կ՚ըսեն . այս վեհ տաճարի մէջ անշուշտ վերին զօրութիւն մը կայ պահուած . աշխարհի ամէն բարիք մեծ անձի համար սակաւ կարևորութիւն ունի . բայց ի առաքինութենէն՝ որուն մեծ արժէք կընծայեն ։

Կըսեն նոքա՝ աշխարհի բարիք մարդուս կենաց հետ կըվերջանայ . ուրեմն առաքինութիւն ստանալու է , որ անմահ է . կըսեն անոնք . արտաքին պատիւը օտարի կարծեաց արտաքին մէկ նշանն է . այսպէս և մարմնոյ բարիք եղծանելի է և մարմինը ուրիշ բան մը չէ . եթէ ոչ հոգւոյ ծածկոյթ մի է , ուրեմն պատուով ծածկելու և պահելու է զմարմինը որ ինքնին չապականի և չփտի , ատոնք աշխարհի բարիք թէև չեն մերժեր . սակայն մեծ կարևորութիւն ալ չեն ընծայեր անոնց . առաքինութիւն միայն կըհամարին իրենց արժանաւոր վարձը . նոքա պատիւ ստանալու համար ուրիշի հետ չեն կռուի իբրև գայլս իրենց պատիւներէն մերկացունելու համար չեն զիջանիր . փոքրոգիներու պէս երկիւղներէն պաշարուած մեծութիւն չեն մերժեր և ոչ փքացեալոյն պէս նուաստ միջոցներով մեծութիւն կըփնտրեն .

սիրով կ՚ընդունին հասարակաց հոգը երբ հասարակութիւն զայն համեստ և պատուաւոր միջոցներով յարգանօք կը մատուցանէ իրենց . կը մերժեն նոքա մեծութիւն երբ հարկ է մերժել ։

Նոքա բարձրաւանդակ լեռան գլուխ նստած կը դիտեն և ստորին մարդիկ իբրև մրջիւն կը տեսնեն . իրենց առաքինութիւն և արժանաւորութիւն անհատներու վրայ երևցածէն առաւել մեծ տեսնելով անձնամոլ մարդկանց նշանակութիւն չեն տար . հոգ չէ որ նոքա հարուստ , ազնուական , մեծատուն և հզօր լինին . իրենք իրենց անձը ամենէն վեր կը դասեն ։ Ատոնք միշտ իրենք իրենց մէջ զբաղած գոհ են իրենց վիճակէն . հետամուտ չեն իմանալու թէ ուրիշները ինչ կ՚ընեն . բաւ է որ գիտեն թէ իրենք ինչ կը գործեն . ուրիշները ատոնց գերազանցութեան վրայ կ՚ափշին և կը զարմանան . բայց նոքա իրենց վրայ բնաւ չեն զարմանար , ատոնք ուրիշները մեծ չ՚համարելով զանոնք չեն գովեր , նոցա գործոյ հետամուտ չ՚լինելու համար զանոնք չեն պարսաւեր աւելի կ՚ընտրեն ճշմարտութեամբ յանդիմանել քան թէ ստութեամբ հաճոյանալ . ուրիշներու ոչ պարսաւանաց և ոչ գովեստից նշանակութիւն կուտան . և ատոնց այս յատկութեանց համար զիրենք լաւ չ՚ճանաչողներուն աւելի կ՚երևնան . ատոնք որ անհատներուն նշանակութիւն չեն տար հասարակաց առաքինութիւնը իրենց ունեցածէն նախադաս համարելով , թէ կ՚երկնչին և թէ կը պատկառին անոնցմէ . զի գիտեն թէ անձրևներու կաթիլները թէև աննշան , բայց անոնց հաւաքական միութիւնը հեղեղներ կը կազմէ ։ Կ՚ըսեն ատոնք՝ բնութիւն զմարդն ազատ ըրաւ . բախտն երբեմն զայն ծառայ կ՚ընէ . առաքինին պէտք է որ տայ իւր հարստութիւն , և պատիւն իրեն վերապահէ . եթէ պատիւն առնեն թող իւր ազատութիւն պահէ . եթէ ազատութիւնն առնեն . կեանք թող պահէ . եթէ կեանքն առնեն թող մխիթարուի իւր անմեղ առաքինութեամբ և խղճի ազատութեամբ , առաքինւոյն համբաւը անմահ կը մնայ ։

Ատոնք օրէնքներէն չեն վախնար . վասնզի արդէն իրենք են օրինաց հեղինակները և անոր հակառակ չեն գործեր . զի օրէնքները արդէն իրենց կամեցած բաներն են . նուաստ գործերու չեն զիջանիր թէև իրենց վրայ սպառնալիքներ ի գործ դրուին . ատոնք իրենց իմաստութեամբ և առաքինութեամբ ամէն բանին

կը յաղթեն . ատոնք ոչ հրամայել կրօնքեն եւ ոչ հրամայուիլ· զի գիտեն թէ խուժանին թէ հրամայել եւ թէ ծառայել տաղտկալի է . վասնզի հասարակաց մեծամեծ գործերու հետ անտեղի տրտունջներ եւ միանալով միայ կըտաղտկացունեն եւ սիրտ կը-վիրաւորեն ու սէրը կըմահացունեն ։

Նոքա անհանգիստ կըլինին հասարակաց հանգստութեան համար . բայց ականջնին կըձանձրանայ անախորժ եւ զզուելի ձայներ լսելէ . զի խուժադուժ մարդիկ ոչ համոզել գիտեն եւ ոչ համոզուիլ . այս պարագաներէն ձանձրանալով աւելի կուզեն խոյս տալ հասարակաց գործերէն քան թէ հետամուտ լինիլ . ատոնք ինչք եւ ստացուածք կ'ստանան , սակայն իրենք անոնցմէ չեն ստացուիր . ստացուածոց կորստեան վրայ չեն յուսահատիր բայց փոքր առաքինութեան մը կորստեան վրայ մահու չափ կը-վիրաւորին . ատոնք իրենց կեանքին չեն ծառայեր . զի գիտեն թէ իրենք ծնած են ոչ թէ կեանքը մշտնջենաւոր պահելու . այլ զայն պատուաւոր վախճանի մը հասցունելու . ատոնք ուրիշներու չ'ծառայելու համար անոնց դատաստանէն չեն վախնար . եւ ուրիշներու դատաստանը կըծաղրեն . վասնզի ուրիշներէն ուղիղ կարծուած դատաստանի մէջ իրենք իրենց հեռատեսութեամբ արդէն բազմադիմի սխալներ գտած եւ երեւան հանած են . ատոնք յաջողութեան մէջ պարկեշտ , ձախորդութեան մէջ արի են , պատժելու ժամանակ չեն վախնար . վասնզի առանց ցասման եւ բանի ուղիղ որոշմամբ կըպատժեն . ատոնց սիրտը միշտ խաղաղութեան մէջ է . բախտի չեն ծառայեր . զի գիտեն թէ բախտը ոչ առաքինութիւն կուտայ եւ ոչ կրնայ բառնալ . զի բախտի անիւը միշտ արտաքին բարեաց վրայ կըխաղայ . եւ բախտի տալոյն եւ առնելոյն վրայ բնաւ չեն այլայլիր . յաջողութեան մէջ չեն վստահիր , ձախորդութեան մէջ չեն վհատիր . գալիք վտանգ տակաւին ուրիշները չ'տեսած իրենք զայն թէ տեսած եւ թէ անոր առաջն առնելու ամէն հնարք խորհած եւ պատրաստած են ։ Ասոնցմէ մէկին երբ լուր բերին թէ՝ զաւակդ մեռաւ, նա անխռով կերպով ըսաւ . ես նորա մահը իր ծնած օրը տեսայ . Իւր տղայի մահը նորա ծնած օրը կըտեսնէ , իսկ ռամիկը զայն նորա մահուան օրը կըտեսնէ ։

Այն խօսքերէն վերջ ծերունին ձեռքէս բռնելով ատոնց ըն-

դարձակ աշխարհի մէջ ի միասին փոքր շրջան մը կատարեցինք. ինչ որ տեսանք պէտք չէ զանոնք լռութեան տալ, այլ հարեւանցի նկարագրութիւն մը պէտք է ի տեղեկութիւն հետաքրքիր ընթերցողաց ։

# ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Սինէ և որդիները, նոցա կեանք և կենցաղավարութիւն, վարք և բարք Սինէայ սահմանաց, ծովերու, լեռներու, ներքիններու և կղզի-ներու նոյն բնութեան տեսարանի նկարագրութիւնը. նորա որդւոց եր-ջանկութիւն և թշուառութիւն. Երկրէ [illegible] և կեանք.

*Չինաստանցիք իրենց ծագումը կըտանէին քառասուն հազար տարուան առասպելապատմութեան կըհասցունէին. բայց և ջրհե-ղեղը լինելը կըննդունէին. չինաց Թագաւորը մարդկանց աչքին երևիլ և անոնց հետ խօսիլ չէր ուզեր, անոր համար որ ժո-ղովուրդ միշտ պատկառանաց մէջ Ձայ և իր Թագաւորին Աստ-ուածական պատիւ տայ. Թագաւորին հրամանը անդիմադրելի և նորա կամք անբռնաբարելի էր. ժողովուրդ իր սխալանաց նե-րումն և Թողութիւն իր Թագաւորէն կ'աղնկալէր. զի կըհաւա-տար թէ նորա իշխանութիւն աստուածպետական է. սոյն ժողո-վուրդ խիստ զգուշութեամբ կըպահէր սիրոյ և մեծարանաց օ-րէնքները. սոնց Թագաւորը զարնան եղանակին իբրև գործնա-կան օրինակ ամէն երկրագործներէն առաջ ինքը մեծ հանդիսով կ'ելլէր քանի մի կանգուն երկիր մշակելու և կուց մեհեանը գնալով յանուն ժողովրդեան շնորհակալութիւն կըմատուցանէր և քուրմերուն պարգևներ կըբաշխէր։ Չինաց լեզուն և տառերը իրենց հին ազգ լինելոյն մէկ ապացոյցն էր. սոնց մէկ Ֆո-Հի-նէ Բ---ը, այլևայլ շեշտումներով հրեսուն բառի նշանակութիւն կուտար. խիստ դժուարահասկանալի էր սոցա լեզուն և լեզուի մշակութեան մասին շատ յետադէմ էին. սոնք արեգական և լուսնոյ և ուրիշ կուոց երկրպագութիւն կընէին և հոգեփոխու-թեան աղանդ ևս ունէին իրենց մէջ, ձախորդ պարագաներու մէջ իրենց պաշտած կուռքերը կընախատէին իբրև իրենց չարիք բերողը. սոյն ժողովուրդ ուրիշներու խելքին չէր հաւանէր. բայց իրենք այնչափ կըխորհէին որ գործելու ժամանակ չէին գտնէր.*

*Իրենք գաղտնապահ էին. սակայն ուրիշի գաղտնիք իմանալու-*

*շատ հետաքրքիր էին . սիրտ որսալու և կասկածոտութեան մէջ անհամեմատ էին . խնճոյքի մէջ առանձին առանձին սեղան կը նստէին և հրաւիրողը գինիի առաջին գաւաթը անթերեւոյթ ողւոյ մը կընուիրէր ։*

*Չինացիք հինգ օր սուգ կըպահէին իրենց մեռելոց համար , ի նշան սգոյ ճերմակ զգեստներ կըհագնէին . մեռնողի տղան մինչև հարիւր օր ոչ միս կուտէր և ոչ գինի կըխմէր . ասոնք լեռնէ ի լեռ կամուրջ շինած՝ երթեւեկութիւն կընէին ։*

*Այն երկրի հիւսիսային կողմը քառասուն ոտք բարձրութիւն տասնեւհինգ ոտք լայնութիւն և երկու հազար մղոն երկայնութիւն ունեցող պարիսպ մը կար . որ շինուած էր այն դիտմամբ՝ որպէսզի թաթար ազգերը չ՚կարողանան իրենց սահմանը անցնել այն երկրի բերքն է թէյ [illegible] , հալուէ [illegible] [illegible] եայլն ։*

*Տեսակ մը գեղեցիկ թռչուններ կան , որք ծովէն ձուկն որսալով իրենց տէրերուն կըտանէին . թղթի դրացիք իրենց դրացւոյն ձախորդ վնասուն բաժանորդ կըլինէին ։*

*Ճարոն կղզւոյն ժողովուրդ որ չինացւոց մէկ հատուածն էր . խիստ մեծ պատիւ կուտար իւր թագաւորին և թագաւորն եթէ պատահէր որ նախարարներու միոյն տունը գնար . նորա նստած սենեակը միշտ գոց պիտի պահուէր նորա երթալէն վերջ . ասոնք խիստ միջոցներ ի գործ կըդնէին որ իրենց երկրի բնակիչներէն մարդ մը չ՚գաղթէ ուրիշ երկիրներ գնալու ։*

*Ճարոնցիներէն մէկը եթէ տուն մը գնել ուզէր , նախ դրացիներու կամք հաճեցունել պէտք էր . թղթի խուովութեանց խաղաղացումը դրացիներու պարտականութիւնն էր , քաղաքներու մէջ սուր քաշողի պատիժը մահապարտութիւն էր ։*

*Այս ժողովուրդ թէև հասակաւ կարճ , տգեղ , սեւադոյն , աչք մանր , քիթ տափակ , սակայն խիստ սրամիտ էր և զօրաւոր , չափազանց պճնազարդ էին և մաքրասէր . իրենք փառամոլ էին , կերակուրները խիստ համադամ . թէ հպարտ էին . և թէ նախատանաց դէմ անհամբեր . չափէն աւելի գիրար կըյարգէին և ճշմարիտ կըխօսէին . կեղծել չ՚գիտէին և մեծասիրտ էին . ուրհանէն բնաւ երկիւղ չունէին իրենց պատիւը վիրաւորեալ տեսած ժամանակին ։*

Ասոնք չափէն աւելի կատէին նենգամիտ մարդիկը . մեծութենէ աղքատացեալներու յարգանք չէին պակսեցունէր . սակայն օտարներուն այնչափ նշանակութիւն չէին տար . այր մը իրաւունք ունէր իւր կինը մեռցունել, երբ զայն անարգանաց մէջ տեսնէր . ասոնց իշխանները միշտ իրենց մօտ յիշեցուցիչներ կըպահէին . որոյմէ զգուշական դասեր կառնէին : Այս ժողովուրդ բայց ի մեծ չաստուածէն յանուն եօթն մոլորակաց եօթն աստուածներ ևս ունէին, որոց վրայ երդում կընէին . խիստ շատ կուռք և կռատուններ ունէին : Խղճահարեալները չէին համարձակէր տաճարները մտնել և իրենց մեղքերը քաւել . միայն քաւութեան լեռը սիսի երթային խիստ տաժանելի կերպով և հոն թէ կաշխատէին և թէ կըխոստովանէին իրենց մեղքերը . յետոյ քաւութեան տեղը գնալով իրենց մեղքերէն կ'արձակուէին ասոնց քուրմերը օրը եօթն անգամ կըլուացուէին . և եօթն հարիւր յիսուն անգամ ծունր կըկրկնէին :

Կարգ մը մարդիկ նաւերու մէջ մտած նաւը քարով լեցունել տալով կընկղմէին և իրենք ալ նոյն նաւուն մէջ կըխղդուէին այն հաւատքով որ շուտով երթան իրենց մեծ աստուծոյն հանին : Այն երկրի մէջ յարգի էր ուսումն և գիտութիւն, արհեստ և վաճառականութիւն : Երկիրը երեք մեծ կղզիներու կըբաժնուի, մեծ և փոքր տասուիրեք հազար ինը հարիւր քաղաքներ ունէր . տէրութեան մայրաքաղաքը երեք միլիոն բնակիչ ունէր . գետնի տակը մեծամեծ շէնքեր կան պատրաստուած որոց վրայէն ջուրեր կըվազեն . երբ երկինք որոտայ, թագաւորը վտանգէ ղերծ մնալու համար կերթար այն շէնքերու մէջ կըմտնէր . սոյն երկրէն և իւր բոլորտիք գտնուող փոքր կղզիներէն կելլէր ազնիւ քարեր . անգամանդ, յակինթ, զմրուխտ, մարգարիտ, մեխակ ազնիւ, քարեր, հնդկարինկող եայլն :

Գանգէս գետոյն երկու եզերք լուսնի և արեգական իշխանութեան թևերու ներքև պատսպարուող արեաց ցեղէն սերեալ հնդիկ ժողովուրդ, որ սանսկրիտ արմատական լեզուաւ կըխօսէր, խիստ ճոխ և հարուստ երկիրներու մէջ կըբնակէր, ժողովուրդն բնութեամբ հանդարտ էր և բարեսիրտ . սակայն օդը լաւ չէր, և երկրի ճախճային զրութենէն առաջ կուգար հնդկախտ ըստւած

հիւանդութիւն . որ շատ երկիրներու վրայ տարածելով սոսկալի կոտորածներ կընէր , սոյն ժողովուրդ հարկադրած էր իր ստամոքս միշտ տաք պահել . յիշեալ տարափոխիկ հիւանդութենէն զերծ մնալու համար ։

Այս երկրի հարաւային ժողովուրդ մերկ կը շրջէր . խիստ նրբամիտ էին . անթիւ կուռքեր ունէին . զորս կը պաշտէին ինչպէս և կովերը՝ անոր համար որ կաթ կու տային . հաւը խիստ անարգ էր սոյն երկրի մէջ . եթէ մէկը անիծանել ուզէին , կըսէին . «հաւու միս ուտես» ։ Սոյն երկրի մէջ մասմը ժողովուրդ կային որք իրենց բնակութիւնները ծառերու վրայ կը հաստատէին . կանայք կային որք իրենց ամուսնոյն մեռած ժամանակ իրենք զիրենք այրերուն խարոյկներու մէջ կը նետէին և կ՚այրէին ։ Կռատուններու մէջ մտնելը և շուտով լուացուիլը մեղաց թողութիւն կը համարէին . Գանգէս գետը խիստ նուիրական կը համարուէր և ծանր հիւանդները կը ղրկէին նոյն գետի եզերքը բնակելու . որոյ խնամատարներն էին քուրմերը . այս ժողովուրդ Ճերմակ փղին մեծ յարգանք կու տար . հաւատալով թէ իր թագաւորի հոգին այն փղին պիտի փոխանցի . սոքա սովորութիւն ունէին ամէն տարեգլխոյն կռոց համար մեծ հանդէսներ կատարել . բայց եթէ տարին ձախորդ լինէր . նոյն կուռքերը նախատանօք կը տանէին Գանգէս գետը կը նետէին . իսկ ոսկի և արծաթ կուռքերը ևս միևնոյն նախատանօք տանելով գետի եզերք վրան ջուր լեցունելով կըսէին . այս տարի այս սուրբ ջուրով զքեզ մաքրելով կրկին ետ պիտի դարձունեմք և պաշտեմք , եթէ եկող տարի ևս զմեզ անյաջող կացութեան մէջ պահես . հաւաստի եղիր որ այլ ևս փրկութիւն չունիս , և գետամոյն պիտի լինիս ։

Լուսնոյ և արեգական խաւարումը շատ գէշ տպաւորութիւն կընէր իրենց վրայ ուստի Գանգէս գետին նուէրներ կը մատուցանեն , որպէսզի միջնորդութիւն ընէ զլուսին կամ զարեգակը բռնողներուն որ թող տան զանոնք ։

Շատ մեծ թափօրներով հանդէսներ կը կատարեն իրենց մեծ կուռքի տօնախմբութեան օրը . սոյն երկրի կլիման չոր է և տաք ձիւն չտեղար . անձրևները իրենց որոշեալ ժամանակներու մէջ շատ կանոնաւոր կը տեղան . հողն արգաւանդ է և բարեբեր . լաւ ոսկի , անգամանդ , մարգարիտ , լաւ տեսակ ոստրէ կելլէ այս-

պէս ալ շաքար . բրինձ . ափիոն . խնկեղէն . մետաքս . բամպակ . արմաւ . վայրի այծ . փիղ . վագր . առիւծ . սիրամարգ . դրախտահաւ . ռնգեղջիւր . ուղտ . կապիկ եւայլն .

Մեր ծերունին սոյն երեք ընդարձակ աշխարհներու ժողովըրդեան անօտի պաշտամունքները և տղայական արարողութիւնք տեսնելով սկսաւ հետեւեալ եղանակաւ խօսիլ . Հերձուած կամ կուսակցութիւններ կան աշխարհի մէջ . մէն մի հերձուած ուղղութիւնը իւր կողմը կըկարծէ . սակայն ամենատես աչք մը կայ երկնային իմաստութեան մէջ . ուրկէ անսխալ լոյս մը կըբղխի . նա բացորոշապէս ցոյց կուտայ թէ ո՛ր է ճշմարիտ ուղղութիւն . սակայն աշխարհի մէջ խառնիխուռն իրեր կան որք արդելք կըլինին ճշմարիտ ճանաչման . այդ իրերն են որք կըսխալեցունեն զմարդիկ , ոմանք ճանաչման և ոմանք գտնելու եղանակի մէջ . բայց զօրութիւն մը կայ մարդկանց սրտերու մէջ պահուած , որ օր մը պիտի վերցունէ իւր վրայի քողը և սկսի ուղիղ ճանապարհ մը ցոյց տալ ամենուն հաւասարապէս .

Մարդիկ կըհաւատան թէ միշտ առաջ կըքալեն , և այնպէս կերեւի , սակայն կաշկանդող շղթայ մը շարժական սահմանի մը մէջ անզգալի կերպիւ զմարդիկ սեւեռած է . սակայն չ՚գիտեմ թէ այս սահմանը երկնային հեղինակութիւնն է , թէ հնարքին . երբեմն պատահարներու մրրիկներէն և հովերէն կայծեր առաջ կուգան և հորիզոնի վրայ բարձրանալով կ՚սկսին ծփալ . ասոնց մէջ շատ մը վիշտեր կան թաղուն պահուած . այս վիշտերը եղեամներու հետ խառնուած մարդկանց վրայ տարածելով զանոնք ողորմելի վիճակի մը մէջ կըդնեն և երբեմն կըտանին այն հետեւանաց կըհասցունեն ուրկէ որ ժահահոտութիւն կըբուրէ . այս երեք աշխարհի մէջ ականներ կան լարուած . ոմանք դէպի իմաստութիւն տանող . ոմանք դէպ ի տգիտութիւն . Ասոնց հրային լեռները լի են մթութեամբ , բայց անոնց մէջ փայլակներու զօրութիւն կայ պահուած . թերեւս օր մը փայլատակելով լուսոյ շառաւիղներ ցոյց տայ անոնց ամպամած մութերուն , այս խաւարեալ տուներու մէջ հրաշակերտ սրտեր կան պահուած . զորս մենք չեմք տեսնէր . նոքա սոյն հին շէնք խանգարելու և նորին հիմունքները պեղելու զբաղած են . ասոնց աշխատութիւն և հան-

ճար մթութեանց նկուղներու մէջէն անթիւ և անհամար գաղափարներ երևան պիտի բերեն . որքան որ խոր ընկղմին մթութեանց մէջ՝ այնքան աւելի խորհրդաւոր իրեր և տեսարաններ երևան պիտի հանեն , թէև անոնցմէ ոմանք անօգուտ իրեր պիտի լինին . ինչպէս որ շատերն ալ օգտակար .

Երկնային անեղծ շղթայ մը զմարդիկ յանդէտս իրարու հետ կապած է . բայց նորա գործերը զանազան են . ոմանք դէպ ի լոյս , ոմանք դէպ ի խաւար կառաջադիմեն . ոմանք դրախտ և երկնից զարդերը կըքննեն . ոմանք խաւար կըխուզարկեն և թշուառաց վրայ ողբեր կըյօրինեն . ասոնց մէկ մասի աչաց բիբը ասաղ մ'է . այս նշանն ունեցողներու սիրտը երանութեան կապուած է . մթութիւն մը կայ՝ որ գերեզման կ'ըսուի . բայց անոր մէջէն յաւիտենականութեան դուռ մը կըբացուի այն հաւատացելոց համար , որք ճշմարտութեան լուսով լեցուած երանութեան հասնելու յոյսը իրենց հետ կըտանին . խաւարներու համար խորոշ մը կայ , որ դժոխք կ'ըսուի . անոր մէջ սոսկալի տանջանքներ կան պատրաստուած , այս տանջանքներու մեղմութիւն և սաստկութիւն մարդկանց գործերէն կախուած է .

Այս ժողովուրդ պէտք է որ խաւարի մէջ թափառի մինչև որ տգիտութիւնը իմաստութենէն շանթահարուելով մեռնի .

Աստուած տիեզերական կերակուր կըբաշխէ , և ամէն մի էակը իւր ճարակ կառնու նորա շնորհաբաշխ ձեռքէն . սակայն բարութեան հետ չարութեան անիմանալի գաղտնիք մը ես խառնելով մարդկութեան խմորի հետ՝ կըհարկադրէ արարածներու շատերը իրենց ունեցածէն գոհ չ'լինիլ իրարու ձեռքէն յափշտակել: Այս խղձն ամէն կարգի կենդանեաց և թռչնոց ու ձկանց վրայ կայ և կըտեսնուի . այս վիճակի մէջ մնողն միայն կրնայ իրմէն զօրաւորի հալածանքէն ազատիլ . չ'գիտեմ թէ այս զրկանաց տոյժը ո՞րու կըպատկանի .

Կըտեսնուի այս երկրի մէջ խումբ մը մարդիկ , որք միշտ կաշխատին բայց երեկոյ անօթի կըպառկին . նա և կան ուրիշ յուսահատ համբերողներ վշտաբեկ տանջուողներ , հոգեվարք մանկիկներ , մթութեան մէջ թափառողներ . լացող և անիծողներ բայց չ'կայ մէկը որ քննէ ասոնց միտք և սիրտ հասկնալու համար թէ ինչ է ասոնց ողորմելի վիճակի պատճառը .

Այս ժողովրդեան միտքը պատող մշուշները երբեմն կը փարատի. զայն տեսնելով մարդիկ կ'ուրախանան, և կըսեն թէ երջանկացանք, բայց անոնց տեղը ուրիշները կուգան կը յաջորդեն այլ տեսակ կազմակերպութեամբ, Հարիւրաւոր օրերու մէջ հազիւ թէ ուրախալի օր մը կը տեսնուի, սակայն անոր ալ յանկարծական տրտմութիւն մը կը յաջորդէ. երջանիկ կարծուածներու կեանքն անգամ ապերջանիկ մարդկանց թուոյն մէջ դասուած է. զի միայն խաւարը հաւասարապէս կը տիրէ. այս աշխարհիս մէջ չ'կայ երջանկութիւն. յուսահատութիւն պիտի տիրէր մարդկանց սրտին եթէ հաւատքն չ'սորվեցունէր թէ՝ այս տրտմութեամբ լի աշխարհը ուրիշ երջանկութեամբ լի աշխարհի նախադաւիթն է։

Մարդիկ երկու կարգի բաժնուած են լուսոյ հպատակ. խաւարի հպատակ. խաւարի հպատակաց թիւը նուազեցնելու համար լուսոյ հպատակաց թիւն աւելցունելու է. ուսուցանելով և համոզելով. ուսումը լապտեր մի է, որ ուղիղ կ'առաջնորդէ մարդկանց դէպ ի նպատակը. բայց զօրութեան տապարն գրչի ծայրին կը տիրէ. և չթողուր որ ուղիղ արահետներ գծէ, մարդիկ լուսոյ մէջ ևս կը տառապին. վասնզի լուսաւորեալները միշտ կուլան խաւարեալոց վրայ, որ այս ևս տանջանք մի է։

Այս աշխարհ տրտմութեան հովիտ մի է. երէկ տրտում, այսօր հիւանդ, վաղը ձախորդութիւն, միւս օրը սիրելոյդ մահը. ուրիշ օր մը չ'քաւորութիւն, օր մը անգործութիւն, օր մը գործերու շատութիւն, օր մը օդերու անբարեխառնութիւն օր մը ճանապարհորդութեանց նեղութիւն, օր մը սարսափազդներու վրայ ողբալը, օր մը խղճի խայթ և մտատանջութիւն, սրտի անհանգստութիւն. ահա այս է մարդկային կենաց շղթայի շարունակութիւն. հողմերը պաշտօն ունին ովկիանոսները յուզելու, կիրքերն ալ պաշտօն ունին մարդկանց սիրտերը ալէկոծելու և խռովելու. մարդիկ շատ անգամ հանգիստ և խաղաղ կը տեսնուին արտաքուստ. բայց նոցա սիրտը ներքին յուզումներով կը տառապի. նոցա միայն խորհրդին առարկայ եղած գործերը մտքէն խղճին, խղճէն մտքին կ'անդրադառնան. նոյն միջոցին բաց ի լեզուէն ներքին ամէն գործարանները ինքնին կը խօսին առանց ձայնի.

Այս մասին երջանիկ են մանուկները, որք թռչնոյ կընմա-

նին և յիշողութիւն չունենալով մասամբ մը ազատ են այս ցաւերէն ։ Մարդկանց սոյն միտքը անտանելի է ․ բայց մահը խորհրդաւոր ձեռք մը ունի որ մարդկանց հոգին քաղելով կ'առնէ և անոնց տառապանաց վախճան կուտայ ։ Խումբ մը մարդիկ չ'գիտնալով թէ իրենք անսահմանութեան առջևը ամբաստանուած են, զԱստուած կընեղեն անոր ձեռքէն երջանկութիւն առնելու այս աշխարհի մէջ ։

Աստուած կըսաւառնի տիեզերաց անհունութեան վրայ ․ հրէայն զայն իր ժողովարանի մէջ կըտեսնէ ․ քրիստոնեայն զայն իր տաճարներու և սրահի մէջ կըտեսնէ ․ մահմետական զայն իր մզկիթի մէջ կըտեսնէ ․ իսկ արգահատանաց արժանի չե՞ն Ճաբոն և Հնդիկ ժողովուրդները՝ որ զայն իրենց մեհեաններու մէջ կըփնտրեն ։ Մարդն թոյլտուութիւն կընէ որ ճանճը իր հիւսած ցանցի մէջ թռչի ․ Աստուած թոյլտուութիւն կընէ որ մարդիկ արարածներով զբաղին մինչև որ հասնի այն ժամը, յորում Աստուած ինքզինք ցոյց պիտի տայ յայտնապէս ամենուն ։ Այս հաւատքով թշուառներու յոյսը ապագայի մէջ միշտ ծրարուած կըպահուի ․ մարդկանց բաժինը թշուառութիւն է ․ սակայն նա ալ իր տուած հարուածի մէջ ինքը ևս մեծ բաժին մը ունի ․ թշուառութիւն հասցունողները չե՛մ կրնար յայտարձակապէս մեղադրել․ վասնզի փափագներ կան, որք թէպէտ այլանդակ՝ սակայն անզիմադրելի են, չե՛նք կրնար ըսել թող ջնջուին այլանդակները ․ վասնզի էակները իրարու հետ այնպիսի առնչական յարաբերութիւններ ունին, որոց յարաբերութեանց մեծ սքանչելիքներ կ'արտադրուին ․ անսպառելի ամբողջութեան մէջ արեգակէն սկսեալ մինչև չքոտի լուն ամէնքն ալ միմեանց հարկաւորութիւն ունին, մեծն փոքրէ, փոքրն մեծէ, ամէն բան հաւասարակշռութիւն է ․ հարկաւորութեան մէջ մուկն ալ իր կարևորութիւն ունի ։

Մարդիկ պէտք է որ իրենց յոյս հաստատեն այն բանին վրայ որուն մէկը չյաջորդեր ․ բնակարաններ կան, որք թէև գերեզման չեն ․ սակայն անոր նախադուռը կըհամարուին ․ զի մահը թշուառութիւնները անոնց մէջ գրած ինքը նոյա շուրջ պաշարած կ'սպասէ նոյա հոգեվարքին ․ յուսահատները իրենք զիրենք անգործութեան դատապարտելով կ'սպասեն կ'երթան ։

Նախախնամութիւն պարգեւատուն է, որ միշտ կըպարգեւէ. բայց անոր ձեռքի տակ ծիրան մը կայ, որ շարունակ ետ կ'առնէ. սկզբունքներ կան որոց հիմն ուղիղ է. բայց ձեւն անուղիղ է, արմատը նպատակաւոր է. իսկ ծիւղերը աննպատակ են. զանոնք հիմնողը յանցաւոր չէ. այլ այն է յանցապարտ որ զայն ծուռ ճանապարհներէն կը տանի.

Աղէտալի իրեր կան, որոց մէջ այլանդակ միտքերը, ապականեալ խիղճը, նուաստ սիրտը, ժահահոտ ոգիները պահուած են. այդ յատկութեանց տէրերը անմեղի արիւնը կը մատնեն եւ իրենց ձեռք Պիղատոսի կոնքի մէջ թաթելով կը լուանան եւ կըսրբուին, այս տեսակ նեղութեան ժամերու մէջ մարդս կը լքանի եւ ինքզինք ճակատագրին կը յանձնէ. նոյն միջոցին անիմանալի զօրութիւն մը ի դուռ կը շարժի, եւ չուզեր իր ձեռքի տակ գտնուող թշուառն չարչարել եւ անոր առջեւ յանկարծական ազատութեան դուները կը բանայ.

Բնազդումներ կան, որք երբեմն անսխալ ուղեցոյց կը լինին. աչք խաւարի մէջ լոյս կը փնտրէ, մարդիկ տարաբաղդութեան մէջ զԱստուած կը փնտրեն. այս տեսակ պարագաներու մէջ անոնք որ աշխարհի փրկութիւն չեն գտներ՝ կը հաւատան թէ աշխարհէն հրաժարելով առանձնակեաց կենաց մէջ կարող կը լինին զայն ձեռք բերել. սակայն փրկութիւնը ոչ թէ աշխարհէն հրաժարելոյն՝ այլ մեղքէն հրաժարելոյն մէջն է. տեղափոխութիւն չէ որ զմարդն կ'արդարացունէ, այլ գործոյն փոփոխութիւնն է որ զմոլին առաքինի կ'ընէ:

Հնդիկ երիտասարդ իր կրից մղումներէն հարկադրեալ իր գործած մեղքերը քաւելու համար քրմութեան պաշտօն առնելով վանք կը քաշուի. սակայն ներս մնած ժամանակ իր առանձնարանի դուռը շուտով չ'գոցելոյն համար (այն կիրքերը որոցմէ ինք հրաժարած եւ ազատած կը կարծէր) այն կիրքերը կրկին իրեն հետ ներս մտնելով կ'սկսին զինք նեղել եւ անհանգիստ ընել. այս տեսակները կ'երազեն այն բաները՝ զորս բնութիւն զլացած է իրենց տալու: Պէտք չէ հաւատալ թէ կրից մղումները երկնային եւ յաւիտենական իրերու սպասող մեծ եւ ազնիւ սրտերու մէջ մուտք կարող չեն գտնել. ինչ որ լինի նոցա կոչումը եւ ուխտը, մտածումն եւ պարտիք՝ դարձեալ մարդ են մի քանի զգուշական կէտերը հազիւ կրնան պահել.

Պէտք չէ մեղադրել մեղանչողները , զի մեղք ձգողութիւն մի է և խիստ դժուար է անկէ զերծ մնալ . բայց կարելի եղածին չափ քիչ մեղանչելը և անկէ զգուշանալը արժանապատուութեան վրայ հաստատուած պարտականութիւն մի է . խստու չմեղանչել հրեշտակային երազ մի է , սուրբ լինելը բացառութիւն մի է . իսկ արդար լինելը՝ մարդու մը համար ճշմարիտ և անխուսափելի օրէնք մի է . մարդիկ թէ թափառին , թէ սխալին , և թէ մեղանչեն պէտք է որ ետ դառնան և արդարութեան օրէնքը յարգեն .

Խորհուրդները պէտք է որ մարմնոյն հոկեն , և ըստ տեղւոյն զայն ճնշեն . վասնզի խիղճ և հաւատք կըսեն՝ տիեզերական դատաստան մը կայ , որ արդարութեան օրէնքով կըվճռէ ամէն բանը .

Մարդիկ այլևայլ տեսութեամբ կըվարուին . հաւատացեալը եզր և յստակ ունեցող անհուն տարածութեան վրայ իշխող Աստուած մը կըտեսնէ և կըհաւատայ թէ , զԱստուած շօշափելը հիանալի երանութիւն մի է . իսկ անաստուածը դէպ ի ոչնչութիւն կըքալէ . հաւատք և յոյս հաւատացելոց հոգին ջեռուցանելով առաքինական և բարոյական գործեր գործել կուտայ . զԱստուած փնտրողները կրօնքէն քաջալերուելով հրեշտակային սիրտ մը կ՚ստանան , և կամովին զբնութիւնը ճնշելով դառանց ձեւակերպութիւն կ՚ստանան .

Բնազդումները կըմղեն զմարդն առանց խորհելու գործել այն ամէն բաները՝ զորս բնութիւնը հաճելի ցոյց կուտայ . իսկ բանականութիւնը խորհել կ՚առաջարկէ և դէպ ի բարին և պատուաբերը մղել կուզէ . մարդիկ շատ անգամ կըտարակուսին և չեն գիտեր թէ ո՞ր կողմը գնալ պէտք է . այս մասին հեռատեսները ճշմարտութիւն կըփնտրեն համոզուելով թէ , ճշմարտութիւնը մարդկանց հոգւոյն լուսատու լապտերն է . անոնք որ թշուառներու վրայ չեն ողբար , նոքա կոյր են , անոնք որ նոցա աչաց արտասուք չեն սրբեր նոքա անսիրտ են .

Դատաւորները յանուն արդարութեան կըխօսին . իսկ երկնային սիրոյ հետ կապ ունեցողները յանուն գթութեան և ողորմութեան կըխօսին . գթութիւն առաքինութիւն մի է , ներողութիւնը գերբնական մեծանձնութիւն մի է . երբ երկրի վրայ

գթութիւն և ներողութիւն ի գործ կը դրուի . հոն արդարութիւն կը զարմանայ և կ՚որանչանայ . մարտիրոսները՝ զներողութիւն վեհապետական առաքինութիւն կը համարէին և մեծահանձնութեամբ զայն ի գործ կը դնէին զիրենք հալածողներու դէմ .

Կեղծ պարկեշտութիւններ կան . որոց կէսը առաքինութեան և կէսը մոլութեան նշաններ ունին . սուտը անոնց վրայի ծածկող քօղն է , որ չ՚թողուր մարդիկ անոնց իսկական պատկերը տեսնեն և ճանաչեն . սուտը այն դիմակն է որ շատ իրերը կերպարանափոխ կ՚ընէ .

Այս աշխարհի հարստութիւն և աղքատութիւն ջերմաչափի պէս վեր կելլեն և վար կ՚իջնեն առանց որոշ սահմանի մը մէջ մնալու . մարդկանց հարստութիւն կընմանի այն պտղալի ծառերուն , որոց շուրջ պաշարած կը թափուին պտուղ կթելու . երբ պտուղն կը վերջանայ , զայն միայնակ կը թողուն և կը հեռանան . ինչ որ ժամանակն կու տայ , անիկա ժամանակի պարգեւ է . մարդիկ թող փորձ չփորձեն ժամանակի տուածը ետ առնելու և գուցէ չ՚յաջողին , անոնք որ իրենց կենաց վտանգ իրենց աչքի առաջ կը բերեն , նոքա միայն գիտեն հեղեղներու հոսանքէն կոհակներ ժողովել , տգիտութեան մէջ կոյրը յանցաւոր չէ , այլ յանցաւորը նորա աչքի առջև նախապաշարման քող քաշողն է . քիչ մարդեր կան որ Աստուածային լեզուն գիտեն և կը հասկընան . խորիմացները միայն գիտեն այն վեհ լեզուի թարգմանութիւն . բայց ասկէ տիեզերական լեզու ևս կայ որ ամէն մարդ առանց կարդալու կը հասկընայ . անիկա սրտի լեզուն է, որ սրտէ ի սիրտ կը հասկըցուի .

Մարդկանց համար երկու ազնիւ գործ կայ . մինն երկիր մշակել միւսն սիրտ մշակել . բայց մեծ զգուշութիւն պէտք է որ ցորենի մէջ որոմն , սրտի մէջ մոլութեան հունտեր չ՚սերմանուին . միտք պարտէզ մի է զանազան ծաղիկներ բերելու համար պատրաստուած . բայց եթէ լաւ չ՚մշակեն , փոխանակ ծաղկանց՝ փուշ կը բերէ . որով թէ ինքզինք և թէ ուրիշները կը խոցէ .

Նախապաշարումը ջնջելու համար քաղաք և գիւղերը կործանելու հարկ չ՚կայ . շատ է որ մարդկանց ուղեղի մէջէն (վերջէն մուտք գտած) սևագոյն մուխը իմաստութեան բոցոյն զօրութեամբ արտաքս հալածուի . մոլիները ջնջել մոլութիւն բառնալ չհա-

մարուիր · այլ մոլութիւնները իմաստութեան հատու որով արմատախիլ ընելու է մարդկանց սրտի մէջէն · զեղծումները ջնջել բաւական չէ , այլ մարդկանց բարք և բնաւորութիւն դէպ ի լաւն առաջնորդելու է · զեղծումները չեն մեռնիր · երբ հալածուին առժամանակեայ կերպով կրկին մոխրոյն տակ ծածկուած կըմնան · յետոյ աւելի զօրաւոր կերպով երևան կուգան և հզօրեգոյնս կըներգործեն ·

Տգիտութիւնը այնպիսի մի զօրաւոր թակարդ է որ անկէ բըռնուողները թշուառութեանց մէջ կըմնանին · ուրեմն գիտունները յարգելու է · բայց տգէտները արգահատանքն ալ նուազեցունելու չէ · մշակելու է անոնց սիրտ և հոգին · վասնզի նոքա բընութեան զաւակներն են և ունին իրենց բնական պտուղները · տգիտութիւն մի փոխադրական հիւանդութիւն է , որ համաճարակ վէրքեր առաջ կըբերէ · եթէ չ'բուժուին այն վէրքերը՝ մարդկութիւն կապականի · օր պիտի գայ յորում բացարձակ ճշմարտութիւն անդիմադրելի իշխանութեամբ տիեզերական կըրթութեան վսեմ խնդիրը ամէն մտաց առարկայ ընելով անոր լուծումը խստիւ պիտի պահանջէ և պիտի ըսէ , վառեցէք ճշմարիտ լուսոյ կանթեղները , մշակեցէք սրտերը , լուսաւորեցէք միտքերը , ուղղեցէք կամքերը , մատաղ տղայոց նիւթական աճման հետ բարոյական վսեմ գաղափարներ ևս զետեղեցէք նոցա թարմ սրտի մէջ ։

Ուսուցէք անոնց պարտք և իրաւունք , նոցա վսեմ կոչումը և ազնիւ նշանաբանը սորվեցուցէք որ բարձր խորհին , վսեմ խօսին բարի գործեն , դէպ ի լոյս յառաջադիմեն · պէտք է որ համոզուին ամէնքը թէ՝ միենոյն Արարչի ձեռագործները և միենոյն ծնողաց զաւակները և միմեանց եղբայրներն են բոլոր մարդիկ ·

## ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

Բնութեան տեսարանի նկարագրութիւն · Միջագետաց ժողովուրդ · Նոր կենաց դրութիւն · Թագաւորին ընտանի կեանք · Միջագետաց հաւատք և կրօնական կեանք ·

*Ասիոյ աշխարհ մարդկութեան առաջին օրօրանը իր բոլորտիքն առած էր հիւսիսէն սառուցեալ ծովը, արեւելքէն մեծ ովկիանոս, հարաւէն Հնդկաց ծով, արեւմուտքէն Ուրալ լեռները, Կասպից ծով Սև և Մարմարա ծովերը. Միջերկրական ծով, Սուէզի ջրանցք եայլն.*

*Այս ընդարձակածաւալ և բարեբեր երկիր ութ հարիւր միլիոնէն աւելի ժողովուրդ կը պահէր իր ծոցի մէջ և կը կերակրէր զանոնք :*

*Ասիա իր բոլորտիքն առած էր տասներեք ծովերը և ինը նեղուցները. Սքանչելի էր այն երկրի լերանց գոյնզգոյն ծաղիկները և անոնց անուշահոտ բուրումները, որք գարնան զեփիւռներէն մղուելով կերթային կը տարածուէին դաշտաբնակ աշխատութենէն հողնած գործաւորաց անկողնոյ վրայ և նոցա արշալուսական քաղցր քունը թմրութեան կը փոխէին և անոնց սրտին ու մտաց և հողնած մարմնոյն զմայլումն կուտային. Նշանաւոր էին այն երկրի ծառաստանները, պարտէզ և այգիները, անտառները, յորդահոս գետերը, լիճերը, վտակ և աղբիւրները, որք բնութեան գեղեցիկ տեսարանը կը յօրինէին, և մարդկանց սրտին բերկրութիւն կուտային :*

*Այն գառնաշունչ հովը, որ ամէն սրտերը թախիծներով կը լեցունէր, երբ գարնան արշալոյս կը մօտենար մարդկանց սրտէն թախիծները մէկ մասը քաշելով առնելով իր հետ կը տանէր.*

*Մարդկանց վերակենդանութիւն տուող գարունը բարեաց դըռները բանալով նախախնամութեան պարգևները կը բերէր աշխատասէր ձեռքերուն կը մատակարարէր, և անոնց ձմեռնային սաստկութենէն ճնշուած սիրտերը կը զուարթացունէր և զանոնք ուրախութեամբ ու բերկրութեամբ և հրճուանօք կը մխիթարէր.*

մարդկանց նոր սիրտ . նոր ոգի և նոր խորհուրդ նոր զգացում և նոր կեանք կը շնորհէր .

Նշանաւոր էր սոյն երկիրը իւր բոլոր դիրքով, արգաւանդ դաշտերով, յորդահոս ջուրերով, բարձրաբերձ լեռներով, շահաբեր լիճերով, կարկաջահոս վտակներով. սոյն երկիր իւր ծոց կը պահէր կըստոյանեք վեհանձն և մեծասիրտ ու կորովի ժողովուրդ մը, որք իրենց հնաւանդ վեհ պատկառանօք աճ կաղգէին ի մօտոյ դիտող աչքերուն :

Թէև սոյս կեանք պարզ էր և աղքատիկ, սակայն իրենց դարաւոր պատմական յիշատակներով ճոխ ազգերէն աւելի գերադանց կը համարէին զիրենք, և իրենց նախնի վեհութիւն չկորսնցունելու ամէն զգուշութեան միջոցները կը պահէին. ասոնց խորհրդաւոր լեզուն իրենց նախնի ճոխութեան և մեծութեան յայտարարն էր. Հսկաներու ժամանակէն մնացեալ բեւեռագրոց բերդերը յայտնապէս ցոյց կու տային թէ սոյն երկիրը իրենց նախնեաց խանձարուրներ եղած է .

Սոյն ժողովրդին հնութեան պարծանք կազմող բեւեռագիրները իրենց ազնուագոյն տոհմերէ սերեալ լինելոյն վկայաբաններն էին. այս ժողովրդեան հին տոհական վայրերը իրենց գեղածիծաղ դէմքով բնութեան տեսարանը կը փառաղարդէին. Ջրվէժներու հոսանքները կուգային դաշտերը և ծառաստանները կ'ոռոգէին .

Սոյն պարզասէր ժողովուրդ իւր բնածին հանճարով և տոկուն գործունէութեամբ ամպամած մշուշներու մէջէն սքանչելիքներ կարտադրէր .

Խոհուն էին ասոնք և տնտեսագէտ. Նիւթական հայր արհեստ երկրագործութիւն խնամօք առաջ կը տանէին և իրենց նախնեաց բարձր գաղափարի պատկերը իրենց սրտի վրայ դրոշմած անեղծանելի կը պահէին .

Փափագ կը տածէին սոյս երկրի մշակութեան հետ իրենց սիրտ և միտք ևս մշակել. ասոնք լեզուէն աւելի սրտով կը վաստկէին ուրիշներու համակրութիւն. պարկեշտ էին սոքա և աննախանձ գթած էին և ժուժկալ.

Ծաղկեալ կը տեսնուէր ասոնց շատերու վրայ բնածին հանճար աննոյլուս վարք, անխոնջ աշխատութիւն, անհամեմատ մարդա-

տիրութիւն , ազնիւ զգացում, գեղեցիկ յատկութիւններ , անկեղծ սիրտ . իսկ փառամոլութիւն կարող չէր իւր թեւերը անոնց վրայ տարածել և զանոնք պարզ կենաց սահմանէն արտահալած ընել :

Սեթեւեթ պճնասիրութիւնք կը հալածէին անոնցմէ և կերթային մեղկ ոգիները շրջապատելու . սոքա խորպէտ էին թշնամւոյն դէմ, միամիտ սիրելոյն դէմ, իրենց շահը մասնաւորէն աւելի հանրական շահերու մէջ կը փնտրէին :

Այն երկրի մէջ երբ գարունը իւր գեղածիծաղ դէմք կը բանար , դաշտերը դալարի խոտերով, ծառերը գոյնզգոյն ծաղիկներով, պարտէզ և այգիները անուշահոտութիւն բուրելով, վարդ և մանիշակներով կը զարդարէին . լեռները իրենց բնական ծաղիկներով և կարկաջահոս ջուրերով բնութեան տեսարանը կը վսեմացունէին :

Այն գետերը և վտակները իրենց սահուն և յամրաքայլ ընթացքով հեռաքրքիր աչաց զմայլումն կու տային . այն վազող ջուրերու եզերքները շարուած զանազան սաղարթախիտ ծառերը և գիւրաւոր ուռենիները իրենց ճիւղերը իրարու հիւսած ճանապարհներու վրայ բնական կամարներ կը յօրինէին և երթեւեկողներու քաղցր հաճոյքներ կը պատճառէին . այն անմեղ զուարճութիւն սիրող ժողովուրդ իւր տօնական օրերու մէջ կը դիմէր այն բնութենէն պատրաստուած հանդիսավայրերը զով օդ և գարնան գեղեցկութիւն վայելելու . հոն անպակաս էր անմեղ զուարճութիւն , պարկեշտ ուրախութիւն , քաղցր և համեստ երգեցողութիւն նուագարանաց և երաժիշտներու մեղմ և ուրախարիթ ձայները , այն ներդաշնակ եղանակները բնութեան սիրուն տեսարանի հետ խառնուած , հանդիսականաց սրտի ուրախութիւն , մտաց զուարթութիւն կը մատակարարէին . այս հանդիսականաց մէջ կը գտնուէին մաս մը համեստ կանայք , որք եկած էին իրենց այրած և բնական սիրոյ բոցով խամրեալ սրտերը զովացունելու . այն կանայքն էին՝ որոց այրերը անգութ բախտ . անողորմ չքաւորութիւն . անկարեկից թշուառութիւն յափշտակած էին իրենց ձեռքէն և հալածելով զանոնք պանդխտութեան գիրկ նետած օտար կլիմաներու տակ , վատառողջ երկիրներու մէջ թշուառ կենօք կը թափառեցունէին . որոց վսեմ հոգին բնա-

գաւառի կարօտակէզ սիրոյ բոցերով կ'այրէին և կը տոչորէին ․ սոցա համեստ կանայք այն ուսարանի մէջ մէկ կողմէն կուրախանային և կը զմայլէին այն վսեմ և սիրուն զուարճութեանց մէջ․ միւս կողմէն իրենց ընկեր կորսնցունող թռչնոյ պէս յուսահատ և անմխիթար հառաչանքներով իրենց քաղցրութեամբ լեցուած սրտերը կը թունաւորէին ․ սոցա տխրակոծ սիրտերէն բղխած տխուր հառաչանքները իրենց աչքին ներգործելով հեղեղներու պէս արտասուքներ կը վազեցունէին իրենց նստած տեղերու գալարիները թրջելով կերթային այն արտասուաց կաթիլները յորդահոս առուակներու ջրերու հետ կը խառնուէին ու կանհետանային ․ նոքա այն նուիրական վայրերէն միջնորդութիւն կը խնդրէին իրենց ընկերներու գործոյն յաջողութեան և առանց փորձանաց շուտով վերադառնալոյն , նոքա սրտով կըսէին իրենց գլխոյն վրայ թռչնող թռչնոց ․ եթէ գութ և մարդասիրութիւն ունիք , առէք մեր արտասուաց կաթիլները ձեր անմեղ թևերու վրայ , տարէք ցոյց տուէք մեր ընկերներուն ․ ի գութ շարժեցէք զանոնք շուտով վերադառնալու և մեր վիշտերը ուրախութեան փոխելու ․ ըսէք անոնց ․ թող մեր անարատ սիրոյն դէմ սուր չ'փոխանակեն և մեր վարդէն աւելի քնքուշ սիրտերը անգթութեան կռանով չ'հարուածեն և մեր սիրոյն դէմ թող անգգայ չ'մնան ․ զի մենք տկար արարածներ եմք ․ առանց անոնց կարող չեմք ապրիլ․ թշուառութեանց մէջ նոցա կարեկցութեան կը կարօտիմք ․ բարութեանց մէջ անոնց ընկերակցութեան կը փափագիմք ․ առանց անոնց մեր կեանք անկենդան է ․ մեր օրերը յուսահատ ․ մեր սիրտ դառնութեամբ լի ․ մեր աչքերը արտասուքով լի ․ ուր որ երթամք նոցա պատկերը մեր աչքի առաջն է և նոցա յիշատակները մեր սրտի մէջ միշտ կենդանի է ․

Սոյն երկրի երիտասարդները կատարեալ կերպով կիշխէին իրենց հեշտական կրից վրայ , խիստ զգուշութեամբ կը պահէին իրենց անուան պատիւը , ատոնց գիւղական տնակներու պարզութեան տակ անմեղութիւն և պարզութիւն ձեռք ձեռքի տուած այն դեղջկական կեանք կերջանկացունէին և աշխատութեանց ծանրութիւն հեշտալի և ախորժելի կընէին այդ գիւղացիները ․ իրենց կաւեղէն ամանները արծաթեղէն սպասներէն նախապատւ

կըհամարէին , առաջ բերելով թէ մեղուներու մէջ ոչ նախանձ կայ , ոչ կորուստ և կամ գողութեան երկիւղ. վասնզի ամէնքն ալ հաւասարապէս ունին և առատ է . նաև իրենց պարզ և պարկեշտ զգեստները ոսկեթելով հիւսուած կերպասներէն լաւ կըհամարէին զի կըսէին . «զգեստ պէտք է որ մեզ ծառայէ . և ոչ թէ մենք զգեստին ծառայեմք» . Նոքա անպաճոյճ կենօք կապրէին և բնութեան տուածով կըբաւականանային . ասոնք իրենց գեղջուկ սնանկներու պարզութիւն մեծ ապրանքներու հետ չէին փոխեր . առաջ բերելով թէ . հոս բնութեան շնորհք և անմեղութիւն կայ . իսկ հոն տառապանք . սրտի անհանգստութիւն, մտաց վրդովում . հոս բնութենէն պատրաստուած մեր լայնածաւալ և պտղաշատ ծառերու հովանին այն պալատներու ոսկեզէն ձեղուններէն աւելի շուք և զուարճութիւն կուտան մեզ :

Սոցա պարզ և չմշակուած ազնիւ մտքերէն այնպիսի բնական վեհ և կատարեալ խորհուրդներ կըբղխէին, որոց վրայ ուսեալները կ'սքանչանային :

Ասոնց դաշտերը ամէն տարի առանց հանգիստ առնելու առատաձեռնութեամբ կուտային իրենց բարի արդասիքները , աշխատասէր մշակողներուն երկիրը ամէն կերպով առատ էր, խիստ կ'զգուշանային ուրիշներուն վնաս հասցունելէ և իրենք շատ քիչ կըվնասուէին . խաղաղ ապրիլ շատ կըսիրէին , երկայնամիտ էին և համբերող , արհեստներու և գիտութեանց յառաջադիմութեան խնամք կըտանէին , բայց ստէպ խոչընդոտներու կըհանդիպէին . կրօնք և առաքինութիւն ամէն բանէն վերադաս կըհամարէին . խիստ հաւատարիմ էին իրենց խոստման . օտարականները հիւրասիրութեամբ կըպատուէին . վեհանձն էին և մեծասիրտ, իբրև բազմափորձ՝ վշտաց դէմ տոկալու արհեստ շատ լաւ գիտէին , աղքատները սփոփելու մէջ մեծ հաճոյք կ'զգային . չափազանց կիրքերը ոտքի տակ դնելով զայն նուաճելու մէջ խիստ յաջողակ էին , և միշտ բանին հնազանդելու կաշխատէին . կեղծաւորութենէ և ագահութենէ կըխորշէին . աշխատասէրները համակրական սիրով կըսիրէին . իսկ անգործ և ծոյլ մարդիկներէն կըզզուէին : Ազնուութեամբ կըմերժէին այն ամէն բաները որ Աստուծոյ կամաց և առաքինութեան դէմ էին . գեղեցկութեան զուարթութեան և արիութեան պատկերները կըփայլէին ասոնց

անմեղ և պարզ երեսի վրայ . ասոնց ողջախոհ սրտի մէջ չէր
կարող մուտք գտնել ոչ նախանձու խորշակը , ոչ ատելութեան
թոյն . ասոնց լեռները և անտառները մեծ դիւրութիւն կուտային
կով , եզն և ոչխար պահելու . անտառները լի էին վայրի կեն-
դանիներով , վաճառականութիւն այնչափ յառաջադիմութիւն ը-
րած չէր , որչափ որ ուրիշ երկիրները : Կ'ըսէին ասոնք . հարուստ
պալատները , փառաւոր շէնքերը , ոսկեղէն կահկարասիքը , ա-
կանակուռ կերպասները , քաղցրահամ կերակուրները մարդկանց
վրայ մեղկութիւն սփռելով աշխատութենէ հեռնթափ կ'ընեն և
զանոնք ստանալու հոգերով կը տանջեն չունեցողները կը հրապու-
րեն զանոնք ձեռք բերելու համար անիրաւութեան զրկանաց և
գողութեան արհեստները սորվելու : Կ'ըսէին նոքա . ինչ հարկ
կայ երկիր այնքան խոր փորել մետաղներու համար , որք ըստ
ինքեան անպէտ և աննշան բաներ են . շատ է երկրի սրտի վրայ
արօրի խոփով ակօս բանալ , սերմանել , հնձել . ասոնք բաւա-
կան են մարդկանց պիտանի պէտքերը հոգալու և անոնց մեր-
կութիւն ծածկելու ու լիութեան մէջ պահելու . Ճշմարիտ հա-
րստութիւն երկրագործութեան և մշակութեան արդասիքն է . զի
նա առատապէս կուտայ հաց և կերակուր , պտուղ և արմտիք ,
զգեստ և ամէն պէտքերը . մարդկանց համար երկու բան պէտք
է . երկրագործութիւն ապրելու համար , առաքինութիւն եր-
ջանիկ լինելու համար . Մնացեալ ամէն բաները աշխարհի խա-
բերայ տուրքն է . որ մարդիկ խաբելու համար կուտայ . և զա-
նոնք թշուառացնելու համար ետ կառնէ . այդ ամէն ոսկի ,
արծաթ և անգին կարծուած "անպէտ քարերը մարդկանց մա-
տանջութիւն և հոգ պատճառող բաներ են . եթէ մարդկանց
համար զարդ պէտք է , ամենէն լաւ և ճշմարիտ զարդ հոգւոյն
առաքինութիւնն է . որ միշտ անմեկնելի է անկէ . ոչ կը հնա-
նայ և ոչ կը գողցուի : Զեղխ կեանք , կ'ըսէին . մարդկանց
հոգին կ'աղտոտէ , զօրութիւնը կը ջլատէ , զգայութիւնները կը-
տկարացունէ . միտքը կը խանգարէ . նոցա ստացուածները կը-
վատնէ . ծերութիւնը կը փութացնէ , և ժամանակէն առաջ դէպ
ի գերեզման կառաջնորդէ :

Ասոնց ծերերը հայրական սիրով կ'ընդունէին իրենց դիմող-
ները . երկայնմտութեամբ կը լսէին և խոհեմութեամբ կը պա-

տասխանէին , իբրև մեծերիմ իրենց փորձառական խորհուրդները կուտային , գթութեամբ կըվարուէին յանցաւորներու հետ և պատժէն աւելի խրատել և արձակել կըսիրէին և գործ կըգնէին ․

Երիտասարդները իրենց խոհեմութեան դասերը կառնէին իրենց անձի փորձառութենէն , յարատև մտածմունքներէն, ծերոց խրատներէն ․ այն ծերերը իրենց սուր հեռատեսութեամբ անցեալ իրերը կըյիշէին , ներկայն կըկարգադրէին , ապառնին կըգուշակէին , յանցանքները ներելու խիստ վարժ էին․ և կըսէին․ անյիշաչարութեան հեղինակը , իր նեղիչներու համար ծունր դնելով կաղօթէր անոնց համար և կ՚օրհնէր զանոնք ․ կըսէին անոնք , որչափ որ պատիժները սաստկանան , այնչափ ալ մոլութիւնները կաճին , վասնզի չափազանց պատիժը յանցաւորի երեսի ամօթ կըքառնայ , և համարձակութիւն կուտայ չարեաց մէջ առաջ գնալու ։

Երկիրը առատապէս կարտադրէր գարի , ցորեն , սիսեռ , բակլա , սեխ , ձմերուկ , վարունգ , խաղող , ծիրան , տանձ , խնձոր , սալոր , դեղձ , նուռ , նարինջ , լիմոն , փորթուգալ , սերկևիլ , թութ , ընկոյզ , շագանակ , կաղին , բրինձ , հաճար , կտաւատ , մեղր , դաղպէ , անթիւ և անհամար բանջարեղէններ և ծաղիկներ վարդ և մանիշակներ ։ Խիստ նշանաւոր էին սոյն երկրի ձին և ջորին , այծն և ոչխար ․ եզն և գոմէշ ․ ուղտ և փիղը ․ բուրդ և բամպակ , տեսակ տեսակ խնկեղէնները ․ համեմները , շաքարի եղէգը ևայլն ․ զորս կըվայելէր այդ սակաւապետ ժողովուրդ անմեղ և պարկեշտ կենօք ․

Մեր ծերունի ընկերը իր ուշադրութիւն Ասիոյ մէկ ծայրի վրայ դարձունելով կըսէր ինձ ։ Կըտեսնե՞ս այդ երկու գետի մէջ տեղ բնակող պարզասէր և աշխատասէր ժողովուրդ , ատոնք ասկեղէն դարու մնացորդներն են ․ ատոնք սակաւապետ կենօք գոհ կապրէին և երջանիկ ․ պարզ կենցաղավարութեամբ , այդ ժողովուրդ իրեն պիտանի արհեստները միայն գիտէ և կըգործածէ ․ առհասարակ աշխատասէր են և երկրագործութեան հետամուտ ․ երկիրները արգաւանդ են և բարեբեր ․ օդը բարեխառն է և հանդարտ ․ ատոնք անմեղ ուրախութիւն և զուարճութիւնները չեն մերժեր ․ բայց մոլութեան վրայ զզուանօք կընային ․

կերակուրնին պարզ է և բնական · բայց անշքարար · զգեստնին խիստ պարզ և անպաճոյճ · ատոնք ընղլութեան ոխերիմ թշնամի են , ագահութիւն չեն սիրեր · պէտքէն աւելին ատոնց աչքին արժէք չունի · կըսեն դոքա , պէտքէն աւելին ուրիշ պէտքեր կըծնանի և մարդիկ ագահութեան ու անիրաւութեան կառաջնորդէ և ուրիշներու զրկանք կըլլնի · ատոնց տուները կուփածոյ քարերէ կըշինուին բայց խիստ պարզ և անզարդ են ։

Սոյն զգաստ ժողովուրդ հեռի է սնոտի ճոխութենէ , շլացուցիչ մեծութենէ , փախուսիկ և մոլեխառն զուարճութիւններէ ատոնք խաղաղ են և միաբան · ազատ կապրին և հաւասար · ատոնց մէջ խղճի ձայն միշտ արթուն է , ատոնք մեծ մասամբ ունին բարուց անարատութիւն , հաւատարմութիւն , հնազանդութիւն · այդ առաքինութեամբ զարդարեալ երկրի մէջ նենգութիւն , բռնութիւն զրկանք և անիրաւութիւն խիստ քիչ տեղի կունենան · ատոնց մէջ մեծութեան և փոքրութեան աստիճանի նախանձ չ'կայ · զի առաքինին և իմաստունը իրենց բարձր դիրքն ունին և միշտ յարգի են յաչս հասարակաց · Կըսէր՝ այս ժողովուրդ քիչ կըխորհի զայն մասնաւոր մարդիկը, որք իրենց անմեղ և երջանիկ կեանք կըթողուն , հասարակաց հօգը կ'ստանձնեն , որ լի է ցաւօք և նախատանօք ։ Աստուածային իրաւունք մը կայ, որ պարտք կըդնէ մարդկանց վրայ , ոչ գերի ըլլալ և ոչ ուրիշներ գերի ընել · սխալ կըխորհին անոնք , որք առանց բարեբարելու իշխել կուզեն , մինչ Աստուած անգամ իւր մեծ բարերարութեամբն իշխանութիւն ունի մարդկանց վրայ · կ'ըսեն ատոնք · բարկայողները կընմանին այն գետերուն, որք իրենց սահմանէն և ափունքներէն դուրս ելլելով հասարակաց այգիները , պարտէզները և պտղաբեր դաշտերը ողողելով կապականեն մինչ նոքա ոչ թէ ապականելու , այլ ոռոգելու և պտղաբեր ընելու պաշտօնին սահմանուած էին · սոյն ժողովուրդ գինի և արբեցութիւն կըմերժեր ըսելով, առողջութեան համար սահմանուած գինին չարաչար գործածողներու համար տեսակ մը ապականարար թոյն կըդառնայ · զի ոգելից ըմպելիները մարդկանց վրայ կատաղութիւն կըբերեն · մոլեկան կիրքերը կարթնցունեն , թէպէտ չին մեռցուներ , բայց սրտի հետ կեանք կապականեն · գինին ոչ է՛ որ մարմին կըկազդուրէ և կեանք կերկարցունէ , այլ զգաս-

տութիւն , ժուժկալութիւն չափաւորութիւն և անարատ կեանքն է որ զմարդիկ զերծ կը պահէ զանազան հիւանդութիւններէ և երկայնակեաց կընէ . գլուխ և կիրքերու զգուշացող բարեկարգ և աշխատասէր այդ նահապետական ժողովուրդ իւր առոյգ մանկութիւնը ժուժկալութեան մէջ անծերանալի կը պահէր . բնութենէն սորված էր մարդասիրութիւն , հաւատարմութիւն , անշահասիրութիւն և սակաւապետութիւն . գիտէր արհամարհել ընդունայն փափկասիրութիւն . փառամոլութիւն . որք զմարդն շատ բանի կարօտ կընեն . կը յարգէն դոքա ողջմտութիւն , ազատամտութիւն , մարմնոյ և մտաց կորովը . առաքինական սէրը և բարեկամական անկեղծութիւն , յաջողութեանց մէջ չափաւորութիւն . ձախորդութեանց մէջ համբերութիւն . ատոնք համարձակ են ճշմարտութիւն խօսելու մէջ , սոսկալի կերպով կատեն շողոքորթները . ատոնց աչք և կերպարանք մեծ մասամբ անյողդողդ են . խօսքերը թէև առանց սեթևեթի , բայց ծանր և պերճութեամբ լի են .

Տիգրիս և Եփրատ ջրող գետերը այս բարելի երկրին յաջմէ և յահեկէ սահելով և դաշտերը ոռոգելով կերթան ընկղմիլ համատարած ովկիանոսներու մէջ . այդ հովտի մէջ գտնուող փոքր քաղաք , որ իբրև հնութեան կոթող կը տեսնուի , թէպէտ և իւր նախնի պերճութիւն կորսնցուցած է , բայց իւր նախնական վեհութիւն և մեծանձնութիւն տակաւին կը պահէ իւր սրտի մէջ . դոքա իրենց խոհական գործերով յիշել կուտան թէ իրենք վեհազուններու խառնուած են . ատոնք իրենց բարեսրտութեան հետ քաղցր հիւրասիրութիւն մի ևս ունին . նոցա նիւթական վիճակը (համեմատութեամբ ճոխ ազգաց) աղքատիկ է . սակայն նոցա սիրտը ամէն հարստութեամբ լի է . ունէին ատոնք այն ազնիւ զգացումն որ միշտ հասարակաց շահը իրենց շահերէն նախադաս կը համարէին . նենգութիւն չէր բնակէր ատոնց սրտի մէջ , գարուն իւր քաղցր օդերով և ծաղիկներով և տերևազարդ ծառերով , աշուն իւր բարելի պտուղներով կերջանկացունէր այդ անմեղ ժողովուրդը . սաստիկ չէին այս երկրի ոչ ձմեռուան դաժանաշունչ հողմերը . և ոչ ամառուան տօթ և արևու կիզումը .

Այն ամէն կարգի աշխատասէր ժողովուրդ երբ իրենց աշխատութեան հանգիստ կուտային , նոքա իրիկուան պահուն կը հա-

մախմրուէին բնութենէն պատրաստուած և զարդարուած այն լճակի և փոքր ծովակի եզերք, ուր օդոյն քաղցրութիւն, լճի փառաւոր տեսարանը բերկրութիւն կըմատակարարէր վաստակաբեկ սրտերուն և մտքերուն. օդոյն այն լճակի երես ծածանիլը, ձկանց լողալը և կայտռիլը. Թռչնոց դայլայլիկ և քաղցր գեղգեղումը, բարձրահասակ ծառերու հովանին կըյօրինէին այն վսեմ տեսարանը, որ տխուր սիրտերը զուարթացնելու և վաստակաբեկ մտքերուն հանգստութիւն տալու պաշտօն կըկատարէին. չմերժեր այդ ժողովուրդ այն համեստ և պարկեշտ հաճոյքները, որք մարդկանց սրտերուն բերկրութիւն, տարակուսեալ մտքերու հանգստութիւն, վաստակաբեկ մարմնոյն զօրութիւն տալով աշխատանքները կ՚սփոփէին. սակայն խիստ կ՚զգուշանային չափազանցութենէ. զի մի գուցէ չափազանց հաճոյք անփորձ սրտերու վրայ տարօրինակ տպաւորութիւն ընելով մարդիկը մեղկացունէ. և դէպ ի մոլութիւն առաջնորդէ. կ՚ըսէ այդ ժողովուրդ. հոգին զուարթ պահելու համար անմեղ զուարճութիւն պէտք է. ինչպէս որ քաղցելոյն կերակուր, վաստակաբեկին հանգիստ և թշուառներուն մխիթարական սփոփանք։

Գիշերուան լռութիւն, ծովակի հանդարտութիւն, ալեաց վրայ սփռուած լուսնոյ թոթուուն լուսոյ ծածանումը, երկնից կապուտիկ դաշտի երեսը յօրինուած աստեղներու ճոխաճեմ գնացք և շարժումները, փողերու և քաղցրանուագ քնարներու ներդաշնակ գեղգեղումները, երգեցողներու քաղցր և բարեկիրթ համեստ ձայները զմայլեցուցիչ և խիստ հաճոյական բերկրութիւններ կըմատակարարէին այն գեղածիծաղ վայր համախմբեալ զգաստ ժողովրդեան։

Այս երկրի օդը և կլիման մեծապէս կընպաստէ առողջութեան ծննդեան և աճման. ամէն մարդ գոհ է և շնորհակալ Աստուծոյ տուած բարիքներէն և իր պարզ վիճակէն. ատոնք բաւական կըհամարին ինչ որ բնութիւն և աշխատութիւն կըպարգևէ իրենց. այդ ծնողք իրենց զաւակները աւելի խոշորակեցութեան, չարքաշութեան մէջ կըմարզէին քան թէ մեղկ փափկասիրութեան. ատոնք մեծ մասամբ դպրոցական դաստիարակութիւն առած չեն. սակայն այն անուս մտքերու մէջ ամէն բնական բարի և պարկեշտ ուսումները պահուած կըմնան. քիչ

կը խօսին . բայց շատ բան կը հասկըցունեն , երբեմն բնաւ չ'խօսելով շատ բաներ կ'զգայունէին , մէկ խօժոռ ակնարկի մէջ իրենց սրտի բոլոր խորհուրդները տեսնել կու տան ։

Ուղղութեան և առաքինութեան վսեմ պատկերը շատերու երեսի վրայ լուսոյ պէս կը փայլի . նոցա բնական վեհ սրտի մէջ մարդու մը արժանաւոր ամէն յատկութիւնները կան և կը տեսնուին . միայն թէ ճարտար բժիշկ մը պէտք է որ նոցա միգապատ սրտին քօղը վերցունելով այն ազնիւ բնաւորութիւնները բացայայտ կերպով երևան բերէ . ատոնց երիտասարդները եթէ անզգուշաբար թերութեանց մէջ գտնուին և երբ իրենց պակասութիւնը իրենց զգայունեն , անմիջապէս կ'սթափին և կը շառագնին ու ամօթխածութեան քօղով երեսնին կը ծածկեն և խիստ կը զգուշանան որ ուրիշ անգամ պակասութեանց մէջ չ'գտնուին. փոքր նախատինք մը ատոնց աչքին մահուան դատապարտութենէն աւելի ծանրակշիռ է . ատոնց մեծերը վեհանձն են և ծանրաբարոյ ու պատկառելի , երիտասարդները երկիւղած են և աշխատասէր , փոքրերը հլու են և հնազանդ ու կը յարգեն մեծերու ուղիղ հրամանները , ժողովուրդ մեծ մասամբ արհեստաւոր են , վաճառականութիւն յետադէմ է . անոր համար որ փոխադրութեան դիւրութիւն և ճանապարհներու ապահովութիւն կը պակսի . գեղացիք առհասարակ երկրագործ են և խաշնարած և շատերը լեռնաբնակ հովիւներ են . ոմանք ես թափառիկ կենօք կապրին, երկիրը յաւէտ պտղատու է քան թէ ամուլ . կըսեն ատոնք. մշակութիւնը մարդկանց մարմինը առողջ կը պահէ և ճըշմարիտ հարստութիւնը մշակութեան արդասիքն է . երկիրը աննախանձ կերպով կու տայ մարդկանց կենաց ապահովութեան հարկաւորն . մշակի մարմին առողջ, հոգին զուարթ , միտք հանդարտ , սիրտը ուրախ կըլլնի . երկիրը չհողնիր իր բարիքները զինք մշակողներու վրայ սփռել , նորա ծոցը՝ բազմածնունդ է և նորա արդասիք անսպառելի . շատ է որ մշակող ձեռքեր չ'պակսին . երկիրը իբրև բարեգութ մայր առատապէս կը նուիրէ իր աշխատասէր որդւոյ . մարդկանց թշուառութեան աղբիւրը շատ անգամ ծնունդ կառնու անգործութենէ , ագահութենէ և փառասիրութենէ . ագահն և փառամոլն կ'ուզեն ամէն բանը ունենալ և աւելորդներու հասնելու ցանկութեամբ իրենք զիրենք

կընեղեն և թշուառութեանց մէջ կ՚իյնան․ անգործը, ինքզինք կենդանւոյն ի շարս մտնելոյ կըդասէ և կըմնայ հոգեվարք թըշուառներու շարքի մէջ․

Եթէ մարդիկ գոհ լինին պարզ կենօք և սուղ պէտքերով բաւականանալով, ամէն տեղ առատութիւն, զուարթութիւն, ուրախութիւն խաղաղութիւն պիտի տեսնուի ։

Երբ երկիր մը իր ծոց կըպահէ նախանձ, երկպառակութիւն, փափկասիրութիւն, ղեղխութիւն, շահամոլութիւն, անաշխատ կեանք, անհեռատեսութիւն, անանձնազոհութիւն և արհեստները յարգ չեն գտներ, վաճառականութիւն իր արժանիք կըկորսնցունէ․ երկիրը անմշակելի կ՚մնայ․ ասոնք չարագուշակ նշաններ են երկրի թշուառութեան․ մարդիկ չեն գիտեր թէ իրենց երջանկութիւն ո՞րկէ կըբղխի ։ Տեսէք թէ կենդանիներն անգամ ձեռնտու են մարդկանց կենաց պահպանութեան, մեղուն իր մեղրով, ոչխար իր կաթն և բուրդով, եզն իր աշխատութեամբ․ սակայն մարդիկներէն շատերը այս ամէն չ՚ճանաչելով ողորմելի կեանք մը կըվարեն և ցաւալի է ըսել թէ՝ ոմանք բարիները թողլով գազանաց բարք և բնաւորութիւն ընդօրինակելով ի գործ կըդնեն․ մի մերժէք մշակութիւնը, տեսէք թէ երկիրը մօրու չէ և ոչ ալ ապերախտ․ այլ հարազատ մայր մը է իր զաւակաց, որք զինք ամլութեան վիճակէն հանելով պտղաբերութեան մէջ կըդնեն իրենց անխոնջ աշխատութեամբ, որու փոխարէնը ընդ միոյ հարիւր կըշահին․ տեսէք այդ մշակեալ դաշտերը, այգիները և պարտէզները, որք իրենց անթիւ և անհամար պտուղներով մեր երկիրը միշտ լիութեան և առատութեան մէջ կըպահեն, որով միշտ խաղաղ և երջանիկ կապրէին մեր երկրի ժողովուրդները ։ Կըսեն ասոնք․ մարդիկ պէտք է որ միշտ անկեղծ լինին․ զի անկեղծութեան մէջ բնաւ վըտանգ չ՚կայ․

Ասոնց անպաճոյճ բայց քաղցր խօսքերը սահելով կերթային տխուր մտքերու մէջ կըմտնէին և անոնց սրտերը կըմխիթարէին․ ինչպէս որ երկնային ցօղը դեռաբոյս ծաղկանց վրայ ծաւալելով անոնց կեանք և զօրութիւն կըպարգեւէ․ այսպէս այդ ծերերու շնորհալի խօսքերը երիտասարդաց սրտին նոր կեանք և նոր բերկրութիւն կըմատակարարէին․ վարժ էին թշուառութեանց դէմ

տոկալու և կըսէին նեղութիւն և վիշտեր վշտակիրներուն անցեալ փառքերուն նոր պայծառութիւն կուտան ․ անոնք որ վիշտ կրած չեն , նոցա կեանքէն երկու բան կըպակսի ․ այն է համբերութիւն և անյողդողդ արիութիւն ․ բաղդէն հարուածեալները շատ լաւ կ'զգան մարդասիրութեան քաղցրութիւն ․ մարդիկ պէտք չէ որ յուսահատին իրենց գործած սխալմունքներու վրայ ․ վասնզի սխալմունքները մէկ մէկ ուղղութեան դասեր են զգայուն մարդկանց համար ․ անյաջողութիւն տեսակ մը ցեց է , որ մարդկանց կեանք կապականէ ․ այս ժողովուրդ գիտեր գործելու ժամանակը կըճանաչեր համբերատարութեան միջոցը ․ գիտէին խօսել և լռել ըստ տեղւոյն ․ միշտ զբաղեալ էին առանց տագնապի ․ ատոնք պերճ երեւալու տենչանքէն աւելի իրենց տուներու բարեկարգութեան փառքն լինելը կըսիրէին. անձնահաճ կամք չէր տեսնուէր անոնց վրայ ․ կըսէին անոնք ․ անձնահաճութիւն մարդկանց երջանկութեան ոխերիմ թշնամի է ․ անձնահաճութիւն մարդկանց յօժարութիւն կըզրգռէ և մեծամեծ չարիք առաջ կըբերէ ․ մարդկանց հանճար կըքողարկէ , զօրութիւն կըտկարացունէ և միտքերը անհաստատ վիճակի մէջ կըպահէ ․ նոքա քաղցրութեամբ կըյանդիմանէին և անմիջապէս կշտամբէին իրենցմէ վիրաւորեալ սրտերը բժշկել ․ խոյս կուտային նոքա մեղկութենէ ․ շռայլութենէ ․ սակաւապէտ կեանք իրենց մեծ պարծանք կըհամարէին , բարեգործութեան խիստ սիրահար էին. կ'ըսէին անոնք. Աստուծոյ երկիւղածութիւն մարդկանց սրտի ամենէն մեծ գանձն է ․ զի երկիւղածութեամբ կարելի է ձեռք բերել իմաստութիւն , խաղաղութիւն , արդարութիւն , անարատ փառք և ամէն բանին յաղթող ճշմարտութիւն ․

## ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

*Թափառիկ ցեղեր . Նոցա բարք . Իրաւադատութիւն . Վրէժխնդրութիւն . Յանձնառու դատերում և հաշտութիւն . Ծերունոյն իշխանը և նորա բաժանումը . . . . . . . . . .*

Կ՚ըսէր ծերունին . կըտեսնե՞ս այդ լեռնաբնակ Թափառիկ հովիւ ժողովուրդն ինչպէս իւր հին պարզութիւն և սակաւապէտութիւն կըպահէ և հանգիստ ու խաղաղ կապրի . ասոնք ուտեստի մասին կըբաւականանան իրենց ոչխարի կաթով և արմաւենիի պտուղներով . ասոնց Թափառիկ կեանք զուրկ կըպահէ զիրենք մշակութենէ , որով հացի պէտքը միշտ զգալի է իրենց համար ։

Սոյն ժողովուրդ իւր մազէ հիւսուած վրանը արքունի պալատանց հետ չփոխեր , զի բնութեան ամենէն շքեղ տեսարանները և բնական հովասուն ու մաքուր վայրերը ասոնց բնական լինելու յատկացուած են ։

Ծաղր կ՚ընէին ասոնք այն տուներով խճողեալ քաղաքները , առաջ բերելով թէ՝ անոնց օդերը ապականեալ են և շատերը օդ առնելու պատուհաններ անգամ չունին . անոր համար նոցա կեանք միշտ կարճատև է և իրենց օրերու շատերը հիւանդութեամբ ցաւօք և հեծութեամբ կանցունեն ։

Սոյն Թափառիկ ժողովրդեան ամենէն Թանկագին զգեստ միայն մէկ կապոյտ կտաւէ շապիկ և մէկ սև Թաղէք էր . ասոնք բոկոտն կըշրջէին . կանայք էրիկ մարդիկներէն չէին ծածկուէր . սակայն ողջախոհ կեանք և հաւատարմութիւն կատարեալ կերպով կըպահուէր . խիստ հաւատարիմ էին իրենց խոստման և առուտուրի մէջ ոչ կընենգէին և ոչ սուտ կըխօսէին . միայն թէ ըստ հնաւանդ գրութեան իրենց դրացի և Թշնամի Թափառիկ ցեղերու ուղտ , ձին և ոչխար կասպատակէին և մեղք չէին համարէր . այդ վայրենի կարծուած մարդիկ իրենց մէջ մեծ սիրտ և վեհանձն ոգի կըկրէին ։

Երբ ասոնց երկու դրացի ցեղերու մէջ դժտութիւն կամ պա-

տերազմի հարկաւորութիւն տեղի կունենար . երրորդ չէզոք ցեղ մը միջնորդական պաշտօն կըկատարէր , խնդիրը կըբարեխառ-նէր և կըխաղաղացունէր .

Վեհանձն ոգւով և ազնիւ զգացմամբ կըսէին միջնորդներն այն յուզեալ և վրդովեալ ցեղերուն . «Մենք եկած ենք մարդասի-րութեան պարտք ձեզ յիշեցունելով ըսել մի թողէք ձեր ան-մեղ ձեռք ձեր համանման և համարին եղբարց արեան մէջ. երկուստէք ողջմտութեամբ հաշտուեցէք և գթութեամբ ու մար-դասիրութեամբ սրբեցէք երկու կողմանց ընտանեաց և զաւակաց աչաց արտասուքները . մարդասիրութեամբ գնեցէք յանցաւորի երախտագիտութիւն և շնորհակալութիւն . կորովի մարդիկ լսե-ցէք մեզ . զի մեր միջնորդութիւն ձեր քաջութեան փառքը կան-մահացնէ . չափէն աւելի մի վստահիք ձեր քաջութեան . զի պատերազմի բախտը անհաստատ է և փոփոխական . դուցէ ըն-դունայն բաղձանք և սնոտի փառք ձեր քաջութիւնը որոգայթ-ներու մէջ գնեն . այն բան որ դուք կուզէք պատերազմի յա-ջողութեան ձեռքէն առնուլ, թերևս ձախորդութեան ձեռքով ձեր ունեցածը վրայ տաք . զգուշացէք յաղթական երևնալու տեղ պարտեալ չ'տեսնուիք , զօրաւոր երևնալ ուզած ժամանակ-նիդ ձեր զօրութիւն չ'կորսնցունէք . մի նախանձիք պատերազմի փառաց , այլ ցաւեցէք անոր նախանձողներուն վրայ . հեռի մնացէք այդ անբնական գործէն , որ փառասիրութեան ու շա-հասիրութեան քողի տակէն սողալով կերթայ հարստութիւնները կըփճացնէ , երկիրները կըքանդէ ժողովուրդները կաղքատացու-նէ և կըթշուառացնէ , վաճառականութիւն կըդադրեցունէ , շէն-քերը անապատի կըփոխէ , դաշտերը անմշակ կըթողու և ամայի կըդարձունէ, որոյ հետևանքը տխուր յիշատակ մը միայն կ'մնայ.

Յիշեցէք մարդկանց գործոց անհաստատութիւն և տեսէք թէ բախտը ինչպէս մարդկանց վիճակ կըհօլովէ. այս աւուր բարձ-րացեալը վաղ կըխոնարհի . ուրեմն ինչի վրայ կըհաստատէք ձեր վստահութիւն ;

Օրինակ առէք ձեզ այն իմաստուն մարդիկը , որք յաջողու-թեան վրայ չափէն աւելի չէին վստահիր և մարդասիրական պարտք կըհամարին գթութեամբ վարուիլ տկարներու հետ , ոչ թէ զանոնք ճնճուղներու պէս կըփետտեն .

Բախտ և ճակատագիր մարդկանց վիճակ միշտ անստուգութեան մէջ կը պահեն և նոյն վիճակ փոփոխելով իրենք կը դաւաճանան. դուք եղբայրներ էք . մարդասիրութիւն նմանասիրութիւն և եղբայրսիրութիւն պարտք կը դնեն ձեր վրայ զիրար սիրելու և միմեանց օգնելու և ոչ թէ իրարու արիւն թափելու . խստապահանջ մի լինիք և մի խրոխտաք թէ մենք զօրաւոր ենք . յաղթութիւն ոչ թէ զօրաւորին , այլ արդարոյն և առաքինոյն է . խաղաղութիւն սիրեցէք փոխադարձ զիջումներով , եթէ նախատինք եղած է մէկ կողմին , միւս կողմը իր զիջումներով և աղաչանքներով ձեր վեհանձն գթութեան թող արժանանայ . ձեր և անոնց սէրը խաղաղութեան դաշնադրութեան մէջ կապով թող վերստին ամրանայ . և ուրիշները թող ձեր բարի օրինակէն ուսանին խաղաղութիւն ու հաշտութիւն և անկեղծ բարեկամութիւն ամրացնող պահելու եղանակը .

Մի մոռնաք մեր միջնորդացս խաղաղութեան առաջարկը , զոր Աստուած միշտ ընդունած է և կ'ընդունի . եթէ չհաւանիք խաղաղութեան , մենք պիտի ըսենք միւս կողմին թէ՝ ձեր իրաւանց պաշտպանութեան յոյսը արդարութեան վրայ դնելով Աստուծոյ օժանդակութիւն խնդրեցէք և պատերազմեցէք . զի անմեղութեան և իրաւանց պաշտպան Աստուած գիտէ ձեզմէ աւելի կարծուած ժողովուրդը զօրացնել և ձեր վրայ յաղթող հանդիսացնել . վասնզի երբ զրկեալը իր աչքի արտասուաց կաթիլները իր սրտի դառնութեան հետ խառնելով Աստուծոյ կուղղէ և իր արդար դատը նորա պաշտպանութեան կը յանձնէ , հաւատացէք թէ Աստուած ինքնին կը պատերազմի զրկեալի տեղ զրկողի դէմ և գիտէք թէ այն ժամանակ ձեր ոյժը ձեր ամօթապարտութեան մէջ կը թաղուի . երբ Աստուած ինքնին կը պատերազմի . ո՞վ է որ զայն յաղթելու յանդգնի . Այն միջոցին երբ պժգոյն և խոժոռ , աչք փայլակնացայտ , ճակատ կնճռոտ և սպառնական ահաւոր և միանգամայն պատկառելի ծերունի մարդ մը հաց ի ձեռին գալով հետեւեալ խօսքերը կարտասանէր : «Դրացի ժողովուրդ , ո՞չ ապաքէն միենոյն մօրը զաւակ , միենոյն երկրի մէջ բնակող իրարու հայրենակից եղբայրներ էք . հեռացուցէք ձեզմէ խէթը , նախանձ և ոխակալութիւնը . որք ծնունդ կուտան աղէտալի պատերազմին , այս հացին որ մեր ամենուս կեն-

սական զօրութիւն տուողն է , ինչու ի զուր տեղը արտորայքն ջնջեմք և ապականեմք ու անմեղ արիւններով շաղախեմք այն կոյս հողը պատերազմը նախախնամական տնօրէնութիւն կըխանգարէ և մարդիկ սովու կ'ենթարկէ . զի երկրագործը կըթողու երկրագործական մշակութիւն և կերթայ իւր եղբօր կեանք քանդելու և նորա արիւնը ցորենի և արտորէից հետ խառնելու։

Պատերազմի արարչապետի բացարձակ իրաւունք կըկողոպտէ , վասնզի այն կեանք զոր դուք տուած չէք , քանդելու մի նախանձէք՝ Աստուած միշտ խաղաղութիւն կըսիրէ . ուրեմն Աստուածամարտ մի լինիք . ձեր կրած զրկանքները խորհուրդներուն յանձնեցէք , դատաստան արարէք , արդարութեամբ թող վճարուի ձեր իրաւունքը . խաղաղութեան անարատութիւն պատերազմի բիծերով մի արատաւորէք» ։

Այն վեհութեամբ լի խոհական և հանդարտ խօսքերը շատերու սրտին մեծ ներգործութիւն կընէր և կըզարմանային թէ այս թափառիկ կեանքի և ցնցոտի հագուստի տակ պահուած անմշակ օտարէն ինչպէս կըբղխէին սոյն իմաստալի խօսքերը . այն անձի ծանր և վեհ շարժումը խոր տպաւորութիւն մը կընէր ունկնդիրներու մտաց և սրտի վրայ . կըյաւելուր ըսել . բարեկամներ սխալ կըխորհին անոնք , որք սատանայական պարծանաց փառքը մարդկանց արեան մէջ կըփնտրեն . Ճշմարիտ փառքն մարդասիրութեան և եղբայրսիրութեան մէջն է . ուրեմն պատերազմի սոսկալի ալէները թող գլուխ խոնարհեն խաղաղութեան և հաշտութեան պատուանդանի տակը . հաստատեցէք ձեր բարեկամական դաշինք արդարութեան և Ճշմարտութեան սկզբունքներու վրայ և դաշանց անկեղծ կապով անքակտելի կապեցէք ձեր բարեկամական միութիւն ։

Մինչ այս տեսարանը իւր վախճան կըգտնէր , ուրիշ խոլխոտ ցեղ մը կ'սպաննար միենոյն ցեղին , կ'ըսէր ինձ իմ ընկեր ծերունին . անգութ բախտ թշուառներու հետ խաղալով կըզուարճանայ . ուրեմն թշուառներու ամենէն մեծ ճարտար բժիշկը իրենց համբերութիւնն է . զի համբերութիւն միայն գիտէ բախտին և ձախորդութեանց յաղթել . թշուառութեան մէջ իյնալը թշուառաց կարեկից լինելոյն առաջին դուռն է . և թէպէտ

մարդիկ հանգիստ և երջանիկ կեանք կը փնտրեն․ բայց բախտ և ճակատագիր ուր որ ուզեն հոն կը տանին մարդիկ․ և մարդիկ շատ պարագաներու մէջ անյաջող կը գտնուին իրենց յօժարութեան ետևէն գնալու․ ոմանք չեն յօժարիր առաքինութեան ետևէն գնալու․ ու մեղկ կենաց մէջ բազմադիմի ցաւերէն կը վհատին․ մարդկանց սիրտը փափուկ վարդի կը նմանի, որ սիրոյ ցօղով միայն զուարթ կը պահուի․ ինչ ցաւալի է այն վայրկեան, երբ թշնամւոյն ատելութեան թոյն զայն խորշակահար ընելով կը խամրէ և տերևաթափ կ՚ընէ․ ատելութեան դէմը ատելութիւն փոխարինելու հարկ չ՚կայ․ զի ատեցողի ատելութիւն բաւական է զինք թունաւորելով մահացունելու․ մեծասիրտ են անոնք, որք գիտեն թշնամւոյն կեանք շնորհել և նոցա երախտագիտութիւնը գնել։

Տեսա՛ր այդ վեհ կերպարանք և շնորհալի դէմք ունեցող մարդը, որու աչքին սրտի վրայ առաքինութիւն և իմաստութիւն թագաւորած կը տեսնուի․ դա շատերու կենաց երախտաւորն է, և շատերը երախտապարտ են այդ պատկառելի անյիշաչար և ներող անձին․ դա միշտ կը զմայլի սիրոյ խաղաղութեան և երջանկութեան ճաշակով․ և տգիտութեան խորերէն կը հանէ այն աչքի զգացումները, որով մարդիկ կ՚սքանչացունէ․ կ՚ըսէր նա մարմինը մահ է, ճշմարիտ անմահ կեանք մը կայ, որն որ առաքինութեամբ կ՚ստացուի․ ճշմարտութիւն որոգայթներու մէջ ծածկուած է․ անոր համար ամէն մարդ կարող չէ զայն գտնել և անով ինքզինք պաշտպանել։

Կը տեսնէ՞ք այդ ամէն հնութիւնները և շէնքերը․ ատոնց ամէնն ալ ժամանակ իւր հոսանաց հետ կը գլորէ կը տանի անհունութեան մէջ կը թաղէ․ բայց միայն մարդկանց գործոց բարի անունները անմահ կը մնան․ ասոր հակառակ վատահամբաւները կենդանւոյն մեռեալ կը համարուին և անոնց յիշատակը ընդ անիծիւք կը մնայ․ վասնզի նոցա կեանք անօգի է, փառքն անպատիւ․ առաքինին ալ իւր պատերազմն ունի, կը յաղթէ իւր կրից համբերութեամբ, կը յաղթէ թշնամւոյն նորա չարեաց բարիք փոխարինելով, կը յաղթէ աշխարհին նորա փառք և մեծութիւն արհամարհելով։

Այդ խրոխտ ցեղը որ կը յոխորտայ միւս տկար ցեղի վրայ,

նա բնաւ ուշադրութեան առած չէ ոչ իր ոյժ և ոչ զօրութիւն, ոչ գրայի ցեղերու բարեկամութեան սահմանը , ոչ իր նիւթական կարողութիւն , ոչ փոխադրական միջոցները , ոչ իր ներքին կազմակերպութիւն , ոչ իր թշնամւոյն զօրութիւն և կարողութիւն . այլ լոկ իր բնազդումն միեւայն յանդուգն յանձնապաստանութեամբ պատերազմի ձեռնարկել կուզէ .

Այդ ժողովուրդ գարնան կանխաւորութեան ծառերուն կը նմանի , որք ամէն ծառերէն առաջ կը բացուին և ծաղիկներ կու տան . բայց չ'կանխատեսեր ցուրտերը և դառնաշունչ հովերը վրայ հասնելով ծաղիկները կը թափէ և ծառերը անպտուղ կը մնան . առանց ալ պատերազմելու ամէն հանգամանքներէ զուրկ՝ շահամոլութենէ միեւայն մղուած ըլլալն , սակայն սիրտ յաղթելոյն : Դժբաղդաբար սոյն իմաստութի և քաղցրահամ խօսքերը նորա շրթունքներէն սահելով իմ սրտիս խորերուն կը թափանցէին և անոր գեղածիծաղ զուարթութիւն մը կուտային . այդ անձի անհամեմատ վսեմ խօսքերէն ի զատ աչաց մէջ տեսնուած երկնային շնորհք երեսի փառակազմ վայելչութիւն ինձ տարօրինակ երեւոյթ մը կ'ընծայէին , որ միայն աննմանից յատուկ է . Արդէք նա Աստուծոյ իմաստութիւն երկնից բարձրութենէն գծագրականութեամբ կընայ՞ դաշտերու վրայ թափուած անմեղ արիւններու և կըզգացմնայ երբ կը տեսնէ անպարտելի ախոյեանները անիրաւ ձեռքերէ աշխատ ադրենիրու պէս կտրուելով գետին կը թափին . անխոհուրդ խորհրդականները , շարահնար մեքենաներ գեղեցիկ պատրուակներու տակ ծածկելով կը մատուցանեն իրենց ցեղապետին և կը քաշեն զայն ու կը մղեն այն վտանգաւոր կացութեան մէջ. ուր որ իրենք թշուառ կըլլին առանց հարկաւորութեան . ասոնցմէ շատերը աւար առնելու տեղ աւար վրայ կու տան , յաղթելու տեղ կը յաղթուին , նոյա յուսոյն կը յաջողէ ամօթալի պարտութիւն :

Ըաճախութիւն պատերազմի նկարագիրը տարակուսութեան մէջ կը թողու . նա կը վարանի (երբ կը տեսնէ պատերազմողին մէկ ձեռքի քաջութիւն , միւս ձեռքի մեռելակայութիւն) և չգիտեր թէ այդ անձի անունը յաղթական թէ մեռելակայութեան նշանակէ . և կ'սկսի առաջ կարդալ մահկանացու մարդկանց ըսելով արդէն ցաւերով և թշուառութեամբ լի քանի մի աուր կեանք

ունիք այն ալ կրից չափաւորութեան կը զոհէք․ որու հետեւանք կըլլնի մարդկանց կորուստ, ընչից և ստացուածոց կորուստ, շէնքերու խանգարում, դաշտերու այգիներու և պարտէզներու ապականութիւն, հիւանդութիւն, օդի ապականութիւն, սոսկալի սով, համաճարակ մահ, ևայլն։

Ուրեմն այս վտանգաւոր վնասներէն զերծ մնալու համար մարդկանց պէտք է քաղցր մարդասիրութիւն, վեհագոյն գթութիւն և ներողութիւն, գգօնամիտ խորհուրդ և բարձր հանճար։

Այն պահուս արշալոյսը արեւելեան ոսկեզօծ դուները կը բանար և արեւու լոյս իր ոսկեծղի ճաճանչները երկրի վրայ կը սփռէր ու աստղերը խոյս կուտային նորա փայլուն լուսէն ու իրենց երեսները կը ծածկէին։ Գարուն իր գեղածիծաղ տեսլեամբ և տեսարաններով մարդկանց սրտին ուրախութիւն կուտար. այս անհամեմատ ուրախութիւն յանկարծակի տրտմութեան փոխուեցաւ, վասնզի այդ Թափառիկ ցեղերը իրարու վրայ յարձակելով շանթածայր տէգերով սոսկալի հարուածներ կուտային և զիրար տապաստ յերկիր Թաւալ գլոր կը կործանէին։ Վիրաւորելոց դիակները դաշտերու վրայ արեան ճապաղիներու մէջ կը կայանէին։ Ոմանք շանթարձակ սուրերով փայլակներու պէս կայծակի արագութեամբ մահացուցիչ հարուածներ կուտային. սոնց զոհերը առանց շնչոյ տուրեւառութեան իբրև անզգայ դիակ դաշտերու վրայ անթաղ կը մնային. որոց ժահահոտութիւնն օդի քաղցրութիւն կը դառնացունէր և կը Թունաւորէր. երբ պատերազմ կը սաստկանար երկու կողմէն զէնքերից լինելով և վազքի պէս իրարու վրայ խոյանալով մերթ ըմբշամարտութեամբ մերթ նիզակներու խածատումներով զիրար կը մահացունէին. նոցա դոռում գոչումը, աղաղակ և վայնասուն հոմլոնները կը Թնդացունէր։ Այս աղէկատուր տեսարանը վախճան չգտած արեգակը դէպի արեւմուտք գլուխ խոնարհած իր շրջան կը կատարէր իւր ճառագայթներու լոյսը յինքն ամփոփելով հրաման կուտար աստեղաց երկնից երեւլ զարդարելու. բնութիւն որ պաշտօն ունէր մարդիկ իւր խոր լռութեան մէջ առնելով անոնց հանգիստ տալու, այս ոսոխներու պատերազմիկները երկիւղներէն զարհուրած․ սրտերնին յուզեալ, միտքերնին տարակուսութեան քողով պաշարած, չէին կրնար քնոյ հեշտ քաղցրութիւն վայելել. ահ

ու դողով լեցուած յուսահատ համբերութեամբ առաւօտեան լուսոյն և բախտի յաջողութեան կ'սպասէին, երբ բնութիւն մարդկան վրայէն թմրութիւն վերցունել սկսաւ արշալոյս կը[illegible] արեւակէն առաջ լուսոյ դռները կըբանար. վերստին երկուստէք սկսաւ պատերազմն աւելի սաստկագոյն յարձակմամբ, մերթ այս և մերթ այն կողմը կըյաղթեր. սակայն կարծես թէ աներեւոյթ զօրութիւն մը ծածուկ կերպով կ'օգնէր անպարտ կողմին, որոնք ոչ խրոխտանք ունէին և ոչ ամբարտաւան խիզախում, այլ անխռով. հանդարտ և համբերատար ոգւով կըմարտնչէին: Զօրապետն հեռատես շրջահայեցութեամբ միշտ առաջ կըվարէր զօրքերը. նա ոչ շփոթեալ կըտեսնուէր և ոչ ուրիշները կըշփոթեցունէր. այլ հանդարտ պաղարիւնութեամբ մինասներու դարմանները խորհելով դժուարութեանց առաջը կանէր և ձախորդ արդիւնքները կըբառնար. ակամայ սխալ գործող զօրաց վրայ ներողութեան աչքով կընայէր:

Մեծ վեհանձնութեամբ կեանք կըշնորհէր այն զօրքերուն, որք թշնամւոյն կողմէն իւր ձեռք գերի ինկած էին. նորա ներողական խօսքերը թշնամւոյն երեսը ամօթով կըծածկէին. առ երբ հեռուէն թշնամւոյն լքեալ վիճակը նշմարեց. իւր զօրաց առաջ գնալոյ խրախոյս տալով. ինք անխռով և անվեհեր կերպով իւր նժոյգ ձին մտրակելով և արծուոյ պէս թշնամւոյն զօրապետի վրայ հասնելով թեթև հարուածով զայն իւր երիվարէն վար առաւ. և հրամայեց իւր թիկնապահներուն զայն ընդ հսկողութեամբ իւր վրանը տանել և պատուով պահել:

Երբ զօրապետն գերի բռնուեցաւ, նորա զօրքերը ի փախուստ ցիրուցան եղան մեծամեծ կորուստներով:

Վիրաւորեալ և միանգամայն կալանաւոր զօրապետն նկուն եղած՝ մահուանէ կըդողար. բայց իւր կեանք խնդրելու զիջանելէն ալ կամաչէր, կարեկցութեան շարժելու եղանակ չէր գիտեր. սակայն կեանք ուզելու ցանկութիւնն ալ չէր կրնար ծածկել. կուզէր յաղթողի վեհանձնութիւնը արհամարհել. բայց հոն ալ ճշմարիտ իրողութեան մը վրայ քօղ քաշելու ձեռնարկէն կամաչէր. նա իւր սրտի խռովութիւն ծածկելու համար երեսը մէկ կողմը կըդարձունէր, մինչ պարտեալը այս յուզեալ վիճակի մէջ կըտառապէր յաղթող զօրապետն ըստ իրեն. «կեանքդ

քեզ կը շնորհեմ․ ոչ ապրելու համար․ այլ գործած սխալնե-րը դարմանելու համար ։ «Ազատութիւնդ թող քեզ համոզէ․ թէ յաղթութիւն անմեղին է և ոչ թէ զօրաւորին» ։

Այն պահուս կալանաւորի աչաց արտասուքները անսպառելի աղբիւրներ դարձած էին և այս խօսքերը մահուանէն աւելի խիստ կը ներգործէին իրեն․ գիշերուան հանդստացուցիչ քունը որ դառնակսկիծ վիշտերը կը մեղմէ, այս անձէն հեռու կը փախ-չէին յոյս որ մարդկանց սրտին մխիթարութիւն կուտայ այս անձի սրտի մէջ մարած կը տեսնուէր․ նորա մարմինը ամէն բանէ յուսահատ եղած, իր հոգիէն արձակուիլ կուզէր և մահ կը պաղատէր․ քանզի մահը գերութեան վիճակէն նախամեծար կը համարէր․ սակայն յաղթողը անոր ազատութիւնը շնորհեց - հետեւեալ խօսքերը նմա ուղղելով․ Տես թէ՝ մեղկութիւն և նուաստ երկիւղն մինչև ո՛ր աստիճան զձեզ կը յուսահատեցունէ․ մարդիկ պէտք է որ ոչ յանձնապաստան լինին ի յաջողուածս և ոչ յուսահատ ի ձախողուածս․ հեռատեսութեամբ չափելու է․ յաղթել և յաղթուիլ սովորական է․ բախտ, որու որ ուզէ անոր կուտայ․ եթէ այդ մեղկ վիճակն ունէիր, լաւ էր որ պա-տերազմէն առաջ հաշտութեան գլուխ խոնարհեցունէիր․ որով այսչափ անմեղ կոտորածներու պատճառ չէիր լինէր․ մենք խիստ մեծ զիջումներով պատուաւոր հաշտութիւն խնդրեցինք․ բայց դուք չընդունեցիք մենք խաղաղութիւն սիրեցինք․ դուք զայն մերժեցիք․ ուրեմն դուք էք յանցապարտ Աստուծոյ և ողջամիտ մարդկանց դատաստանի առջև ։

«Թերևս այս ալ նախախնամութեան մէկ տնօրէնութիւնն էր որ կատարուեցաւ ձեզ ի զգաստութիւն բերելու համար․ բա-րեկամ, թէպէտ պատերազմ վախճան գտաւ, բայց գիտէք որ պատերազմէն ծագում առած ատելութեան ոխը միշտ սրտոյ մե-րոյն տակ թաղուած պիտի մնայ․ երբ կը յիշուի թափուած ա-րիւնը, վէրքը, մահը․ նիւթական և բարոյական ցաւերը և կո-րուստները և անպատուութիւնները, փափագելի էր որ հպար-տութիւնները խոհեմութեամբ բարեխառնուէին․ և այս ա-ղէտները առաջ չըբերէին․ սակայն անցեալն անցած է․ այս վե-ջանկեալ վնասակար դէպք մեզ և ձեզ ապագայի զգուշութեան մի գործնական և անմոռանալի դաս թող լինի․ ուրեմն ժամ է

մեզ ձեռն տալ խաղաղութեան և հաշտութեան , եղբայրական սիրով՝ նուիրագործեմք մեր սուրբ և անկեղծ բարեկամական դաշինք ։ Եւ խաղաղասիրութիւն իբրև կտակ աւանդեմք մեր զաւակաց և յաջորդաց . որպէսզի նոքա ևս մեր օրինակին հետևելով այս աղէտալի հետևանաց չ՚հասնին» ։

Այս տեսարանէն վերջ իմ ընկեր ծերունին ձեռքս թօթուելով՝ մնաս բարեաւ և կրկին տեսութիւն մը պիտի ունենամ անտառի մէջ ձեզ հետ ըսելով՝ բաժնուեցաւ ։

Ժամանակն ձմեռ էր , և ես երկար ժամանակ քաղաքի մը մէկ անկիւնը պատսպարուած գարնան եղանակին անհամբեր կ՚սպասէի։

## ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Գարուն և ծաղկերգեան շքեղան · Մերանիի սնդուս մաներ · Թռչունք մը մըմռունչ · Բնութեան դեղարանի նկարագրութիւն · Մերանայն փուրդ · Թռչունք պչեղութիւն :

*Օդ պայծառ էր և զուարթ, գարունը իր ցնծածիծաղ տեսարաններով բերկրալից ուրախութիւն մը կըսփռէր այն ամէն սրտերու վրայ, որք նոր ազատած էին ձիւներու սառերու և ցրտաշունչ հողմերու ճնշումէն. բնութիւն իր բարութեան գանձերը բացած զմայլելի աշխատութեան կըհրաւիրէր իր բարիքներով զանոնք միխիթարելու խոստմամբ. մշակն իր եզն և արօր կըպատրաստէր երկիր հերկելու և իր պէտքերը նախախնամութեան ձեռքէն առնելու քաղցր յուսով:*

*Ծաղկաւոր բերկրութեամբ լեցուած՝ զով օդը ծծելու համար առհասարակ խումբ խումբ շէնքերէն դուրս ելլելով, պարտէզներու և ծաղկաւէտ դաշտերու դալարիներու վրայ երամ երամ բազմած անմեղ զուարճութեամբ կուրախանային:*

*Ես ալ միենոյն ուրախութեամբ լեցուած, արագաշարժ սուրհանդակի մը պէս բաղձութեան մէջէն անցնելով քիչ մը հեռի բլրակի մը վրայ գտնուող անտառի մը մէջ քաշուեցայ, ուր բարձրաբերձ մայրի ծառերը գիշերուան ցօղ տարածող ցանցառ ամպերուն պատուանդան կըլինէին:*

*Սօս և ճոճիները, ինքնաբոյս վիմահերձ, նուշ ու նռնենիները և ամէն տեսակ պտղատու և վայրի ծառերը խիտ առ խիտ բնութենէն գեղեցկայարմար շարուած, ճիւղերը գրկախառնելով իրարու հիւսուած գարնան բազմագոյն ծաղիկներով զարդարուած, գիշերուան քաղցր զեփիւռներէն տարուբերեալ գարնան բարի գալուստ կ'ողջունէին:*

*Քարայրերուն մէջէն պատռած վիմերէն յորդահոս բղխեալ ջուրերու վտակները ջրվէժներէն ի վայր սահելով, կերթային և կըմխանային այն գետակին, որ անտառին ստորին մասը ոռոգելով կըսահէր կանցնէր կերթար դաշտերը զովացնելու. գիշեր-*

տան խոր լռութիւն. լուսնոյ գեղածիծաղ տեսիլը. քաղաքի մէջէն եկած քաղցր նուագարանաց և երգիչներու ձայները. զովարար ցօղը. հեղասուք մեղմ օդը. մերթ ընդ մերթ թռչնոց դայլայլիկն ջուրերու ընթացքի հետ միացած. թէև կանցնէին կերթային. սակայն անմոռաց յիշատակութեան մը հետքերը կըթողէին ամէն զգայուն սրտերուն :

Օդ և ցօղ ջուրերու երեսը ծածանելով, կանանչ խոտերը իրարու վրայ հոլովելով կը յօրինէին այն վսեմ տեսարանը, որ մեծ հաճոյք կըպատճառէր ձմեռուան խոր թմրութենէն նոր արթնցած սրտերուն և ոգիներուն. և նոցա առաջակայեալ սրտից նոր ուրախութիւն կընծայէր. և գարնան աւետեաց ցնծութեամբ և ուրախութեամբ նոցա յոյս կըպարգևէր :

Երբ քաղցր քուն հեռացեալ այն գեղեցիկ և վսեմ տեսարանէն մարդիկ բաժանելով ի քուն և ի հանգիստ կըհրաւիրէր, շատերը յականմայից բռնադատեալ կերթային, անոնք որ այն տեսարանի քաղցրութենէն բաժնուիլ չէին ուզէր, քունը նոցա արտևանանց վրայ նստելով նոցա մարմնոյն վրայ թմրութեան ծաղիկները սփռելով կըթալկացունէր և կըհնազանդեցունէր իւր հրամայողիչ հրաւէրին. պէտք էր հնազանդէին. վասն զի նը մահկանացուներու համար հարկ մի է, որ նոցա մարմինը կըկազդուրէ, ջիղերը կըզօրացունէ, նոցա հոգնութիւն կըբառնայ. և հանգստութիւն կուտայ :

Երբ գիշերուան խոր լռութիւն կըտիրէր. մթութեան քօղը ամենու աչք կապեց և զանոնք առժամանակեայ մեռելութեան ստուերով ծածկեց. ես անտառի խորագոյն կողմը քաշուած, մամռապատ ժայռի մը վրայ նստած, հեղասուք զեփիւռները վրաս թմրութիւն մը սփռելով գրեթէ կիսով չափ անզգայացուցին որով սևեռեալ մնացի հոն. կուզէի այն գիշեր արարչապետութեան սքանչելարուեստ տեսարանը և ամենազօր ստեղծագործութիւն մասյս տարակոյս ընել. որոց վրայ միշտ զմայլած էի և եմ. սակայն ուրիշ տխուր տեսարան մը զիս իմ նպատակէս վրիպեցոյց, նոյն սրտաճմլիկ տեսարանը իմ բոլոր ուրախութիւնս տրտմութեան փոխեց և այս աշխարհ ինձ համար զզուելի երևցաւ :

Կէս գիշեր էր. յանկարծակի բնութեան խոր լռութեան մէ-

ջէն նուաղեալ սրտաճմլիկ հառաչանք մը կը լսուէր․ որուն ու-
շադրութիւն տալով կուզէի լսել այն անձի խօսքերը․ խօսող
չէի տեսնէր, բայց անոր խօսքերը կը լսէի, որք խիստ սրտա-
ռուչ էին և աղէկտուր․ նորա խօսքերէն կը հասկնայի թէ՝ խօ-
սողը տարաբաղդ մի էր, որ չէր կրնար ինքզինք մխիթարել․ նա
աւելի կը զառանցէր իր միայնութեան մէջ քան թէ կիմաստա-
սիրէր, անիկա կը նզովէր ինքզինք և Աստուծոյ դէմ կը տրտուն-
ջար․ այն ձայնը անկարեկից թշուառի մը ձայն էր զոր կը լսէի․
կ՚ըսէր նա․

«Իմ թշուառութեանս կապանքները անխզելի են, իմ ցաւերս
անտանելի և վէրքերս անբժշկելի են․ մարդիկներէն մէկը իմ
կսկիծներս չունեցաւ․ յետ այսօրիկ այլ ես չ՚պիտի ունենայ․
Աստուծոյ երկիւղածի մը համար այս աշխարհն վիշտ, տառա-
պանք, վէրք, հարուած, որդւոյ և զաւակաց ու ընտանեաց կո-
րուստ, ճոխ տանը կործանումը․ յոտից մինչև ցգլուխ վիրա-
ւորեալ զանազան անբժշկելի վէրքերով, բարեկամաց տարա-
կայութիւն․ անօթ և անօգնական ու անխնամ․ միայնակ այս ա-
մայի անտառիս մէջ ձգուիլս․ չ՚գիտեմ թէ, իմ ո՞ր մեղքս զիս
մատնեց այս անհանդուրժելի տառապանաց․ կը տեսնեմ որ Աս-
տուած չուզէր գթալ իմ ողորմելի վիճակիս և իր այցելութիւն
հեռացուցած է ինձմէ․ թող օրերու շարքի մէջէն ջնջուէր այն
օրը, յորում ես ծնայ․ այն գիշերը միշտ խաւարներով թող
պաշարուած մնար․ և նորա աչքը աստղերը տեսնելէ զրկեալ․
և մահուան ստուերներու մէջ տառապէր․ ինչպէս որ զիս կը-
տառապեցունէ․ նա ուրախութիւն և ցնծութիւն չ՚տեսնէ․ և
ցաւերու մէջ տաղնապի․ ինչո՞ւ չ՚ինքուեցաւ այն արգանդ ուրկէ
որ ես ծնայ միայն թշուառ լինելու համար․ միթէ մխիթարու-
թիւն չ՚տեսնելո՞ւ համար սահմանուած եմ որ փայլակներէն
շանթահարողներու պէս կայրիմ․ իմ կենաց օրերը ծուխերու
պէս յօդս կը ցնդին և կ՚սպառին․ ոսկորներս խուիներու պէս
կայրին և կը տոչորին․ ես խոտերու նման խորշակահար կը լինիմ
սրտիս և հոգւոյս կենդանութիւն կը նուաղի և կը ցամքի․ ո՞ւր
են իմ բարեկամներս և ինձմէ բարերարեալները․ ինչո՞ւ զիս մի-
այնակ թողած են այս գազանաբնակ անտառի մէջ․ միթէ գա-
զանները են իմ ընկերակիցներս․ և ես անոնց հետ պիտի կեն-

ցաղավարուիմ․ աւերակաց մէջ բնակող բուերուն հատատեցայ․ աչացս արտասուքները ջուրերու հետ խառնուած կը խմեմ և կերթամ սիրտս կրտոչօրեն․ ցաւերս սաստկաշունչ հովերու պէս գլխս կը հալածեն, դողումն և սոսկումն զիս պաշարած են, ամբողջ ոսկորներս ցաւերու մէջ կը հիւծուին, մարմինս կը քստմնի ուժէ թալկացեալ ոտքերուս վրայ կանգնելու անկարող կը գտնուիմ և դէմքս այլայլուեալ է․ այլևս մարդու մը կերպարանք չ'ունենալի իմ վրաս․ հեռացած են ինձմէ յոյս և մխիթարութիւն, կեանքս իր վերջի հրաժեշտ կուտայ․ պէտք է որ խոնարհիմ և հնազանդիմ այն ամենազօր հրամանին և այն անդիմադրելի ձայնին ետևէն գնամ․ գարնան ծաղիկներու պէս փթթեցայ և բացուեցայ․ աշնան տերևներու պէս խորշակէն զարնուելով ահա կը ցամաքիմ և կը չորանամ․ իմ կեանքս ամպերու հովանւոյն պէս երեցաւ և յանկարծակի կանհետանայ․ վիշտերով լեցուած անձս գերեզմանին կը մօտենայ․ և ո՞վ պիտի գերեզմանն բանայ և զիս թաղէ․ արդէն իմ գերեզմանս գազանաց փորը պիտի լինի ։

Ո՞ւր մօտենամ իմ անտանելի ցաւերս յայտնելու․ երբ կը տեսնեմ թէ զիս վիրաւորողը Տիրոջ նետն է․ Նորա սրտմտութիւնն է որ իմ արիւնս կը ցամաքեցունէ․ այլ ես իմ անձս կարող չեմ տոկալ և տանել․ զի մարմնոյս հետ հոգիս ալ վիրաւորեալ է․ նետ մը կայ սրտիս մէջ մխուած, որ իմ մանկական պակասութիւններս կը յիշեցունէ, կը խայթէ և կը վիրաւորէ․ չեմ համարձակիր զայն խլել․ զի հոգւոյս հետ ընդաբոյս է․ անիկա խիղճիս խայթն է արդեօք, որ ինձմէ չհեռանար․ ուր որ երթամ նա ետևէս կուգայ և մեծ անհանգստութիւն կը պատճառէ ինձ․ իմ գերեզմանս տեսնողները պիտի ճանաչե՞ն թէ ես ո՞վ եմ․ բայց իմ կրած վիշտերը որք ծովու աւազէն շատ են․ ամէնքն ալ յաւիտենական գաղտնեաց մէջ թաղուած անծանօթ պիտի մնան․ ո՞ւր փոյթ է որ զանոնք փնտրէ և երևան հանէ ․

Իմ ցաւերս բարձր լեռներէն մեծ են, ո՞վ պիտի կշռէ և չափէ և իմանայ․ մէկը գիտեմ և կը ճանաչեմ և կը հաւատամ թէ իմ ամէն կրածներս կիմանայ և կը տեսնէ․ սակայն նա ալ իմ սխալմունքներուս համար ինձ բարկացած է և ինձմէ երես դարձուցած է․ արդէն այլևս ո՞ւր դիմեմ․ մի թէ ես քա՞ր եմ որ

չզգամ. կամ երկաթ եմ որ տոկամ և դիմանամ. ես ո՞վ եմ որ նա իմ հետս կըմարտնչի . նա ինձ վարդէն աւելի փափուկ սիրտ մը տուաւ . ինչու երկաթագործի կռանով զայն կըհարուածէ · ինձ մրջիւնի մը զօրութիւն տուաւ . ինչո՞ւ հզօր առիւծները ինձ հետ կռուել կուտայ . կուզէ որ անյոյս լինիմ իրեն օգնութենէն և պաշտպանութենէն , ինչպէս որ սառը , ջեռուցեալ կրակին չդիմանար և կըհալի . այնպէս ալ ես նորա զօրութեան չդիմանալով կըհալիմ և կըմաշիմ՝ նորա մեծութեան չվայելէր որ այս յուսահատ ճգնաժամերուս մէջ զիս միայնակ թողու , նորա մարդասիրութեան պարտքն է ինձ օգնել փրկել և ազատել պէտք է որ վէրքերուս նայի և զանոնք պատէ և բժշկէ . զի կըտեսնէ թէ այլևս անկարող եմ տոկալ. միթէ ես քա՞ր եմ որ չզգամ նորա հարուածը . երբ երեկոյ կըլինի առաւօտ կ՚աղաղակեմ, հաւատալով թէ ցաւերս պիտի մեղմանայ . երբ առաւօտ կուգայ՝ երեկոյ կըպաղատիմ յուսալով թէ պիտի հանգստանամ. սակայն երկուքն ևս ոխերիմ թշնամիոյ պէս իմ հանգստութիւնս կըյափշտակեն , այլևս մէկը թող չնայի իմ սևացեալ և ժահահոտ մարմնոյս . քանզի արեգակը խէթիւ հայեցաւ ինձ . իմ սրտիս գաղտնութիւնները , իմ անձիս տաղնապը , մարդիկներէն ո՞րի կրնամ հաղորդել , մահիճս անգամ ինձմէ տաղտկացած տհաճութեամբ կըպատսպարէ զիս . միթէ ես ծո՞վ եմ որ կարողանամ տանել այսչափ ալէկոծութեան . ո՞չ ապաքէն մարդումը սիրտ միայն ունիմ. թող հեռանայ ինձմէ ամէն բան . իմ կեանքս իւր գլուխ դէպ ի ունայնութիւն կըխոնարհեցունէ ։

Ինչո՞ւ իմ կիրքերս քու դէմդ ոսոխ դրիր . և անոնց գործերով զիս կըտանջես . ինչո՞ւ քու զօրութիւնդ ինձ օգնական և սահապան չտուիր որ ես անոնցմով իմ կիրքերուս հետ կռուէի և յաղթէի . միթէ ես չխնդրեցի՞ քեզմէ . և ինչո՞ւ գլացար . եթէ չար գործեցի , միթէ կարողութիւն չունէիր իմ ճանապարհներս դէպի բարին փոխել ․

Դու որ կարողութիւն ունիս լեռները ի հիմանց տապալելու , և գետերը իրենց ընթացքէն յետս կասեցունելու , ծովերու ջուրերը ցամաքեցունելու , միթէ կըտկարանայիր ինձ ողորմելով ազատելու , քու մէկ շնչովդ տիեզերք ոգեւորուեցաւ . քու հանճարդ զայն մշտնջենապէս անսխալ կըկառավարէ , քու նա

խանամական խնամքդ զայն կըպահպանէ և կը կերակրէ ․ ուրեմն ի՛նչպէս կըզիջանիս ինձ պէս չքնաղ լուի մը հետ ի պայքար մտնել ․ ես ո՞վ եմ որ ինձ հետ պատասխանի կըմտնես ․ միթէ կըտկարանա՞ս զիս այս ցաւերու տագնապներէն ազատելու ․ մէկ կողմէն բոլոր կարողութիւններս ձեռքէս առիր , և բարեկամներս զզուելով հեռացած են ինձմէ ․ անոնք զիս նախատելով վերքերուս վրայ նորանոր վէրքեր կ՚աւելցունեն ․ ես անոնց ամենու դէմ չ՚լսող խուլերու պէս անզգայ մնացի ․ համրերու պէս բերանս չ՚բացի և խօսք մը չ՚խօսեցայ ․ իմ բարեկամներս զիս ի տարապարտուց կըչարչարէին , ես իմ թիկունքս նոցա հարուածներու դէմ տուի , և երեսս անոնց նետերու դէմ բացի ․ նոքա ծնօտներս կապտակէին , երեսս կըթքնէին , զիս զանակոծելով և նախատելով անմռունչ ոչխարի պէս դէպի այս խորագոյն անտառ կըբերէին , ճանապարհին զիս աղաղակելով կըսէին ․ տակաւին կըյուսա՞ թէ այցելութիւն պիտի գտնես ։ Ես այն ժխորներու մէջ ի զուր կաղաղակէի թէ ո՛վ է ոսոխս և ինչ է իմ յանցանքս ․ սակայն թշուառի մը խօսքերը ինչ ներգործութիւն կրնար ընել այն անկարեկից մարդկանց անզգայ սրտին ․ զիս տանջող բարեկամացս կեանք անողի էր , փառքն անպատիւ և նոցա բարեկամութիւնը անկարեկից և կեղծ էր ․ անոնք ինձ հետ ուրիշ անմեղներ ևս վիրաւորեցին և կոտորեցին ․ սակայն չ՚գիտեմ թէ անմեղներու պաշտպան զօրաւոր ձեռք ինչու անոնց դատաստանը չտեսներ ․ գերեզման կըփնտրեմ և չեմ գտներ հողմերու մէջ ալէկոծեալ կըծփամ ․ այս թշուառութեան որոբան խրճիթը իբրև դժոխք կերևի աչքիս ․ անկողինս խաւարներու մէջ տարածուած է ․ միթէ այլևս կարելի՞ է ինձ համբերել , մահը ինձ հայր և օգնական կըկանչեմ թշուառութեանս վախճան տալու համար ․ նա ալ ինձմէ կըհեռանայ ․ խաւարը իւր շղթաներով զիս կաշկանդած է ․ պսակները գլխէս կողոպտեցին ․ զիս իմ փառքերէն մերկացուցին , հողմերէն տապալեալ ծառերու պէս իմ յոյսերս ալ տապալեցան ․ վասնզի իմ տէրս բարկութեամբ և սրտմտութեամբ կըվարուի հետս ․ և զիս իբրև հրամաններու դէմ կեցող ապստամբ կընկատէ ․ ուրեմն այլևս որու դիմեմ ․ գարանակալ հէ՛նք իմ ճանապարհս պաշարեցին ․ վրանս յարձակելով զիս մերկացուցին , անարգեցին և վիրաւորե-

ցին . իմ տոհմականներս զիս օտարազգի նկատեցին , հարձք և ծառաներս աղաչելով կըկանչեմ ինձ օգնելու , նոքա իբրև չլսող զլուելով փախուստ տուած են ինձմէ . հոս չե՞ն նոքա արդեօք . ահա մարմինս իր մորթի տակ կըփտտի , ողորմեցէ՛ք , ողորմեցէ՛ք , թշուառիս ողորմեցէք . եկէ՛ք և տարէ՛ք սիրելի բարեկամներս զիս իմ հարցս գերեզմաններու մէջ թաղեցէք . ես ձեզմէ աւելի ի զատ ուրիշ օգնութիւն չեմ սպասեր . զի Տիրոջ աչք խէթիւ հայեցաւ ։

Ո՜վ հետ կըխօսիմ , երբ միայն կըգտնուիմ սոյն քարայրի մէկ անկիւն . անոնք որ ինձ գթութիւն և ողորմութիւն չըրին , միթէ իրաւունք ունէին իմ Տիրոջս պէս զիս հալածելու . զիս հարուածող և հալածողները եթէ այսօր մայրի ծառերու պէս բարձրացած տեսնուին , միթէ վաղը նոքա ինձ պէս չ'պիտի՞ խոնարհին ու չորանան և աներևոյթ լինին . նոցա ճրագը շուտով կըմարի , յարդի պէս ամենափոքր հովերէն պիտի շարժին հալածուին և անհետանան . և այն ժամանակ պիտի զգան թէ թըշուառի մը չ'օգնելու պատիժն է որ կըկրեն . և միթէ այն ժամանակի զղջումը իրենց պիտի նպաստէ . թող հարցունեն նոքա Ճանապարհէն անցնողներէն և լսեն անոնցմէ թէ՝ անոնք որ վշտացեալներու վիշտերուն ցաւակից չեղան , անոնք որ վիրաւորեալներու վիրաց վրայ սպեղանիք չ'դրին և զայն չ'տածեցին . անոնք որ օգնութեան կարօտ եղողներուն չ'օգնեցին . նոքա մրրիկներէն և փոթորիկներէն հալածուեցան . անոնք որ աղբիւրները խցեցին որ ծարաւները պապակին . անոնք որ հունձերը առնակոխ ըրին որ մարդիկ սովամահ լինին . անոնք որ որբ և այրին անօթի ննջեցուցին և զանոնք զրկանաց մատնեցին , միթէ նոքա հանգիստ պիտի գտնեն . Աստուած մը կայ որ ամեն անիրաւներու օձապտոյտ Ճանապարհները կըտեսնէ և արարածներու սիրտ կըքննէ . այն որ երկինք յոչնչէն կախեց , այն որ ջուրերը ամպերու մէջ ծրարեց , միթէ կըտկարանայ արդար հատուցումն ընելու . ինչու՞ կըխօսիմ ուրիշներու վրայ . ահա իմ մահուանս ցաւեր ինձ կըմոռցնեն իմ անօրէնութիւններս յորդահոս աղբիւրի պէս կուգան կըսահին աչքիս առաջէն կանցնին կերթան և սիրտս կրկին կըխռովեն , գերեզմանի վիշտերը զիս կըպաշարեն մահուան որոգայթները շուրջս պատեցին . սակայն չ'գիտեմ թէ

յանցանքներս ինչո՞վ ծածկեմ, որ այն ահաւոր և ամենատես աչք չտեսնէ, մինչև որ նորա բարկութիւն անցնի ։

Վերջին ճգնաժամերուս մէջ չեմ ուզեր յուսահատիլ, զիս սահմանողի փրկութեա՞ն ձայնին կ'սպասեմ և անով պիտի մխիթարուիմ, իմ աչքս Տիրոջ փրկութեան կ'սպասէ․ որ լուսաւորուի։ Տէր քու ձեռքդ զիս ստեղծեց, դու ինձ շունչ և հոգի տուիր զիս կաւէն շինեցիր, դարձեալ ի նոյն կըփոխես. սակայն քու շունչդ՝ որ իմ հոգիս է այն կաւէ մարմնոյն մէջ իբրև աւանդ պահուած՝ անիկա ի՞նչ պիտի լինի․ ես կաւ էի և դարձեալ կաւ եմ. ես գործիք մի էի հոգւոյն ձեռք, ինչ որ ըրաւ նա ըրաւ․ ուրեմն իմ մարմինս ինչ մեղք ունի որ կըտանջուի ։

Ինչու կըզարմանայեմ, միթէ տանջուողն հոգին չէ՞ և միթէ գերեզմաններու մէջ թաղուած մեռելները ցաւ կ'զգա՞ն․ միթէ հողս մը հող կրնա՞յ զգալ ցաւ վիշտ ուրախութիւն ։ Տէր դու զիս իբրև կաթ կթեցիր և իբրև պանիր մակարդեցիր․ ոսկորներով շարեցիր, ջիղերով հիւսեցիր, ինձ միս և մորթ զգեցուցիր անմահ հոգի մը իբրև շնորհք տուիր․ գիտեմ այս ամէն և կըճանաչեմ թէ ասոնք ունէիր ի քեզ յառաջ քան զլինելն աշխարհի և քու ամենակարող զօրութեամբդ ի յայտ բերիր զանոնք, ինչպէս որ քու ամենօրհնեալ կամքդ հաճեցաւ՝ ես չէի, դու ստեղծեցիր․ ես չխնդրեցի դու սահմանեցիր․ ինչու՞ ուրեմն քու այցելութիւնդ ինձմէ կըհեռացունես․ թող տուր որ հանգչիմ պահ մը, քանի որ չեմ գնացած այն տեղը ուրկէ ետ չպիտի դառնամ. բժշկէ իմ վիրաւորեալ սիրտս․ պատէ իմ անողջանալի վէրքերս․ վասնզի քեզմէ ի զատ ուրիշ մէկը չունիմ ինձ օգնական և պահապան. ամէնքն ալ հեռացան և թողին զիս միայնակ և փախան․ քու քովդ է իմաստութիւն․ հանճար, զօրութիւն ու խորհուրդ․ դու գիտես և կիմանաս ամէն բան․ դու եթէ կործանես ո՞վ պիտի շինէ․ եթէ ողորմութեանդ դռները փակես, ո՞վ պիտի բանայ ։

Միթէ երկիր կարո՞ղ է ըսել, մարդկանց հաց և ջուր տուողը ես եմ. և միթէ առանց քու կամացդ ծառերու տերևները կարո՞ղ են շարժիլ․ ինչու՞ երես կըդարձունես ինձմէ ։ վերցուր սրտմտութիւնդ․ մի թողուր որ քու զարհուրանքներդ իմ վիշտս և ցաւերս կըկնապատկեն․ ո՞չ ապաքէն ես քուկդ եմ. միթէ զղջա-

ցա՞ր զիս ստեղծելուդ վրայ. եթէ սխալած եմ, ինչո՞ւ իմ բերնիս և շրթանցս պահապան չ'դրկեցիր քու զօրութիւնդ որ զիս պահպանէր և սրտիս ուղղութիւն տար որ չար չ'խորհէի և ցոփ չ'խօսէի ու տգեղ չ'գործէի. և ի՞նչ է իմ յանցանքներս. ո՞չ ապաքէն շատերը իմ ճրագովս կը լուսաւորուէին. իմ բարձր խորհուրդներս իմ շուրջս պարատողները խաւարէն դէպի լոյս կը բերէր. երբ ճոխութեամբ փարթամացեալ հրապարակի վրայ յաղթօ կը նստէի, ծառաներս զիս կը շրջապատէին, երիտասարդները ինծի պատկառելով խոյս կուտային, ծերերը ակնածելով ոտքի կելլէին, ես կոյրերուն աչք էի. կաղերուն ոտք, աղքատ և տկարաց հայր, զրկեալներուն իրաւարար դատաւոր.

Երբ ակումբներու մէջ նստած կը խօսէի, ամէնքը զարմացած և իմ խօսքերէս զմայլած իրենց ձեռքի մատը բերաննուն վրայ դրած պապանձանօք ունկնդրութիւն կ'ընէին և կ'երանէին ինծ. շատերը իմ հովանւոյս տակ կը պաշտպանուէին, աղքատները կը փրկէի զօրաւորներու ձեռքէն, տնանկի օգնական կըլլէի, ինչպէս որ ծարաւ երկիրը անձրևի կ'սպասէ, այնպէս ալ իմ բարոտիքս շարուողները իմ իմաստալի և ճշմարիտ խօսքերուս ծարաւի էին. չեմ կարծեր որ հողագնդիս վրայ ինծմէ աւելի ճոխ հարուստ և փարթամ ու ազդեցութեան տէր մարդ մը գտնուէր. և ոչ ալ ինծմէ աւելի մարդաշատ և ճոխ ընտանիք ունեցող մը տեսնուեցաւ. տոհմականներս գեղեցիկ դիմօք շուրջ պարաւեալ քաղցր եղանակներով կ'երգէին ինծ հաճոյքներ պատճառելու նպատակաւ, այլ արդ չ'գիտեմ թէ նոքա ուր մնա՛ն արդեօք. անոնք որ զէնքերը իրենց ազդեր վրայ դրած գիշեր և ցորեկ անքուն աչօք զիս և հօրս տուն կը պահպանէին, նոքա ո՞ւր մնացին արդեօք. անոնք որ զանազան անուշահոտ իւղերով զիս կօծանէին. և անոնք որ զմայլեցուցիչ բուրումն ունեցող տեսակ տեսակ ծխանելիներ բերելով կը ծխէին մեր բարելի սեղաններու վրայ, նոքա ո՞ւր գնացին արդեօք. խնճոյքներու սեղանի գլուխ գտնուած ժամանակ բազմատեսակ խորտիկները, զանազան համադամ կերակուրները և մրգեղէններու անթիւ տեսակները զանազան ըմպելիները զորս կուտէի կը խմէի և կուրախանայի, որոցմով կը կարծէի թէ միշտ երջանիկ եմ. և ահա անոնք ալ եկան երազներու պէս անցան ու գնացին. և այժմ ահա այս

քարայրիս՝ կուեղէն խրճիթիս մէկ անկիւնը զուրկ ամէն հաճոյքներէ և վայելքներէ, անօթ և անօգնական թշուառութիւններէն և ունայնութիւններէն ի զատ ուրիշ ինչ կըտեսնեմ, ոհ՛ ուր գնացին արդեօք այն ամէն վայելքները, ճոխութիւնները և հարստութիւնները ։

Իմ ոչխարներս և այծերս վայրի այծեամներու և եղնիկներու հետ բլրոց վրայ կըխայտային և լերանց վրայէն կուգային իրենց կաթը և բուրդ տալու և իրենց անմեղ զաւակները դիեցուցանելու և սնուցանելու. արդեօք նոքա ուր գնացին ։

Աղաւնիները և սարեակները, սոխակ և թութակները և ամէն կարգի քաղցրանուագ երգիչ թռչունները պարտէզի ծառերու վրայ ոստէ ի ոստ թռչելով և գեղգեղելով սիրտս կըզուարթացունէին. և արդ ինչ եղան նոքա. իմ մանկական հասակիս մէջ սիրտս ուրախութեան տուի և բարութիւնները վայելեցի. կարծեցի թէ միշտ հանգիստ պիտի մնամ և վայելեմ. սակայն նոյն հանգստութեան մէջ անհանգիստ էի, ծաղր և գրօսանք և ամէն հաճոյք և ուրախութիւն տեսայ և վայելեցի. սակայն նոցա ամենու վախճանը ունայնութեան մէջ գտայ ։

Պալատներ շինեցի, այգի տնկեցի, պարտէզ և դրախտ զարդարեցի, այնպէս որ հողագնդիս բոլոր անուշահամ պտուղները և անուշահոտ ծաղիկները կըգտնուէին իմ այգիներուս և պարտէզներուս մէջ, ծովաձև աւազաններ շինեցի, անտառներ տընկեցի, որպէսզի անոնցմով զուարճանամ անոնց ամենքն ալ պահ մը ինձ զուարճութիւն կուտային, սակայն այժմ անոնց ամենքն ալ ունայնութեան մէջ կըտեսնեմ ։

Ծառաներ և աղախիններ ունեցայ, անթիւ ձիեր, ոչխարներ, ուղտեր, եզներ, կովեր և ուրիշ կենդանիներ, անթիւ և անհամար հարստութիւն ոսկի և արծաթ այնչափ շատ էին որ իմ քովս արժէք չունէին. և ասոնց ամենքը չկարողացան զիս հանգիստ ընել. երգեցիկները և երգեհոնները, թռչնոց թռչելու, ձկանց լողալու տեսարաններ յօրինեցի, որպէսզի անոնցմով զուարճանայի. դաշտերու ծաղիկները, հովիտներու շուշանները, պարտէզներու վարդ մանիշակ և արտօսները իրենց անուշ բուրմունքով զիս կըզուարթացունէին. սակայն պահ մը վերջ նոքա ևս դէպ ի ունայնութիւն կըխոնարհէին և անոնց փուշեր կըյա-

ջրդէ՜ն . այն ժամանակ իմ սիրտս կրկին տրտմութիւններով կըլեցուէր . զի վայելք և հաճոյքներ անհետացած կըտեսնէի և ունայնութիւն կուգար աչքիս առջեւէն կանցնէր , ինչ որ իմ աչքս տեսաւ և սիրտս սիրեց , ամենէն իմ անձս չ'զրկեցի . զանոնք ունեցայ և վայելեցի , արեգական տակ գտնուած բոլոր բարիքները և հաճոյքները վայելեցի սակայն անոնք ալ ունայնութիւն էին։

Գիտութիւն և իմաստութիւն . արհեստ և ուսմունքներ , ամենքն ալ առիս պատրաստ ունէի , անոնք ալ չ'կրցան ինձ երջանկութիւն տալ , զի նոյն վախճանն ալ ունայնութիւն էր , այն ամէն վայելքները զորս ունէի և կըվայելէի՝ ուրիշները տեսնելով զիս կերանէին և ես զիս երջանիկ կըկարծէի , բայց արդ ամենքն ալ խաղի պէս անցան գնացին և անոնց ամենու փոխարէն այս տառապանաց խրձիթն միայն մնաց ինձ բաժին , ուր մէկ անկիւնը ընկած սովամահ մեռնիմ ։

Ձեռք կարկառելու պատեհ մը չունիմ, սակայն աղաս եմ կրկին մօրս յերկինս ելանալ իմ Տիրոջս ։ Իմ անձս առ քեզ ծարաւի է , իմ հոգիս աղաս է այս կաւեղէն բանտէն , այլեւ ուրիշ հանգստութիւն չունիմ, իմ հանգստութիւնս միայն մահուան մէջ ծրարուած կըպահուի , ուրեմն գլուխ խոնարհեցունելու է մահուան հարկին , որով ամէն բան վախճան կըգտնէ ։

# ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Պատմիչը և Ժերոնայի խօսակցութիւնը. Թշուառ հողագործութեան Յորդանանի խօսքերը. Թշուառ կենաց նկարագրութիւնը և առաջնորդութեան ու քննութեան.

*Երբ վշտահարն իր խօսքերը կընդհատէր, լուսինը իր գըլուխ դէպի արևմտեան ծայր խոնարհած արշալուսին հրաժեշտի ողջոյն կուտար և իրեն յաջորդելու կըհրաւիրէր արեգական ոսկեծղի ճաճանչները. աստղերը իրենց հորիզոնէն կըհալածուէին. մութ անտառի մէկ անկիւնէն ոտքի շշուկ մը կըլսուէր. և դէպի այն քիչ մը առաջ գնալով տեսայ որ իմ բարեմաղթիս հինօրեայ ծերունի ընկերս էր որ դէպի ինձ առաջ կուգար. նա ոչ սակաւ համակրանօք և քաղցր ժպիտներով բարևելէն յետոյ բարձր ծառի մը տակ հրաւիրեց զիս նստելու. իմ ուրախակցութիւնս իրեն մատուցանելէն վերջ, պատմեցի այն ամէն լսածս խօսքերը զորս նոյն գիշերը լսեցի այն անծանօթ տառապեալի բերնէն. ծերունին խօսքին թելը առնելով ըսաւ. «Այս աշխարհի վիճակը խառնաշփոթ է. քիչերն են որք ազատ կըմնան այս տեսակ տառապանքներէ».*

*Երթամք, ըսաւ, զինք այցելել և մխիթարել. ձեռքէս բըռնելով նոյն ողորմելոյն խրճիթէն ներս մտանք, հարուածեալ կաւեղէն քայքայեալ խոնաւ շէնքի մը մէկ անկիւն պատառատուն զգեստներով և խիստ շատ հին անկողնոյ մը մէջ պառկեալ իր արտասուաց կաթիլները աչքէն հոսելով կերթային կըխառնուէին այն կաթիլներու հետ, որք խրճիթի խոնաւութեան շոգին կըյօրինէին պատերու վրայ. հոն կըտեսնուէր կոտրած հողէ ճրագ մը, որու ժանգոտ պատրոյգ պաշտօն ունէր մէկ կողմէ մնացեալ լուսով մը կաւեղէն խրճիթը լուսաւորելու, միւս կողմէն այն թշուառութեամբ լի այրն դառն մտխերով լեցնելու.*

*Վշտահարը այն մթութեան մէջ միայնակ իր սրտէն բղխած հառաչանքներէն ի զատ ուրիշ մխիթարութիւն չունէր. նա իր*

ցուերը սփոփելու մօր Թմրեցուցիչ քունը իրեն օգնութեան կը կանչէր. սակայն նորա Թալկացուցիչ զօրութեան շողին չէր զօրեր ներգործել. այն Թշուառութեամբ լի յոգնած մարդու ծանրացած արտեւանանց վրայ անողոքելի բաղդն շարունակ ողորմելոյն միտք ծոլէ ի ծոլ ցամաքէ ի ցամաք մարակելով կըհալածէր. նա որսորդէ զարնուած եղջերուի պէս տարակուսեալ չգիտեր Թէ ո՛ր կողմը փախչի. Ճակատագիրը չէր կամիր որ նա հանգիստ և դադար գտնէ և չէր ուզէր որ նա քնոյ հեշտ քաղցրութիւն վայելէ և իր վշտաց մէկ մասը անգիտութեան յանձնէ նա մօր որ կողմ որ երԹար, զինք վիրաւորող սլաքն ալ եռեւէն կրվազէր զինք վիրաւորելու և անհանգստութեան մէջ պահելու. Այս զԹութեան և ողորմութեան ու կարեկցութեան արժանի մարդը երբ յանկարծակի զմեզ իր խուղի մէջ տեսաւ, կարծես Թէ պահ մը իր կրած բոլոր անտանելի դառն ցաւերը մոռացաւ. և վշտալի ժպիտ մը եւ երեցաւ նորա դողդոջուն շրԹանց վրայ. որ զմեզ բարեւելու մէկ արտայայտուԹիւնն էր. պահ մը վերջ նուաղ և հեկեկան ձայնով մը ըսաւ մեզ. դուք ինձ այցելելու կուգաք այնպիսի մի ժամանակի մէջ՝ յորում Աստուած միայն կարող էր զիս միխիԹարել, և սկսաւ յորդահոս արտասուքներ Թափել. նա իր նուաղեալ ձայնով կուզէր ուրիշ բաներ ևս խօսել. սակայն լեզուի Թօթովումը արգիլեց զինք իր նպատակէն և սկսաւ անմռունչ մեր ծերունւոյն երեսը նայիլ խիստ զարմանալի կերպով։ Ըսաւ ծերունին իրեն. կ՚զգամ Թէ բան մը ըսել կուզէք, բայց երկարժամանակեայ վշտակրուԹեան ցաւերը ձեր լեզուն խօԹացուցած են. ուստի նա անկարող կըդտնուի ձեր սրտի Թարգմանութեան պաշտօնը կատարել. մի նեղուիք ես ձեր բոլոր ըսելիքները ձեր աչաց և տխուր սրտի մէջ ուելի բացայայտ կըկարդամ, և անոնց ամենու բովանդակուԹիւնը սրտովս կ՚զգամ, և մտացս մէջ անջինջ կըդրոշմուին. խորհուրդ կուտամ ձեզ որ չ՚յուսահատիք. զի յուսահատուԹիւն անաստուած հողեվարքներուն միայն կըվայելէ։

Վշտակիր առնլուԹիւն կայր է և բարկուԹիւն անխորհուրդ. աստոնց հետեւողները կայր զկուրայն Աստուծոյ երկիւղածներու կենաց Ճանապարհի վրայ այնպիսի պարաններ կըլարեն, որ անոնց մէջ մէկ անգամ բռնուողը իր բոլոր ապագան կըվտանգէ և

յոյսը կըկորսնցունէ . սակայն երկայնամիտները համբերութեամբ վախճան կուտան այս անսակ ձախորդութեանց . համոզուիլ պէտք է թէ համբերողներու համար անվախճան բան չկայ ։

Առաքինին հալածող չարերը նորա վարձը կըբազմապատկեն . չարերը խղճի խայթ չունին որ զգացունէ իրենց՝ իրենց սխալները . ձախորդութիւններ կան , որք օգտակար են . վասնզի զմարդիկ դէպի Աստուած կառաջնորդեն . և Աստուած մարդկանց ճշմարիտ բարեկամն է . մոլորամիտ մարդիկ զԱստուած թող տալով իրենց հաճոյից և փափագանաց ետևէն կըվազեն ։ Ծերունոյն ամոքիչ խօսքերն կերեւային թշուառին հոգւոյն խորերուն կըթափանցէին , և նորա համակրական երանգներուն ազդելով մաքէն անակնունելի յոյսեր ցոլացունելով , նորա տխուր դէմք կըզուարթացունէին և մթագնեալ աչքն կըլուսաւորէին . ու նորա գանձակսկիծ ողին կըմխիթարէին ։ Հարուածեալը հայեցուած մը ուղղեց ծերունոյն վեհ դէմքին , և այն պաղատախառն նայուածքէն վերջ գողալով ծունկի վրայ եկաւ , և գողդոջուն ձեռօք իւր յուզեալ սիրտը կըսեղմէր և մտային անհասկանալի աղօթքներ կընէր ։ Սոյն միջոցին սակաւ առ սակաւ կըհեռանար նորա գունատեալ երեսէն այն մեռելական դեղնութիւնն , որ իւր երկարժամանակեայ հիւանդութեան բուռն ներգործութենէն ծնունդ առած էր և կըյաջորդէր անոր առողջութեան նշան եղող կարմրութիւն . սակայն նորա յուզեալ սրտի խորերէն ելած հառաչանքները մէկ մէկ մահուան հրաւէր էին . մանաւանդ թէ ինքզինք մխիթարելու արհեստէն անտեղեակ էր . ծերունոյն ազդեցիկ խօսքերը գրաւիչ յափշտակութեամբ նորա սրտի և մտաց վրայ վերականգնութեան յոյս և լոյս կըսփռէին . այն աչք՝ որ մինչև այն ժամանակը հազիւ իրենց կապիճներու մէջ կըթաւալէին , յանկարծակի կազդուրուելով այս կողմ և այն կողմ կընայէին լուսոյ յոյս մը ընդունելու . վէրքերով լեցուած սրտէն խօսելու փափագ ցոյց կուտար . սակայն նորա ձայնը շրթունքներէն դուրս չէր ելլեր , այն տխուր աչաց մէջ ուրախութեան նշոյլներ տեսնուեցան . սրտի ուրախութենէն արտասուաց կաթիլներով իւր թշուառութեան ընկեր անկողինը կըթրջէր . մեծ ուրախութեան զգացումը կըտեսնուէր նորա սրտի վրայ . թէև նորա դէմք գունահատեալ էր , և աչաց հուրը մարելու

վրայ էր . սակայն կենդանութեան յոյսը տակաւին մարած չէր . զի իրենց գեղեցիկ դիրք պահած էին այն վիշտերու քողի տակը։

Նա , պահ մը լուռ և իր մտածմանց մէջ կեդրոնացած կը-մնար և իր կրած նեղութեանց դառն յիշատակները սակայն կերպով նորա սիրտ տագնապներու և անհանգստութեան մէջ կը-գնէին . նորա արտասուքով լեցուած աչքերը բացուելու համար տակաւին ժամանակի պէտք ունէր . և այն աչաց մէջէն տխրու-թիւնները յաջորդաբար կանցնէին կերեւային և ուրիշ վիշտեր կը յաջորդէին անոնց ։ Թշուառաց մարմնոյ մէջ շատ մը բարիք-ներ կան պահուած զորս ցաւեր կը քաշէն կը հանեն և իբրև օգ-տակար դեղեր կը գործածուին . տեսնուած է երբեմն որ խօթու-թիւններէն ողջմտութիւն կ՚ստացուի . մարդիկ կան որք իրենց թշուառութեամբ կրնան իրենց հոգին կազդուրել . ամենէն աղէկ առողջարար դեղերը դառն արմատներէն առաջ կուգան ։

Թշուառներէն ոմանք դէպք և պատահարներէն կը հարուած-ուին . ոմանք գիշերային որոգայթներէն կը վիրաւորուին . ոմանք Աստուծոյ թոյլտուութեամբ կը թշուառանան , իրենց սխալները ուղղելու համար . ամէն տեսակ թշուառաց համար երկու բան պէտք է . յոյս և երկայնամիտ համբերութիւն . համբերութիւն այն զէնքն է որ կը յաղթէ աշխարհին և դժոխոց . Աստուծոյ Որդին համբերութեամբ յաղթեց աշխարհին բովանդակ վշտաց և ցաւերուն ։ Աստուած չ՚կամիր վտանգներու վիշտերով թշուառ-ները կորսնցունել . այլ զանոնք նեղութեան մէջ թողլով կը կրթէ և փորձութիւններէն կը սորվին թէ որչափ տկար են մարդկանց յոյսերն . զորս ճոխութեան և հարստութեան վրայ հաստատել կուզեն մարդիկ . այսպէս ալ ուժի , զօրութեան և մեծութեան վրայ կը դնեն իրենց յոյսը . զի անոնք որ բարութիւնը մեծու-թեան մէջ կը փնտռեն , մեծութիւն կորսնցուցած ժամանակ կը-յուսահատին . իսկ անոնք որ մեծութիւնը բարութեան մէջ կը-փնտռեն, նորա մեծութիւն կորսնցուցած ժամանակը մխիթարուին իրենց անմեղ բարիքներով . Աստուած մարդիկներէն մեծութիւն չպահանջեր . այլ բարիք կը փնտռէ . Աստուծոյ երկիւղածները գիտեն թէ աշխարհի ամէն հարստութիւնները և մարմնոյ բա-րիքները իրենց գլուխը դէպի ունայնութիւն կը խոնարհեցունեն և մինչև գերեզմանի դուռը կերթան . հոն կանգ կառնեն ։

Բարեգործութիւնն է որ մարդկանց հոգւոյն հետ անքակտելի կապուած նոյն հետ անհունութեան ճանապարհէն դէպի յաւիտենականութիւն կերթան Աստուծոյ ներկայանալու և իրենց գործոց արդար վարձն առնելու , բարեգործութիւն չունեցողներու վախճանը տրտմութիւն տխրութիւն և անհանգստութիւն է . բարեգործութիւն զմարդիկ անսասան կըպահէ . պէտք չէ որ մարդիկ տրտունջ բառնան Աստուծոյ դէմ , երբ գիտեն թէ մերկ եկած են և մերկ պիտի դնան . աշխարհ իր բարիները միշտ իր ծոցի մէջ կըպահէ դուրս չհաներ , առ աւուրն մինչև գերեզման կերթայ և հոն կանգ կառնու . անդիմադրելի հրաման մը կայ որ կըհնազանդեցունէ իր կամաց ամէն ծնածները հասարակաց ճանապարհէն դնալու . աշխարհ իրեն կըվերապահէ իր տուած ինչ բարիք և թէ թշուառութիւնները . որեմն մարդկանց համար ուսանելու երկու բան կայ , մինն աշխարհի բարեաց վրայ յոյս չդնել միւսն թշուառութեան մէջ ընկած ժամանակ չյուսահատիլ . զի երկուքն ալ ժամանակաւոր է . աշխարհ գերեզմանի դուռը նստած , իր տուածները ետ կառնու . միայն առաքինութիւն մը կայ որ անկողոպտելի է . անիկա մարդկանց հոգւոյն օժիտ և զարդն է . մէկը չկրնար զայն կողոպտել . վասնզի նորա պահապան և պաշտպանը ամենազօր Աստուածն է . անհամբերները իրենց առաքինութիւնը իրենց տրտնջանաց մէջ կըթաղեն և կըկորսնցունեն . իսկ իմաստունները վախճանը մտածելով ամէն բան կուտան . առաքինութիւն իրենց կըվերապահեն ։

Մինչ ծերունին սոյն խրատական և յորդորական խօսքերը կըխօսէր , միւս կողմէն հարուածեալը հետզհետէ նոր շունչ և նոր զօրութիւն կ՚առնար , և կ՚սկսէր հեծեծեալ եղանակաւ խօսել . «Մխիթարիչ ծերունի , դուք այսօր իբրև երկնային հրեշտակ վիրաւորեալի մը վիշտերը մեղմացուցիք և զինք մխիթարեցիք իր անմխիթար յուսահատ վիճակի մէջ . դուք իմ խռովեալ մարմնոյս խաղաղութիւն և հանդարտութիւն տուիք , մեռեալ սրտիս վերակենդանութիւն ընծայեցիք , դուք իմ անողջանալի վէրքերս բժշկեցիք . և փրկութեան ու ազատութեան մեծ յոյս տուիք . երախտապարտ եմ ձեզ , և բարերար կըճանաչեմ զձեզ . Այս անմոռանալի ցաւերու մէջ իյնալէս ի վեր ձեզ պէս սփոփիչ

մը չտեսայ ։ Որուն պատասխանեց ծերունին . կարեկցութեան սէրը մարդկանց թեւ եւ թռիչ կուտայ , երբեմն բնազդեցական անխափանելի զօրութիւն թագուն խորհուրդով մը մարդկանց սիրտ կըշարժէ թշուառներուն մխիթարիչ լինելու ։

Արդ դու յԱստուած յուսա եւ համբերող եղիր . ես քու այս թշուառ եւ յուսահատ վիճակիդ մէջ դարձեալ պայծառ երեսիդ վրայ համեստ առաքինութեան լոյս կըտեսնեմ . դու մխիթարուէ քու անմեղութեամբդ եւ առաքինական բարի ձիրքերովդ . այս կրածներդ քեզ մշտնջենաւոր հանգստութիւն մը տալու երաշխաւորներն են . աշխարհի դառնութիւն , ցաւերը , հալածանք եւ հարուածները թող քու առաքինութեան սանձար սիրտդ չ՚վրդովեն . զի ատոնց ամէնքն ալ կերթան , ունայնութեան մէջ կը թաղուին եւ կ՚անհետանան ։

Այս պահուս վշտակիրի վրայ թմրութիւն մը գալով՝ աչքը գոցեց . քնոյ քաղցրութիւն հանգստութեան հեշտական ծաղիկները սփռելով այն հոգնած մարմնոյ վրայ՝ զայն անզգայութեան քողով ծածկեց . մենք ես խրճիթէն դուրս ելլելով փոքր պըտոյտ մը ըրինք անտառի մէջ . երբ արշալոյսը իր բարի լոյս կըսփռէր ամեզերաց վրայ , եւ մարդիկ քնոյ խոր թմրութենէն հանելով աշխատութեան կըհրաւիրէր , գործաւորները իրենց աշխատութեան վայր կըդիմէին , մշակները դէպի դաշտ , ոչխար եւ կովերը դէպի իրենց արօտատեղին կերթային , առ հասարակ մարդիկ աշխատութեան ձեռք կըկարկառէին բնութեան բարիք առնելու եւ վայելելու քաղցր յուսով . մեր այն փոքր շրջանը կատարելէն վերջ՝ կրկին մեր վշտակիր բարեկամի խրճիթը վերադարձանք . նա իր քունէն արթնցած , աչք այս կամ այն կողմ կըդարձունէր , թերեւս իր այցելու հիւրերը փնտրելու եւ տեսնելու փափագով ։

Երբ զմեզ տեսաւ , զուարթ դէմքով մը եւ ախորժելի ժպիտով մը բարեւելէն վերջ ըսաւ . բարի հրեշտակներ . հիմա կըզգամ թէ իմ այս վիճակս առաջի ունեցածս ամէն փառքերէն նախապատիւ են . կըհամոզուիմ թէ Աստուած զիս ազատած է աշխարհի դառն տանջանքներէն . անիրաւ գործերէն , անուղիղ մարդիկներէն սուտ բամբասողներէն , անխիղճ զրպարտիչներէն , փրկած է զիս ամբարտաւան ձեռքերէն . հալածողներու չարչարանքէն , հպարտներու գոռոզութենէն .

Իմ բարեկամ Աստուածս այս ցաւերով զիս կրթեց և աչքերս դէպի ուղղութեան ճանապարհ դարձուց . իմ խորհուրդներս ուղղեց . զգացումներս ազնուացուց , շնորհօք և իմաստութեամբ պիտի զարդարուի զիս . Ներումն կրխնդրեմ անկէ որուն դէմ ամբարշտեցայ անձս . անզգամներու պէս խօսեցայ անոր դէմ . ուստի ներումն կրխնդրեմ անկէ : Բարի այցելուներ , նաև իմ երախտագիտութիւնս կը յայտնեմ ձեզ . զի կեանքս ձեր շնորհիւ փրկուեցաւ . բարերարներ . ո՞ր հոգիմ էր որ զձեզ (լայնածաւալ օդերու ընդարձակութիւն կարող անցնող արծուի պէս) այս ողորմելի խրճիթս առաջնորդեց ինձ պէս ողորմելի թշուառի մը մխիթարիչ լինելու՝ թշուառ մը որ գերեզմանէն հանուած մեռելներէն տարբերութիւն չունէր , ուրիշ բան մը կարող չեմ ընելու , միայն թէ իմ երախտագիտութիւնս ձեր բարերարութեան պէս թող թագուն մնայ :

Սոյն միջոցին պաղ քրտինք մը Նորա ճակատը պատեց . և մահաբեր անձկութիւն մը վերստին սկսաւ Նորա սիրտ ճմլել . զայս տեսնելով մեր ծերունին ըսաւ . դժբախտութեամբ կործանեալ չէնք միջնուտով չվերանորոգուիր . բայց հաւատա՛ բարեկամ , թէ հասած է քեզ այն բարեբաստիկ օրը , որուն կըտենչայիր . սակայն չէիր կրնար հասնիլ . Այս պահուս շնորհաց նշոյլները իջան վշտացելոյն ճակատի վրայ , Նորա դէմք զուարթացուցին . աչք կենդանութիւն ստացաւ . մարմինը իր կրած ցաւերը մոռացաւ . հոգին նոր կեանք գտաւ . յոյս բարեբաստիկ անոր օգնելու ձեռք կարկառեց . Նա իր թևերը երկարցնելով ծերունւոյն լանջաց փարեցաւ . սրտի ուրախութենէն կարող չէր խօսելու . Նորա հին վիշտ և ցաւերը նոր առողջութեան և ուրախութեան հետ խառնուած մերթ տրտմութեան , և մերթ ուրախութեան նշաններ կը ծաւալէին Նորա երեսի վրայ . հարցուց իրեն ծերունին , «Քու թշուառ օրերուդ մէջ ընաւ այցելուներ չունեցա՞ր» : Այո՛ , պատասխանեց . անգամ մը երիտասարդ մը տեսայ . որու ձեռք ոտք և կողը վիրաւորեալ էր . ինձ կը թուի թէ նա ոչ ինձ պէս վշտահար մի էր . Նա արիւնաթաթաւ փայտէ խաչ մը իր ուսն առած եկաւ ասկէ անցաւ ու գնաց . թէպէտ և պահ մը խրճթիս առջեը կանգ առաւ , և ես անկէ օգնութիւն պաղատեցի , վէրքերս պատել խնդրեցի . բայց յոյս պա-

րապ ելաւ . վասնզի կըսէր նա ինձ անմեղներու վէրքերը առանց պատանի պիտի մնան և արիւնաթաթաւ . զանոնք վիրաւորողներու ոճրագործութիւնը յիշեցունելու համար . և աւելցուց ըսել . մի՛ յուսահատիր համբերէ . ու հեռացաւ գնաց . Միշտ չկարողացայ ըմբռնել թէ տեսածս երազ էր թէ իրականութիւն ։ Ծերունին պատասխանեց . անիկա Գողգոթայի զոհն էր , որ խօսքով կըբժշկէ առանց պատանի պէտք ունենալու . նա շատերը բժշկած և իրենց թշուառութիւններէն ազատած է . անոր վրայ ունեցած յոյսը միշտ հաստատ պահէ և պիտի տեսնես թէ առողջութիւնդ կատարեալ է ։

Հարցուց ծերունին թէ՝ դուն ո՞վ ես և ո՞վ զքեզ հոս բերաւ ։ Պատասխանեց հարուածեալը թէ՝ պատուաւոր և պարկեշտ սահմանի մէջ ապրող մեծատուն մի էի , բարեկամներս և ազգականներս կընախանձէին իմ վիճակիս , նոցա թելադրութեամբ աւազակները տանս վրայ յարձակելով՝ ամբողջ ունեցածներս յափշտակեցին . զաւակներս անոնց դիմադրած ժամանակ չարաչար վիրաւորուեցան . և ոմանք խեղճ կեանքերնին կորսնցուցին , և զիս ինչպէս որ տեսայք , անողջանալի վէրքերով վիրաւորեցին . ու աչքերս կապելով պտուտաւոր լեռնային և անտառային անծանօթ ճանապարհներով գիշեր ժամանակ բերին կիսամեռ վիճակի մէջ այս ողորմելի տնակի մէջ դրին . մինակ այս պատառոտուն անկողինս օգնական և ապաւէն տուին ինձ ու իրենք անյայտ եղան . երկնային հրաշիւք երկիւղած կին մը երեք օր վերջ եկաւ զիս և իմ վիճակս տեսաւ . անկէ վերջ այս հողէ ճրագը և ճարպ բերաւ սենեակս լուսաւորելու . և շաբաթը երկու անգամ փոքր աման մը ջուր և քանի մի պատառ չորաբեկ հաց կըբերէ կեանքս ապրեցունելու . սակայն չգիտեմ թէ ո՞վ է այն կին . երբեմն վայրենի կենդանիները ևս կըմտնէին սենեակս և կուգային քովս կընստէին , բայց ինձ բնաւ վնաս մը չէին հասցունէր , թռչուններ ևս կուգային . մտքէս կանցնէր թէ թռչնոց և վայրի կենդանեաց գթութիւն և մարդասիրութիւն զիս վիրաւորողներու գթութենէն վերադաս և նախադաս է ։ Ըսաւ ծերունին մի՛ զարմանաք ձեզ պէս շատեր կան . դուք ազատեցայք , բայց անոնցմէ շատերը հառաչանքներով և տրտմութեամբ գերեզման կըմտնեն .

## ԳԻՐՔ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ցամաքային ուղևորութիւն. Ալէն և Խոսնակ սերերու ներգործութիւն. Ամերիկայ ճամբու նպատակաւ նաւ մտնելը. Յաջող նաւարկութիւն և ծերունւոյն խրատները. Նոր ալէկոծութեան նկարագրութիւն. Վնաս և հատուածներ. Երիտասարդի մը խեղդուիլը. Նաւապետի անձնազոհութեան փորձ փորձելը. Ծերունւոյն խրատները. Նոր աղօթութիւն. Յաջող նաւարկութիւն. Ափրիկէ Բարեյուսոյ հրուանդան մտնելը.

Ծերունին իր խօսքերը կըվերջացնէր, վշտահարն ալ իր ցաւերէն ազատած խոնարհաբար ծերունւոյն մօտենալով իր յարգանքները կըմատուցանէր, և մեզմէ բաժնուելու, ու իր տեղը վերադառնալու հրաման կըխնդրէր. ծերունւոյն հրամանի վրայ վշտակիրն իր տեղ դառնալու համար ճանապարհը շարունակեց :

Ծերունին կամք կըյայտնէր ծովային ճանապարհորդութիւն մը ընել, և իմ ընկերակից ըլլալս յօժարութիւնս կըհարցունէր. երբ հաւանութիւնս ստացաւ, ըսաւ ինձ՝. քեզ օգտակար խորհուրդ մը կուտամ, որու փոխարէն ուրիշ բան մը չեմ ուզեր, այլ միայն խորհրդապահ ըլլութիւն. ուրիշի գաղանեաց հետամուտ մի ըլլիր, եթէ պատահի որ ուրիշները իրենց գաղանիքները քեզ յայտնեն օգտակար խորհուրդ մը առնելու համար, խորհուրդ տուր. բայց գաղանեաց ալ աւանդապահութեան հաւատարիմ կեցիր. Աս որ պատասխանելով ըսի. վեհազուն հայր, ինչպէս որ կըտեսնէք, ձեր նրբահայեաց աչք՝ առաջ երիտասարդ կերևիմ. բայց խորհրդապահութեան մասին ծերի մը փորձառութիւն ունիմ. վստահութիւն ունեցէք իմ վրայ. քանի մի անգամ ձեզ հետ գտնուած եմ, միշտ պատշաճից համեստութեան և հաւատարմութեան օրէնքները յարգած եմ. մի երկբայիք իմ հաւատարմութեանս վրայ.

Ձեռքէս բռնելով ծերունին ըսաւ քալէ, և ասկէ վերջ շատ պիտի հոգնիս. Հոգնիս բառը այնչափ սուր ներգործեց ինձ, որ

կարծես թէ անիմանալի զօրութիւն մը զանազան կասկածելի խորհուրդներ սրտէս քաշելով գաղտնի կերպով կըտանէր ծերունոյն միայն կըհաղորդէր. վասն զի նա յանկարծակի ժպտեցաւ, և այն ժպիտի մէջ թէ դառնութիւն և թէ քաղցրութիւն միանգամայն նշմարեցի. ինչպէս որ օրէն է վեհանձն մարդկանց. որք շատ բաներ գիտեն, բայց գիտութեամբ անդէտ կըձևանան այսպէս ալ ծերունին թէև իմացաւ իմ սրտիս վրդովումը, բայց լռութեան քողի տակ ծածկեց. բայց իմ սրտիս արիւնը երեսս քողարկեց և սկսայ յերկիր ի խոնարհ հայիլ. Բայց, կրկնեց ծերունին. միայն թէ դժուար պարագաներու մէջ երկայնամիտ և համբերող եղիր. զի չհամբերողները մեծասիրտ չեն.

Մեր ճանապարհորդութիւն երկար տևեց, և գարնան աշունը յաջորդեց, օդն սկսաւ ցրտիլ. և երկնից երեսը ամպերով պատեցաւ. ժամանակը իր պարագն կատարել սկսաւ, տերևներու մահահրաւէր հողմերը սկսան բարձրահասակ ծառերը շարժել և ծամծռել. ու աշնանային դեղնած տերևները իրենց ոստերու վրայէն խլելով ծառուղիներու մէջ և ճանապարհներու վրայ տարածել, բարձր ծառերը խոնարհ թուփերէն աւելի կընեղուէին զիրենք որորող հովերէն. բարտին և կաղամախ. սօս և մայրի ծառերը, որոց գլուխը մինչև ամպերու ստորոտ բարձրացած էին, հողմերու սաստկութիւնը նոցա գլխէն բռնած ծամծռելով մինչև յերկիր կըխոնարհեցունէին:

Երբ ծովեզերք և նաւահանգիստ հասանք, նաւապետն որ բարի մարդու մը կընմանէր, մեզ լուր տուաւ թէ՝ նաւը երեք օրէն վերջ պիտի ելլէ. և մենք հարկադրեալ այն երեք օրը նաւի մէկ խորշը պատսպարելով անցուցինք. նոյն կարճ միջոցին նաւաստիներէն շատերու հետ ծանօթանալով բարեկամութիւն մը կապեցինք անոնց հետ.

Մեզ ընկերացաւ սոխայի աշխոյժ երիտասարդ մը, որ կըյայտնէր թէ ինքը Աֆրիկէի եղերք ելլելու մտադիր է. իր մէկ կորուստը փնտրելու և գտնելու մտօք. կուզէր իմանալ թէ նորա փնտրածն ինչ է, բայց նա խիստ խնամով իրեն կըվերապահէր իր սրտի գաղտնիքը:

Նաւը ելլելու ժամը հասաւ, նաւաստիները խարիսխները կըժողվէին, օդը պայծառ էր և զուարթ, ծովը խիստ խաղաղ էր.

երբ մեր նաւը նաւահանգստէն դուրս ելլելով իր ճանապարհ կըշարունակէր , երկու նաւաստիները իրարու հետ զժտեցան ջրն-ջին պատճառաւ մը մինն միւսին նախատեց , և անկէ վրէժ լուծել կուզէր . բայց խոհեմ նաւապետն վրայ հասնելով զա-նոնք խաղաղեցոյց ։

Մեր ծերունին զայս տեսնելով ըսաւ . դժոխքէն ելած անմի-տրանութիւն մինչև անգամ ծովու վրայ երկու եղբարց մէջ մըտ-նելով , զանոնք կըտանջէ և իրարմէ կըբաժանէ . ու ամէն մար-դու հանգստութիւն կըվրդովէ . խօսք ինձ ուղղելով ըսաւ . բացակայութիւնը մահուան պէս ամէն բան իրարմէ կըզատէ ինչ-պէս որ զմեզ զատեց մեր դժբաղդ բարեկամէն . որու յիշատա-կութիւնն անգամ մաքերնիս չեմք բերէր ։ Այս խօսքէն վերջ ակնարկ մը ձգելով մեզ ընկերացող երիտասարդին վրայ , յան-կարծական երկու կաթիլ արտասուք վազեցին նորա մեծ աչքե-րէն . այս միջոցիս թէև բան մը չնշմարեցի . բայց սիրտս տրտ-մութեան յուզումներով վրդովեցաւ . սակայն չհամարձակեցայ ծերունւոյն արտասուելոյն պատճառը հարցանել և իմանալ ։

Մեր նաւը երկար ժամանակ կատարեալ յաջողութեամբ իր ճանապարհ շարունակած և Ափրիկէի եզերքը գտած էր , պայ-ծառ երկնից երեսը երևցած աշնան գեղեցիկ արևը իր ոսկեգոյն ճառագայթները կապուտակ ծովու վրայ սփռած լայնածաւալ դաշտի մը տեսարան կըներկայացնէր մեր աչքին . նաւը իր ա-ռագաստները յաջողակ հովերու դէմ բացած ճոխաճեմ արա-գընթացութեամբ դէպի մեր նպատակ անխոտոր կըքալէր ։

Օդի մէջ թռչտող արագընթաց թռչունները ի զուր կըմրցէին մեր նաւի հետ զոյգ ընթնալ , ծովեզերեայ աւազները պարտէզնե-րու ու անտառներու ծառերը և հեռաւոր լեռները , թռիչ տա-լով մեզմէ կըհեռանային և անյայտ կըլլինէին , հեզասահ զե-փիւռները սաւառնելով կըխաղային կուգային մեր երեսներու վրայ զուարթութիւն սփռելու , նաւը իր ախորժ և ճոխաճեմ ընթացքն կանոնաւորապէս կըշարունակէր այն արագութեամբ որ ծովեզերը մէկ անգամ տեսնուելով երկրորդ անգամ նայելու աչք չէր զօրեր , զի նաւի սրընթացութիւն զանոնք մեր աչքէն յա-փշտակելով ի յետ կոյս կըմղէր . ծովային ճանապարհորդու-թեան անվարժները այսպէս կըհաւատային թէ՝ ոչ թէ նաւը՝ այլ

ծովեզերքն է որ մեր նաւէն խոյս տալով ետ կըփախչէին ։

Երբեք կամաց կամաց իր Ճառագայթները յինքն ամփոփելով արեւմտեան հորիզոնէն աներեւոյթ կըլլնէր եւ աստեղաց ազատութիւն կատար ըլլել եւ երկինք երեսը զարդարել, այն դեղածիծաղ ծովը իր խաղաղ եւ զուարճալի երեւոյթի տակը մեր աչքէն թագուն սոսկալի գաղտնութիւններ կըպահէր ։

Թանձրացած ամպ մը մահուան միգի . . . պէս յանկարծակի մեր աչքը պատեց գիշերային մշուշներով . արագաթռիչ հողմերը ամպերը կըմղէին աստեղաց երեսը ծածկելու եւ նոցա լոյսն աղօտացնելու . փոթորիկները զծով ալէկոծելով վերի վայր կըյուզէին . մերթ ընդ մերթ ամպերը որոտալով, հրային օձաձեւ փայլակներ պայթելով ծովու կոհակները իրարու վրայ դիզուած խաւարամած ամպերը կըլուսաւորէին . եւ կրկին մշուշներու մէջ պահուելով անհետ կըլլնէին . ծովու լեռնակուտակ ալիքները մանչող առիւծներու պէս իրարու ետեւէ վազելով մերթ անդունդվիհերը կըբանային , մերթ կատաղի վագրի պէս միմեանց ճիրան արձակելով իրարու վրայ կելլէին , եւ զիրար կըպատառէին , մերթ նաւը իրենց գլխոյն վրայ առնելով լեռներու գագաթներու հաւասարութեամբ կըբարձրացունէին , եւ երբեմն ծովու խոր անդունդներու մէջ կիջեցունէին . երբեմն նաւի երկու կողմէն եկած լեռնակուտակ ալիքները իրենց մագիլներով նաւի մէկ կողմէն բռնելով վարագներու պէս զայն ծովու յատակը իջեցունելու փորձ կըփորձէին եւ եթէ չյաջողէին զայն իրենց մագիլներու մէջ փշրել կուզէին ։

Հողմերու աղբիւրները բացուած նոցա շրթունքներէն վազող ահեղագոչ հովերը մանչելով կատաղաբար մեր նաւի առագաստներու մէջ կըլեցուէին , եւ կատաղի որոտաձայն ալիքները նաւի կողերը կըբաղխէին զայն փշրելու բուռն տենչմամբ , ծովու անդունդները իրենց չարագուշակ բերանը բացուած վիշապներու պէս զմեզ կլանել կուզէին . ծովն ամբարտաւան է՝ չուզեր որ մարդիկ ջնջին փայտին վրայ ելլելով իր գլխոյն վրայ ոտք կոխելով համատարած ովկիանոսներու վրայ ճանապարհորդութիւն կատարեն . կոհակները զմեզ մոլորեցունել կուզէին , սակայն ինչպէս որ մարդիկ հանճարով ուղիղ ճանապարհ կըգտնեն այսպէս ալ մեր նաւը հոգի ունէր , այն էր կողմնացոյցն յորմէ

անխախտ կառաջնորդէր եթէ մօտակայ ծովու մէջ սեպաձև ցը-ցուած ժայռերը մագնիսական զօրութեամբ մը մեր նաւը իրենց քաշելու և ջախջախելու բուռն զօրութիւնները ի գործ չդնէին։

Տարերք խռոված միմեանց հետ կը մարմնչէին․ մեզ մօտ գտնուող փոքր կղզին ձիրան կարծակէր մեր նաւը իրեն քաշել և իր ափերու տակ առնելով ջախջախելու․ ալեաց որոտընդոստ ձայնը․ հինօրեայ սեպացեալ սայրասուր ժայռերու երևոյթը , ծովու կատաղութիւնը․ նաւի յուսահատ ընթացքը զմահը կենդանի պատկերի մը պէս մեր աչքի առաջ կարծանդրէր․ այն բռնաւոր հովերը և ալիքները , որք զմեզ դէպի կորուստ կառաջնորդէին , զսպելու ամէն միջոցները անհետացած էին․ զի ամէն աղէտներու վրայ աւելցաւ նաև նաւի առագաստներու ի ծուէնս ծուէնս պատառիլը․ երկրորդ կայմին խորտակուելը։ Սոյն միջոցին ղեկավարը իր ուղղութիւն կորսնցուց․ նաւուղիղն ձեռքը իր ծնօտին դրած նաւու կորուստը կ'ողբար, գիշերապահները յուսահատ եղած միայն իրենց անձի ազատութիւն կը փնտռէին , և ձեռք բերելու միջոցները կը խորհէին․ ամէնքս միաբերան փրկութիւն և ազատութիւն լալով կաղաղակէինք․ սակայն ով պիտի լսէր ։ Այն պահուն մեզ համար ամէն բան վերջացած կ'երևէր․ վասնզի մէկ կողմէ ծովու կատաղի ալիքները , միւս կողմէն հրուանդանի ժայռը , որոնց մէջ անդը կը գտնուէր մեր նաւը , մեր յոյսը խափան վերջացաւ․ երբ խաւար գիշերը , մրրիկ, կարկուտ , կայծակ , սաստիկ հովերը կարծես թէ՝ խորհրդով միաբանած էին մեր նաւը ընկղմելով ծովու ընկերներու վրայ ուրախանալ։ Սոյն խռովեալ միջոցին մեր ծերունին իբրև բազմափորձ անյողդողդ կը մնար և կ'ըսէր ։ «Յուսահատեալներու վերջի յոյսն Աստուած է․ եթէ Աստուած զմեզ փրկել ուզէ․ մի թէ հովը , մրրիկը , կարկուտը , ծովու ալեկոծութիւնը կարող են զմեզ կորուսանել․ ուրեմն Աստուծմէ սպասելու է մեր փրկութիւն և ազատութիւն ։ Սոյն վերջի ճըգնաժամերու մէջ ամպամած խաւարը մինչև շրջապատեց զմեզ, որ մեր գլխոյն վրայ սևաթոյր մրրիկներով շրջապատուած երկինք անգամ չէր տեսնուէր․ այս պարագայից մէջ մարդկային ամէն հնարքներէն ձեռնթափ եղած բախտին յանձնուած էր ամեն բան ․

Այս արկածներու մէջ մեր բազմափորձ նաւապետի անխռով դէմքի վրայ կը տեսնուէր այն խաղաղութիւնը, որ ի մանկութենէ վտանգներու դէմ կռուելու վարժուած մարդկանց միայն յատուկ է. նա թէ և անխռով՝ բայց նորա սրտի մէջ նաւաբեկութեան վտանգը կը յուզուէր, և խիստ խնամով կուզէր ծածկել իր միտք յուզող խորհուրդները. և հետզհետէ նորա խարշամեալ երեսի վրայ սկսան սրտայոյզ հոգերը նկարուիլ. երբ վտանգք կը մօտենային, ուշադրութեամբ դիտողն կրնար այն պահուն նորա յուսահատ աչաց մէջ արտասուաց հետքերը նշմարել. նաւը ժայռին մօտեցաւ, նաւապետի դէմք այլայլեցաւ. այս պահուս այն նաւապետ որ համատարած ովկիանոսներու հողմակոծեալ ալիքներու մէջ անվրդով էր և անոնց հետ կը մրցէր, այն նաւապետն Ափրիկէի մէկ ժայռի առջևը գլուխը խոնարհած ինքզինքն և իր ընկերքը կորսնցուցած էր. այն միջոցին նորա ամէն խորհուրդները այլայլեցան. նորա եռանդուն միտք խիստ հոգնած մարդունը պէս թմրած կը տեսնուէր. և սկսաւ յուսահատաբար ըսել. «Այլ ես ամէն բան վերջացաւ, մահուան վրայ մտածելն ալ նոր կեանք է, այս նաւը, որու նաւապետութեան պաշտօնը քսան և հինգ տարի է որ կը վարեմ, ջախջախուելուն այլ ևս տարակոյս չմնաց. ամբողջ կեանքս մէջ այս տեսակ արկածի մը հանդիպած չէի. լաւ է նաւի խորտակումէն առաջ կեանքիս վերջ տալը և նորա աղէտալի վախճանը չտեսնել»։

Երբ ծովու մէջ ցցուած հրուանդանի ժայռերէն մին մեր նաւը իր ալքերու տակ առնել և խորտակել կ՚սպառնար, նաւապետը ինքզինք ծով նետելու կը պատրաստէր. ի զուր կաշխատէին նաւաստիները զինք այն ձախորդ նպատակէն յետս կասեցունել, մեր ծերունին որ մինչև յայնժամ ամէն աղէտալի անդէպքերու վրայ անտարբեր աչօք կը նայէր, նոյն միջոցին երիտասարդութեան աշխուժով լեցուած նաւապետին մօտենալով ըսաւ. հանդարտ կեցիր, պարոն նաւապետ. մեռնիլը չարեաց դարման չէ. անձնասպանութիւնն չէ որ ձախորդ դիպուածոց վրայ կը շահէ. այլ հանդարտ և համբերատար հոգւով չարեաց դարմանելն է որ ձախորդ աղէտները ջուրի մէջ հալող աղերու պէս կը հալեցունէ և կ՚ոչնչացունէ. քու անձիդ վտանգ բերելդ զօրաւոր

պատճառ մ՛է նաւի մէջ գտնուողներու կեանքը վտանգի տակ դնելու . տակաւին համբերելու ժամանակ կայ, մի յուսահատեցունէք զանոնք որ ձեր յոյսերէն բաժանելով կարելի է որ այլին . ազատութեան յոյսը տակաւին ջնջուած չէ , Պարոն Նաւապետ , գործէ հեռանալը գործին ուղղութիւն տալ չէ . այլ գործը մոռցունել է . այս աղէտալի ժամուս մէջ քեզ քանի մի բան պէտք է , **Համբերութիւն** , **Խորհել** , **Հնար** . և **Քաջալերութիւն** , ասոնք շատ շուտով կարող են չարեաց առաջն առնել . զի նոքա գիտեն թէ ձախորդութեանց վրայ իշխելու . և անոնց հեռեւանաց վրայ մտածելով զարմանը գտնելու և չարեաց առաջքն առնելու մասին չափէն աւելի յուսահատ լինելը՝ անսասուած հիւանդներուն միայն կը վայելէ . անդորր գիտութիւն պատեանի մէջ պահուած սուրէն աւելի մեծ արժէք չունի . ինչ օգուտ , և ի՞նչ նշանակութիւն ունի ձեր քանանհինգ տարուան նաւապետական փորձառական հմտութիւն , երբ այս վտանգաւոր պարագայից մէջ լքանելով ձեր անձը և ձեր անձի հետ ի միասին նաւը կորսնցունելու փորձ կը փորձէք մինչդեռ ձեր անձի և նաւի ազատութեան յոյսերն տակաւին իսպառ ջնջուած չեն . Այն միջոցին նաւապետն թէ և կուզէր ծերունոյն պատասխան տալ , սակայն մնաց ամփոփումը կարգիլէր զինք խօսելէ . Ներքին յուզումներէն նորա լեզուն կը թոթովէր , սիրտն կը դողար, մարմինը կը սարսուէր , ծունկերը կը դողդոջէր և ակռաները իրարու կը կպչէին . Վերջապէս մեր բախտ մրրիկներուն և ալէկոծութեան յանձնուած էր . յարեց ծերունին , մի՛ վհատիք յուսոյ վերջին աղբիւրն Աստուած է . ա՛ռ Նաւապետ , մենք շատ յունեցունելու հարկ չ՛կայ . բաւ է որ դուք ազգու հնարք մը խորհիք այս նաւը ժայռի միւս կողմ անցնելու . յետ այնորիկ վտանգները կանհետանան , և ամէն բան խաղաղութիւն կը դառնէ .

Երբ ծերունին այս խորհուրդը կուտար , նաւի մէջ գտնուող նաւաստիք , վաճառականները և ուրիշ ուղևոր անձինք վայնասունով օդը կը թնդացունէին իրենց ընչից և ստացուածոց . և իրենց անձի կորուստ կ՚ողբային . արտասուքները արեան աղբիւրներու պէս կը վաղէին կերթային նաւի մէջ լեցուած ջուրերու հետ կը խառնուէին . ըսաւ ծերունին . Հուրը , կարկուտ, մրրիկ , ծովու բռնութիւն Աստուածային հրամանին միայն կը-

հնազանդին . ուրեմն զԱստուած աղաչել պէտք է որ տարբերաց խաղաղելու հրաման տայ . անզգուշութեան զոհերը շատ անգամ չեն կրնար զգալ թէ . իրենց ընդունած հարուածը որ կողմէն կուգայ :

Երիտասարդութիւն անձնապաստան է , և ինքզինք ամէն բանի ձեռնհաս կըկարծէ . մանկական հասակ չիթողուր որ լաւ մտածեն իրենց վիճակի վրայ ուստի շատ անգամ յանդգնութեամբ բարիք յուսացած տեղէն չարիք կըժողովեն :

Մահուան առաջնորդող յանդգնութիւնն զմեր երիտասարդ ընկերը քաջալերեց ինքզինք քարի մը վրայ նետել և իր անձը ազատել . մեծ շառաչումով մը նաւը քարի մը զարնուեցաւ , և սոսկալի ճայթումով երկրորդ կայմն ալ խորտակուեցաւ . այն սպահուն ամէնքս կենաց անյուսութեան մէջ թաղուեցանք , մեր բոլոր խորհուրդները և մտածումները խելայնորներու վարմունքէն տարբեր չէին , նաւաստիները փոքր նաւակն իջեցունելով իրենց անձի ազատութիւն կըհոգային , մեր երիտասարդ ընկերը ինքզինք մամռապատ ժայռին վրայ նետած ժամանակը ոտք սահելով նոյն ժայռի վրայէն ծով գլորեցաւ և ահռելի ճիչ մը արձակելով ամեհի ալիքներու մէջ անյայտ եղաւ . Թշուառութիւնն ի գուժ կըշարժի , երբ կըտեսնէ թէ թշուառացեալ ամէն հնարքներէն ձեռնթափ եղած տարակուսանքներու մէջ այնպէս կըպաշարուի , որ Աստուածն անգամ իրեն օգնութեան կանչելու պէտքն կըմոռնայ . յանկարծակի լուսինը լեռներու ետեւէն իր գլուխը բարձրացունելով լոյս տարածեց ծովու վրայ, և մեր նաւի խորտակման սպառնացող ժայռը լուսաւորեց . ասիկա երկնային ողորմութիւն մի էր , յորմէ հետէ կարծես թէ աներևոյթ զօրութիւն մը ժայռի ձախորդ մեքենաները թուլցուց , և նաւը իր հողմավարքէն ազատելու յոյս մը տուաւ . վտանգի մեր նաւի հետ մրցող ժայռը քանի մը անգամ զայն բռնադատելէն և հարուածելէն յետոյ հրաշիւք մը թուլատուութիւն բրաւ . նաւը հրուանդանի միւս կողմն անցնելու . ուր որ ալիքներն իրենց կատաղութիւն ի գործ դնելու անկարող կըգտնուէին . նաւը իր վտանգէն ազատեցաւ . նաւակի մէջ գտնուող չորս նաւաստիները մեր երիտասարդի աղաղակը լսելով յաջողած էին զայն ալիքներու մագիլներէն առնել և մահամերձ վիճակի մէջ գըտ-

նաւող նորա մարմինը իրենց նաւակի մէկ անկիւնը նետել. գրե-թէ օրէնք եղած է որ շարունակ յաջողութիւն և ձախորդութիւն միմեանց կը յաջորդեն այնպէս ևս մեր ձախորդութիւնն սկսաւ յաջողութեան յաջորդել. այս ձախորդ դէպքին զոհը միմիայն մեր երիտասարդ ընկերն եղաւ ։

Երբ արշալոյս արեգական ծագման աւետիս հաղորդեց մեզ, ամէնքս ի միասին արթնութենէ սթափեցներու պէս զարմացմամբ իրարու երես կը նայէինք և այշութեամբ իրարու կը պատմէինք այն գիշերուան սոսկալի և նմանը չտեսնուած դժբախտութիւն, և փառք կուտայինք Աստուծոյ որ զմեզ ազատեց այն չարագուշակ վտանգէն, և նոր կենդանութեան քաղցր սիրով զիրար կ'ողջունէինք. երիտասարդի գլուխը որ սակաւին մակոյկի մէջ փըռուած կը մնար, հետաքրքրութեամբ մը կը նայէի. ինչպէս որ դաշտի մէջ կանանչած անուշահոտ շուշանը սաստկաւոր խափէն՝ իր արմատէն զարնուելով կիյնայ և կը թառամի, ու իր գեղեցկութիւն կը կորսնցունէ, այնպէս մեր նորատի երիտասարդն ժայռերու սուր ծայրերէն բազմաթիւ խոցերով խոցուած, նորա վէրքերով լեցուած մարմինը իր արիւններու մէջ շաղախուած մակոյկի վրայ տարածուած թէև կցկտուր շունչ մը կը տրոփար նորա սրտի երակաց մէջ. սակայն նա անյոյս էր ի կենաց ։

Քանի մի վայրկեան վերջ մահուան սառերը նորա աչք գոցեց դէպ ի յաւիտենականութիւն այն ծաղիկ հասակի մէջ. նորա ալէկոծութեան մահուան մաղձներէն յափշտակուիլը կայծակի հարուածի չափ ցաւ ազդեց ինձ. սակայն քանի մի կաթիլ դառն արտասուք թափելէն ի զատ ուրիշ բան մը չ'կարողացայ ընել այն տարաբախտ երիտասարդին ։ Նորա մարմինը նաւաստիները ծովու ձկանց կերակուր տուին. երբ տխուր աչօք կը նայէի նորա ծովընկեցութեան վրայ, ըսաւ ինձ մեր ծերունին «վշտալի սպատահմունքները անտեսանելի, և մահը անդիմադրելի է» ։ Յարեց նա, դիտե՞ս, ո՞վ էր այդ երիտասարդ. ո՛չ. պատասխանս առնելէն յետոյ ըսաւ ։ Այդ պատանին մեր անտառի մէջ տեսած վշտալիր բարեկամի տասներկու զաւակաց ամենէն փոքրն էր. որու տասնմէկ եղբայրները քոյրերը և իրենց մայր ու ամէն բարեկամները և ազգականները յափշտակիչներէն կոտոտուելով սպանեցան. այս խղճալին բարերարի մը ձեռքով ա-

զաւեցաւ , և իւր հօրը ողջ կամ ոչ լինելը իմանալու համար
տասներկու տարին որ կըթափառի . սակայն չ'կարողանալով իւր
հայրը գտնել և տեսնել . այս դժբաղդ արկածին մէջ իւր կեանք
կորսնցոյց . հայրն ալ իւր հայրենիք դառնալէն վերջ , երբ լսեց
թէ իւր մէկ որդին միայն ողջ մնացած է և իւր հայր փնտրելու
ելած է . քաղաքէ քաղաք , լեռնէ ի լեռ , անտառէ յանտառ
թափառելով իւր որդին կըփնտրէ :

Նոյն սրտիս մէջ զայրոյթ մը զգացի մեր ծերունւոյն մասին .
թէ անգութ է այս մարդը . և յայտնի կերպով հարցուցի իրեն
թէ . ինչու՞ նաւը մեկնելէն առաջ չ'իմացուցիր իրեն իւր հօր
բժշկուիլը և իւր հայրենիք վերադառնալը . որպէսզի այս ողոր-
մելին ալ ետ դառնալով , իւր հայրը գտնէր և մխիթարէր . և
ինքը այս դժբախտ մահուանէն զերծ կըմնար : Պատասխանեց
ծերունին « ես պաշտօն չունիմ Աստուծոյ իմաստութեան գանձէն
իրեն վերապահեալ գաղտնեաց խորերէն գաղտնիքներ հանել և
մահկանացու մարդիկներու յայտնել » .

Մ'ըսէր ես ինձ . եթէ ես տեղեակ լինէի այս գաղտնեաց .
անշուշտ պիտի ըսէի այն երիտասարդին այն ամեն բաները զորս
գիտէի . և զինք ծովեզերքէն ետ դարձնելու պիտի աշխատէի
որով այս աղէտալի մահուանէն զերծ պիտի մնար : Ողորմելի
վշտահար , եթէ լսես որդւոյդ կորուստը և ցաւալի դառն
տանջանքներով իւր մահկանացուն կնքելը , անշուշտ անցեալ
վէրքերդ պիտի նորոգուին , և յետ այսօրիկ անմխիթար պիտի
մնաս երկրագունդիս վրայ . սակայն Աստուծոյ կամաց խոնարհիլ
պէտք է , վասնզի այս տեսակ գիտուածները Աստուծոյ անիմա-
նալի գաղտնիքներն են , որոյ մեր խելք չ'հասնիր :

Այն աձեղագոչ ծովը երկար ժամանակ իւր զայրացման մէջ
մնալէն յետոյ իւր կատաղութենէն յոգնած իւր սրտի այլայլու-
թեան և խռովութեան մնացորդով կըտատանէր այն շղթայազերծ
հողմերը , որք քիչ մը առաջ մեր նաւը կործանել կուզէին ,
խայտա անհետանալով աներեւոյթ եղան :

Ըսի ես ինձ . պայծառ երկնից յարգը չեն ճանաչեր անոնք որ
կատաղի ալեաց խաղալիք ըրած չեն իրենց կեանքը . երբ ամէն
վտանգները անհետացան . նաւապետի աչաց մէջ սկսան ուրա-
խութեան նշոյլներ տեսնուիլ . սրտի ուրախութենէն արտասուաց

կաթիլները կըվազէին նորա աչքէն . ուրախութեան զըպայումը նորա երեսի վրայ լուսոյ պէս կըփայլէր ։

Մանր ալիքները սկսան սփռուիլ ծովու երեսը , որք արօրագիր դաշտի պէս ակօսներ կըձեւացունէին ծովու վրայ . յետ այսօրիկ աչք չէր յագենար նորա զուարթ և պայծառ երեսի վրայ նայելէ , հովերը խաղաղ լռած էին , և քաղցրասիւք զեփիւռները անգամ կարծես թէ իրենց շունչ բռնած էին . հովը չ'շնչելու համար ։

Նոյն միջոցին նաւապետը իւր վառվռուն աչքերը չորս կողմ կըյածէր մեր ծերունին տեսնելու . երբ զայն տեսաւ . անոր մերձենալով ըսաւ . բարեկամ կեանքս քեզ կըպարտիմ . մահ միայն պիտի կարողանայ իմ առ քեզ ունեցած երախտագիտութեան վախճան տալու . յետ այսօրիկ ինչ որ վայելեմ անոնց ամենքն ալ ձեր բարի խրատուց շնորհքն է . շնորհակալ եմ որ այս բարեբաղդ ժամուս հասանք ։ Նաւապետն կ'սքանչանար ծերունւոյն վեհ շարժմանց և համդարտ բնաւորութեան վրայ , թէև ծերունին բաժնուիլ չէր ուզեր . բայց այն գիշերուան կրած տառապանքներէն խիստ յոգնած կերևէր , որուն ըսաւ ծերունին ։ «Ընձամբ սրտով և միօք յոգնողներու համար առժամանակեայ հանգստութիւն կենաց ապահովութեան համար ամենահարկաւոր է . դուք հանգստանալու պէտք ունիք» ։ Նաւապետն երկրորդ նաւապետին հրաման ըրաւ , նաւը Բարեյուսոյ գլուխը գտնուող նաւահանգիստն տանելու , և տասնհինգ օր հոն մնալու նաւու վնասները դարմանելու համար . Յետոյ դէպ ի Ամերիկա ճանապարհ ելլելու համար ։ Նաւապետն հանգստանալու գնաց և նաւը նաւահանգիստ մտնելով խարիսխ նետեց ։

## ԳԻՐՔ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ափրիկէի ճամբորդութիւն մը · Ափրիկէ · Եգիպտոս · Եթովպիա և արևելեան երկիրներու տեսակէն նկարագրութիւն · Բնութեան տեսարանը · Մարդկանց վարք և բարք ու կենցաղավարութիւն, նոցա յատուկ ընթացք և անաշխատ կեանք, նոցա կէնք ։

Երբ մենք նաւէն դուրս ելանք, ըսաւ ինձ ծերունին. մենք ևս երթամք պտոյտ մը ընելու, տեղեկանալու այն երկրի դիրքը կլիման և օդը, մարդիկը և նոցա բնաւորութիւնն, գործերն, արհեստ և գիտութիւնն.

Ժամանակը թէև Ասիոյ համար աշուն, բայց Ափրիկէի համար նոր գարուն էր, այն երկիրը չէր նմանէր այն երկիրներուն, որք դառնաշունչ հովերէն ձիւնէն և կարկուտէն կրտատային, ծերունին գիս այնպիսի մի բարձր լեռ մը գլուխ տարաւ, ուրկէ համայն Ափրիկէ մեր աչքի առաջ կը տեսնուէր իւր լեռներով, ծովերով և ցամաքներով, ու բոլոր բնութեան սիրուն տեսարաններով.

Ափրիկէի՝ ժողովուրդն օդոյն և կլիմայի ներգործութենէն ազդեալ սև դէմք մը կրէր. սակայն ի տեղիս տեղիս այն սև դէմքերու տակ ծածկուած ազնիւ սրտեր և լաւ յատկութիւններ ու ձիրքեր կը տեսնուէին. երկիրներ կային, որոց մէջ բարեկեցութիւն, քաղաքակրթութիւն, վարուց բարուց անարատութիւն, խղճի հանդարտութիւն, ժողովրդեան ժրաջան աշխատութիւն, մարդասիրութիւն, օգնութիւն, կարեկցութիւն, վաճառականութեան յառաջադիմութիւն, արհեստ և գիտութիւն խիստ յառաջադիմութեան մէջ էին.

Երկիրներ ալ կային, որոց մէջ վայրենի և անաշխատ թափառիկ կեանք, որսորդութիւն. աւազակութիւն, գերեվաճառութիւն, անգթական և տարօրինակ գործեր, անասնական վարմունք կային ։

Օդը ի տեղիս տեղիս բարեխառն էր և գեղեցիկ. երկրի մէկ քանի մասերը արգաւանդ էին և բարեբեր.

Ափրիկէ այն գօտող կղզին է, որ Նեղոսի և ուրիշ մի քանի գետերու շնորհիւ իւր բեղմնաւոր բարիքներովն աշխարհի նախանձելի օրինակ մը կընծայէ. սոյն երկիր թէև Ասիայէն փոքր՝ բայց Եւրոպայէն շատ մեծ է. զարդարուած է իւր շուրջ պատող չորս ծովերով. իւրեք նեղուցներով. և իւր թեւերու տակն առած տասնեօթն կղզիներով նա իւր ծոցի մէջ կըպահէ քան հինգէն աւելի գետեր, որք սահելով գնալով դաշտերը կ'ոռոգէին, պարտէզները կըզուարթացնէին, և զանազան բարիքներով երկիրը կըլիացնէին. այն ծովերը և նեղուցները վաճառականութեան դիւրութիւն տալով երկրի բարութիւնները կառատացնէին: Ափրիկէ իւր տասնեօթն հրուանդանները ծովերու մէջ երկարացուցած անոնցմով Ովկիանոսի ալեկոծութիւնները կըփշրէր. նա իւր ծոցի մէջ պարունակուած տասներկու լիճերով բնութեան տեսարանը կըվսեմացնէր:

Սոյն երկիր իւր ծոց կըպահէր և կըներկայէր աշխարհակալութեան մնացորդ Քամայ որդիները և վերջի եկամուտ հիւրերը և զանոնք իբրև սիրելի և հարազատ որդի և ժառանգ կըխնամէր և կըսնուցանէր.

Երկիրը իւր անձրևային և չորային եղանակներն ունէր. աւելի դաշտային էր քան թէ լեռնային. սակայն մեծ մասը անբերրի և անապատ էր. այս երկիրը իւր ծոցէն այնպիսի գետեր կըբղխեցունէր, որոց ալիքները խառնէին ընդ թանկագին ոսկւոյ.

Եգիպտոս իբրև բարութեան աղբիւր և շտեմարան բարձր ի գլուխ կըպարծէր Ափրիկէի հիւսիսային եզերքը. Նշանաւոր էր Սուէզի պարանոցի ջրանցքն, որ Ափրիկէ թերակղզի լինելէ դադրեցուցած՝ զայն մեծամարմին կղզւոյ վերածած էր. Նեղոս գետ իւր առատաձեռնութեամբ շատերուն սիրելի միանգամայն նախանձելի էր. սոյն բարելի հովիտ իբրև պարտէզ ունէր իւր երկու կողմը լիբէական և արաբական լերանց շղթաները. որք կ'արգելէին զայն այն ամուլ անապատներէն, և իրենք միշտ իբրև անջրդի կըմնային անոնց մէջ տեղը: Եգիպտոսի փառքը բարձրացուցող բաւական՝ և բարերար Նեղոս գետը հանդարտութեամբ և միանգամայն ի սրտէ զօրող հպարտութեամբ Եթովպիոյ ոսկւոյ հարստութեամբ հպարտացեալ լեռներէն իջնելով և իւր ձախաձեռն գնացիւքն ճիւղերու բաժնելով կուգար իր շուրջը

գտնուած հովիտները թրջելու և ոռոգելու ։ Այս բնութեան պատճէնի տեսարան կազմող դաշտն , այգիներն և պարտէզները ՚նախախնամութենէն հրաշանգուած գետոյն շնորհիւ իբրև բաղմածնունդ մայր՝ առատապէս կը շնորհէին իրենց արդասիք աշխատասէր ձեռքերուն ։ Վերջապէս այն նուիրական գետը իր պարգևը կատարելէն յետոյ կանցնէր կերթար Միջերկրական ծովը թափելու ։

Եգիպտոսի դրացի Լիբիան խիստ զզալի կերպով կը տարբերէր Եգիպտոսէն իր մրրիկներով և խորշակներով․ այն երկրի հարստութիւնն կազմող մանր աւազները մրրիկներու կամակատար ծառաները դարձած էին և միշտ նոյն ձևով խաղալիք․ վասնզի մրրիկները որ կողմ որ ուզէին կը հալածէին այն աւազները ․ մերթ զանոնք վարելով դաշտերու վրայ կը սփռէին , և նոյն գետեզրին երեսը ծածկելով ամլութեան վիճակի մէջ կը դնէին ․ մերթ հաւաքելով ժողվելով կը տանէին իրենց ուզած տեղը և բլուրներ կը ձևացունէին ։ Եգիպտոս իր անձրևներու մեծ մասը Եթովպիոյ բարձրագլուխ լերանց փոխ կառնար , այն պայմանաւ՝ որ իրաւունք ունենայ իբր տոկոս վրայ առնուլ այն բարեբեր տիղմը , զորս ՚նեղոս իր հետը բերելով դաշտերու վրայ կը տարածէր , որոյ շնորհիւ Եգիպտոս տարուան շրջանի մէջ երկու անգամ կը սերմանէր և երկու անգամ առատապէս կը հնձէր և կը ժողվէր իր պէտքերը հոգալէն վերջ յաւելուածները կուտար այն երկիրներուն , որք պէտք ունէին գնելու ։

Յուլիսէն մինչև հոկտեմբեր , որ Եգիպտոսի համար ձմեռ կը համարուէր , այն բարելի հովիտը դաշտ լինելէ դադրած՝ լիճի մը կերպարանք կ՚զգենուր ․ զի ՚նեղոս մինչև տասն կանգուն բարձրանալով այն դաշտերը լիճի կը փոխէր , և իր հետ բերած տիղմերով այն դաշտերու կարողութիւնը կը զօրացունէր , գիւղերը և քաղաքները այն առժամանակեայ լճակին մէջ մէկ մէկ փոքր կղզիներ ձևանալով հաճելի տեսարան մը կը ներկայացունէին հեռաբլուրքէն աչաց ։ ՚նեղոսի եզերք շարուած ուռէնիները իրենց գլխակոր ճիւղերով հովանիներ կը կազմէին , և աշխատութենէն հոգնած երկրագործները , նոյն շուքերու տակը նստած հանգիստ կառնէին ․ բնութենէն զարդարուած ծաղկախիտ անտառներու մէջ յօրինուած գեղջկական տնակները իրենց պար-

զուլթեան տակ խիստ զուարճալի և ախորժելի երևոյթներ ունէին և ախտը սրտերուն զմայլումն կուտային . աչք չէր յագենար այն գեղեցիկ տեսարաններու վրայ զմայլմամբ նայելէ : Արեւու սաստիկ տաքութիւնն կարող չէր այն խիտ ծառերու մէջ մուտք գտնել և հանգստեաններու զովութիւնը խափանել . բնութիւն ինքնին որթերու բարունակները պատիճներու հետ հիւսելով կամարներ յօրինած էր , որոց կանաչագեղ տերևներու մէջէն գովարար հովեր կըփչէին հոն գտնուողներուն հեշտալի զովութիւններ տալու և անոնց հաճոյքներ գոհացունելու :

Յորդահոս աղբիւրները գոյնզգոյն բնական ծաղիկներով զարդարուած դաշտերու վրայէն սահելով կերթային բարեբեր Նեղոսի մէջ թափուելու և անհետ լինելու : Գարուն և աշուն իրենց բարիքները աննախանձաբար կըսփռէին այն երկրի վրայ և միշտ զայն լիութեան և առատութեան մէջ կըպահէին :

Երկրի հրապարակական վայրերը զարդարուած էին կարկաջահոս աղբիւրներով և սքանչելի ու հրաշալի կոթողներով . հասարակ շէնքերը կառուցուած էին սորդ ճարտարապետութեամբ կոճեայ սիւներու վրայ . պաշտօնատանց հոյակապ պալատներն տեսնողներու աչք կըշլացունէին . խիստ հրաշալի կոթողներ և բուրգեր կըտեսնուէին սոյն երկրի մէջ . որ հնութեան և նախնի փառաց իբրև վկայ և արձանագիր յայտ յանդիման կերևէր ամենու աչաց :

Անհամեմատ էր սոյն երկրի նաւահանգիստն իր ընդարձակութեամբ և ապահովութեամբ . սա իր ծոցի մէջ կըպահէր և կըպատսպարէր իր և օտարականաց նաւերը . հոն կըդիմէին հեռաւոր և մերձաւոր ազգաց վաճառականութեան նաւերը : Ոմանք օտարին բարիքները բերելով սոյն երկրին կըմատուցանէին և ոմանք երկրին բարիքները դուրս հանելով ուրիշ երկիրներու պէտքերը կըհոգային : Ճոխ էր Եգիպտոս և երջանիկ իր հարստութեամբ , հնութիւններով , թանգարաններով , վաճառականութեամբ և բարեբեր պտղաբերութեամբ և արհեստներով . Ժողովուրդն պարզ էր և աշխատասէր , բարեկրթութիւն և քաղաքակրթութիւն , ուսմունք և գիտութիւն համեմատութեամբ Ափրիկէի և ուրիշ երկիրներու ժողովրդեան՝ բաւական յառաջացեալ էին :

Եթովպիա ՝ որ Ափրիկէի մէջ բարձր տեղ մը բռնած կը կարծուէր , չունէր այն հանճար և գիտութիւն և յառաջադիմութիւն՝ զոր ունէր և կը վայելէր Եգիպտոս ։ Այն երկրի ժողովուրդն մեծ մասամբ աղէտ էր և վայրենի ․ սոյն կեանք զեղխ էր և աղօրէն ․ այս երկրի ժողովրդեան գործելու եղանակը անեղանակ էր ․ զի աւելի կը գործէին բնազդմամբ և զիջուածով քան թէ հանճարով և խորհրդով ․ խիստ զայրացկոտ էին և վրէժխնդիր ․ սակայն այն բազմահարուստ երկրի մէջ անհարուստ էին և աղքատիկ ․ սոքա իրենց մերկութիւն կատուէ սփածանելով մը կը ծածկէին ․ հում միս ուտելը շատերու համար բնական սովորութիւն եղած էր ․ աղը խիստ շատ կը սիրէին և ոչխարի պէս կը լիզէին ․ իրենց բարեկամաց աղ նուիրելը մեծարանաց մէկ մեծ նշանը կը համարուէր ․ վայրենի ցեղեր կային ․ որք մարդու միս կուտէին ․ Թափառիկ խումբեր կային ․ որք որսորդութեամբ միայն կապրէին ․ ոմանք ալ աւազակութեամբ կապրէին ․ խիստ խառնաշփոթ և տարօրինակ սովորութիւններ ունէին ։ Եթովպիոյ գիշերն և ցորեկ միշտ հաւասար էր ․ ձմեռը Ապրիլէն կ'սկսի և կ'երթայ Սեպտեմբեր ամսոյն կը հասնի և կը վերջանայ ։ Միայն անձրև կը տեղայ այս երկրի վրայ առանց ձիւնի ․ բայց խիստ շատ փոթորիկներ տեղի կունենան ․ սոյն երկրի լեռները իրենց ծոցի մէջ հարուստ ոսկւոյ հանքեր կը պահեն և երբեմն արևու տաքութիւնը սաստիկ ներգործելով կը հալեցունէ ․ և ոսկւոյ փշրանքները անձրևներու հեղեղներու հոսանքէն մղուելով կուգային Նեղոսի աւազներու հետ կը խառնուէին ․

Այն երկրի մէջ տեսակ մը խոշոր մրջիւն կար ․ որ խայթելով մարդ կը մեռցունէր ․

Հօթէնթոյի ժողովուրդն վայրենի և թափառիկ կեանք կը վարէր քան թէ չէն և բնակութիւն ․ նա իր շարժական և տասանգական կենաց մէջ աւազակութեամբ ապրելը իրեն համար շահաւոր արհեստ մը համարած էր ․ այս ժողովուրդ վազելու մէջ շատ արագընթաց էր ․ իր թշնամւոյն վէրք մահացուցիչ ընելու համար իրենց նետերու ծայրը կը թունաւորէին ։

Գինկալի ժողովուրդն ոսկեղէն զարու փոխարինական օրինօք կը վարուէր ․ առանց դրամ գործածելու սովորութիւն չունէին ։

Գուինէիոյ ժողովուրդն իւր կռապաշտութեան հետ ունէր նաև իւր խղճմտանքէն թելադրեալ երկիւղածութիւն ։ Այս երկիրը արգաւանդ էր և բարեբեր , սակայն սաստիկ տաքութիւն ունէր ․ այս երկրի մեծ խմբերն անգամ թունաւորելով մարդ կըմեռցունէին, տեսակ մը որդ կար որ ամէն բան կըկրծէր և կապականէր ։ Նիկրիտիոյ ժողովրդեան ամուսնական եղանակը տարօրինակ էր ․ վասնզի իրենց նախնական սովոր օրը ու որ կըհամախմբուէին այր և կանայք , ամէն երիտասարդ ազատ էր ուզած աղջիկն առնուլ և ընդ նմա ամուսնանալ ․ տեսակ մը կրթեալ կապիկներ կըսնուցանէին այն երկրի մէջ , որք մարդկանց պէս թէ երկոտանց վրայ կըշրջէին և թէ տուներու մէջ մանաւոր ծառայութիւններ կընէին ․ զորօրինակ՝ հորերէն ջուր քաշել , ցորեն մաղել , միս խորովել եայլն ։ Նոյն ժողովուրդ օդերու գէշութենէն հարկադրեալ ջուրի մէջ աղ խառնելով կըխմէր ։ Սահառա բոտած աւազոտ անապատի ժողովուրդն մեծ մասամբ աւազներու մէջ կըբնակէին ․ ժողովուրդներ կային որք թռչնոց պէս մարդ կ'որսային և կուտէին ։ Խիստ ծոյլ և անգործ ու ագահ զգացումներէ զուրկ մարդիկ կըգտնուէին Ափրիկէի մէջ ի տեղիս տեղիս ․ ասոնք իրենց ծոյլ ընթացքով խիստ շատ չարիքներ առաջ կըբերէին ․ ինչպէս ստախօսութիւն , գողութիւն , խաբէութիւն եայլն ։ Նոքա աղքատներն և օտարականները կըմերժէին ․ առաքինիները կարհամարհէին , դաւաճանները խօսքով կըխաբէին և իրենց սրտէն ելած թոյնով կըմահացունէին ․ կեղծ ծիծաղով երեսէն կըպատուէին , բայց գործնական չարահնար մեքենաներով զմարդիկ յանդէտս անելանելի անդունդներու մէջ կըգլորէին ․ աղքատաց և թշուառաց վրայ սաստիկ ճնշումներ կըբանեցունէին և զանոնք չքաւորութեան կըմատնէին ․ այդ անձանց միտք չարութիւն կըխորհէր սիրտն խռովութիւն կըսերմանէր , լեզուն նենգութեամբ կըթարգմանէր , բերանը ստութեամբ լի էր , յանկարծ բարկանալ և շուտով գիջանիլ ․ փոփոխամիտ լինիլ , շուտով մոռանալ , այս տեսակ պակասութիւններ որչափ որ փոքր տղայոց մտաւոր անկատարելութեան մէկ պակասութիւնք են՝ այս թափառիկ ցեղերու մեծ մասն ի գործ կըդնէր ։ Ասոնց մէջ առանց ամօթոյ և առանց առաքինութեան ապրող մարդիկ կային , տղայք առանց ուսման և առանց գիտութեան ու

կրթութեան կրածնային. Սոյն տձև և անշուք տուներէն ուտեղի դարշահոտութիւն կըբուրէր. բնակութիւնք ծուխերով կըլեցուէին, և անձրևներէ կապտկանէին. Երկիր մշակել, այգի տնկել չէին գիտէր. եղն և ոչխար, հաւ և մեղու պահել չէին գիտեր. եթէ իրենց դրացիներէն յափշտակէին՝ անմիջապէս կուտէին առանց եփելու.

Սոյն անխորժելի և անախորժ երկրի մէջ մեր փոքր շրջան կատարելէն վերջ՝ ես խիստ կըփափաքէի շուտով վերադառնալ մեր նուաճողխոտ. բայց մեր ծերունին այս թշուառ ժողովրդեան վրայ արգահատելով կ'ըսէր. կրանեմ թէ այս ժողովուրդ իւր անգործութեամբ մինչև հիմա ասոր թշուառացած է. մարդկանց համար գործէ դադրելու չափ վտանգաւոր բան չ'կայ. զի ուբիշները ցամաքած ժամանակը ծառուներու թիւը կաւելնայ. ասկէ ի զատ մարդիկ ուրիշ մեծ ծառա մը ես ունին այն է խաղաղութիւն, հանգստութիւն և իրաւանց ապահովութիւն. զորս այս ողորմելիները չունին. ատոնց մէջէն ոմանք յանդէտ մեծ բանի մը կըփափաքին որ ամէն բանէն փոքր է, այն է փառամոլութիւն. ատոնք իրենց նպատակին հասնելու համար կըզարնեն կըվախցունեն, կաղաչեն կըկաշառեն, կըհալածեն և կըմահացունեն, կըխաբեն կը յուսահատցնեն և շահամոլները ես ատոնց կօգնեն. բայց խաւարի մէջ շինուած ամէն շէնք լուսոյ ճառագայթներէն կըկործանին, խաւարի մէջ բզզումները շշուկները և աղմուկները իրարու յաջորդելով լուսոյ մէջ գտնուողներուն սրտայուզութիւն կըպատճառեն։

Տեսակ մը կնճռալից խնդիրներ կան, որոց լուծումը ապագային պահուած է. օր պիտի գայ որ այս հին շէնքերու մէջ նոր մարդիկ պիտի բնակին զանոնք նորոգելով. նոքա իրաւանց սահմանէն դուրս ելած ամէն բանը ջնջումի պիտի համարին. երկայնամիտները հաստատուն հաւատքով կըյուսան թէ լոյսը խաւարային գործերը անհետացնելու մեծ զօրութիւն ունի. և մարդիկ կեղծիքէն դէպի ուղղութիւն կ'առաջնորդէ, կրից և տգիտութեան դղրդումը յառաջադիմական ընթացքէն շատ տարբեր բան է. առաջ երթալու, մեծ և հարուստ լինելու համար աշխատիլ հարկ մի է. իսկ կրիւք և տգիտութեամբ յուզուիլը ոճիր մի է. զի մեծ վնասներ կան պահուած կրից և տգիտու-

թեան ներքևը . ծաղիկներու մէջ ամենէն վեհապանծն շուշանն է իր անուշահոտութեամբ . մարդկանց մէջ ամենէն գովելին աշխատասէրն է . զի աշխատասիրութիւն՝ յառաջադիմութիւն և ժողովրդեան մշտակայ կեանք կապահովէ . Սոյն երկրի մէջ խօսող բերան շատ կայ , բայց խորհող միտք խիստ սակաւ է . անոր համար աշէտները անպակաս են . ասոնց անպէտ հետաքրքրութիւնները իրենց համար տեսակ մը որովայնամոլութիւն եղած է . կը քննեն այն բանը՝ որ բնաւ իրենց հետ վերաբերութիւն չունի . ասոնց բաղդը խիստ գլխաբեկ թելերէ կախուած է . ծուլութիւնը ասոնց համար մայր մը եղած է , որ կը ծնանի անօթութիւն . և անօթութիւնն ալ կը ծնանի կամ մահ կամ գողութիւն . Ասոնց մեծերը կուզեն մնած իրենց մշտնջենաւորութիւն տալ , աւելորդապաշտութիւնները ոսկեզօծելով կանգուն պահել , խախուտ տուները կաւէ ծեփերով հաստատ պահել . սակայն չեն գիտեր թէ այս տեսակ ձեռնարկները զարմանք պատճառող երազներ են . սպիտակ կաւիճով սեւ երինջ ձերմակցունելու խաբէական ձեռնարկութիւնն դաւաթ մը ջրով կը խայտառակուի .

Ասոնց ոտքերու տակ խաւարով լի նկուղներ կան , շատերը զայն չ'տեսնելով հոն կը գլորին և անհետ կը լինին . պէտք է որ այս ողորմելիները սպասեն մինչև այն օրը , յորում գայ գիտութեան լոյսն և ուղղութեան խաւարը փարատէ . և ասոնք խաւարէն հանելով ճշմարիտ լուսոյ մէջ դնէ և ընկերական աշխարհին պիտանի և պատուաւոր անդամներ ընէ ։

## ԳԻՐՔ ՀՆԳԵՏԱՍՄՆԵՐՈՐԴ

Ուղեւորներու դէպ Նաւը տանիլը. Գիշերը ադարտանորտանը. Ուրիշ ընկեր մը. Գիշերուան ճանապարհորդութիւն. Աղբիւրէ բանակէն. Զարթուն. Ճերմակ խոտերը կերւորեն կառավարութեան հարստութիւը. Բանտարկութիւն. Կրկին ճերմանայն յորդորները.

*Նաւը ելլելու ժամանակը կը մօտենար. մեր ուղեւորութիւն ըսկսանք դէպ ի Նաւահանգիստ. երբ երեկոյ վրայ հասաւ, փոքր քաղաքի մը մէջ պատսպարուելու տեղ մը չգտնելով, հարկադրեալ փողոցի մը անկիւնը մեզ պատսպարան ընտրեցինք. մարդասիրութեան զգացումը անծանօթ էր այս մարդկանց համար. վասնզի բնաւ առաջնորդութիւն չտեսանք ասոնցմէ. կէս գիշեր էր յանկարծակի սպիտակահեր ծերունի մը, դժգոյն դէմօք և յամր քայլերով մեզ մօտեցաւ և զմեզ բարեւեց ու նաա շատ յոգնած մէկը կերեւէր և արևելեան լեզուաց հմուտ. նա կը յայտնէր թէ ինքը բնիկ Ասիացի է և Ամերիկա գնալու մտադրութիւն ունի. ըսի ես մեր ծերունոյն. բարի և լեզուագէտ ընկեր մը կուտայ մեզ Աստուած և մինչև Ամերիկա ասոր ընկերակցութիւնը պիտի վայելեմք. մեր ծերունին այս մասին լռութիւն պահեց.*

*Կարճ տեսութենէ մը վերջ ուղեւորէ մը վերահասու եղանք թէ մինչև Նաւահանգիստ հասնելու տասնեւվեց ժամու չափ Ճանապարհ պիտի քալեմք և տասնեւվեց ժամէն յետոյ մեր Նաւ Ճանապարհ պիտի ելլէ Ամերիկա գնալու։*

*Ըսի իմ ընկերիս. ժամանակն անդին է չկորսնցունիմք և Ճանապարհ ելանք. նոյն քաղաքէն երկու ժամ հեռացանք և տակաւին գիշեր էր. յանկարծակի խումբ մը սևազգեստ մարդիկ զմեզ պաշարեցին, խուլ անզգայ մնացին մեր Թախանձանքներուն և աղաչանաց դէմ. զորս կաղաչէինք մեզ թոյլտուութիւն ընեն մեր Ճանապարհ շարունակելու. նոքա զմեզ բռնի և ան-*

գթական դանակոծութեամբ ուղիղ Ճանապարհէն խոտորեցունելով դէպի լեռը կըտանէին . երբ արշալոյս տիեզերաց վրայ լոյս կըսփռէր ափրիկեցի սևադէմ մարդիկն մեր վրայ խաւար սփռեցին . վասնզի զմեզ նոյն լերան խաւար խոռոչներու մէջ կաշկանդեալ փակեցին . կուզէինք նոցա կամք հասկնալ թէ ինչու զմեզ այս չարեաց և տառապանաց կենթարկեն . նոքա զմեզ հարուստ վաճառականներ կարծելով մեր ունեցածները առնել կուզէին . երբ զմեզ շօշափելով մեր վրան բան մը չգտան և իրենց յոյս պարապ ելաւ , կ'ըսէին մեզ , փրկանք տուէք որ զձեզ ազատեմք . բայց անոնց մեր ծերունին չունեցողը ինչ կրնայ տալ .

Եւ այս պատասխան՝ նոքա զայրանալով զմեզ չարաչար կըխոշտանգէին . և յետոյ զմեզ այրէն դուրս հանելով , արեգական տաքութեան տակ մերկացունելով և ի ցից կապելով , մեղրով մեր մարմինը կօծանէին . և մուծակներուն ու բզեզներուն խայթել կուտային . կըբռնադատէին զմեզ յայտնել թէ մեր հարստութիւն ո՞ւր պահած եմք . սակայն մենք չեղած բանի վրայ ինչ կրնայինք խօսել բայց ի լռութենէն . այլևայլ խորհուրդներ կընէին . նեղեմք որ իրենց հարստութիւն ուր պահած լինելնին մեզ ցոյց տան . ոմանք կըսէին . ասոնք աղքատ մարդիկ են թող տամք . ուրիշ մը կ'ըսէր . եթէ թող տամք կերթան զմեզ կառավարութեան կըմատնեն . միւսը կ'ըսէր . ասոնք մորթեմք և խորովեմք ուտեմք . ուրիշները կըսէին . ասոնք վաճառականներ են , թող հոս մնան ընդ հսկողութեամբ . մենք քանի մի հոգի երթամք ասոնց կարաւանը զննելու և գտնելու . ոմանք կըսէին . ասոնք լրտեսներ են . տանիմք մեր ձեռքով կառավարութեան յանձնեմք . Պէտք չէ ուրանալ , գթացողներ ալ կային , որք կըսէին . թոյլտուութիւն ընեմք թող երթան . զի ասոնք անվնաս և աղքատ մարդիկ են . Մենք այս անհամաձայն կարծիքներու մէջ երեք օր չարաչար տանջուեցանք անօթի և ծարաւ հարուածանաց և նախատանաց տակ .

Մեր ծերունին , որ բնաւ սրտմտել չէր գիտեր , այս պարագայիս մէջ յուզուելով կ'ըսէր . այս անզգամները իսպառ զուրկ են օտարասիրութեան և մարդասիրութեան զգացումներէ . ասոնց կրից սատանիկ եռանդը իրենց սրտի մէջէն քաշած տարած է գըթութեան և կարեկցութեան զգացումը . ասոնց միտք կոյր է ,

ատոնք անսիրտ են , սիրտ չունեցողը կարելի չէ որ զգայ թէ ինչ է գթութիւն ու մարդասիրութիւն . ուրեմն իմ ընկերակից-ներս . մեր ամենէն մեծ յաղթութիւն մեր անձի վրայ իշխել և համբերելն է . այն ազատութենէ , զոր կարող չեմք որ և է ե-ղանակաւ ձեռք բերել , հրաժարիլ պէտք է . ատոնք իրենց գոր-ծոյ վախճանը չեն մտածեր . վախճանը չմտածողը դէպի կո-րուստ կերթայ քան թէ ի նպատակն . ստոյգ է որ վերահաս վտանգներէն փախչիլ պէտք է , բայց յանկարծակի անոնցմէ բըռ-նուողներուն համար լռել և համբերել պէտք է ։

Ողորմելի աւազակներ , այն Աստուած՝ որ մարդկանց աչք տուաւ , միթէ ինք չտեսնե՞ր ձեր գործերը . այն որ սիրտ տուաւ միթէ զգալու չափ սիրտ չունի՞ . այն որ զօրութիւն տուաւ , մի-թէ կարողութիւն չունի՞ զձեզ պատժելու ձեր ապօրինի արարք-ներու համար . հաւատացէ՛ք թէ՝ ուր որ երթաք՝ միշտ Աստուծոյ գաւազանի տակն էք . բնաւ մի հաւատայք թէ ձեր պաշտած անշունչ և անհոգի , անզգայ կուռքերէն այցելութիւն պիտի գտնէք . ձեր կուռքերը աչք ունին չեն տեսներ , ձեռք ունին չեն շօշափեր , ոտք ունին չեն քալեր . բերան և լեզու ունին ոչ կուտեն և ոչ կըխօսին , ականջ ունին չեն լսեր . ուրեմն թողէք անոնք և հաւատացէք տիեզերաց Արարչին , որու ձեռքն է մահ և կեանք և նորա կամքն է՝ չարերէն հրաժարիլ և բարեաց ետևէն գնալ ։

Ասկէ վերջ խօսքը մեզ ուղղելով կ'ըսէր . այս մոլի աւազակ-ները իժի պէս իրենց ականջները կըխցեն , որպէսզի խրատ-ութեան փրկաւէտ ձայնը չ'լսեն . նոքա կրակներու մէջ հալող մոմերու պէս պիտի հալին ու սպառին և ոչնչանան . ատոնց կեանք երազներու պէս պիտի գայ անցնի երթայ . ատոնք այն գժնիկ փուշերուն կընմանին , որք փոքր կայծէ մը բռնկելով կայրին և կ'ոչնչանան , և ծուխերու պէս անհետ պիտի լինին . հողմերը նոցա փոշիները վերցունելով պիտի տանին ովկիանոս-ներու մէջ խորասուզեն . անոնք որ սուտութեամբ կըցանեն , նոցա հողմ կըհնձեն , անոնք որ բարւոյն դէմ չար կըփոխա-նակեն , չարութիւն նոցա գլխէն չպիտի պակսի . ուրիշներու խորխորատ փորողները շատ անգամ իրենք կիյնան նոյն խորխո-րատի մէջ , այն ցաւերը՝ զորս ուրիշներուն համար կըպատրաս-

տեն՝ նոյա գլխոյն վրայ կը դառնայ և զիրենք անբժշկելի կերպով կը հիւանդացունէ . անոնք իրենց կոկորդները գերեզմաններու պէս բացած են . և իրենց լեզուները նենգաւոր խօսքեր կը խօսին . անոնց շրթունքներու տակը իժի թոյն կայ պահուած ուրիշները թունաւորելու համար . անոնք են որք յանդգնեցան ըսելու թէ Աստուած չ'կայ . դորա պէտք է որ համոզուին թէ՝ եթէ երկինք ելլեն՝ Աստուած հոն է , եթէ դժոխք իջնեն , դարձեալ հոն է , եթէ արծուոյ թեւեր առնելով օդի մէջ սաւառնեն , հոն աւելի մօտ է . զի նորա զօրութիւն բովանդակ տիեզերաց մէջն է . և բովանդակ տիեզերք նորա զօրութեան մէջն է . մարդիկ կարող չեն իրենց մեղքերը Աստուծոյ ամենատես աչքէն ծածկել . զի նա սրտագէտ և գաղտնագէտ է . Ան խորքերը . ծածուկ յատակները կը քննէ . մարդկանց սրտի և հոգւոյն մէջ եղածները բացորոշապէս կը տեսնէ . նա մարդկանց տակաւին չ'գործած գործերը իր նախատես և կանխատես աչօք կը տեսնէ և իր տոմարի մէջ անջնջելի կերպով կը դրոշմէ . ամէնքը նորա հրամանի պտուղներն են . զի նա ասաց և եղեն , հրամայեաց և հաստատեցան . չարութիւն արծարծողները չարութեան մոխրոյն տակը կը թաղուին . մոլիներու հետ կենակցութիւն ունեցողները նոյա փոխադրական հիւանդութեամբ կը հիւանդանան . ինչպէս որ ցեցը զհանդերձ , և որդը զփայտ կապականեն , այսպէս և նախանձու թոյն նախանձ սրտի սիրտ կապականէ . փտու փայտի վրայ պատուաստ չի լինիր . խախուտ հիման վրայ շէնք չ'կառուցուիր , այսպէս և չարութեամբ ապականեալ սրտերու մէջ առաքինութեան տաճար չ'կազմուիր , չարասիրտներու յոյսը պըտուղ չ'բերող այրած հող է . նոյա սիրտը հողմակոծեալ մրրիկներու աման է . նոյա կեանք անարգ տեղմը է . գայլ գառի հետ բնակելոյն մէջ որչափ որ վնաս կայ , այնչափ ալ մոլին առաքինւոյն հետ բնակելոյն մէջ վնաս կայ , ով որ ձիւթը շօշափէ նա կ'ապականի . թունաւոր նետը որչափ կ'ազդէ մարդոյս մարմնոյն , ճշմարիտ խրատն ալ այնչափ դառն կ'ազդէ մոլութեամբ ախտացեալ սրտին , իմաստուն ծնողները իրենց զաւակաց գերեզմանի վրայ մէկ օր միայն կուլան , բայց նոյա մոլութեանց վրայ ամէն օր կուլան . յիմարներու հետ շատ խօսողներ անպատիւ կը լինին . տգէտներու հետ ճանապարհ գնացողները չափէն

տեսլի կը յօգնին . իմաստունները տգէտներու հետ խօսած ժամանակ բերնին պահապան և շրթունքներուն մեծ զգուշութիւն կըդնեն . կիրքերէն վիրաւորեալ միտք և ապականեալ սիրտ եթէ ճշմարտութեան ետևէն խոյ երթայ , սակայն կարող չէ նորա լոյսէն լուսաւորուիլ . նման այն ներքինիներուն , որք թէև կոյսերուն կըփարին , սակայն առանց հաճոյքի հառաչանքներով ետ կըդառնան . մոլիները աներկիւղ կըմեղանչեն և չեն զգար թէ մեղաց խոշակն մահ է . Աստուծոյ երկիւղը անմահութեան աղբիւր է . որ երկիւղածները զօրացունելով կենդանութեան մէջ կըպահէ . մարդկանց մեղաց բժիշկ հաւատքն է . իսկ նոցա սպեղանիք ողորմութիւնն է . հաւատք և ողորմութիւն չունեցողները ինչով կըբժշկուին . համբերողները մայրի ծառերու պէս կըբարձրանան . արմաւենիի և ձիթենիի պէս պտղատու կըլինին . վարդերու և անուշահոտ ծաղիկներու պէս անուշահոտութիւն կըբուրեն . ջուրերու եզերք տնկուած ծառերու պէս իրենց ճիւղերով և տերևներով շատերուն հովանի և պահապան կըլինին . նորա խաղաղութեամբ կապրին և շատերուն խաղաղութիւն կուտան . սոսնք կըհաւատան թէ օր մը պիտի գայ՝ յորում արդարոց փառքն պիտի տեսնայ ու ամբարիշտներու յոյս պիտի կորնչի , այն օրերու մէջ բան մը չկայ որ մարդկանց դատին պաշտպան պիտի կանգնի . զի Աստուծոյ գթութեան և ողորմութեան դռները պիտի գոցուին . միայն արդարութիւն և առաքինական բարեգործութիւն կրնան հոն բարձր ի գլուխ պարծիլ . այն աւուր մէջ ողորմածները իրենց կեանք կըփրկեն . իսկ անողորմները կըկորսնցունեն .

Այն աւուր դատաստանի մէջ մարդկանց գործոց վկան ինքն Աստուած է . և անոնց լեզուի ունկնդիրը ճշմարտութիւն պիտի լինի . ու վճռատու դատաւորը արդարութիւն պիտի լինի . հոն ամէն գործերը մերկապարանոց են . շնչիւն , քրթմնջիւն այլևս չեն ծածկուիր , դատարկաբանները պատիժ պիտի առնեն . ստախօսները իրենց անձը պիտի մահացունեն .

Օր պիտի գայ՝ յորում Աստուծոյ հրամանը՝ երկնից զարդերը աստեղաց փառքը , աշխարհին լոյս տուող արեգակը և լուսին պիտի նուաղեցունէ . հողմերու դռները պիտի բացուին . ձիւն և անձրև , որոտում , փայլակ , մրրիկ լեռները պիտի շարժեն , եր-

կիրը դողացունեն , լեռները պիտի հարթուին , երկրագունդն հաստատութեան դաշտի պիտի դառնայ . ահաւոր ձայն մը մարդկութեան ոսկերաց և մարմնոյ հրաման պիտի տայ որ գերեզմաններէն ելլելով վերանորոգուին և դատաստանի գան ։

Հոն ամէն գառն և քաղցր կը վերջանան . միայն մշտնջենաւորութեան երկու նոր Ճանապարհ պիտի բացուի , յաջմէ և յահեկէ . երկու բառ . այսինքն Եկայք և Երթայք . ահա այս երկու բառը բովանդակ մշտնջենաւորութեան վիճակը կ՚որոշէ . հեռատեանները այս աւուր կը հառաչեն . անոր համար ողբը կ՚ընթանան . իսկ կարձառեանները այն աւուր մէջ լեռներու այրերը և ծովերու յատակները պիտի փնտրեն իրենց զիրենք Տիրոջ աչքէն թագուն պահելու . բայց չպիտի յաջողին , զի Տիրոջ աչք ամենատես և ականջը ամենալսող է . և ինքը սրտագէտ և դատողադէտ է . այն օրերու մէջ Նոյա փառք պիտի խոնարհի և իրենց երեսի ամօթը զիրենք պիտի ծածկէ և պիտի ողբան իրենց մեղաց վրայ . բայց այցելութիւն չպիտի գտնեն ։

Երբ ծերունին իւր խօսքերը կը վերջացունէր , զմեզ կալանաւորները եկան մեր կապանքները քակեցին զմեզ իբրև կախաղանի լրտեսներ համարելով տարին անգղական կառավարութեան յանձնեցին ։

Նորա ես առանց զմեզ խօսեցունելու և քննելու ստորերկեայ բանտ մը դրկելով հոն մնացինք . հոն ալ զմեզ կ՚ընծայէին և մեր հոգեպահիկ հայն անգամ շատ խնայողութեամբ կու տային , և որ և է մէկը չէին թողուր որ մեզ մօտենայ ։ Այս բաներու վրայ ես խիստ կը զայրանայի , բայց մեր ծերունին զիս կը յանդիմանէր ըսելով . զայրոյթ չէ որ միշտ կը մեղադրէ այլ երկայնմտութիւնն է՝ որ զայն կը բաղցրացունէ և տանելի կ՚ընէ . վշտացուերէն հարուածեալ սիրտը վարդի հարուածը դարբնի կռանի հարուածէն աւելի կ՚զգայ . գիտնալու ենք թէ՝ հալածանքներու դէմ տոկալու քաջութիւն չունեցողներու կեանքը անտանելի կ՚ըլլայ . այս նեղ պարագայիս մէջ համբերութիւն միայն կրնայ մեր կեանքը շահել . անոնք որ անվիշտ օրօրանի մէջ ծնած են՝ նորա չեն գիտեր թէ ապրելու երջանկութիւնն ի՞նչ է . յաղթելու համար երկու բան պէտք է , ժամանակ և լռութիւն, պէտք է գիտնայք թէ այս աշխարհի կեանք մարդկանց ակնկալութեան

մշտնջենաւոր աչէկոծութիւնն է . համբերողներն միայն կրնան իրենց հոգին անխոցելի պահել , և կը յաղթեն զիրենք հալածող բաղդին ։ Զ՚համբերողները անասնոց կատաղի բաղձանքներէն մղուելով , աւելի սաստկագոյն ցաւոց անդունդներու մէջ կը թաղուին . համոզուիլ պէտք է թէ այս աշխարհ իւր հիւրերու հիւանդանոցն է , որ անթիւ ցաւոց և տառապանաց տակ կը հեծէ շարունակ . ձախորդութիւն եւ ձեռնտու են բաղդին ըզմարդիկ թշուառացունելու և ցաւերու ամենէն դառն տեսակները անոնց ճաշակել տալու . անոնք որ գիտեն կրից վրայ իշխել՝ նոքա նաև կարող կը լինին ճակատագրի դէմ մաքառիլ և յաղթել ։

Թշուառութիւնները շատ անգամ մարդկանց աչք կը բանան նորանոր ճշմարտութիւններ տեսնելու . թշուառները իրենց կրածներէն կուսանին իրենց բախտակիցներուն կարեկից լինել . թշուառութիւններ կան որք թէև առժամանակեայ կերպով ըզմարդիկ կը նեղեն՝ բայց նոցա ապագայ փառաց նոր պայծառութիւն մը կուտան . զգուշանալու է կիրքերու չափազանցութենէն զի նոքա շատ անգամ ամենէն ուղիղ միտքերն անգամ կը խառ-րնցունեն . և զանոնք ծայր ու եզր չունեցող յոռի խորհուրդներու մէջ կը ձգեն . մեծ կը սխալին անոնք որք այս աշխարհիս մէջ հանգիստ կը փնտրեն . զի այս աշխարհ տրտմութեան հովիտ արտասուաց վայր , թշուառութեան տեսարան մի է ։ Բարեկամ՝ զայրանալը անձին վնասել է , երկայնամիտները սիրտը թէպէտ կը վիրաւորուի՝ բայց անբժշկելի չմնար . զի նոքա իրենց անձը մահացուցիչ հարուածներէն ազատ պահող բժիշկներն են . բարկացողները կընմանին իրենց սիւները կորսնցունող տուներուն , որք միշտ իրենց կործանումը իրենց ձեռքով կը հրաւիրեն . մարդկանց առաքինութեանց տեսակներու հիմունքն համբերութեան վրայ հաստատուած են . եթէ համբերութիւնն խախտի , առաքինութիւն վեր ի վայր կը տապալի . չ՚համբերողները կը նմանին չարարմատ ծառերուն . որք պտուղ տալէ դադրած լինելով՝ օգ մնալ կայծի հարուածոյն զոհ լինելով կ՚այրին ։

Բաղդ և ճակատագիր ոմանք զարդարեալ աթոռներու վրայ կը նստեցունեն և ոմանք մոխրոյն վրայ . սակայն Աստուծոյ քով աթոռ և մոխիր միևնոյն բանն է . զի չէ թէ գահ և մոխիրն է որ մարդկանց մէջ զանազանութիւն կը դնէ , այլ մոլութիւնն է

տարինութիւնն են որոց մին կըբարձրացունէ և միւսն կըխոնարհեցունէ . մին կըպատժէ միւսն կըպսակէ ։ Վշտաց դէմ տակալը բաղդի վրայ իշխել է . համբերել պէտք է հոն , ուր ոչ մարդկային ամէն հնարքները ու զօրութիւնները զկայ կառնուն . հոն անշուշտ աստուածային զօրութիւնն հզօրեղապէս կըներգործէ . դուք շատ մի խօսիք այդ անտանակենցաղ բանտապետի հետ , անոր անմարդավայել վարմունք թող ձեր արհամարհայութեան մէջ թաղուին և անհետանան . երբ նորա անզգամութեան՝ անզգամ պատասխաններ տայք , դուք ալ նորա պէս մէկը պիտի նկատուիք . լռութենէ մեծ պատասխան չկայ . եթէ այժմ մենք մեր հակառակորդներուն վրայ իշխելու անկարող եմք , բայց բացարձակապէս ազատ եմք մեր անձին և կրից վրայ իշխելու և Աստուծոյ այցելութեան սպասելու .

## ԳԻՐՔ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Բանտին մէջ կրած նեղութիւնները. Նոր ընկերոջ ծերունւոյն կրած տառապանքները. Զգուշութիւն. Նոր բանտարկութիւն և փախուստ. Թշնամական կեանք, իր կնոջ և տղայոց կորուստ. Հայրենիքէն զրկուիլը. Հառաչանքները և մահ. Ազատութիւն ի բանտէն։

*Երբ ծերունին վերը յիշուած խօսքերը կըխօսէր, մեր նոր ծերունի ընկերը ապշութեամբ նորա երես կընայէր և զմայլմամբ կըլսէր խօսքերը. բայց շարունակ արտասուաց կաթիլներ կըհոսէին նորա ծեր և կանաչ, բայց կենդանի և աշխոյժ աչքերէն։*

*Հետաքրքրութիւն մարդուս բնական է, երբ ծերունին իր խօսքերը ընդմիջեց, հարցուցի մեր արտասուող ընկերոջ թէ՝ ո՞վ էք. ո՞ւր տեղացի էք, և ի՞նչ պատճառի համար եկած այս երկիրն ինկած էք։ Նա ի խորոց սրտէ և կենսամաշ հառաչանքներով՝ անձրևի կաթիլներու պէս աչքէն արտասուքներ վազեցունելով սկսաւ պատմել.*

*Կ'ըսէր նա. Ասիոյ հիւսիսային կողմերէն մեծ վաճառականի մը զաւակ էի. այնպէս որ մեր վաճառատան մէջ յիսունէն աւելի ծառայ, գրագիր, գործակատար ունէինք. և շատ մը օտար երկիրներու մէջ մասնաճիւղեր ունէինք.*

*Ես տակաւին նոր իմ դպրոցական շրջանս լրացուցած, հօրս հետ վաճառականութիւն սկսայ մեր բնակած քաղաքի մէջ. օր մը յանկարծակի լուր առինք թէ՝ հայրս նախանձու դաւադրութեան մը զոհ լինելով աներևոյթ եղած է. պայմանաւ որ՝ այլ ևս իր հայրենեաց երես չ'տեսնէ. զգայուն սրտերը կարող են զգալ թէ՝ ի՛նչ մեծ սուգ եղաւ մեզ համար հօրս կորուստ. մանաւանդ հարստութեան մեծ մասի կորուստն. Մեր ազգականաց և բարեկամաց ու ամենասիրելի մօրս խնդրանաց և թախանձանաց վրայ քսան երկու տարուան հասակիս մէջ ամուսնացայ քիչ շատ ուսեալ օրիորդի մը հետ. ամուսնանալէս երկու տարի վերջ զաւակ մը ունեցայ. Նոյն օրերու մէջ օր մը արշալոյս*

ժամանակ անկողնէս ելլելով, պատրաստուեցայ եկեղեցի գնալու քրիստոնէական և կրօնական պարտականութիւններս կատարելու ։

Երբ տան դուռնէն դուրս ելլել կուզէի . կինս ինծի մօտենալով ըսաւ . Ես այս գիշեր ձեր վրայ չարագուշակ երազներ տեսած եմ, կըխնդրեմ եթէ հնար է՝ այսօր և այս ժամանակ դուրս մի՛ ելլէք ։ Կնոջս երազները նախապաշարում համարելով ժըպտեցայ և դուրս ելայ, տունէն շատ քիչ հեռացած էի . յանկարծակի գիշերապահ ոստիկանութեան մարդիկ վրաս հասնելով զիս բռնեցին . ըսելով թէ այս մարդը դուք սպանած էր, և ստուգապէս նոր սպանեալ մարդումը դիակ կար հոն, ուրկէ արինը կը վազէր . Ի զուր կուզէի ես զիս արդարացունել առաջ բերելով թէ, ոչ դանակ ոչ ատրճանակ և ոչ որ և է սուր կըգտանուի քովս . Նոքա զիս բռնադատելով կառավարութեան յանձնեցին . և առանց հարցաքննելու իբրև ոճրագործ և մարդասպան բանտ դրին զիս ։ Ո՜հ բանտ . ցեցի պէս մարդկանց կեանք ինչք և ստացուածք մէկէն կըկրծէ կապականէ, և կ'ոչնչացնէ ։ Երկար ժամանակ բանտ մնալէս վերջ զմեզ քննելու հրաւիրեցին . Նոյն հարցաքննութեան մէջ իմ բոլոր ճշմարիտ խօսքերս չ'զօրեցին իմ անմեղութիւնս պաշտպանել, և եօթն տարուան բանտարկութեան վճիռ ստանալով մահապարտներու բանտը դրուեցայ . Սոյն բանտարկութեանս մէջ հարստութեանս մէկ մասը ես փճացունելէս յետոյ ազատեցայ և կրկին վաճառականութիւն սկսայ . վեց ամիս վերջ Հնդկաստանէն բերել տուածս ապրանքները, որք գրեթէ ամբողջ հարստութիւնս էին, կորուսի այս երկրին մէջ որ է անգութ Բարեյուսոյ Գլուխը, ինծի համար չարայուսոյ գլուխ դարձաւ . վասնզի թէ նաւը և թէ ապրանքները, որք ամէնքն ևս ինծի կըպատկանէին . հոս ծովու յատակը թաղուեցան և զիս յետին չքաւորութեան և յուսահատութեան մէջ ձգեցին ։

Ամբողջ տուներս, խանութներս, շարժական և անշարժ կալուածներս, և ամէն կահ ու կարասիներս, և մինչև իսկ հանդերձեղէններս ծախելով մեր աւուր պարէնը կըհոգայինք . Նոյն օրերու մէջ կըփափագէի վաճառատան մը մէջ գրագրութեան պաշտօն վարել չ'յաջողեցայ . և մինչև իսկ բեռնակրութեան զիջումն ըրի . սակայն և ոչ մէկ գործիմը գլուխ անցնելու բարե-

բախտութեան կրցայ հասնիլ. վերջապէս ամէն ջանք և հնարքներ ի գերև ելան չորաբեկ հայ մը գտնելու. Պանդխտութեան դիմելու խորհուրդ մը յղացայ սրտիս մէջ. երբ դայն մօրս և ընտանեացս յայտնեցի. մայրս սաստիկ յուզուելով սրտի ցաւէն երեք օր վերջ իր մահկանացու կնքեց. դրամ չունէի որ թաղում ընել տայի. ուստի անձամբ գնացի նորա գերեզմանը փորեցի և դրացիներէն մէկը ինծի օգնութեան գալով մայրս թաղելու կրցանք. երախտապարտ կըճանաչեմ զիս այն բարի և կրօնասէր քահանային, որ ինքնահրաւէր եկաւ մօրս թաղման հոգևոր արարողութիւնները ձրի կատարեց։

Կինս չէր կամեր որ ես օտարութեան դիմեմ. այլ կ'առաջարկէր որ ինքը պարկեշտ և պատուաւոր ընտանիքի մը տանը սպասուհութեան պաշտօն ստանձնէ. այն ևս չ'յաջողեցաւ. երեք օր կինս և զաւակս անօթի մնացինք. ըսաւ ինծի զաւակս. հայր. «երեք օրէ որ հաց չ'կերանք. այս երեկոյ ես չ՞պիտի ուտեմք»։ Արթուն սիրտ ունեցող հայրերը միայն գիտեն այս բառի մինչև որ աստիճան խոր վէրք բանալը հօր մը սրտին. ես գիտեմ թէ նոյն պահուն ինչ զգացի, և թէ ի՜նչ այլանդակ խորհուրդներ անցան մտքէս.

Սիրտս չ'ծածկեցի կնոջմէս և ըսի թէ ամէն պատուաւոր միջոցները սպառած էն. երկու բան միայն կայ ինծի համար, կամ գողութիւն, և կամ անձնասպանութեամբ կենացս վախճան տալ. Կինս աղիողորմ ձայնով ձեռքերը տարածեց և աղաղակեց. Աստուած իմ, երկուքն ալ քու դէմդ ոճրագործութիւն է. արգիլէ քու հզօր ձեռքովդ, և իր խօսքերը ինծի ուղղելով ըսաւ, փողոցներու մէջ շրջող մուրացկաններ կան. միթէ նոքա ևս մեզ պէս մարդ չեն. ուրեմն մենք ևս մուրանք և մեր հոգեպահիկ հացը ճարեմք. մինչև որ Տէրոջ այցելութիւն մեզ հասնի գործելու գործ մը գտնեմք.

Զաւակս արդէն նուաղեալ թմրութեան մէջ ընկած քնացեր էր. կինս ևս յուսահատութեան մէջ քնացաւ. բայց ես սրտիս յուզումներու մէջ ընկղմած երկար ժամանակ ցնորքներու մէջ տատապելէն յետոյ ելայ՝ փողոցի դուռը բացի դուրս ելլելով ժամանակին մեզ հետ բարեկամութիւն ունեցող և քիչ շատ մեզմէ բարերարեալ հարուստ վաճառականի մը տունը գնացի,

այն նպատակաւ որ կամ գործ մը գտնեն ինծի աշխատելու . և կամ փոքր գումար մը մեզ իբրև ողորմութիւն տալու . նոքա թէև զիս չ՚մերժեցին . բայց խիստ շատ ցուրտ ընդունելութիւն բրին . և իրենք իրիկուան կերակուրը կերած . գոնէ պատառ մը հացի չ՚կրցանք արժանանալ . այսպէս ալ ես երբ իմ վիճակիս վրայ խօսել կուզէի . նոքա գիտմամբ իրենց խօսակցութիւն ուրիշ առարկայի վրայ կըդարձունէին . վերջապէս պատշաճից օրէնք մէկ կողմ դնելով իմ երկու առաջարկութիւնս ևս իրենց մատուցի . սակայն երկուքին ալ բացասական պատասխան ստացայ ։

Մեր ծերունին թշուառի խօսքն ընդմիջելով ըսաւ . միշտ և նեղութիւնք բարեկամութեան փորձաքարերն են . վասնզի այս աշխարհի մէջ շատ բարեկամներ կան . որք իրենց բարեկամաց հետ մինչև նեղութեանց և վշտաց դուռը կընկերանան . և զանոնք հոն թողլով իրենք ետ կըվերադառնան . բայց ճշմարիտ և առաքինի բարեկամը իր բարեկամի վիշտերուն վշտակից , և բարեքներուն ուրախակից է , մինչև ի գերեզմանը նորա ընկերն է թէ ցաւոց և թէ ուրախութեանց մէջ , և մինչև ի կախաղան կընկերանայ նմա ։

Կեղծ բարեկամներ ևս կան . ոմանք սեղանակից բարեկամ են, որք սեղանէն վերջ իրենց բարեկամութիւն կըդադրեցունեն . շահու բարեկամներ կան , երբ իրենց շահը դադրած տեսնեն՝ բարեկամութիւն չարակամութեան կըփոխեն . պաշտօնի բարեկամներ երբ պաշտօնը դադրի՝ նոքա զքեզ թողլով ուրիշ կըփնտրեն . կեղծ բարեկամները յայտնի թշնամիներէն աւելի վտանգաւոր են, վասնզի նոքա իրենց բարեկամաց յոյս կըխաբեն ։

Կրկնեց վշտացեալն , այդ անգութ ընտանիք իր իրիկուան ընթրիք ըրած էր . իսկ արծաթեայ կոնքը և ստոման դուրսի սրահը ծածուկ պահարանի մը մէջ դրուած տեսայ, ըսի ես ինծի. այս արծաթեայ ամանները եթէ յաջողիմ ծածուկ կերպով վերցունել . վաղ իրիկուան մեր հաց ճարելու ամենէն լաւ միջոցն է . դուրս ելայ այն պահուն՝ յորում ծառաները այլևայլ գործերով զբաղած էին , կոնքն և ստոման գաղտ առնելով դէպ ի շուկան գնացի . վասնզի ըստ տեղական սովորութեան գիշերը շուկաները բաց էին և առուտուր կընէին . ես իբրև անտեղեակ

գողութեան արհեստէն բնաւ մտքէս չանցաւ թէ կարելի է որ իբրև գող կըբռնուիմ. փոխանակ գողցածներս կերպարանափոխ ընելու և կամ տունը տանելու ոսկերիչներուն տալի. այն չարագուշակ ժամուն ոստիկանները վրայ գալով զիս բռնեցին. հարցաքննութեան ենթարկեցին. երբ գողցած բաներս ձեռքս էին ինչ փաստ կրնայի առաջ բերել զիս չքմեղ հանելու, բայց եթէ ամէն բանը ճշմարտութեամբ խօսել. մեծ յանցանք մը ևս ունէի որ սուտ խօսիլ ալ չէի գիտեր. վերջապէս կրկին բանտարկուեցայ իբրև գող. հոն ըսի ես ինծի. արտաքոյ գերեզմանին ապահովութիւն փնտրելը ինծի համար անմիտ յոյս մի է. արդէն երեք օր էր որ անօթի էի, երեք օր ես բանտի մէջ անօթի մնացի. բանտապետն բարի մարդ մի էր. ես նորա շրթունքներու վրայ մարդասիրութիւն, աչաց մէջ կարեկցութիւն, սրտի մէջ համակրանք և գթութիւն կըտեսնէի. նա ինծի մօտենալով ըսաւ. երեք օր է որ հոս կըմնաք. ոչ ոք դուրսէն ձեզ հաց կերակուր կըբերէ. և ոչ ալ դուք ներսէն բան մը կառնէք, ինչ է ձեր վիճակը. նոյն միջոցին սիրտս փղձկելով՝ սկսայ լալով բոլոր գլխուս եկածները միըստմիօջէ պատմել իրեն առանց բան մը ծածկելու.

Նախախնամութիւն նորա սիրտ շարժեց, իմ ողորմելի կացութեանս վրայ գթալով՝ զիս տարաւ այնպիսի մի բանտարկեալի սենեակ դրան, որուն օրը երկու անգամ բարելի կերակուրներով պատրաստուած սեղան կուգար իւր տունէն, բանտապետն իմ խեղճ վիճակ ներկայեց այն անձին և ըսաւ մարդասիրութիւն և գութ ցոյց տուր այս մարդուն. վասնզի բախտէն հարուածեալ թըշուառ մի է. հոն կերակրուեցայ այն բարեսիրտ մարդու սեղանէն. և ըսի Աստուած իւր ստեղծածները կըխրատէ և կըպատժէ. բայց իսպառ չմոռանար՝ բանտերու մէջն անգամ անոնց խնամք կըտանի ազնիւ զգայուն ունեցող մարդկանց ձեռօք. թէև հոն կուտէի և կըխմէի. բայց կերածներս կերթար սրտիս դառնութեան հետ կըխառնուէր և անձս կըթունաւորէր ու կըհիւծէր. բանտարկութեանս համար չէի վշտանար. վասնզի թէ պատիժս արդար էր, և թէ այն բանտը ինծի համար երջանկութեան վայր մը դարձաւ. բայց երբ կնոջս և զաւակիս կրած թշուառութիւն և տառապանք ու չքաւորութիւն կուգային աչ-

քիս առջևէն կանցնէին , սրտիս մէջէն կենդանութիւնս ու զօրութիւնս կըքաշէին կառնէին և իրենց հետ կըտանէին . բանտապետն որ ստէպ մեզ կ՚այցելէր և կըմխիթարէր , երբ զիս յուսահատ վիճակի մէջ տեսաւ , կրկին ուզեց իմանալ յուսահատութեանս պատճառը , և ես յայտնեցի իրենց կնոջս և զաւակիս ութ օրէ ի վեր անօթի և թշուառ մնալը , դառն հեծեծանքները , և շառաչներով հարցուցի թէ կարելի՞ է արդեօք որ շնորհ մը լինի տոմսակ մը գրել , և զանոնք բերել այս պատուհանիս առաջ , որ անգամ մը զիրենք տեսնեմ , և նոցա վիճակն իմանամ ։ Բանտապետն թոյլտուութիւն ըրաւ , տոմսակ մը գրեցի , եկան կինս և զաւակս , որոց հետ երկար խօսեցայ և գլխոյս եկածները իրենց պատմեցի . երբ իրենց վիճակի վրայ տեղեկութիւն առնել ուզեցի , պատասխանեց կինս . զաւակիս կեանք չ՚կորսնցնելու համար երկու օր առաջ ամօթխածութեան քողը մէկ կողմ ընելով գնացի եկեղեցւոյ դուռը մուրացի և ողորմած անձինք մեզ ողորմութիւն շնորհեցին , որով կարողացանք չորաբեկ հացով մը կեանքը փրկել մահուանէն , և նոյն բանը պիտի շարունակեմ մինչև որ Աստուծոյ այցելութիւն մեզ հասնի . արդեօք կրնամ թոյլտուութիւն խնդրել որ զաւակդ ամէն օր հոս գայ և մեր մուրացած հացէն քու բաժինդ քեզ բերէ , ասկէ ի զատ աղաչանք մը ես ունիմ քեզմէ . այն է որ չ՚յուսահատիս . զի յուսահատները իրենց մարմնոյ հետ հոգին ալ կըկորսնցունեն ։ Մեր խօսակցութիւնք կըլսէին թէ բանտապետն և թէ մեր բարեսիրտ և բախտակից ու բանտակից անձը , որու հացով կըկերակրուէի . սոյն պահուս բանտապետն ինձ մօտենալով ըսաւ . այս անձի կերակուրներու աւելցածը , որ ինձ կըվերադարձնէր , ես այս վայրկենէս կըհրամայեմ զայն առնել . ամէն օր թող զաւակդ գայ և ձեր սեղանէն աւելցած հացն և կերակուրներն տանի . մինչև որ Աստուծոյ օգնութիւնն ձեզ հասնի . Բուն հացի տէրը երբ այս ազնիւ զգացումներէն բղխած խօսքերը լսեց , իւր ծառաներէն միոյն , որ իրեն մերձ կանգնած կըգտնուէր , հրաման ըրաւ որ թէ յետ այսօրիկ հաց շատ բերեն , և թէ կերակուրներու տեսակները աւելցունեն . այն վայրկենէն սկսեալ զաւակս օրը երկու անգամ կուգար աւելցած հացը և կերակուրները կըտանէր . որով մուրացկանութենէ դադրեցան ինքը և իւր

մայրը․ այս ընթացք երկու տարի շարունակեցաւ, սակայն բախտն իմ համբերութիւնս փորձելու համար թշուառութիւններ մէկէն միւսի մէջ գլորելով կըբազմապատկէր․ վասնզի դատաւորներու սիրտ խօսանալով մեր բարեսիրտ բանտապետի դէմ զայն պաշտօնէ ձգեցին և անոր յաջորդեց ուրիշ դաժան և ժանտ ու անգութ մարդ մը ։

Ես եկածին պէս այդ ողորմութիւնը ինձմէ զլացաւ, և որպէսզի իմ բարի ընկերոջս իրաւացի տրտունջներն իր վրայ չհրաւիրէ, զիս անկէ բաժնելով տարաւ ուրիշ խաւար սենեկի մը մէջ միայնակ փակեց․ ուր յուսահատութիւն և տրտմութիւն շարունակ միտքս կը յուզէին և վրէժխնդրութեան կը գրգռէին․ Եկաւ այնպիսի վայրկեան մը՝ յորում ես մարդկութեան պայմանը և ամէն բան մոռնալով զինուեցայ վրէժս լուծելու ։

Երբ բանտապետս սենեկիս առջևէն կանցնէր, քար մը վերցունելով նորա գլխոյն իջեցուցի այն ուժգնութեամբ, որ անմիջապէս մարդն ինկաւ մեռաւ․ Նոյն պահուն խառնաշփոթութիւն և վրդովումը տիրեց․ շատերը դուռները և վանդակները խորտակելով փախան․ բանտապահ զինուորները դալով խաղաղեցին․ և միւս օրը վերստին դատի կանչուեցայ․ Հոն իմ հարցաքննութեանս մէջ դողութեանս վճռոյն վրայ մարդասպանութեան վճիռ մը ես բարդուելով կախաղան ելլելս վճռուեցաւ ։ Զիս խուռն բազմութեամբ և զինեալ զինուորներով դէպի կախաղան կը տանէին, Ճանապարհին կ՚ըսէի մտքիս մէջ․ ա՜հ անիծեալ ձախորդութիւն․ զիս իմ ամենասիրելի հօրմէս զրկեցիր, անբաւ հարստութիւններս ձեռքէս յափշտակեցիր․ պատիւներէս զիս մերկացուցիր, համեստ մայրս մտատանջութեան մէջ չարչարելով յուսահատաբար գերեզմանը իջեցուցիր․ համեստ և ազնիւ սիրտ և զգացումներ ունեցող կինս և անմեղ զաւակս մուրալու դուռը հասուցիր, և թշուառութեանց մէջ գլորեցիր․ զիս կրկին և երեքկին բանտերու և կապանքներու մատնեցիր, ինձ իմ կամացս և զգայմանս հակառակ գողութիւն ընել տուիր, խռովութեան պատճառ դարձուցիր, և ի վերջոյ մարդասպանութեան ոճիրն ալ իմ ձեռքովս կատարել տուիր․ և ահա կախաղան կը դիմեմ ուր ամէն տառապանք, վիշտ և նեղութիւն, սրտայուզութիւն իրենց վախճանին կը հասնին․ բայց մարդիկներէն մէկը

չէղաւ որ հարցանէր ինձ թէ՝ ինչու թշուառացար․ ինչու գողութիւն ըրիր․ ինչու խռովութեան պատճառ տուիր․ և ինչու մարդասպանութեան ծանր ոճիրը գործեցիր․ Միենոյն միջոցին որ զիս դէպի կախաղան կը տանէին քաղաքական նոր շփոթութիւն մը տեղի ունեցաւ․ որոց մէջէն չգիտեմ թէ ինչ անտեսանելի զօրութիւն մը զիս վերցունելով քաղաքի պարիսպէն դուրս նետեց, և կեանքս ազատեց․ այն վայրկենէն սկսեալ մինչ ցարդ լեռնէ ի լեռ անտառներէ յանտառ, անծանօթ ճանապարհներէն կը քալեմ և կը թափառիմ։

Ա՜հ ինչ ցաւալի վիճակ է թափառողներու կեանք․ վասնզի յանցաւոր փախստականը ամենափոքր ձայնէ կը սարսափի․ Նա հաչող շունէն, եկող ճանապարհորդէն, վազող ձիէն․ ցցուած քարէն, շարժող թուփէն, ծառերու կոճղներէն կը վախնայ և կը կասկածի թէ մի՞ գուցէ զիս փնտրողներն են, որք կուգան բռնել և տանելու․ հայրենեաց սէրը որ ընդհանուր սիրոյ հիմն է, (այս թափառական վիճակիս մէջ․) շարունակ սիրտս կը տոչորէր․ զինք տեսնելու քանի մը փորձեր փորձեցի սակայն ամենու մէջ ալ անյաջող գտնուեցայ․ յուսոյ երազները մտքովս զիս հայրենիքս կը տանէին․ ընտանեացս և զաւակացս հետ տեսութիւն ընել կուտային․ այս քաղցրութեան մէջ յանկարծակի դառնութիւններ կը խառնուէր․ երբ գործած ոճիրս իր ամէն պարագաներով կուգար աչքիս առջեւ կը ներկայանար որուն անմիջապէս կը յաջորդէր զիս փնտրելը և տանել կախաղան հանելը․ այս պարագան երբ միտքս կուգար՝ կը թափէի այն երազներէն և կը դառնայի կրկին յուսահատ վիճակիս մէջ ու կը քալէի։

Երբեմն կ՚ըսէի․ մահն ալ գեղեցիկ կարգադրութիւն մը է․ զայն ընտրեմ և ամէն բանին վերջ տամ․ իբրև թշուառ մը որ հոգւոյն մէջ կը տառապի, ես ալ խորհրդովս համր թռչնոց պէս երթևեկութիւն կ՚ընէի․ մերթ դէպի գերեզմանը․ մերթ դէպի կեանք․ վերջապէս անողորմելի բախտն վճռած էր ինձ համար, ամբողջ կեանքս թափառական և թշուառ անցունելու․ հարկադրուեցայ հնազանդիլ բախտի վճռոյն որքան որ ես երեսս դէպի հայրենիք կը դարձունէի, այնքան նա իր երեսը ինձմէ պահելով խոյս կուտար․ այժմ երբ կը յիշեմ մեր երջանիկ օրերը և ժամերը, կնոջս և զաւակիս տխուր յիշատակները, որք

միշտ աչքիս առաջ, մտացս և սրտիս մէջ երթևեկութիւն կ'ընեն սիրտս աշնան խուխներու պէս կը չորցնեն, չ'գիտեմ թէ այն ա-ղորմելի թշուառները ո՞ւր են և ի՞նչ եղան ։

Բայց աւելի չ'գիտեմ թէ ճակատագիրն իր գաղտնեաց մէջ տախտակին ի՞նչ անցքեր պահած է ինձ համար կրելու ։ Այս խօսքերէն վերջ սկսաւ իր յուզեալ սրտէն և խռովայոյզ աչքե-րէն հեղեղի նման արտասուքներ թափել և դառն հառաչանք-ներով մեր բանտը կը լեցունէր, և մարմինն նուաղելու վրայ էր։

Նորա այս պատմութեան վրայ մեր հինօրեայ և բազմափորձ ծերունին խօսքի թելն առնելով ըսաւ. բախտ և ճակատագիր զմարդիկ կը բարձրացունեն կը խոնարհեցունեն, և զանոնք կը հա-լածեն ծովէ ի ծով, ցամաքէ ի ցամաք, և թշուառութեանց անդունդներու մէջ թողելով իրենք կը զուարճանան նոցա կործան-ման վրայ. քիչերն են որք գիտեն իշխել բախտի վրայ շատերը յուսահատելով իրենց կենաց դաւաճան կը դառնան. վտանգներ դարանամուտ են և միշտ ծածկեալ կը սպասեն իրենց զոհերը. երբ դիպող ժամանակը ձեռք կը ձգեն՝ յանկարծակի կը յարձա-կին անզգոյշ մարդկանց վրայ և զանոնք թշուառացունելով կը-հալածեն և կը հարուածեն. դուք կ'ըսէք թէ. անիմանալի գաղտնիք մը ձեր հայրը յափշտակած է ձեր ձեռքէն, զարմանք չէ այդ, վտանգի նենգամիտները ոլորուն ճանապարհներով ա-կան կը հատանեն բարեմիտ մարդկան սրտին հասնելու, որպէսզի նորա գաղտնիքներէն ամենապիտանիները քաղելով դուրս հանեն և մարդկանց դէմ իբրև որոգայթ գործածեն. խորամանկ թըշ-նամին իւր մեքենաներն աւելի այն ժամանակ կը նիւթէ և ի գործ կը դնէ. երբ իւր զոհ քնոյ կամ անզգայութեան մէջ տեսնէ. նոքա լռելեայն կը ցանեն իրենց որոմները, և թագուն տեղերը կը պահեն իրենց մեքենաները, ասոնց ատելութիւնները մարդկանց սրտի մէջ անբժշկելի վէրքեր կը բանան. այնպէս որ ամէն դեղ և սպեղանի կարող չեն բժշկել, այլ միայն երկնային սէրը կա-րող է զայն բժշկել և առողջացունել. ձախորդութիւնները անդի-մադրելի են, բռնութիւնները անգամ անձեռնհաս են անոնց վրայ իշխելու. սակայն երկայնամիտ համբերութիւնը զանոնք աղի պէս ջուրերու մէջ կը հալեցունէ. թշուառութիւնները մաղնիս մի են, որք հարուածեալներու և հալածեալներու սրտի մէջ

գաղտնի պահուածները քաշելով դուրս կը հանեն , այն սրտերը որք երկաթէ բանալիներն անգամ չէին զօրեր բանալու , նորա ինքնին կը բացուին վշտաց և ցաւոց հանդիպած ժամանակը. այն գաղտնիքները՝ որք յաւիտենականութեան մէջ թաղուելու համար պահուած էին , նորա ամէնքն ալ անպատրուակ կերպով երևան կուգան դառնացեալ սրտերէն . վշտացեալի մը համար իւր ցաւերը յայտնել անօգուտ չէ . մանաւանդ այն պահուն՝ երբ հեշտալուր լուր և կարեկից սիրտ մը կը գտնէ . դանդաղներով խոցուած ցաւերը թէ կը մեղմանան և թէ կը նուազին . վասնզի նոյն ցաւերու մէկ մասը խօսողի սրտէն ելլելով լսողի կը փոխանցի . զի տրամութեան ախտը փոխադրական է . խօսքը կը բժշկուի վշտացեալ սիրտը երբ իւր վէրքերու իսկական դարմանը ճարտար բժշկի ձեռօք իրեն կը մատուցուի .

Թշուառը , մեր ծերունոյն խօսքը ընդմիջելով ըսաւ . հայր թոյլ տուր որ յուսահատ վիճակս ամբողջապէս նկարագրեմ. երեսուն տարի է որ կը հալածուիմ և կը թափառիմ, վիշտ կրելու համար միայն կապրիմ. և ցաւերէն ի զատ ուրիշ բան մը չեմ զգար . յոյսը որ թշուառաց սփոփումն տուող մինակ մխիթարիչն է՝ ինձմէ երես դարձունելով հեռացաւ . անօթութիւն և ծարաւ , սրտնեղութիւն հարուածև հալածանք , խղճի տագնապ և կարօղութիւն միաբանած են ինձ դէմ զիս նեղելու . կը մտածէի երբեմն, մեռնիմ և երկինք երթամ. զի երկինք մարդկանց հայրենիքն է . իսկ այս աշխարհ մարդկանց վտարանդութեան վայրն է , հոն երանական փառք կայ իսկ հոս թշուառութիւն , ցաւ և տանջանք . հոն մշտնջենաւոր ուրախութիւն , հոս մեռելութիւն , հոն անմահութիւն հոս աշխատանք , հոն հանգիստ հոս կիրք և մեղք , հոն անմեղութիւն , հոս մեղաց կապանք , հոն ազատութիւն , բայց միթէ մեղքերուս ծանրութիւնը պիտի թողու՞ որ երթամ հոն հասնիմ և վայելեմ Աստուծոյ փառքերը . կրկին ես զիս մխիթարել կուզէի խորհելով թէ՝ չուզելով գործեցի ինչ որ գործեցի , զի հարկէն ստիպուեցայ , հարկն օրէն չունի , գործել կուտայ մարդկանց առանց գործածներու հետևանաց վրայ խորհելու ժամանակ տալու .

Թէպէտ թշուառութիւնները մօրու են , բայց հետզհետէ ընտելանալով մայր կը դառնան . երբեմն ունակացաւ թշուառու-

թիւն ինձ համար, և ես զիս կըմխիթարէի, ոչ թէ վիշտերս կըջնջուէին և կամ զանոնք կըմոռնայի (որք միշտ մտացս մէջ շրջան կըկատարէին) այլ յուսահատութեամբ կրածներս վսեմ բաներ կըհամարէի և անոնց ամենու վախճանը ազնուութեան մէջ կըտեսնէի. Կ՚ըսէի ես ինձ թէ՝ պէտք չէ որ յուսահատիմ. զի հաւատք փրկաւէտ է, բայց կրկին յուսահատութիւն վրաս իշխելով ինձ ըսել կուտար, վիշտերս անդարմանալի են, խոռոչ մը կայ՝ որ գերեզման կըսուի, միայն նա կրնայ իմ ցաւոցս վախճան տալ, Նետեր կան՝ որք առանց զգայունելու կըփեսեն, որոց վէրք անբուժելի կըմնայ միշտ. բախտ՝ ցաւերս վարդերու մէջ ծրարելով՝ անզգալի կերպով մատոյց ինձ, հիմա կ՚զգամ թէ առածս թոյն էր. Հարկի՛ կըբռնադատէ զիս այս պահուս տրտնջալ. յորում Աստուծոյ արդար պատժոյն յանձնուած կըտեսնեմ ինքզինքս. ո՜վ Աստուած կեանքս քեզ կըյանձնեմ, և սիրտս քեզ կընուիրեմ, առ քեզ աղաղակելու համար բերանս կըբանամ, սակայն վիշտերը և ծերութիւնս ձայնս կոկորդիս մէջ կըմարեցունեն։

Անցան իմ ուրախութեան օրերս և մնացեալ ժամերուս վրայ տրտմութեան քող քաշած է, երջանկութեան թեւերու վրայ նստած թռչած միջոցիս յանկարծակի զիս տառապանաց և արտասուաց մէջ գտայ։

Մի թէ խօթացեալ ուղեղ մը կրնա՞յ այլևս առողջանալով վերականգնանալ, հրաշէկ երկաթ մը սիրտս մխուած զիս կըվիրաւորէ և կ՚այրէ, թշուառութիւն՝ մազերս մոխրագոյն ըրաւ, աչքերս այնչափ արտասուքներ թափեցին՝ որ ամենէն պայծառ լոյսն անգամ խիստ աղօտ կերպով կըտեսնեմ, մտացս ամենէն առողջ խորհուրդները կորսնցուցած եմ, էհ շատ խօսեցայ պահ-մը լռեմ, գուցէ Տիրոջ այցելութիւն զիս սփոփէ. բախտի հարուածը զիս արծուոյ մագիլներու մէջ առած ճնճղուկի պէս կըփետտէ և չ՚թողուր որ շունչ առնում. ուրեմն իմ հանգստութիւնս այլևս այս աշխարհի մէջ չէ, այլ մահուան մէջ պահուած է, թող տուէք որ կտոր մը խուզայոյզ հիւթը ինքնին ցամքի, շատ է որ նորա բողբոջը զօրանայ և ճիւղեր արձակէ, բայց ո՞վ պիտի տանի այդ խնամք, խուիները բոցերու միայն կրնան ծառայել, և անկէ աւելի ինչ բանի պէտք է,

այժմ այրող կրակները կուրծքս կըտոչորեն , թող աղօտանան այն սիրոյ բոցերը՝ որով երեսուն տարի տոչորեցայ . միթէ այլ ևս արտասուացս կաթիլները կըզօրեն յուզեալ սիրտս մեղմացունելու , ո՛չ . այլևս երկրի վրայ ձեռք կարկառելու ապաւէն մը չ'մնաց , ուրեմն իմ ապաւէնս երկնից մէջ փնտրելու եմ . և իմ կրօնական պարտքերս կատարեմ , ու սխալմանցս հաշիւները ներկայեմ հաշուառու երկնային հեղինակութեան , և ամէն բան անկէ սպասեմ : Այս խօսքերէն յետոյ սրտին դառնութիւնն աչացը ներգործելով քանի մի արտասուաց կաթիլներէն յետոյ՝ ըսաւ նուաղեալ ձայնիւ մը . Աստուած իմ , ամէն թշուառներուն ողորմէ՛ , յետոյ նաև իմ հոգւոյս որ քու աւանդն է իմ կաւեղէն մարմնոյս մէջ պահուած : Ըսաւ մեր ծերունին . երեք բան կայ՝ որ մարդկանց սրտէն դուրս չելլեր , վշտացեալներու ցաւը և տրտմութիւն , երախտագիտութիւն և հայրենեաց ու ընտանեաց սէրը , բարոյական վէրքերը այն յատկութիւնն ունին՝ որ թէև սրտերու մէջ կըպահուին բայց չեն անհետանար , այլ թշուառ օրերու մէջ յորդահոս աղբիւրներու պէս կըվազեն , սրտերէն դուրս կըզեղուն , անոնք որք իրենց կենաց մէջ վիշտ կրած են , դժբաղդութեան աղէտալի գիծերը միշտ կըկարդացուին նոցա հիւծեալ դէմքերու վրայ .

Սոյն միջոցին մի քանի ցնցումներ ունեցաւ մեր վշտակիր ընկերը և վերջին հառաչանք մը ևս արձակելով բանտի մէկ խորշը նստած տեղը գոցեց իւր վիշտերով լեցուած աչքերը և գնաց դէպի յաւիտենականութիւն : Մենք խիստ շատ տրտմեցանք , բայց ի՛նչ օգուտ , գնացողն այլևս ետ չ'դարձաւ :

Եկան մեռելը քննեցին և տարին թաղելու , շնորհակալ եմք այն թերուս բժշկէն որ ըսաւ թէ՝ մաղձացաւէն մեռած է այս մարդ , որով զմեզ բանտէն հանելով արտաքսեցին՝ կարծելով թէ մենք ևս իբրև նորա ընկերը՝ փոխադրուած է մեզ մաղձայուզութեան հիւանդութիւն : Այս հրաշալի ազատութեան վրայ մենք աճապարանօք ծովեզերք գնացինք , նաւահանգիստ հասանք , սակայն մեր նաւը գնացած էր և ուրիշ նաւ չ'կար հոն Ամերիկա գնալու , ուստի հարկադրեալ սպասեցինք :

## ԳԻՐՔ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

**Ուղեւորներու Ամերիկա երթալու համար նաւ մտնելը, մեր յաջողութեան և մեր յուսախաբութեան հանդիպելը. Մեռելահրապար մը նկարագրութիւն. Նորա օդերը և մարդասպանութիւնները. Քանդակութիւն և [illegible]. Ծերունոյն խրատը։**

*Երեք օր վերջ ուրիշ նաւ մը հանդիպեցաւ մեր սպասած նաւահանգիստը որ Ամերիկա կերթար. ես փափագ յայտնեցի նոյն նաւով Ճանապարհ ելլել. բայց նա օգերու խառնակութիւն առաջ բերելով համբերել կառաջարկեր ինձ. սակայն իմ բուռն թախանձանացս վրայ ակամայ կամօք զիջում ըրաւ, մենք նաւը մտանք և դէպի Ամերիկա Ճանապարհ ելանք.*

*Յաջողակ հողմերը երկար ժամանակ մեր նաւու Ճանապարհորդութեան դիւրութիւն կուտային. Ափրիկէի նաւահանգիստ և ցամաք մեր աչքէն փախչելով աներեւոյթ կըլլնէին և հետզհետէ լեռները մեր աչքէն խոյս տալով կըծածկուէին. երեք օր շատ լաւ առաջ տարաւ մեր նաւը իր ուղեւորութիւն։*

*Չորրորդ օրը սաստիկ ալէկոծութեան բռնուեցանք, խոր գիշերը մեր չորս կողմը շրջապատեց, նաւը դառնաշունչ հողմերու և մրրիկներու մէջ հոգեվարք մարդկանց պէս կըտատանէր. անյոյս ի կենաց, սեաթոյր մրրիկները երկինք մեր աչքէն կըյափշտակէին, թաթարները մեր նաւ ծովէն հանելով օդի մէջ բարձրացունելու փորձեր կըփորձէին. նոյն ժամուն մարդկային ամէն հնարքները ոչինչ էին. այլ միայն Աստուծոյ ապաւինած նորա օգնութիւն կըխնդրէինք. Ըսի նոյն պահուն մեր ծերունիին. հիմա կ՚զգամ թէ անզուսպ բաղձանաց հետեւանքն ի՞նչ է. ըսաւ ծերունին. անոնք որ ոչ ապագայի նախատեսութիւն ունին, ոչ անցելոյն փորձառութիւն և ոչ ներկայի մէջ իրենք զիրենք կառավարելու չափ խոհեմութիւն, նոքա միշտ խաղալիք կըլլնին դէպքերու և պատահարներու ու ձախորդութեան ձեռքին մէջ. այն տեսակ մարդկանց գործերու առաջնորդը միշտ դիպուածը կըլլնի, չեմ ուզեր անցեալ սխալներդ յիշել, շատ է որ*

կը ճանաչես զանոնք և յետ այսօրին զգոյշ մնալու պատուէրի հետ անխորհուրդ վարմունքներուդ սանձ դնել կը յանձնարարեմ քեզ, որ միայն կարողանաս խաղաղ մնալ այս աշխարհի ալէկոծութեանց մէջ։

Շատ մարդիկ կան, որք վտանգներու մէջ ինկած ժամանակ իրենց սխալմունքները կը ճանաչեն և ուրիշ անգամ սխալման մէջ չիյնալու խոստումն կուտան, բայց վտանգն անցնելէն վերջ իրենց խոստումը կը մոռանան և աւելի մեծ չարիք կը հրաւիրեն իրենց վրայ. արդ այժմ արթնանալու ժամ է. զի վտանգի մէջ իյնալէն առաջ խորհիլ և զգուշանալ պէտք էր. վտանգներու մէջ իյնալէն յետոյ աղէտներու վրայ իշխելու մեծասրտութիւն հարկաւոր է. Փոթորիկները հանդարտեցան, նաւը կրկին ճանապարհ կը շարունակէր խիստ յաջողակ կերպով. մեր նաւի մէկ անկիւն սրտաճմլիկ հառաչանքներ արձակող մարդ մը կը տեսնուէր, որու երեսի վրայ մեծ տրտմութեան, տըխրութեան, յուսահատութեան նշաններ կը տեսնուէին, մեծ ցնորական շարժումներ, երբեմն խնդալ և ինքն իր հետ խօսելը. յանկարծական ցնցումներ ընել և ոտքի վրայ ելլել ու այս կամ այն կողմը նայիլ. մեծ թախիծներու մէջ ընկղմիլ և նստիլ. այս անձը երբեմն կուգէր մեզ մօտենալ. բայց յանցաւոր մարդու մը պէս մեզմէ կասկածելով կրկին ետ կը դառնար։

Ծերունին իբրև կարեկից թշուառներուն՝ առ մեզ հրաւիրեց այն անձը և սկսաւ հարցափորձ ընել թէ ո՛վ է. ո՛ւրկէ կուգայ և ո՛ւր պիտի երթայ։

Նա արտասուալի աչօք սկսաւ հետևեալ եղանակաւ իւր անցեալ անցքերը պատմել. կ՚ըսէր. ես փոքր Ասիոյ արևմտեան եզերքը գտնուող բնակիչներէն շատ հարուստ և ագահ հօր մը զաւակ եմ. կը խնդրեմ որ հետաքրքիր չ՚ըլլիք անունս իմանալու. վասնզի անծանօթ մնալու դատապարտեալ եմ։

Մանկական օրօրանիս մէջ մայրս կորսնցուցած և ուրիշներու ձեռօք սնունդ առած և խնամուած եմ. իմ տասն և եօթ տարուան հասակիս մէջ հայրս ինձ անբաւ հարստութիւն թողլով մեռաւ. թէև բարի ազգականներ և դրացիներ ունէի, որք միշտ զիս զգաստ մնալու յորդորներ կը կարդային, սակայն մանկական հասակիս և անմշակ սրտիս սանձարձակ կիրքերը զիս

ուղղութիւնէ աւելի հեշտալեաց եանէն գնալ կառաջնորդէին . առնելէ ի զատ իմ միամտութիւնս պատրող հացկատակ շաբաթիս և շողոքորթ երիտասարդներ շուրջս պատելով . կիրքերս շոյելով , զիս մարդկութեան սահմանէն հեռացուցին և ընդունայն փառքերու յուսոյ սիրով զիս իրենց հետ անքակտելի կապերու կապանօք կաշկանդեալ կապեցին . վերջէն զգացի թէ նոքա մէկ մէկ չարութեան գործիքներ էին զիս աղէտներու առաջնորդելու : Ինձ բողոքներ կուգին թէ այդ անձանց բարեկամութիւն ոչ թէ ձեր անձի հետ՝ այլ ձեր հարստութեան հետ կապուած է . սակայն ես բնաւ չէի ուզեր անոնց խօսքերուն հաւատալ :

Նոքա սնոտի գովեստներով իմ մանկական գոռոզ հպարտութիւնս կըբորբոքացունէին և հեշտական կիրքերս հրապուրելով ոտքս տակ որոգայթներ կըլարէին . հեշտալի ախորժակներ սրտիս մէջ միշտ վառ և կենդանի պահելու տրհասին շատ հմուտ էին . այս անուղիղ կեանքի մէջ այնչափ առաջ գնացի , որ անկարգ յօժարութիւնները հետզհետէ այն աստիճան ազդեցութիւն ըրին վրաս որ անկէ այլ ես ազատիլը անկարելի եղաւ . երբեմն կսթափէի և կիրքերուս դէմ դնելու փորձեր կըփորձէի , սակայն չէի յաջողեր . վասնզի ախորժելի մեղկութիւնները վրաս հասնելով զիս ուժաթափ կընէին . և կ՚անդամալուծէին . մանկութեանս հասակի մէջ ձեռք բերած կիսատ դաստիարակութիւնս իրենց զօրութիւն կորսնցունելով իսպառ տկարացան . սովալլի կերպով կատէի առաքինութիւն , և անոր վրայօք խօսք մը անգամ լսել չէի ուզեր . պատկառանքս համեստութենէն հրաժարելով շարունակ դէպի լրբութիւն կերթար . իմաստուն բարի և պարկեշտ մարդկանց հետ բնաւ հաղորդակցութիւն ընել չէի ուզեր . ինձմէ միշտ սիրելի նկատուած հրապուրիչ հաճոյական սէրը իբրև թոյն վրաս ներգործելով՝ անզգալի կերպով երակէ երակ փոխանցելով կերթային մարմնոյս հետ նաև հոգիս ապականելու , և սրտիս մէջ անողջանալի վէրքեր բանալու . երբ սաստիկ կընեղուէի , կըկարծէի թէ հեշտութենէ ի հեշտութիւն փոխուիլը զիս պիտի կազդուրէ . բայց ասոր մէջ ես յոյսս պարապ կըլլինէր . շատ անգամ աչքերս կըմթագնէր , ուղիղ ճանապարհներ անգամ խո-

տոր կը տեսնէի ։ Վերջապէս բոլոր հարստութիւնս փճացուցի գեղխ կեանք մը վարելով և շուայտութեամբ վատնելով. մոլութիւնները իմ թշուառութիւնս կատարեալ ըրին. համար մուրացկանութեան աստիճանին և յուսահատութեան դուռ հասուցին և իմ կեղծ բարեկամներս երբ զիս այս վիճակիս մէջ տեսան մէկիկ մէկիկ ինձմէ հեռացան. այնպէս որ երբ զիս տեսնէին իրենց ճամապարհ կը փոխէին. զի մի գուցէ իրենցմէ նիւթական օգնութիւն մը հայցեմ, և ոմանք զիս տեսած ժամանակ առանց գանէ բարև մը տալու քմծիծաղ մը կընէին և կանցնէին կերթային. այսօր կ՚զգամ թէ ինչ դառն է հարստութիւն, առողջութիւն և պատիւ չափազանց հաճոյից և կեղծ բարեկամաց զոհ տալը. հասաւ ինձ այն չարագուշակ յուսահատ ժամը՝ յորում չքաւորութիւնն գաղանակեր կերքերս գրգռեց, և երկու տարեկան մէկ հասնիկ աղջիկս մէկ ապառկի զոհ տուի. որ լալով հաց կուզէր ։ Կնոջս աղաղակները լսուեցան. ոստիկանութիւն վրայ հասաւ այն միջոցին՝ որ կինս իր ձայն կարած իբրև խելագար մերթ մեռեալ աղջկան երես կընայէր, մերթ ձեռքերը երկինք տարածելով երկնից ցոյց կուտար անշարժ գլուխը. կըսէի կնոջս. քու վեհանձնութեամբդ զիս մի մատներ իբրև մարդասպան. եթէ այս բարիքն ինձ ընես, միշտ խիղճս պիտի գեկուցանէ ինձ թէ երախներուս արիւնը, մարմնոյս կեանքը, անձիս պատիւը իբրև քու գաղտնապահութեան շնորհք պիտի վայելեմ յետ այսօրիկ ։ Կնոջս լեզուն բացուելով ըսաւ ինձ. ժամն անցնելէ վերջ կոթափիս. եթէ ես ծածկել ուզեմ, Աստուած և անմեղ արիւնը պիտի յայտնեն. և արդէն սպանութեան երկխուղի տագնապները քու երեսի վրայ յայտնապէս մատնանիշ ցոյց կուտան. թէ դու այս պահուս ոճրագործ մի ես. ինչո՞վ ծածկեմ այս արիւնը որ տէր Աստուած կը բողոքէ. անգութ, խղճիդ խայթը ինչո՞վ պիտի մեղմացունես ։ Ամեն գեղծումներդ համեստութեանս քողով ծածկեցի. բայց անմեղ սպանութեան վրէժխնդրութիւն Աստուծոյ է, որ մարդիկներէն մէկը կարող չէ ծածկել ։ Նոյն միջոցին արդէն ոստիկանութիւն եկած և իր քննութիւն կատարած էր, հետևապէս զիս բռնելով կառավարութեան տարին քննութիւն կատարելու ։

Երբ դատարանին ներկայացանք առաջին անգամ ամէն բան

ճշմարտապէս խոստովանեցայ . բայց երբ դատաւորաց խօսքերէն և շարժումներէն վերահասու եղայ թէ պատժոյս մեծութիւնն շատ է , նոցա գթութեան դիմեցի . որուն դէմ պատասխան ստացայ թէ , քու պատիժդ սահմանող մենք չենք , այլ օրէնքն է վճռատուն . մենք օրինաց գործադիր պաշտօնեաներն ենք . պէտք է գիտնալ թէ՝ օրէնքը ոչ աչք ունի որ մարդկանց տրտմութիւն տեսնէ , ոչ ականջ ունի որ նոցա թախանձանքները լսէ . ոչ սիրտ ունի որ նոցա վիշտերին գթայ . ուրեմն պարտիք օրինաց տրամադրութեան հնազանդիլ : Այն միջոցին ուզեցի խնդիրը կերպարանափոխ ընել . առաջ բերելով թէ զաւակս ինքնին մեռաւ յանկարծական մահուամբ եայլն . սակայն դատաւորը որ դէմքիս վրայ կը տեսնէր իմ ոճրագործութիւնս խօսքս ընդմիջելով ըսաւ . քու սրտի հետ խօսողն Աստուածն էր , քու հետ խօսող քու սիրտն էր . Աստուած քու սրտով ճշմարիտն խօսեցաւ և քու սիրտը չուզեց Աստուծոյ դէմ նենգիլ . ուրեմն ինչո՞ւ այժմ քու լեզուն նենգութեամբ կուզէ թարգմանել քու սրտի ճշմարիտ զգացումները : Ուրեմն խնդիրը այլափոխելով մարդասպանութեանդ մեղքին վրայ ճշմարտութեան դէմ դաւադրելու մեղք մը ևս մի աւելցուներ . ինչ որ ճշմարիտ է զայն խօսէ : Դատաւորի այս ազդեցիկ խօսքերը սրտիս մէջ մտնելով՝ մագնիսական բուռն զօրութիւն մի , ամէն ճշմարտութիւնները քաշեցին հանեցին և դատաւորաց գրասեղանի քարտէզներու վրայ մարմնացուցին : Տէր դատաւոր , ըսի . յիշեցէք թէ Աստուած դատաւոր լինելէ առաջ հայր մի է և նորա հայրական գութ և սէրը շատ անգամ յաղթած է արդարութեան . ուրեմն յանուն Աստուծոյ գթութիւն և ողորմութիւն կը հայցեմ : Պատասխանեց դատաւորը թէ այդ բանը դու մտածելու էիր ասկէ առաջ , երբ անմեղ մանկիկը հակառակ Աստուծոյ կամաց , բնական օրինաց և ծնողական զգացմանց անխղճաբար կրից զոհ տուիր : Դատաւորն ուզեց կնոջս վկայութիւնը լսել . երբ կինս ոստիկանաց միջոցաւ դատարանին դռնէն ներս մտաւ և նստարանի վրայ կռթնեցաւ . անխռով կերպով նայուածք մը նետեց իր բոլորտիք . երբ զիս տեսաւ ամենամեծ ոսոխի մը դէմ կարծեց ինքզինք , մեր ընկերական սէրը բնաւ ներգործութիւն չըրաւ նորա անկարեկից սրտի , իմ յուզեալ վիճակի , նորա անյողդողդ կա-

մաց վրայ . ամէն մարդ կըզարմանար ինձ նկատմամբ նորա դէմքի անտարբերութեան վրայ . Նորա սրտի արիւնը իւր վշտալի դէմքի վրայ ծաւալեալ աչքերէն կայծակի պէս կրակներ կարձակէր . ներքին յուզումներէն նորա երեսը մերթ կըկարմրէր . մերթ իւր գոյն փոխելով կըդեղնէր , երբեմն կըթալկանար , նորա միտք խիստ շփոթեալ կըտեմնէր , ամենու ուշադրութիւն իւր վրայ հրաւիրած էր ։

Երբ դատաւորը կարդաց անունը մականունը տունը եայլն հարցունելով կարգն եկաւ զիս ցոյց տալով ըսել թէ այս մարդը քու ի՞նչդ է . պատասխանեց թէ առաջ այրս էր . բայց այժմ երկու տարեկան աղջկի զաւակիս սպանիչ ոճրագործ մի է . զոր յետ այսօրիկ իբրև այր չեմ ճանաչեր . զի Աստուծոյ անիծապարտներէն մէկն է , և յաւելցուց ըսել . պարոն դատաւոր . այս անձ խիստ տգեղ և պժգալի անցեալ մը ունէր , որոյ ամենուն դէմ կարողացայ տոկալ . բայց այժմ յանուն մարդկային պատուոյ և բարոյականութեան կըպահանջեմ որ օրինաց ամենէն խստագոյնն ի գործ դրուի այս ոճրագործ և անբարոյական մարդոյն վրայ ի խրատ և ի զգուշութիւն ուրիշներուն որք կըյանդգնին այս տեսակ վարմունքներու մէջ գտնուիլ . զի այս տեսակները իրենք զիրենք և մարդկութեան առհամը թշուառացունող ճիւաղներ են . երբ կինս այս յայտարարութիւնները կընէր , իմ վրաս մերթ ընդ մերթ մարելքներ կուգար և դաւաթ մը ջրով զիս կըկազդուրէին ։

Դատաւորը իւր խօսք ինձ ուղղելով կըհարցանէր թէ սոյն կնոջ յայտնութիւնները ցրելու ի՞նչ փաստ և ապացոյց ունիք . որուն պատասխանեցի . զեղխ կեանք մը վարեցի և ընտանիք մը թշուառացուցի . անմեղ մանկիկն սպաննեցի . արդ ճշմարտութեան դէմ մաքառելու ժամն անցած է . Աստուած է իմ վրէժխնդիրս . և խիղճս արդէն զիս կըխայթէ և կըվիրաւորէ . արդ յօժարութեամբ կըխոնարհիմ օրինաց պատժոյն ։

Վճիռ եղաւ դատարանէն թէ՝ կամ մահ , կամ մշտնջենաւոր բանտարկութիւն ։ Ես մշտնջենաւոր բանտարկութիւնը ընտրեցի այն յուսով թէ մահուան գերեզմանը դուռ չունի , իսկ բանտը դուռ ունի և գուցէ օր մը բացուի ինձ համար . առ այս որոշումն՝ զիս դատարանէն դուրս հանեցին շղթայակապ մահապարտ-

ներու բանտ տարին, ուր երկար ժամանակ մնացի և տառապե-ցայ. բանտի մէջ շատ մը ցնորական խորհուրդներ կուգային, մտքէս կանցնէին ու կերթային. երբեմն փախչելու միջոցներու վրայ կը խորհէի, երբեմն անձնասպանութեան խորհուրդներ մտքէս կ'անցնէին, երբեմն կըսէի ես ինձ փոխանակ՝ ապտակի մը աղջիկս զոհ տալու, լաւ եւս էր որ աբրահամապէս զոհէի Աս-ծոյ, որ հաճելի պատարագ մը կըլլինէր.

Մեր ծերունին, որ մինչև ցայս կէտ լռութեամբ կըլսէր. յանկարծակի նորա խօսք ընդմիջելով ըսաւ. մարդասպանութեան համար կատարեալ անհաւատութիւն է, և մարդասպանութեան խորհուրդ և ուխտ միշտ անխորհուրդ է. Աստուած ամենեին չընդունիր անգութ և եղեռնական ոճիրներով յարգուիլ. Բարե-կամ, դուք Աստուծոյ կամաց և ծնողական զգացմանց հակառակ վարուած էք. դուք Աստուծոյ անբռնաբարելի իրաւանց դէմ բռնութիւն բանեցուցած էք ձեր կրքին հետեւելով. Այն հոգին և կեանքն զոր դու չտուիր ի՞նչ իրաւամբ զայն կըբառնաս. եթէ քու նորա ծնող լինելդ իրաւունք մը համարիս քեզ, այս մասին պէտք է հաւատաս թէ՝ դու միայն գործիք մի ես Աս-տուծոյ ձեռքին մէջ և ամէն ստեղծուածներու արարիչը և խնա-միչը նա ինքն Աստուած է ։ Կրկնեց վշտացեալն թէ՝ մեռեալը դէպ ի գերեզման և անկէ գնացած է դէպ ի յաւիտենական ե-րանութիւն. իսկ ես երկար ժամանակ մութ բանտերու մէջ տա-ռապեցայ ։

Վերջապէս ծերունին խօսքի թելն առնելով ըսաւ. ձեր գեղծ կեանք վարելու գալով՝ գիտնալ պէտք է որ շատ ընկերներ ի-րենց ընկերներու կորստեան վրայ աւելի կ'ուրախանան քան թէ փրկութեան.

Կ'ըսէր նա. բանտի մէջ ինձ հետ ուրիշներ ալ կային, որք թէև իրենց գործած սխալմանց վրայ կըզղջային, բայց ի՞նչ օգուտ. միթէ քար մը երբ մարդկանց ձեռքէն կ'ելլէ, կարելի՞ է անոր ետեւէն վազել և բռնել որ չերթայ իր նպատակին չհասնի. կ'զգամ թէ շրթունքներէ ելած խօսքը, գործնական ոճիրները, արտասուօրեալ համբաւը, կորուսած անդամը, բարձուած կեանքը, ասոնք անվերադառնալի կորուստներ են. անցնալը այլ եւս ետ չդառնար. այս տեսակ սխալմունքները միմիայն

գործողներու սիրտը կրծելու և կեանքը մաշեցնելու կըծառայեն իմ յաջողութեանս ժամանակ հաւատքս այն տեսակ բաներու վրայ հաստատեցի, որոց ամէնքն ալ առժամանակեայ երևոյթներ էին. ու կուգային պահ մը զիս կըզուարճացնէին, յետոյ աներևոյթ ըլլալով զիս մոռացութեան մէջ կըթողէին.

Ըստ ծերունւոյն. վերջի ողջումը անցեալ կորուստ չըդարմաներ. այլ միայն ապագային զգուշութեան մի գործնական դաս կըլինի. անձապարումի մարդկանց չար խորհրդատուներէն մին է. ձեր ընկերները ճարտար խաբէբաներ եղած են. որոց սովորութիւնն է պարզամիտներու սիրտը գողնալու համար նոցա կիրքերը գոհել. աչք մտնելու համար չարին բարի ըսել հակառակ խղճի և սատտւոյ իրաւանց. մեղկութիւն մարդկանց սիրտ կապականէ. հպարտութիւն զանոնք կըզինովցունէ ու չթողուր որ անոնք իրենց ուղիղ սահմանին մէջ մնան. մեղկութիւն մարդկանց անցեալը մոռնել կուտայ և անոնց միտք կըկապէ ապագան չտեսնելու. ներկային մէջն ալ անոնք անասնական կենցաղավարութեամբ կըվարէ և կըթշուառացնէ.

Ցանցառօրն սկսաւ բանտի նկարագրութիւնը հետևեալ եղանակաւ պատմել։ Խիստ հսկողութեան տակ էր մեր բանտ. վանդակի փեղկերը և դռները երկաթ էին և բանտարկելոց ամենու ոտք շղթայակապ էր. Ներքնայարկն խիստ խոնաւ էր և օդն ապականեալ. հոն բնաւ արեգական երես չէինք տեսներ. մեր ամենէն մեծ երջանիկ ժամն այն էր երբ ընդ հսկողութեամբ շաբաթը երկու անգամ շուկաները կըտանէին զմեզ և մաքրել կուտային. այս նախատական վիճակը մեզ համար երջանկութիւն էր. վասնզի արեգական լոյս կըտեսնէինք, ամենէն անտանելին և պժգալին այն էր որ երկու մարդ միմեանց շղթայով կապած կըպահէին և կարիք վճարելու ժամանակ իսկ իրարմէ չէին զատեր այն խաւար և խոր բանտի մէջ քարայատակներու վրայ թախծեալ և գոռնահառեալ. վանդակի մէջ փակուած թռչնոց պէս կըթափառէինք առանց լուսոյ լոյս մը տեսնելու. այս ողորմելի վիճակի մէջ մտօք իրական աշխարհէն հեռանալով կերթայինք երազներու և երևակայական աշխարհներու մէջ կըշրջէինք. բանտէն կ'ազատուէինք, գործերը կըսահմանէինք. պալատներ կըշինէինք, իշխանութեան ամենէն բարձր աստիճանին կըհասնէինք

կ'իշխէինք , կը հրամայէինք , մեծամեծ հարստութիւններ ձեռք կը բերէինք , չհնազանդողները կը պատժէինք , վաճառականութեան և արհեստներու կը ձեռնարկէինք և մեր ամէն հաճոյք և փափաքները նոյն հաստատութեամբ կը գոհացունէինք ; մեր հակառակորդաց վրէժը կը լուծէինք և յանկարծակի մենք մեզի գալով երևակայականէն կրկին իրական բանտին խոնաւ խորշերու մէջ կը գտնէինք մենք զմեզ . և կ'ուզէինք այն ցնորքները իրականի ճաշակով միմեանց պատմել . Թէև պատմուածները ցնորքներ էին բայց այն յուսահատ կենաց տաղտկացուցիչ ժամերը դիւրատանելի կ'ընէին . Տասներկու տարի այս թշուառութեան մէջ մնալէն յետոյ պետական հրամանաւ մեզ ուրիշ հանքերու մէջ գնալ և աշխատիլ վճռեցաւ . կենացս մէջ աւելի մեծ ուրախութիւն տեսած չէի . երբ այն աւետեաց ձայն լսեցի . վասն զի հանքերու բոլորովին արեգական լոյս շրջապատած է , կ'ըսէին ինծի . երեք տարի ևս նոյն հանքերու մէջ աշխատեցայ , և վրաս հաւատարմութիւն տեսնուեցաւ , և երբեմն ազատ կը շրջէի . Օր մը մեր վրայ հսկող տեսուչը նամակ մը յանձնեց ինծի իր ծովեզերեայ տունը տանելու համար . Նամակը յանձնելէն յետոյ նաւահանգստի մէջ շրջան մը կատարեցի , տեսայ որ այս նաւը Ամերիկա կերթայ , ազատութեանս պատեհ առիթն ձեռքէս չկորսնցուցի . եկայ նաւը մտայ . անցագիր ուզեցին . յայտնեցի թէ ճանապարհորդ ունիմ գնալու զայն բարևելու համար նաւը պիտի մնեմ , և ժամէ մը վերջ դուրս պիտի ելլեմ . Նաւը մտնելէս յետոյ նաւապետի օթեակը իջայ և նորա ոտքին խոնարհեցայ և համառօտակի վիճակս պատմեցի . Շնորհակալ եմ , ինծի ողորմութիւն ըրաւ նաւի մէկ անկիւնը ինծի խորշ մը ցոյց տալով հոգեպահիկս եւ կուտային .

Ծերունի հայր , ըսաւ նա . տարիքէս աւելի կրածներս գլս ծերացուցին և ցարդ յուսահատութեամբ լի եմ . Չգիտեմ թէ ինչ եղանակաւ կենացս վերջ տամ : Ըսաւ իրեն ծերունին , կրածներդ քու անխորհուրդ վարմանցդ պտուղն է որ վայելած ես . ուրիշները մի մեղադրեր , քու մեղքերդ քաւած ես կրածներովդ ստոյգ է որ յուսահատութիւնը կարողացած է քու վրադ իշխել . վասնզի վերաւորեալ մարդկանց ամենէն մեծ վէրքերը կրած ես. յետին թշուառութիւն կրող անձինք միայն կարող են զգալ թէ

ինչ է թշուառաց կեանք. երկիւղը մարդկանց թէ կուտայ ա-
րագաթռիչ թռչնոց պէս ծովերու և ցամաքի վրայ սաւառնիլ և
երթալ անմարդաբնակ տեղերը և անծանօթ երկիրները պատըս-
պարան փնտրել և իր յանցանքները հոն թաղել, ես կըտեսնեմ
որ գործած անցեալ սխալմունքներ մարմնոյդ և ճակատիդ ծակտիք-
ներէ դուրս կելլեն. ուրեմն զգուշացիր որ յետ այսօրին չ՛գլո-
րիս այն վիհերու մէջ, որք քեզ պէս շատերու կեանք խաւարնե-
րու մէջ թողած են.

## ԳԻՐՔ ՈՒԹՆԻՏԱՍՆԵՐՈՐԴ

Նաւը իր ճամբան կը շարունակէ · Ծերունոյն խրատները · Երկար ժամանակ ծովու վրայ ծփալէ ետքը հասնիլ Ամերիկայի՝ Բերմուտեան կղզիները ելլելէն ։

*Նաւը իւր ուղևորութիւն կանոնաւոր կերպով կըշարունակէր այն լայնածաւալ ովկիանոսի մէջ այս անխախտ առաջնորդող կողմնացոյցի շնորհիւ ։*

*Մեր ծերունին սոյն միջոցին իւր մեղրածորան բերան բանալով՝ քաղցր շրթունքներէն հեռանեալ խօսքերը կըսահէին դուրս կելլէին և կերթային իւրաքանչիւր ունկնդիրներու սրտի և մտաց մէջ կըմտնէին և անջինջ կերպով կըդրոշմուէին այն ազնիւ սրտերու վրայ · կ'ըսէր ծերունին ։ Մեր երկնաւոր Հայրն բարի սերմը սերմանեց այս աշխարհի ագարակի մէջ · բայց մարդկանց կրից չափազանցութիւն իբրև որոմն աճելով Տիրոջ ցորեանը ապականեց ։ Քիչերն են որք իմաստուն հեռատեսութեամբ անխառն կըմնան որոմներէն · իսկ շատերը կրից այլևայլ ցաւերով կ'ախտանան և կ'ապականին ։ Սոյն միջոցին երկնային վեհութիւն մը կըտեսնուէր ծերունւոյն վրայ և նորա շուրջ գըտնուողներու ամենու աչքը նորա լուսափայլ երեսը կընայէր · մտաց շփոթութիւն զիս կընեղէր նորա այն այլափոխութեան վրայ բան մը հարցունել · սակայն համեստութեան պատկառանքը յանդուգն համարձակութեանս դէմ գալով զիս լռութեան կըդատապարտէր ։*

*Կ'ըսէր նա , կրից չափազանցութենէն յափշտակեալ մարդիկ չեն կամիր իմաստնոց ձայն լսել և անոնց խորհուրդներուն հետեւիլ · անոր համար միշտ խաւարի մէջ կըշրջին · իսկ անոնք որ նոցա ձայն կըլսեն՝ նոցա սիրտը իմաստութեան աթոռ կըլինի · տկարամիտները իրենց ընկերն կորսնցունող թռչնոց պէս շարունակ կըթափառին և հանգիստ չեն գտներ · նոքա երբ հաճոյականը կըտեսնեն , պահ մը կըհաւատան թէ իրենց փնտրածը գտած են · սակայն ամէն բանի ճաշակն առնելէն վերջ կ'զգան թէ իրենց փնտրածը այս աշխարհիս մէջ չէ · այլ Աստուծոյ իրական*

փառաց մէջ պահուած է . անոնք որ սրտով և հոգւով ու գոր-
ծով հոն կըվերասլանան՝ նոքա միայն թափառելէ ազատ կրնան.
ուղիղ վարք չունեցողները չէ կարելի որ ուրիշներուն ուղեցոյց
լինին . անոնք որ ուրիշին բարի խրատ կու տան և իրենք չար կը-
գործեն , նոյա բերանը իրենց դատաւոր կըլինի . զի գործոց
ձայն՝ բերանի խօսքէն աւելի կըներգործէ , և գործն՝ բանէն ա-
ւելի զօրաւոր կըփաստաբանէ . անոնք որ իրենց աչքի գերանը չեն
տեսներ և այլոց շիւղը հանել կուզեն , նոքա պիտի լսեն թէ՝
բժիշկ բժշկեա զանձն քո . այն խոշորացոյցն , զոր ուրիշներու
վրայ կ՚ուղղեն նոցա պակասութիւն գննելու , եթէ իրենց անձի
վրայ դարձունելով իրենց պակասութիւնները ուղղեն , արատա-
ւորներու թիւը պիտի նուազի . մարդկանց դաղանեաց պահարան-
ները որքան որ աշխատին իրենց տգեղ գործերը ծածուկ պահել
այնչափ ալ խղճի խայթ կաշխատի այն դաղանիքները երևան հա-
նել . զի ճշմարտութիւն ամէն բանին յաղթող է . ճշմարտութիւն
թէև կըհալածուի , բայց չմեռնիր . ամպը արեգական լոյս որ-
չափ ժամանակ կրնայ ծածկել , ստութիւնն ալ այնչափ կրնայ
ճշմարտութեան երեսը քողարկել . ընկերութեան բարւոյն ցեց են
աղքատ հպարտն , ստա մեծատունն, զեղխ ծերն , և անաշխատ
ծոյլն . Մահը տիեզերաց իշխանը՝ և գերեզմանը մարդկութեան
մայր է . թէպէտ մարդկութեան լոյսը գերեզմանի մէջ կըմարի,
սակայն հաւատացեալներու համար այն գերեզմանի մէջէն յաւի-
տենական երանութեան դուռ մը կըբացուի . ուրկէ մարդկիկ դէպի
մշտնջենական երանութիւն կ՚առաջնորդուին . այս մխիթարական
յոյսը խաւարի մէջ թափառողներուն աւետեաց լոյս մը կընծայէ.
պէտք չէ նայիլ այն բանին որ կըփտի և կապականի . այլ մտօք
յերկինս սլանալով դիտելու է թէ ինչպէս կըփառաւորուին ի-
րենց գործերով այն փտած և ապականեալ մարմիններու հոգի-
ները . Այս աշխարհի կեանք ստուեր մի է որ կուգայ կանց-
նի և կերթայ . բայց երկնային փառաց վրայ հաւատք հաս-
տատողները այս աշխարհի պատ կըծակեն և միւս կողմը երա-
նութեան ընդարձակ դաշտ մը կըտեսնեն . ուր մշտնջենաւորու-
թիւն , յաւիտենական փառք , անմահ լոյս , յարազուարճ բերկ-
րութիւն կըտեսնեն . և կ՚ըսեն նոքա . հոգ չէ թէ մենք մեր եղ-
բայրներէն կըհալածուիմք . վասնզի մեր յաւիտենական Հօր

տունը կերթամք նորա բարիքները վայելելու . այս տեսակներու միտքը միշտ սքանչելեաց մէջ կը խորասուզի , բնութեան պարզեներու վրայ կը հիանան . նոցա միտքը իրենցմէ հեռանալով տիեզերաց վրայ կը սաւառնի և ակնպիշ սքանչելեաց վրայ նայելով կը զուարճանան՝ մոխիրներ կամ որոց մէջէն յարութիւն կը ծնանի ։ Համեստ և առաքինի մարդկանց սրտի մէջ տեսակ մը երկնային արդարութեան ազնուութիւն կայ պահուած , զորս երբեմն ի գործ կը դնեն . նոյն ժամուն երկրի արդարութիւն կը վարանի . և իր ճանապարհ կը փոխէ . վասնզի գթութիւն իր դէմ կանգնած կը տեսնէ . նոցա պարծանք իրենց բարձր խորհուրդն է , նոցա պսակը իրենց հմտութիւնն է , նոցա փառք միշտ Աստուծոյ երկիւղն է . ասոնք լի են երկնային յուսոյ ակնկալութեամբ . անոր համար իրենց առաքինութեան վրայ շատ կը հսկեն զայն չ՚կորսնցունելու համար . առաքինութեան տեսակները միմեանց հարազատ եղբայրներ են . անոր համար միշտ հաշտ են և խաղաղ , և կը համաձայնին ամէնքն ի միասին միևնոյն սրտի մէջ բնակիլ . իսկ մոլութիւնները իրարու խորթ քոյրեր են . անոր համար միշտ թէ խռովութեան մէջ են և թէ ի միասին չեն կրնար բնակիլ և զիրար կը ջախջախեն ։

Բարեսէրները այս աւուր բարեգործութիւնը վաղուան թողուլ չեն սիրեր , առաջ բերելով թէ վաղուան մնալու ի՞նչ երաշխաւորութիւն կայ . և կ՚ըսեն՝ երջանկութեան հիմը օրերու թուոյն վրայ հաստատուած չէ . այլ առաքինութեանց վրայ հաստատուած է . կ՚ըսեն նոքա . բարեկամութեան ճշմարիտ սէրը լեզուէն աւելի սրտով կ՚ապացուցուի . զի սիրոյ աթոռը ոչ թէ լեզուի՝ այլ սրտի մէջ հաստատուած է . երբ գործն կը խօսի՝ բերանը ինքնին կը լռէ . գործերու վկայութիւն ուրիշներէն աւելի խղճէն պահանջելու է . լեզուի խօսքը մինակ կը համարուի եթէ կենդանի գործը զայն չ՚հաստատէ . իմաստուն լեզուները չարիքը կը ծածկեն և բարիքը կը խօսին . իսկ չարասիրտները բարիները կը ծածկեն չարերը կը խօսին . մոլութիւնները թաղելով չեն ջնջուիր . այլ արմատէն խլելն է նոցա իսկական դեղը ։

Նենգամիտները իրենց նպատակը թաքուն պահելու համար կեղծաւորութիւնը իրենց սրտի դրան վրայ պահապան կը կարգեն . որպէսզի իմաստունը չ՚կարողանայ հոն մուտ գտնել . և նոցա

թաղուն խորհուրդները դուրս հանել․ Անխորհուրդ լեզուները բարիքէն աւելի չարիք կը սերմանեն , և մաքուր սրտերը կը թունաւորեն . ինչպէս որ մարդկանց կերպարանքները միատեսակ չեն , այնպէս ալ նոցա կարծիքները և խորհուրդները միակերպ չեն . մէկէն ուղիղ կարծուածը միւսէն անուղիղ կը դատուի . անոր համար նոցա գործերը միշտ իրարու կը հակառակին․ բայց իմաստութեան հետևողները ամէնքն ալ միևնոյն գծի վրայ կընթանան ։

Երբ մեր ծերունին այս խօսքերը և խրատները կը խօսէր, յանկարծ մեր նաւը խաւար մշուշներով շրջապատեցաւ և իր ճանապարհ կորսնցուց . բայց նա իր յորդորները առանց ընդհատելու կ՚ըսէր . Աստուծոյ երկիւղածները իրենց ձեռք անմեղ արիւններու մէջ չեն թաթեր . որբերուն և այրիներուն զրկանք չեն ըներ . և կ՚ըսեն . ամբարիշտները իրենք զիրենք կը հալածեն. և տեսակ մը թունաւոր կենդանեաց պէս զիրենք կը մահացունեն. Աստուծոյ հաճելիները ոչ թէ նոքա են որք իրենց հոգին առաքինական համեստ գործերով կը զարդարեն. Աստուծոյ փառաց ժառանգորդները ոչ թէ նոքա են , որք նոցա կամքն և պատուէրները գիտեն և կը ճանաչեն , այլ անոնք են որք թէ գիտեն և կը ճանաչեն և թէ կատարեն կը կատարեն և կ՚ուսուցանեն . չար օրինակին այնպիսի փոխադրական հիւանդութիւն է , որմէ չուզողները անգամ կը բռնուին . բարեկարգիչներու ամենէն մեծն այն է՝ որ բարեկարգութիւնը իր անձէն և իր տունէն կ՚սկսի , այն որ իր անձին չար է՝ միթէ հնա՞ր է անկէ բարիք յուսալ․ ողջամիտները թունաւորիչ օձերու երեսէն փախչողներու պէս կը փախչին մեղաց ժանիքներէն . զի գիտեն թէ մեղքը մարդու հոգին և մարմինը ի միասին կ՚ապականէ և կ՚ըսեն նոքա թէ՝ Աստուծոյ փառաց աթոռը հեզերու և խոնարհներու սրտի մէջ հաստատուած է ․ Լոյս տեսնելու համար աչք պէտք է , ճշմարիտն ճանաչելու համար իմաստութիւն պէտք է . յորմէ զուրկ են մոլիները . անկէ մեծ պատիւ չէր լինէր մարդկանց երբ Աստուած նոցա հոգիները իր կերպարանաւ ստեղծեց . այսինքն իմաստութեամբ հանճարով և շնորհօք զարդարեց զայն . սակայն հոգին մեծապէս անպատուեցաւ , երբ ինքզինք այն բարիքներէն զրկեալ տեսաւ . և այս հարուածը հպարտութեան արմատէն

ծնունդ առաւ ։ Մարդ երբ իւր շնորհքները կորսնցուց , հոն իմացաւ իւր ծայրագոյն թշուառութիւն ։ Մարդասիրութեան առաջին հեղինակը այն կը համարուի որ զմարդն կրկին անմահացունելու համար ինքը յօժարութեամբ մեռաւ ․ անիկա այն երկնային բժիշկն է , որ մարդկանց հիւանդութիւնները իրենց բացայայտեց և իւր արիւնով նոցա վէրքերը լուաց և մաքրեց ու առողջացուց ․ նորա մահուան մէջէն տիեզերական յարութիւն մը վերածնաւ ․ նա խաչ մը ունէր՝ որ հոգիները յերկինս հանելու սանդուխ եղաւ հաւատացելոց , շատերը բնութեան և նորա օրինաց հետ խաղացին ․ բայց անոնցմէ շատերը կէս ճանապարհին մնացին ․ իսկ Գողգոթայի զոհը յաղթեց բնութեան և նորա օրինաց ։

Այս անձի՝ և երկնային էակի համար ամենէն մեծ և պատուական բանը մարդկանց փրկութիւնն էր , որ իւր անմեղ արեամբ նուիրագործուեցաւ ․ այն փիլիսոփայութիւն որ տիեզերքը քննեց և աշխարհ յեղափոխեց , նա չկարողացաւ վերահասու լինիլ նորա գործերուն ․ և իւր ոտք փիլիսոփայութեան և տրամաբանութեան քարերու վրայ դնելով ճմլեց , և ինքն յերկինս վերասլանալով ըսաւ «Ես յաղթեցի աշխարհին» ։ Աստուծոյ սէրն այն լարն է՝ որ նորա իմաստութեան ծոցէն բղխելով տիեզերաց վրայ կը սփռուի և մարդիկ միմեանց հետ և ամենքն ի միասին Աստուծոյ հետ յարաբերական կապով կը կապէ ․ Աստուծոյ իմաստութիւն այն հեղինակն է՝ որ տիեզերաց հիմունք անհաստատութեան վրայ հաստատ հիմնեց և սքանչելարուեստ ճարտարապետութեամբ յօրինեց այն վսեմ տեսարանը , որու վրայ բովանդակ արարածները , կենդանի և շնչաւորները կը խնամէ և կը կերակրէ ․ Աստուծոյ հանճարն այն հեղինակն է ․ որ բովանդակ տիեզերք կը կառավարէ ․ Աստուծոյ զօրութիւն այն անհասանելի իրն է՝ որ տիեզերաց մշտնջենաւոր շարժումն կուտայ ․ Աստուած այն ինքնագոյ , ամենիմաստ և ամենազօր հեղինակն է , որ ինքն անեղ , անսկիզբն և անժամանակ է ․ բայց ժամանակի մէջ իւր բացարձակ ազատ կամեցողութեամբ յոչնչէ գոյացոյց ամէն եղածները ․ նորա բերնէն իմաստութիւն , նորա քաղցր սրտէն հանճար և նորա կարողութենէն զօրութիւն կը բղխի ․ նորա իմաստութիւն իրեն խորհրդակից և տիեզերաց շինութեան ճարտա-

րապետն է . իմաստութիւն յառաջ քան զլինելն աշխարհի Աստուծոյ մտաց և սրտի հետ կապուած էր . ստեղծագործութեան ժամանակ Աստուծոյ խորհրդակից և ճարտարապետն էր . երկիր ստեղծելէն . անդունդները բանալէն , լեռները հաստատելէն , աղբիւրները ջուր բղխելէն առաջ նա Աստուծոյ խորհրդակիցն էր . իմաստութիւնն էր որ երկնից կամարը յօրինեց և զայն զարդարեց , ծովերուն սահման դրաւ , աղբիւրները և գետերը իրենց տեղը զետեղեց . և անսխալ կերպով տիեզերքը կըկառավարէ . թագաւոր և դատաւոր իմաստութեամբ կըկառավարեն , իմաստութիւն անվրէպ ճանաչել կուտայ աշխարհի հաստատութիւն , բնութեան օրէնք և ազդեցութիւն , ժամանակի սկիզբը , մէջ , և կատարած , փոփոխումները և շրջանները , տարբերաց մասունքները, արեգական, լուսնի և աստեղաց գնացք և շրջան . անասնոց բարք , գազանաց բնաւորութիւն , հողմերու բռնութիւն, մարդկանց խորհուրդները , տունկերու այլակերպութիւն , արմատներու զօրութիւն եայլն .

Իմաստութիւն ուղղեց երկրաւորներու շաւիղը և ուսոյց մարդկանց Աստուծոյ կամք և հաճոյքն . նա եղաւ մարդկանց փրկութեան առաջնորդ . նա միայն գիտէ թուել արձրևներու շիթը , ծովու աւազները , օրը և ժամանակը , նա կրնայ չափել երկնից բարձրութիւն , երկրի լայնութիւն , անդունդներու խորութիւն իմաստութեան լեզուի տակ անմահացուցիչ դեղ կայ պահուած . նորա շրթունքներէն կեանք և անմահութիւն կըբղխէ . իմաստունները բնութեան գաղտնիք կըխուզարկեն և կըգտնեն . անցելոյն վրայ հասուն խորհրդածութիւն կընեն , ապագան կըգուշակեն և չարը բարիէն խիստ լաւ կերպով գիտեն որոշել . իմաստուններ , մոլիկներէն խոյս տալով կ'ապրին . իսկ կարճատեսները իրենք զիրենք նորա հասանաց մատնելով յօդս կըցնդին.

Իմաստունները իրենց տան մէջ աներկիւղ են . և քաղցր քուն կըքնանան ու ամբարիշտներու զարհուրանքէն չեն վախնար , վասնզի իմաստութեան լոյսը անքուն աչքով անոնց վրայ կըհսկէ. իմաստունները իրենց իմաստութեան վրայ չեն հպարտանար . վասնզի գիտեն թէ անիկա Աստուծոյ շնորհքն է , որ իրենց մէջ կըգործէ . նորա իրենց բարեկեցութեամբ բարեկամները կաւելցունեն . իսկ կարճատեսները իրենց գործով բուն բարեկամներու

բարեկարգութեան կապը կըխզեն . իմաստունները բազմագէտներէն աւելի օգտագէտները արժանի կըհամարին վերակացութեան նորա իրենց թշնամիները կործանեալ տեսած ժամանակ ոտնակոխ չեն ըներ . այլ զայն վերցունելով նոցա երախտագիտութիւն կըքննեն . իմաստուն բարեկամի վէրք կամակոր թըշնամւոյն համբուրէն նախապատիւ է . յայտնի յանդիմանութիւն ծածկեալ բարեկամութենէն լաւ է .

Մոլութեան ախտերը լիրբ են , եթէ առաջին անգամ չ՚պատժես , յետ այնորիկ անկարելի է զանոնք զգաստութեան բերել . վասնզի ունականալէն յետոյ ոչ կըպատկառին և ոչ կըվախնան . մարդ մը թէ իր ամէն հաճոյք և թէ Աստուծոյ կամք ի միասին չէ կարելի որ կատարէ . վասնզի սիրտ մի է՝ չբաժնուիր . եթէ մինն կատարէ , միւսն զանցառութեան կուտայ , բարիներու համար մահուան օրը ծնած օրէն նախապատիւ է . իսկ չարերու համար ծնած օրը մահուան օրէն նախապատիւ է . վասնզի մին կըփափագի գնալ փառաց հասնիլ . միւսն կըզժկամի գնալ տանջանաց հասնելու . Աստուած ամէն բան բարի ստեղծեց . չարը վերջի եկամուտն է . չարերը միշտ իրենց կանգունով կըչափեն զբարիները . բայց հեռատես բարիները խուլ կըլինին նոցա ձայն լսելու . Աստուած չթուեր , այլ կըկշռէ մարդկանց գործերը . և ըստ այնմ կըհատուցանէ . հեշտութիւնները թէև մարդկանց սիրտ կըգրգռեն բայց չեն յագեցուներ . ոչ աչք տեսնելով կըյագենայ . և ոչ ականջը լսելով, ուրեմն միայն Աստուած է մարդկանց փափագանաց լրումն .

Երջանիկ են անոնք՝ որ գիտեն թէ ամէնքը միայն ամենուն է . Մարդ երանութիւն կուզէ որ երջանիկ լինի . բայց նախասահմանութիւն մարդկանց վիճակը պարզ ցոյց չտար . անոր համար մարդիկ երբեմն երջանկութիւն փնտրած ժամանակ կերթան անելանելի ճանապարհներու , մթին տեղերու , անանցանելի վայրերու մէջ կըգլորին . մարդկանց կրելիներու մեծ մաս իմաստութեան գաղտնեաց խորերու մէջ թագուն պահուած է . ասկէ ի զատ մթութիւն մը ևս կայ որ ամենէն վտանգաւորն է . վասնզի շատ խորղութիւններ կան անոր մշուշներու մէջ պահուած , յանցաւորներ կան՝ որ ձիւնի մէջ ծակ բանալով իրենց տգեղ գործերը հոն կըծածկեն որ չ՚տեսնուի . բայց երբ գարուն կու-

ցայ և արեգական լուսոյ և ջերմութեան շառաւիղները ծիներու վրայ տարածելով զանոնք կըհալեցունէ , այն ժամանակ այս ամէն գաղտնի պահուիլ կարծուած գործերը ինքնին երևան կուգան . ինչպէս որ ջղջիկները արշալուսէն խոյս տալով խաւար տեղերը կըփնտրեն , այսպէս և ոխենգամիտները իրենց սենեակ կըմտնեն , դռները կըփակեն , պահարանները կըգոցեն . ճրագները կըմարեն. որպէսզի մէկը չտեսնէ զիրենք և իրենց խաւարի մէջ պահուած գործերը . բայց նոքա ի՛նչ բանէ որ կըկասկածէին՝ անկէ աւելի զօրաւորն իրենց հետ ներս մտած և ամէն բան քննած և տեսած է . այն որ դուրս ձգել կուզէին՝ նա միշտ իրենց հետ և իրենց սրտի մէջն է . այն աչքին՝ որ արգելք դնել կուզէին որ իրենց գործերը չտեսնէ նա անոնց այն գործերը յղացած ժամանակ տեսած է և չէ կարելի զայն հալածել . զի անիկա Աստուծոյ ամենատես աչքի լոյսէն առած է իր հեռատեսութիւն և զօրութիւն ։ Անիկա լրտես մի է Աստուծոյ կողմէն կարգուած մէն մի մարդոյն մտաց և սրտի մէջ. նա իր հեղինակի պէս անյատակ է , նորա սրամտութենէն նըշանախեց մը անգամ չվրիպիր , նա պաշտօն ունի մարդկանց գործերը քննելու դատելու և պատժելու . նորա պատիժը ամէն դատաւորաց պատիժներէն սաստկագոյն կըներգործէ . զի գիշերը կըվիրաւորէ . ցորեկը կըխայթէ . ուր որ երթան նորա աչքը սրտին մէջէն չելլեր . նա փայլակի արագութիւն զօրութիւն ու արծուոյ տեսութիւն ունի . շանթի պէս կըզարնէ և սիրտ ծածկող մշուշները կըպատռէ . խաւար տեղերը կըլուսաւորէ և անոնց մէջ պահուած գաղտնի խորհուրդները կըկարդայ և տգեղ գործերը կըխայտառակէ ու չար գործողները կըպատժէ . հին թունաւոր իրողութիւններ կան , որ՝ նոր կեղևներու տակ ծածկել կուզեն իրենք զիրենք . այսպէս ալ ստութիւններ կան՝ որք կեղծ ուղղութեան դիմակով իրենց երեսը կըծածկեն որ չտեսնուին և չճանաչուին . կեղծիքներ ևս կան որք օձու պէս իրենց շապիկ կըփոխեն . ուրեմն զանոնք լաւ կերպով ճանաչելու և անոնցմէ ազատ մնալու համար այնպիսի սրատես աչք մը պէտք է՝ որ կարողանայ մտքերու և սրտերու խորերը թափանցել գտնել այս տեսակները և ցոյց տալ աշխարհին . Սակայն այս ալ խիստ դժուար է . վասնզի աշխարհի

ամենէն մեծ տեսարանը ծովն է. ծովէն մեծ երկնից տարածութիւնն է. երկնից տարածութենէն աւելի խոր է և ընդարձակ մարդկանց սիրտը. ծովու և երկնից գաղտնիքները քիչ շատ կարելի է իմանալ. բայց սրտերու ծածուկ խորերու մէջ պահուած գաղտնեաց գրեթէ անկարելի է թափանցել. խիղճն անգամ կը տկարանայ այն պայծառ կերպով տեսնել և շօշափել. երբ ինքը կրից բռնութեան տակ ճնշման ներքև գտնուի.

Սիրտը ցնորքներու և յանկութեանց ու փորձերու քաօսն է. երազներու շտեմարանն է. գաղափարներու հանրագիտական տեսարանն է. կրից պատերազմի դաշտն է. հոն միմեանց կը յաջորդեն լոյս և խաւարը, որոց մէջ կը վխտան հսկայից պատերազմները, վիշապաց զիրար ջախջախելը, ուրուականներու երամները, երեւակայական տեսիլները, բարիները և չարերը. որք յաջորդաբար կուգան մտքի տեսութեան առջևէն կանցնին կերթան և երազներու պէս կը խորասուզին և կրկին երևան կելլեն. սիրտը անեզր կերպով անոնց մէջ և սանք սրտի մէջ շարունակ կը յուզուին։ Իմաստութեան խորհուրդն եթէ սրտի բորբոքումները չհանդարտեցունէ, նոքա եռացումի կը փոխուին, և անկէ վերջ մեծամեծ աղէտներ առաջ կուգան. սիրտ բորբոքողը կիրքերն են. ուրեմն իմաստութեամբ պէտք է իշխել կրից չափազանցութեան վրայ, կիրքերը ևս իրենց մասնաւոր սահմանքն ունին. եթէ չափէն աւելի բռնաւորեն՝ մեծամեծ հեւանդութեան ենթակայ կը լինին. ուրեմն կամահաճութիւնները ըստ տեղւոյն իրենց ախորժակաց դռներու վրայ համեստութեան կղպակը կըդնեն, որ չափազանցելով չվնասուին. Ժամանակս կարճ է խօսքերս վերջացնելով կ'ըսեմ. ով մահկանացու մարդիկ ձեր, ընկերական աշխարհի բարերարներն և բարեկամներն հանդիսացէք. ձեր կրից չափազանցութիւն սանձահարեցէք և մխիթարեցէք աղքատ թշուառները, որք միշտ զձեզ կօրհնեն. աղքատ և թշուառ առաքինիներուն լեզուն համր կը լինի. վասնզի միշտ համեստութեան և համբերութեան սահմանի մէջ կը թափառին. տաճարներէն ամենէն գեղեցիկը՝ մխիթարեալ թշուառներու սիրտն է. որ միշտ շնորհակալութիւն կը մատուցանեն Աստուծոյ և կ'օրհնեն իրենց բարերարները. Իմաստութեամբ մղել պէտք է չարն դէպի բարին, անիրաւն դէպի ար-

ցաւն , սուտն դէպի ճշմարիտն , խաւարն դէպի լոյս , տգէտն դէպի գիտութիւն , ախորժակն դէպի խիղճ , փտութիւնն դէպի վերակենդանութիւն . վայրենին դէպի պատուաւոր ընտանութիւն. դժոխքն դէպի երկինք . ոչնչութիւնն դէպի Աստուած ։

Ծերունին իր խօսքը կըվերջացունէր . իսկ մեր նաւը տասներեք օր մշուշներու մէջ անստոյգ վիճակ մը ունէր . և աՀա նաւաստիներէն մին ցամաք ցամա՛ք աղաղակեց . երկու ժամէն վերջ փոխանակ Ամերիկայի՝ մենք և նաւը զմեզ Բրիտանական կղզեաց նաւաՀանգիստներու միոյն մէջ գտանք . և դուրս ելլելով մասնաւոր շրջան մը կատարեցինք ։

## ԳԻՐՔ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Եւրոպայի օդը և կլիման . երկրի դիրքը և չափը , բարքը և սովո-րութիւնները , բնութեան տեսարանները . մարդկանց բարք և բնաւո-րութիւն , գործունէութիւն և յառաջադիմութիւն . հանճար և խոհա-կանութիւն . երկաթուղիները և շոգենաւերը . և շոգեշարժ գործարան-ները . վաճառականութիւն և յառաջադիմութիւն , մարդկանց կրթու-թիւն և ազնուականութիւն , [illegible] կայսեր թագաւորութեան հանդէս , Կոստանդնուպոլսոյ և Նեապոլի [illegible] պալատները և պատերազ-մական նաւերու նաւարկութիւն . վերադարձ է [illegible] :

*Եւրոպայից ժողովուրդ՝ որ կովկասեան մէկ հատուած լինել կը թուէր , իւր նախնի վեհութիւն և քաջութիւն ու սրամիտ հեռատեսութիւն ունէր , և կը պահէր զանոնք իւր սրտի մէջ . նորա կորմնցուցած չէին իրենց ազնիւ յատկութիւնները և բարձր դիրքն . վեհանձն էին և մարդասէր . առհասարակ աշխատասէր էին և երկրագործութեան խիստ մեծ խնամք կը տանէին . վաճա-ռականութեան զարգացման համար ամէն հնարաւոր միջոցները ի գործ կը դնէին . ուսմունք և գիտութիւն արհեստ և ամենա-տեսակ աշխատութիւն խիստ յառաջադիմութեան մէջ էին : Այս սրտով և մտօք , ուժով և գիտութեամբ զարգացեալ հարուստ ժողովուրդն հանգիստ և խաղաղ ապրելու միջոցներու վրայ չա-փազանց միտք կը յօգնեցունէր և գործնականապէս կերթար իւր նպատակին հասնելու . ինչպէս որ իւր սիրտ և միտք բեղմնա-ւոր էր , այսպէս և երկիրը բեղմնաւորութեան մէջ դնելու ամէն ջանք և հնարք ի գործ կը դնէր . այս ժողովուրդ իւր հանճարով և գիտութեամբ , արհեստով և աշխատութեամբ իր բնակած եր-կիրը նիւթապէս և բարոյապէս այն ճոխութեան և հարստութեան մէջ դրած էր , որու վրայ ուրիշ ազգերը կ՚սքանչանային և կը հիանային . երկիրն զուարթ էր և բարեբեր , այնպէս որ երկ-րագունդի վրայ գտնուող ամէն երկիրներէն վերադաս բարձր դիրք մի ունէր .*

Շրջապատուած էր այն երկիրը Ատլանդեան և Սառուցեալ հա-մատարած ովկիանոս ծովերէն , Ուրալ և Կովկաս լեռներէ , Կասպից և Սև ծովերէ . որք իբրև պարիսպ զինք պաշարած կը-պաշտպանէին արտաքին թշնամեաց յարձակման դէմ . Երկրին մէջ և բոլորտիք շրջապատող բնութեան սքանչելարուեստ յօրին-ուած ծովերը և ծոցերը խիստ գեղեցիկ էին և ապահով . ասոնց նաւահանգիստները վաճառականութեան մեծ դիւրութիւն և ըն-դարձակութիւն կուտային . Ջրանցքները և նեղուցները մէկ մէկ պահապան դռներ էին այն ամէն եկող և գնացող օտար նաւե-րուն , որք քննութեան բովէն անցնելէն վերջ ներս կառնուէին և դուրս կը հանուէին . Բնութիւնն սոյն երկրի զոռող հրուան-դաններուն թեւերը ծովերու վրայ տարածած և պաշտօն տուած էր անոնց եկող ամեհի ալիքներուն դէմ դնել և անոնց զոռող և ամբարտաւան գլուխը իրենց ոտքերու տակ առնել և փշրել . որ-պէսզի իրենց սահմանը չանցնին և երկիրները չապականեն .

Նոյնպէս իր թեւերու տակն առած կը պաշտպանէր խիստ շատ թուով մեծ և փոքր բարեկի կղզիները , սոյն երկրի ոսկւոյ և արծաթի ու զանազան հարստութեամբ լի բարձրահասակ հպարտ և զոռող լեռները իրենց գլուխ ամպերու սահմանէն դուրս հա-նած և դէպի երկինք բարձրացուցած իրենց անհամեմատ հարս-տութեամբ և ճոխութեամբ՝ բովանդակ աշխարհի նախանձն և ուշադրութիւն իրենց վրայ կը հրաւիրէին . բնութեան տեսարանի գեղեցկութեան փայլ տուող բազմաթիւ լիճերը և անտառները , դաշտերը և այգիները , պարտէզներն և ծառաստանները հե-տաքրքիր նայողներու սրտին և ոգւոյն սքանչացում կուտային . երկիրը ինքնին կուրախանար կը հրճուէր իւր ծոցէն բղխող ծանր և հանդարտաքայլ գետերու և յորդահոս աղբիւրներու և վտակ-ներու վրայ . որք ճիւղերու բաժնուած կերթային դաշտերը բա-րիքներով կը լեցունէին , այգիները պտուղներով կըզարդարէին , և պարտէզները գոյնզգոյն անուշահոտ ծաղիկներով և վարդերով կը փառազարդէին . և երկրի ժողովրդեան վրայ բերկրալի հա-ճոյք և ուրախութիւններ կը սփռէին . ու երկիրը բարիքներով կը լեցունէին . երբ այս մասնաւոր տեսարանները կուգային և միմեանց հետ կը միանային՝ կը կազմէին այն մեծ և վսեմ տեսարանը որ ամենամեծ և ամենիմաստ Հեղինակի փառքերը կ՚աւելցունէին.

երկնային իմաստութեան և զօրութեան վրայ մտածող մտքերը երբ իրենց ուշադրութիւն սոյն սքանչելի տեսարանի վրայ կըդարձունէին՝ կ'զմայլէին Աստուծոյ սքանչելեաց և հրաշալի կերտուածոյ վրայ . և յետ այնորիկ ոչ նոցա աչք կըյոգնէր և ոչ սիրտ կըկշտանար այն զմայլելի տեսարանը դիտելէ .

Եւրոպայի արեւմտեան կողմը Ովկիանոսի մէջ տարածուած Բրիտանական կղզիները խիստ ճոխ էին և հարուստ իրենց ընդարձակ ծովային վաճառականութեամբ . գրեթէ բոլոր երկրագունդի վրայ տարածուած ազգաց հետ յարաբերութեան մէջ էին , ասոնց բազմաբեղուն հանքերով և զանազան բարիքներով լի հարուստ լեռները ստուեր կըձգէին ուրիշ երկերներու ամուլ և ձիւնապատ բարձր լերանց վրայ . սոյն երկրի մէջէն մեծամեծ և արագընթաց գետեր ելլելով կերթային դաշտերը պտղաբերութեան մէջ դնելու . երկիրը աննախանձաբար կըսփռէր իր բարիք իր աշխատասէր ժողովրդին վրայ . Սոյն երկրի կլիման ցուրտ էր և օդը խոնաւ , և միշտ գրեթէ մշուշներով պատուած պարզ և պայծառ օրերը խիստ քիչ կըտեսնուէին. երկիրը իւր ծոցէն կըհանէր ցորեան և ուրիշ արմտիք , ընտիր էին ձին և ոչխարն , հանքերը իրենց բազմաբեղուն ծոցէն կըհանէին ոսկի և արծաթ , երկաթ , պղինձ , կապար , անագ , հանքածուխ և նշանակութեան արժանի էին ջրանցքները . սոյն երկրի մէջ կային բազմաթիւ երկաթուղիներ , որք վաճառքներով և վաճառականներով բեռնաւորեալ՝ կերթային և իրենց սրընթացութեամբ օդի մէջ թռչող թռչնոց հետ կըմրցէին . շոգենաւք և առագաստանաւք ծովերու և ովկիանոսներու ալիքները ճեղքելով պատառելով վաճառքները կըփոխադրէին երկրագունդի չորս կողմը , և այն երկրի վաճառքներով բեռնաւորեալ կըկին իրենց տեղը կըդառնային .

Երկրագործութիւն և ճարտարապետութիւն ու ամէն ձեռնարհեստները առաջին կարգի կատարելութեան մէջ էին՝. շոգեշարժ գործարանները անհամեմատ արագութեամբ իրենց մեքենաները հոլովելով անթիւ վաճառքներ կարտադրէին , Լոնտոն թագաւորանիստ մայրաքաղաքն իւր շքեղ փառաւորութեամբ և երեք միլիոն ժողովուրդով ու մեծ հարստութեամբ շատ մայրաքաղաքներու նախանձը կըշարժէր . խիստ կանոնաւոր էր սոյա կառա-

վարութեան ձեր և եղանակն . խորհուրդները և ժողովները ան-
քան այսօր կը հսկէին օրինաց գործադրութեան , և օրինաց հա-
մաձայն կը խորհուէր և կը տնօրինուէր տէրութեան և ազգային ու
հանրական գործերը . և ամէն սարեգլխոյն կը յայտարարուէր
հասարակութեան կատարուած գործողութիւնները և գալիք տար-
ուան մէջ գործուելու խնդիրներու յատակագիծը կը յայտարար-
ուէր :

Նշանաւոր էր արքունի պալատը , ժողովոյ խորհրդարանը ,
բարլամէնթը , սուրբ Պօղոսի եկեղեցին . հասարակաց շէնքերը ,
գետափունքն , կամուրջները և Թայմզ գետին տակէն անցնող
մեծագործ ճանապարհն . մանաւանդ նաւահանգիստն , որ երկու
հազարէն աւելի նաւեր կը պահէր իր ծոցը և կը պաշտպանէր
զանոնք ովկիանոսի վնասակար և կատաղի ալիքներու դէմ :

Եւրոպայի մէջ մեծ տեղ մը կը բռնէր Գաղղիա իր ուսմամբ
և գիտութեամբ , արհեստի և հանճարով . այս երկիրը ևս իր
փառաւոր դիրքն ունէր . օդը և կլիման բարեխառն էր . եզն իր
աշխատութեամբ , կովն իր կաթով , ոչխարն կաթով և բուր-
դով , հաւն իր ձուով երկրի ժողովուրդին սնունդ կը մատակա-
րէին . վայրի կենդանիները անգամ երենց մորթով օգտակար
էին երկրի հարուստ վաճառականութեան :

Սոյն երկրի մէջ ինչպէս որ վաճառականութիւն մեծ յառա-
ջադիմութեան մէջ էր , այսպէս և երկրագործութիւն խիստ
դիւրութեամբ առաջ կը մղուէր . սոյն ժողովուրդ իր գիտցածը
աննախանձաբար կը սորվեցունէր ամէն փափագ յայտնողներուն :
Ասոնք քանքարաթաղոյց լինել չէին սիրեր . և մարդասիրու-
թեան պարտք կը համարէին գիտցածնին ուսուցանել . աղքատաց
և թշուառաց կարեկից էին . սակայն սոսկալի կերպով կ'ատէին
ծոյլ մարդիկը , որոնք արհեստի և գիտութեանց մէջ յառաջա-
դէմ պանուողները կը սիրէին և կը քաջալերէին . ու աշխատու-
թիւնը լիաձեռն կը վարձատրէին . անոր համար երկիրը օր ըստ
օրէ դէպի յառաջադիմութիւն կ'երթար :

Նորա միշտ իմաստուն և խոհեմ մարդիկ կը բազմեցունէին
հասարակաց գործոց գլուխ . արժանաւոր ծառայութիւն մատու-
ցանող ծերերը միշտ յարգանաց և պատուոյ մէջ էին . բարի և

գործունեայ մարդկանց մեծ յարգ կընծայէին . ստախօսները չէին սիրեր , առաջ բերելով թէ՝ պատուաւոր մարդումը համար ստախօսը անարժան է . մարդիկ ստուէն աւելի իրենց ճշմարտախօսութեամբ կընան շահիլ . ստութի մը ճշմարտութեան գոյն տալու համար հազար ստեր ստեղծել և հարիւրաւոր երդումներ ընել պէտք է . և կրկին ստութը ստոյ լինելէ չ'դադրիր . ոչ թէ ստութիւն՝ այլ ճշմարտութիւնն է մարդկանց իրաւանց պաշտպանը , ասոնց դատարանի մէջ մուտք չունէին ոչ սէրը և ոչ ատելութիւն , ոչ երկիւղ և ոչ շահասիրութիւն . ոչ աչառութիւն և ոչ ազդեցութիւն . այլ օրէնք կը խօսէր . օրէնք կը վճռէր յանուն արդարութեան . Կ'ըսէին նոքա , երջանիկ են այն ազգերը և ժողովուրդները , որք իրենց ձեռքի՝ աշխատութեամբ կ'ապրին և տառապեալներուն կ'օգնեն ու կը գթան , և աղքատներուն ողորմութեան ձեռք կը կարկառեն , իրենց ընկերները մարդասիրութեամբ կը մեծարեն , և անոնց կ'օգնեն , ամենու հետ քաղցրութեամբ կը վարուին , ծերերը կը պատուեն , տղէմները կուսուցանեն . Կ'ըսէին նոքա . բարի վարքն համբաւ գնելու վաճառականն է , իսկ չար վարքն մահուանէն առաջ զմարդիկ նախատանաց մէջ մահացունելով կը թաղէ , ծուլութիւն զմարդն նախախնամութեան բարիքներէն կը զրկէ , բնութեան տուրքերէն կը կողոպտէ , զանոնք չքաւորութեան մատնելով կը թշուառացունէ և անպատիւ կ'ընէ . իմաստուն մարդիկ իրենց վաճառականութեան մէջ ամենէն բարձր գինը իրենց պատուոյն կուտան . վասնզի պատիւը անգին՝ կեանքէն՝ աւելի բարձր արժէք ունի . իմաստութիւն սոյն ժողովրդին միտք լուսաւորած և սիրտը կրթած էր . խիստ յօժարամիտ էին իրենց միտքը սնուցանելու և զօրացունելու , և այս մասին մէջ մեծ հաճոյք կ'զգային . Գիտանի ուսմունք և արհեստներ շարունակ սոցա մտաց առարկայ էին . ասոնց շոգեշարժ գործարաններէն կարտադրուէին այն արծաթէ և մետաքսէ հիւսուած գոյնզգոյն ծիրանի և կապոյտ կերպասները և բեհեզները , որք մարդիկ կ'սքանչացունէին . սոյն ժողովուրդ միշտ շարժման մէջ էր . կաշխատէր իւր հարստութիւնն աւելցունելու . ամէն մարդ իւր գործով կ'զբաղէր . անգործ և դատարկաշրջիկ մարդիկ խիստ քիչ կը տեսնուէին . ասոնց առագաստանաւերը և շոգենաւերը՝ ծովերու ալիքները ճնշե

լով և իրենց ոտքի տակն առնելով նոցա վրայէն սահելով աբագրնթաց ասուրհանդակի պէս կներթային հողմաշունչ օդերու և մրրիկներու հետ մրցելով յաղթելով, անխոնջ իրենց ճանապարհ կըշարունակէին, և վաճառքներ ապահովապէս կըտանէին իրենց դէմ եղեալ նաւահանգստին և նպատակին կըհասցունէին. ասոնց վաճառականները ուշիմ էին գնելու մէջ, հանճարեղ էին վաճառելու մէջ, հաւատարիմ էին իրենց պայմանաժամը չ՚կորսնցունելու մէջ, քաղցրախօս և մեղմ էին սակարկութեան մէջ. Կ՚ըսէին նոքա. Հարստանալու ճանապարհ ամայի է և փշոտ. աշխատասիրութիւն, հեռատեսութիւն, շարունակ խորհրդածութիւն և գործառնութեանց մէջ անյողդողդ յարատեւութիւն. ասոնք խիստ լաւ գիտեն նորա շաւիղը յայտնել. արդարութիւն և հաւատարմութիւն վաճառականութեան ճանապարհները կ՚ընդարձակեն, նաև հարստանալու ամենէն զօրաւոր միջոցն է տնտեսագիտութիւն. ինչպէս և աղքատացունելու զօրաւոր միջոցն է շռայլութիւն. իմաստուն վաճառականները իրենց առևտուրի միջոցին կարևորէն աւելի չեն խօսիր, և իրենց խոհեմութիւն միշտ յաճախորդները կ՚աւելցունեն. կարճատեսները չափէն աւելի ապրանք առնելով վաճառականութեան ուղղութիւնը կըկորսնցունեն. պէտք է որ վաճառականը իւր աչքի առաջ պահէ իւր նիւթական կարողութիւն և երկրի պէտքն:

Նշանաւոր էին սոյն երկրի հասարակաց շէնքերը. Սէն գետի վրայ շինուած Փարիզ քաղաքը, հասարակաց զբօսավայրը, անտառները, պարտէզները, ճեմարանները, թանգարանները և համալսարանները: Գերմանիոյ դաշնակցութեամբ միացեալ ժողովուրդն խիստ ուժեղ էր և կորովի. ամէն բանի վրայ պաղարիւնութեամբ կըխորհէր. շատ խորհելէն վերջ գործի կըձեռնարկէր, և ձեռնարկած գործը իւր հաստատամտութեամբ առաջ կըտանէր. խիստ աշխատասէր էին և պարզասէր, սոցա երկիրը թէև ցուրտ՝ բայց բարեբեր էր. շատ խնամք կըտանէին երկրագործութեան: Սոյն երկիր հարուստ էր իւր զանազան հանքերով. Ճարտար էին ասոնք գիտութեան և արհեստներու մէջ. սոքա սնափառութիւն չէին սիրեր. Կ՚ըսէին ասոնք. ողորմելի են այն մարդիկ որք գիտութեանց մէջ լուսոյ պէս կըփայլին, բայց իրենց ախտաւոր գործերով խաւարի մէջ կըշրջին.

ամենէն մեծ սխալ գործող այն է՝ որ կ'ըսէ․ ես անսխալ եմ. ասոնք շատախօսութիւն չէին սիրեր առաջ բերելով թէ շատախօսները իրենց անձի յարգանք կը կորսնցունեն․ և սակաւախօսութենէն աւելի ծաղկելի բան չ'կայ․ վտանգներէն շատ կ'զգուշանային․ բայց անոնց մէջ բռնուելէն վերջն ալ շուտով չէին գլիցաներ․ այլ անխռով մտօք և աներկիւղ սրտիւ անոր դէմ կըկռուէին․ փառամոլութեան հետամուտ չէին, զի կ'ըսէին․ ժողովուրդին հոգերը վիճակրով լի են, և վտանգներէն դերծ չեն․ մեծութեան հետ կապուած փառքը սասանական է․ զի այն փառք մարդկանց կիրքերը չկշտացունելէն ի զատ աւելի կըգրգռէ առաջ գնալ դէպի ուրիշ մոլութիւններ․ սոքա կըփափագէին իրենց սիրտ և միտք մշակել ոչ թէ անոտի փառաց հասանելու ըղձիւ՝ այլ աւելի զայն մերժելու եղանակին ուսանելու քաղցր յուսով․ կըսիրէին իմաստութիւն և կ'ըսէին․ իմաստութիւն միայն գիտէ թախծեալ սրտերը զուարթացունել․ իսպառ կըմերժէին ծոյլերը և կ'ըսէին․ անգործութիւն զմարդն չքաւոր կընէ և անպատիւ․ ծոյլերը իրենց թշուառ լինելուն չէին բաւականանար, այլ ուրիշներն ալ կըթշուառացունեն իրենց հետ․ նոքա լի և առատ բարութեանց մէջ սովամահ կըմեռնին․ սոցա կեանք ողջախոհ էր և պարկեշտ․ կըսիրէին ապրիլ մտաց և ձեռաց աշխատութեամբ, սրտով կըսիրէին երկրագործութիւն․ և գործնական կերպով նորա եսնէն կերթային․ և անկէ կակընկալէին պիտոյքներու մեծ մասը։ Կ'ըսէին նոքա․ մշակները այնքան չեն նեղուիր իրենց գերեզմանի մէջ՝ որչափ որ ծոյլերը կընեղուին չքաւորութեան և թշուառութեան մէջ․ ինչպէս որ մեղքերէն ցաւեր կըծնանին, այնպէս և ծոյլերու յուսահատ տրտմութիւններէն կենաց ձանձրութիւն․ որու հետևանք շատ անգամ եղած է անտանուած անձնասպանութիւն․ Զափազանց գեղխ հաճոյքները միշտ կըհեռանային, առաջ բերելով թէ՝ նոքա ծուլութեան մայր և աղքատութեան ժառանգորդ են։ Ասոնք բարիները կըքաջալերէին, իսկ չարերը շատ զգուշութեամբ կընուաճէին․ ասոնց փափագն էր՝ երկրին վերաբերեալ հարկաւոր պէտքերը միշտ առատութեամբ ունենալ և պահել․ Կանայք կըթեալ էին և անտեսագէտ, պարզ էին և աշխատասէր․ հիւրասէր էին և աղքատասէր, ցած խօսքերէ և ոտեղ

գործերէ շատ կ'զգուշանային, մեծ խնամք կըտանէին իրենց զաւակաց կրթութեան և դաստիարակութեան. զարդարեալ էին նուաճ մարմնոյ գեղեցկութեամբ. հոգւոյ իմաստութեան շնորհներով, և բարի համբաւներով, որոնցմէ կեանք ունեցողներէն խոյս կուտային, առաջ բերելով թէ՝ նոյն յանի պակասութիւնք և սովորութիւնք մերես մը յարաբերութեամբ մը ժուժկալութիւնները յափշտակելով զմեզ դէպի մոլութիւններ առաջնորդեն։

Ռուսաց երկիր նշանաւոր էր իր պարզ կենցաղավարութեամբ և աշխատասէր ժողովրդով. երկրագործութեան մէջ շատ յառաջադէմ էին. երկիրը դաշտային էր և պտղատու. օդն և կլիման սաստիկ ցուրտ էր. պատուական վայրի կենդանեաց մուշտակներ կելլէր. սոյն երկրի հիւսիսային կողմեր լաւ հանքեր ունէին. յորոց առաջ կուգար երկաթ, պղինձ, փղասին, ոսկի, արծաթ։ Լաւ ցորեն ունէին, այսպէս և մշակեալ անտառներ և ճոխ թագաւորութիւն մը որու մայրաքաղաքն էր Բէդրպուրկ, որ յոյժ փառաւոր էր փողոցներու ընդարձակութեամբ և արքունի պալատներու ու հասարակաց շէնքերու շքեղ փառաւորութեամբ։ Ռուսաց կայսրը Մոսկուա փառաւոր քաղաքի Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ կըկատարէր իր թագաւորութեան մեծ հանդէսն և օծման արարողութիւնն։

Հանդէսէն առաջ սոյն քաղաքի մէջ կըխմբուէին Ռուսաց կայսրազունները, նախարարները և ամէն կարգի պաշտօնեաները, օտար տէրութեանց դեսպանները, բարեկամ ազգաց և տէրութեանց կողմէն ղրկուած փոխանորդները և ամէն կարգի վերաբերեալ հանդիսատես ժողովուրդները։ Սոյն քաղաքի հրապարակները կըզարդարուէին գոյնզգոյն զարդերով, յաղթական կամարներով, ամէն դուռներէն և պատուհաններէն ու պատշգամներէն գոյնզգոյն հատուէտ ծաղիկներ և դափնիներ կախուած դրօշներու և ոսկեթելով հիւսուած ծանրագին կերպասներու վրայ կըծածանէին. զօրքն և զօրապետք ոսկեհիւս համազգեստներով զարդարեալ հանդիսավայրը կըհամախմբուէին, յաջմէ և յահեկէ անշարժ կանգնած իրենց նոր կայսրը կըբարեւէին. և նորա բարի գալուստը կըշնորհաւորէին. Այս խմբին կըյաջորդէր զինուորական նուագածուներու խումբեր, որք իրենց մեղմ և

քաղցր նուագարանայ գեղգեղումներով․ երգեցիկ մանկանց գեղեցիկ սրտաշարժ զմայլեցուցիչ եղանակներով նոյն վսեմ տեսարանի վրայ ուրախութեան զարդեր կը փռէին․ և հանդիսականաց սրտին մեծ հաճոյք և ուրախութիւն կը պատճառէին․ այն ամեն յաղթական կամարներու վրայ զանազան գոյներով գրօշակներ պարզուած կը ծածանէին․ Հասարակաց շէնքերը զարդարուած էին գոյնզգոյն ծաղկեայ պսակներով և գրօշակներով․ պատուոյ աստիճանի կարգաւ յաջմէ և յահեկէ շարուած կը տեսնուէին պաշտօնական և անպաշտօն անձինք․ նոյն պահուն կուգար Ռուսաց կայսրն և կայսրուհին և ուրիշ պալատականները․ որք ոսկեզօծ կառքերու վրայ բազմած հանդիսականները կ'ողջունէին․ Երբ արեգական ճաճանչները սոյն հանդէսին վրայ կը տարածուէր, հանդիսականաց աչք կը խտղտէր և կ'արգիլէր պայծառ կերպով հանդիսին նայելու․ և նայելով ոչ աչք կը կշտանար և ոչ սիրտ կը յագենար․ երբ ըստ տեղական սովորութեան քաղաքի կառավարիչն հացն և աղը կը մատուցանէր կայսեր, և նա կ'ընդունէր, նոյն պահուն Թնդանօթներու որոտումները քաղաքը կը սարսեցունէին․ ասոնց ձայնի հետ կը խառնուէր եկեղեցիներու զանգակներու հնչիւնը, եկեղեցականաց քաղցրանուագ երգերը․ սոյն կրօնական և քաղաքական մեծ շքեղ հանդէսը սրտերու ուրախութենէն շատերու աչքէն արտասուքներ կը փղձկեցունէր․ երբ օծման արարողութեան ժամը կը մօտենար՝ կուգար արքաղայեան և զկայսրն և զկայսրուհին մեծ եկեղեցական հանդիսիւ եկեղեցին կը հրաւիրէր․ երբ եկեղեցւոյ դուռը կը հասնէին՝ խոնարհաբար կառքերէն վար իջնելով իրենց յարգական ուխտը կը կատարէին և անմռունչ աղօթք կը մատուցանէին Աստուծոյ․ սոյն հանդէս խոր տպաւորութիւն մը կ'ընէր ամէն սրտերու վրայ և քաղաքական ու կրօնական զգացումները ի միասին կարթնցունէր․ սորա յիշատակը բնաւ չէր ելլեր այն զգայուն մարդկանց սրտէն․ կայսեր Թագադրութեան և օծման կրօնական մեծ հանդէս Աստուծոյ տաճարի մէջ հանդիսիւ և պատարագաւ կը կատարուէր Ռուսիոյ գերագոյն Արքեպիսկոպոսի ձեռամբ․ Իշխանական և վեհապետական յայտնի նշաններն էին կայսեր Թագը, գահը և գաւազանն, ոսկի գունդն, և արքայական ծիրանին, ու պետական արարողութեան կնիքն, սուրն, դրօշակն, և ար-

քայական վահանին, որք Հանդիսաւոր կերպով կը մատուցուէին իրեն ի ժամ օծման արարողութեան։

Այն կայսերական թագն և գաւազան ընտիր անգամանդ. զմրուխտ և ուրիշ անգին քարերով և ոսկեթիթեղ դափնեայ պսակներով, անգամանդեայ խաչերով և գոյնզգոյն թանկագին քարերով զարդարուած էին. արքայական գահուն ոսկենկարներու վրայ շարուած յակինթ, անգամանդ, գոհար, զմրուխտ քարերու և մարգարիտներուն գրեթէ արժէքն չէր չափուէր։ Այն Հանդիսական արարողութենէն վերջ գիշերային լուսավառութիւններ հրախաղութիւնք և մեծամեծ խնճոյք և զուարճութիւններ տեղի կունենային։ Կայսրն իր թագաւորութեան և օծման հանդէսէն վերջ իր վեհապետական իշխանութեան տակը գտնուող երկրի ժողովրդեան առանձնաշնորհումներ կ՚ընէր. բազմաթիւ հարկերը կը թեթեւցունէր, տէրութեան գանձուն պարտք ունեցողներուն երկար ժամանակ կուտար. բանտերու մէջ գտնուող յանցապարտներուն ոմանց պատիժը կը թեթեւցունէր և ոմանց արձակման հրաման կուտար։

Նշանաւոր էր Եւրոպիոյ և Ասիոյ սահմանը որոշող Կ. Պոլսոյ նեղուցը. որ յորդահոս գետերու պէս սեաւ ծովու ջուրերը առնելով կը տանէր Տարտանէլի նեղուցին կը յանձնէր, որք և Միջերկրական ծովու մէջ ընկղմելով կ՚անհետանային։

Այն նեղուց մէկ կողմէ Սեաւ ծովու ջուրերը դէպի Միջերկրական կը տանէր. միւս կողմէն միևնոյն ջուրերու մէկ մասը առնելով իր երկու եզերքէն կրկին դէպի Սեաւ ծով կը տանէր. այս երկու հակառակ հոսանաց վրայ վարժ թիավար նաւաստիները իրենց մակոյկներուն խիստ Հանգիստ կերպով երթեւեկութիւն ընել կուտային. Նեղուցի արեւելեան և արեւմտեան Ասիական և Եւրոպական եզերք գտնուող բարձրագլուխ բլրակները և նոցա վրայ տեսնուած դաշտերն և այգիները, պարտէզներն և անտառները. ծառաստանները և ծաղկաւէտ անուշահոտ բուրաստանները ապակիներու տակ ամաններու մէջ զետեղուած և արմատացած էին լիմոնի և նարինջի ծառերու գեղեցիկ կարգադրութեամբ. Անուշահոտ բուրումները սրտերուն և ոգիներուն ըզմայլումն կուտային. Նեղուցի երկար եզերք գտնուող սալայատակ

ընդարձակ ճանապարհները , և նոյա վրայէն սրընթաց արշաւող շքեղ կառքերը և նժոյգ ձիերը , երկաթուղիները և թռամուայները ջուրերու հոսանաց հետ մրցելով կը սահէին կերթային , և մարդկանց մեծ հաճոյք կը պատճառէին ։ Նոյն նեղուցի երկու եզերքէն սկսեալ աստիճանաբար դ եղածիծաղ զուարճալի պարտէզները , սաղարթախիտ և բարձրահասակ ծառերու և անտառներու մէջէն իրենց գլուխ դուրս հանող արքունի պալատները , նախարարաց և մեծատանց շքեղ ամարանոցները , օտար ազգաց դեսպանատուները , հարուստ վաճառականաց փառաւոր ապարանները նոյն նեղուցի յաջմէ և յահեկէ Ասիական և Եւրոպական կիրթ ճաշակներու ճարտարապետութեամբ յօրինուած կը տեսնուէին ։

Նոյն անհամեմատ ճարտարահիւս վայելչակերտ հոյակապ արքունի պալատները և անոնց սքանչելապէս կերտուածները , փառաւորութիւնները , և յօրինուածները նոյն սքանչելապէս պալատները հիանալի վայր մը կը դարձունէին . այն պալատներու շքեղութիւն , կճեայ սիւներու մարմարիոնեայ քարերը , գոյնզգոյն ծաղիկները , արձանները և փառաւորութիւնները անմոռաց զմայլումն կուտային . այն հրաշակերտ շինուածոց բոլորտիք շրջապատող ընդարձակածաւալ պարտէզները և դրախտները անթիւ ծառերու բարելի պտուղներով և անուշահոտ վարդերով և ծաղիկներով , գոյնզգոյն մանիշակներով զարդարուած միշտ գարնան անուշահոտութիւն կը բուրէին , և իրենց ծոցի մէջ կը պահէին . և կը սնուցանէին անթիւ վայրենի և ընտանի կենդանիներ, տեսակ տեսակ գեղեցիկ և քաղցրախօս թռչուններ ։ Այն զուարճութիւն տուող բնական և արհեստական անտառներն իրենց յորդահոս վտակներով գարնան զովացուցիչ զեփիւռներ կը շնչէին այն չնաշխարհիկ վեհարաններու վրայ . Նոյն արքունի պալատներու մէջ գտնուող քաղցրանուագ երգեցողներու մեղմ և քաղցր ձայները , զանազան ձայնատու նուագարաններու հնչումները կերթային այն սքանչելի անտառներու և պարտէզներու , ծառերու և ծաղիկներու վրայ յոստոյ յոստ թռչող և վազող թռչնոց զմայլելի ձայներու հետ կը միանային ու կը կազմէին այն թմրեցուցիչ տեսարանները՝ որ մարդկանց սրտէն կը քաշէր կը տանէր ամէն տրտմութիւն և տխրութիւն , և անոնց փոխարէն հաճոյք և զուարճութիւն կը սփռէր հանդիսականաց վրայ ։

Արքունի պատերազմական նաւերը կազմ և պատրաստ պալատա-ներու առջև երկաթի վրայ կանգնած սուսաշարժ նաւարաններ երգելով, մերթ ընդ մերթ թնդանօթներու ձայն արձակելով պե-տական հրամաններ ընդունելու պատրաստական լինելնին կը-յայտնէին. Օսմանեան Վեհապետին սոյն շքեղ և փառաւոր տե-սարաններու մէջ կայսերական գահուն վրայ բազմած բոլոր նա-խարարները խոնարհ անձնուիրութեամբ անմռունչ կեցած Նորա շուրջ բոլորած, հսկայ թիկնապահ զօրքերը զօրապետները հրացան ի ձեռին զայն շրջապատած՝ այն պատկառելի մեծարանի մէջ կը կատարէին կայսեր գահակալութեան տարեդարձի մեծ հանդէսը. որ կ'ողջունուէր օտար տէրութեանց դեսպաններէն, հպատակ ազգաց հոգևոր գլուխներէն, օսմանեան նախարարնե-րէն և [illegible] կարգացողներէն և շէյխիւլիսլամէն. Ի գահէն անդ օսմանեան Վեհապետն յարգանօք կ'ընդունէր իւր այցելու-ները և իմաստութեամբ կը պատասխանէր նոցա շնորհաւորութեան ճառերուն. Նոյն նեղուցի ջուրերը ճեղքող և սահող սրըն-թաց առագաստանաւերը և շոգենաւերը, ոմանք իրենց առագաստ-ները բացած, ոմանք իրենց անիւներով և մագիլներով ջուրը կը ճեղքէին, ոմանք դէպի Միջերկրական և ոմանք դէպի Սեւ ծով երթևեկութիւն կ'ընէին. վաճառքներ կը փոխադրէին և ա-մէն տէրութեանց և ազգաց նաւերը ազատ էին սոյն նեղուցէն վաճառքներ փոխադրելու համար երթևեկութիւն ընել. սոյն նա-ւերուն ընթացքին հետևող փոքր նաւերը և մակոյկները իրենց ետևէն խաղ անել կու տային. տեսակ տեսակ ձկանց, որք թռչելով և կայտելով կը լողային կ'երթային. ոմանք յաջմէ դէպի ձախ, ոմանք ձախէն դէպի յաջ։

Նշանաւոր էին Կ. Պոլսոյ նեղուցի վրայ հաստատուած Պօլի-սէն ի Կալաթիոյ տանող յաղթանդամ կամուրջները. որոց վրա-յօք անթիւ մարդիկ երթևեկութիւն կ'ընէին. սոյն քաղաքի շու-կաները և մի քանի հրապարակները նկատմամբ Ասիոյ ուրիշ քաղաքաց՝ գեղեցիկ էին և վաճառքներով ու վաճառականներով լի. այս քաղաք գրեթէ վաճառականութեանց կեդրոնավայր կը-համարուէր. զի հոն կու գային Ասիոյ, Ափրիկէի, Հնդկաց և Չինաց, ու բոլոր Եւրոպական և Ամերիկայի ու Ռուսաստանի

վաճառքները և կըվաճառուէին ։ Օտարաց և պանդուխտներու թիւը խիստ շատ էր . երկրի ժողովուրդն մարդասէր էր և հիւրասէր . բարեմիտ և աշխատասէր . իսկ ուսմունք և գիտութիւն ու արհեստ բաղդատմամբ յառաջադէմ ազգաց՝ յետադէմ էին քան թէ յառաջադէմ . թէև յառաջադիմութեան փափաքները բուռն էին . սակայն նա մեալու զօրաւոր պատճառներն ալ անպակաս էին ։

Ճարտարապետութեան մասին նշանաւոր էին մզկիթները , հասարակաց շէնքերը , ծովերու բաժնուած նաւահանգիստները և նաւարանը բոլորթենէն խիստ գեղեցիկ կերպով պատրաստուած էին . որք իրենց ծոցը հազարաւոր նաւեր կըպահէին . այնչափ խիստ և իրարու վրայ շարուած էին նաւերը՝ որոց կայմերը առաջին անգամ տեսնողն կուզէր հաւատալ թէ այն նաւահանգիստը չորացեալ ծառերով լի անտառ մի է որ կըտեսնուի իր աչքին ։

Տարտանէլի նեղուցը նշանաւոր էր իւր հսկայ շէնքերով , ամուր բերդերով և մեծամարմին թնդանօթներով . սոյն նեղուցի պահապանները պաշտօն ունէին ամէն եկող և գնացող նաւերու վրայ ստոյգ տեղեկութիւն առնել թէ՝ ո՞ր երկրի կամ տէրութեան նաւ է . վաճառականի՞ է թէ կառավարութեան . ուրկէ՞ կուգայ . և ո՞ւր պիտի երթայ , ի՞նչ է իւր վաճառք , բարեկամ տէրութեան կըվերաբերի թէ թշնամւոյն . մաքո՞ւր է թէ քառասնօրեայ արգելքի 'կարանթինայ' պէտք ունի . առանց ամէնքը քննելէն և ստուգելէն վերջ կընար նաւը ազատ լինիլ նեղուցը մտնելու և իւր ճանապարհ շարունակելու ։

Յիշեալ պաշտօնեայները պարտաւոր էին իրենց տեղեկագիրները հեռագրաւ հաղորդել Կ. Պօլիս նաւային տեսչութեան ։

Այն պաշտօնէութեան ճիշտ օրինակին կըհետևէր նաև Սեաւ ծովու բերան գտնուող նեղուցի պահապան պաշտօնէութիւնն ։

Եւրոպայի մէջ երբեմն իւր հնութեամբ ուսմամբ և գիտութեամբ ճոխացեալ Յունաստանը չունէր իւր նախնի շուք և պարծանք . սակայն միշտ կ'աշխատէր իւր մտաւորական կեանք զարգացունել , սրտերը մշակել . իսկ վաճառականութեան մէջ խիստ յառաջադէմ էին , և շատ ազգերու հետ յարաբերութեան մէջ էին

իրենց զաւակաց դաստիարակութեան մեծ խնամք կըտանէին ։ Սոյն երկրի դրացի Իտալիան թէպէտ չունէր իր նախնի փառաւորութիւն, սակայն այն հին բեկորներու վրայ տակաւին կըծածանէին հնութեանց մնացորդները, ուսմունք և գիտութիւն, արհեստ և վաճառականութիւն, հնութեանց թանգարանները և համալսարանները ։ Երկրի օդը թէպէտ տաք էր՝ բայց առողջարար և բարիքներով լի ։ Նշանաւոր էր արձանագործութիւն և պատկերհանութիւն, ճարտարապետութիւն և երաժշտութիւն ։ Հռովմ եզակի էր իր գեղարուեստներով և հնութիւններով. Նշանաւոր էր սուրբ Պետրոսի տաճարը և Վատիկան. հոն կըբնակէր քահանայապետն. նա փղոսկր գահոյն վրայ բազմած, ոսկի գաւազան ի ձեռին կըկառավարէր մերթ խստութեամբ մերթ մեղմութեամբ, մերթ իշխանական սպառնալիօք, մերթ հայրական յորդորներով պատիժներ կըտնօրինէր. սակայն հայրական գթութեամբ ալ զանոնք կըբարեխառնէր ։

Եւրոպայի երկիրները փոքր էին և նեղ. բայց աշխատասէր ժողովուրդն այն փոքր երկրի մէջ հարուստ և ընդարձակ կ՚ապրէր. նոքա հանգիստ էին և խաղաղ կ՚ապրէին. օրէնքները իբրև պատուար կանգնած էին սահմանագլխոց վրայ, և կըհսկէին որպէսզի մինն միւսի սահման չ՚կոխուէ ։

Ամէն երկերներէն աւելի ասոնք երջանիկ կ՚ապրէին. որ կողմ որ երթայինք ամէն դաշտերը այգիները և պարտէզները մշակուած և իրենց հունձքերով փառազարդեալ կըտեսնէինք. ասոնց շոգեշարժ մեքենայներն, երկաթուղիները, շոգենաւերը և առագաստանաւերը միշտ շարժման մէջ էին ։ Սոյն երկրի բարձր լերանց վրայ գտնուած հին մեհեանները, անշունչ կուռքերը, կղզեաց յաւերժահարսունք իրենց գլուխ դէպի ունայնութիւն խոնարհած և անյայտ եղած էին. որոց տեղ կանգնուած կըտեսնէին Ճշմարիտն Աստուծոյ տաճարները ։ Մուրացիկ աղքատներ խիստ քիչ կըգտնուէին, վասնզի ամէնու համար պատրաստ գործ կար. կոյրեր անգամ իրենց ձեռքի աշխատութեամբ կ՚ապրէին ։

Մանկանց դաստիարակութիւն խիստ զգուշութեամբ և խնամօք կուտային, մեծ մասամբ մատաղ տղայոց դաստիարակութիւնը փորձառու, հմուտ, և բարոյական տէր ծերերուն կըյանձ-

նէին . այն բազմափորձ և խոհական ծերերը դիտմամբ իրենք զիրենք մանկական հասակի մէջ դնելով իբրև ընկեր կըվարուէին իրենց աշակերտաց հետ խաղերով և զբօսանքներով . շատ մը դիտութեանց և արհեստից սկզբունքները կըզետեղէին այն մանուկներու թարմ եզաարկ մտաց մէջ . Նոքա այնպէս խաղեր կըհնարէին , որ թէ տղայոց համար զբօսանք էր , թէ մարմնամարզութեան և թէ մշակելու և սերմանելու և ուսանելու միջոց ։ Նոցա ութ տարեկան մանուկը ուրիշ երկիրներու ութսուն տարեկան ծերերէն աւելի հմտութիւն կ'ստանար վարելու , ցանելու , տնկելու , հնձելու , և ուրիշ շատ արհեստագիտութեան մասին . այն փորձառու դաստատուները բնաւ ցոփ չէին խօսեր . նոցա խօսքերը միշտ խոհականութեան և կատարելութեան չափի տակ էին , պատուոյ զգացումն ամէն ուսմունքներէն առաջ կըզետեղէին այն թարմ մանկանց և աղջկանց սրտի մէջ ։ Աղջկանց դաստիարակութիւն աւելի խնամօք առաջ կըտանէին , առաջ բերելով թէ՝ զաւակներն աւելի իրենց մօր օրինակին կըհետևեն քան թէ հօրը . ուսմունք պէտք է որ մանկանց արեան հետ խառնուի և անոնց հետ զարգանայ ։

Կ'ըսէին նոքա , զաւակ ծնանիլը իմաստութիւն չէ , վասնզի արդէն բնութիւնը անխօս լեզումը տուած է արարածոց , որ սրտէ ի սիրտ ցոլանալով կ'զգացունէ բնութեան օրինաց պէտքը . այդ պէտքն մի բնական օրէնք եղած է ։ Հաւասարապէս կըներգործէ ամէն կենդանեաց վրայ . ուրեմն զաւակ դաստիարակելն է մեծ իմաստութիւն . Նաև նորածին զաւակները ընտրութեան մասին կոյր են , վասնզի երբ ոսկին և կրակ ի միասին ներկայացունես փոքր տղայոց , կրակի փայլունութենէն խաբուելով կաշխատին կրակին ձեռք երկարցունելու քան թէ ոսկւոյն . ասկէ կըհետևի թէ տղայք խելքեան խորհելու , դատելու , բաղդատելու , ընտրութիւն ընելու , չարը բարիէն որոշելու տրամադրութիւն չունին . այլ միայն ընդունակութեան տրամադրութիւն մը ունին , և իրենց զարգացման հետ միտքն ալ զարգանալով՝ հետզհետէ տեսածնին և լսածնին ընդօրինակելով կըտանին իրենց մտաց շտեմարանին մէջ կ'ամբարեն և պէտք եղած ժամանակին մերթ բնականաբար , մերթ զուգորդական օրինօք իրենց յիշողութեան բերելով ի կիր կ'արկանեն ։

Ուրեմն լաւ սկզբունքներով և կատարելութեան հրահանգներով պէտք է հրահանգել փոքր տղայքը, որպէսզի նոյն դատումները հետզհետէ զարգացած ժամանակը իրենց մտաց մէջէն ուղիղն և օրինաւորներն գտնեն հանեն և գործածեն։

Կ՚ըսէին նորա, դաստիարակի պայմաններն են՝ բարոյական կեանք, լաւ յատկութիւն, փորձառական հմտութիւն, Աստուծոյ երկիւղածութիւն, առաքինի լինել, ազնիւ զգացումն ունենալ, խոհական և զգուշաւոր լինել, ուսուցանելու գիրքին եղանակները գիտնալ, և աշակերտի կարողութիւն չափել, և ըստ այնմ մատակարարել։ Վարժապետն հնար եղածին չափ պէտք է որ ծածուկ պահէ տղայի մտքէն մոլեներու նկարագրութիւնը, սիրահարական վէպերը, տգեղ և ցոփ խօսքերը և վարմունքները, աւելի մատուցանելու է անոնց առաքինի և բարոյական մարդկանց վարք և գործերը և անոնց օգտակարութիւնն բացատրելու է։ Կրօնի հարկաւորութիւնը, Աստուծոյ երկիւղածութիւն, մեծահանձն մարդկանց գործերը և օրինակները, խոհական կառավարութեան ընթացքն և եղանակն. ասոնք են որ զմարդիկ միւս կենդանիներէն որոշելով պատուաւոր վիճակի մէջ կը դնեն, և բանականութեան վսեմ նշանաբանին կը հասցունեն, յորմէ զուրկ են միւս կենդանիները։

Այն կրթեալ և բարելի երկրին մէջ մեր համառօտ շրջանը կատարելէն վերջ վերադարձանք այն նաւահանգիստ՝ ուրկէ որ դուրս ելանք և կրկին նաւը մտնելով Ատլանդեան Ովկիանոսի մէջ մեր ճանապարհ շարունակեցինք դէպի Ամերիկա գնալու։

## ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ուղեւորութիւն դէպ Ամերիկա · Ծերունայն Իրոքուէզը · Երկնային տեսակաց նկարագրութիւն · Նաւէ յաջողակ ճանապարհորդութիւն, այլեւայլ կղզիներու և անոնց բնակչաց նկարագրութիւն · Ամերիկա հասնելնին

Երբ նաւը Բրիտանական կղզիներէն կը մեկնէր, մեր աչք չէր ուզեր հեռանալ այն բարեբերլի և կրթեալ երկիրներու վրայ նայելէ. Ջանացանք մեր սիրտ այն երկրէն հեռացունել, մինչև որ հեռաւորութիւնը զայն մեր աչքէն յափշտակեց. յետ այնորիկ հեղասիւք զեփիւռները սկսան մեր նաւի առագաստներու հետ խաղալ և անոր ալիքներուն թռիչ տալով զայն յաջողակ շարժման մէջ դնել. որչափ որ առաջ կերթայինք, այնչափ ալ յաջողակ հովերը մեր նաւուն թեւ կուտային թռչնոց պէս սաւառնելով դէպի իր նպատակը արագապէս գնալու. ցամաքն և լեռները մեզմէ հեռանալով անյայտ եղան. յետ այնորիկ մեր աչք միայն լայնածաւալ ովկիանոս մը և անոր առջևը մրջիւնի մը չափ նշանակութիւն ունեցող մեր նաւն միայն կը տեսնուէր:

Հոն նաւուղիղի և նաւաստիի աչքը այլ եւս պաշտօն չունէր, այլ մեր նաւի բախտը յանձնուեցաւ կողմնացոյցին, և աշխարհագրական գծուած քարտէզներուն. ուղիղ խօսիլ պէտք է. կողմնացոյց մարդկանց աչքէն աւելի անսխալ կը տեսնէր, և ուղիղ կառաջնորդէր, և ղեկավարը կը հնազանդէր նոցա ցոյց տուած ճանապարհներուն. և հլու հպատակութեամբ նոցա հրահանգներուն կը հետեւէր: Մեր յաջողութիւն և ձախորդութիւն հովերու խղճմտանաց յանձնուած էր. և նոքա կարեկցելով մեզ և մեր նաւին՝ կ'օգնէին զմեզ դէպի մեր նպատակին առաջ վարելու. Արեգակը առաւօտեան պահուն ծովու մէջէն կ'ելլէր կը բարձրանար երկնից կամարին վրայ և զմեզ կը լուսաւորէր. երեկոյեան ժամանակը իր գլուխ դէպի արեւմուտք խոնարհեցունելով կրկին կերթար ծովու մէջ կընկղմէր. և աներեւոյթ կըլլէր. արեգական կը յաջորդէին աստղները և երբեմն լուսին. որք իրենց աղօտ լուսով զմեզ կը լուսաւորէին. և բնութեան այն

երկնային հիանալի և սքանչելի տեսարանը կազմելով թէ կ՚սքանչացունէին թէ կըմխիթարէին․ բայց առաւօտեան պահուն նոքա ևս նոյն լայնածաւալ ովկիանոսի մէջ թաղուելով կանհետանային․ այս Աստուածային և հրաշալի կարգադրութեան վրայ կ՚սքանչանայինք և կ՚զմայլէինք․ և արարածներով Արարչապետի ամենակարող զօրութեան, հանճարոյ և իմաստութեան, ու նախախնամական տնօրէնութեան վերահասու կըլլինէինք ։ Կ՚ըսէր մեր ծերունին․ խիստ քիչ կըխորհին այն կարգ մը մարդիկ որք տակաւին խաւար մշուշներու մէջ կըթափառին, նոքա անսահման և անեզր ու ամենազօր ամենակարող և ամենիմաստ բացարձակ Էէր և իշխան մահու և կենաց Աստուածը թողած՝ տարերաց հետ կըխաղան, և իրենց յոյսը քարի և փայտի վրայ կըդնեն ։ Նոքա չեն կամիր Աստուծոյ անսխալ իմաստութեան լոյսէն առաջնորդուիլ․ որ ինքզինք ամենուն կըհաղորդէ, և ինքը անընդհատ կըմնայ իւր անսպառելի աղբիւրին մէջ․ Այդ ողորմելի մարդիկ բնաւ բան մը չեն գիտեր․ ամէն բան գիտեմք կ՚ըսեն․ իրենք զիրենք չեն ճանաչեր և չեն տեսնէր բայց կըխրոխտան թէ ամէն բան կըտեսնեմք և կըճանաչեմք ։

Նոքա մտքի սուրերնին, անէակ կերպարանները իրականութիւն կարծելով նոյա հրապուրանաց ետևէն կերթան․ Նոքա երկնային բարիքները ունայնութեան հետ փոխեցին․ որով աղքատութեան արհամարհանաց և հիւանդութեան ու վշտաց մէջ ինկան․ սակայն գիտնալ պէտք է թէ՝ ոչ թէ աչքը՝ այլ հաւատն է, որ զկոյրն դէպի առաքինութիւն կ՚առաջնորդէ․ մտաց իմացականութիւն չէ բարի պտուղ բերողը․ այլ սրտի յօժարութիւնն է զայն արդիւնաւորող․ ոչ թէ բարի խորհիլն՝ այլ բարի գործելն է Աստուծոյ հաճելի․ ոչ թէ ճշմարտութիւն և արդարութիւն ճանաչելն՝ այլ զանոնք առնել և կատարելն է բարեգործութիւն․ համեստները հարկաւոր պէտքերով գոհ կըլլնին որ սահմանաւոր է, և ոչ թէ ցանկութեամբ որ անսահման է․ յարգի է սրտի նուէրը քան թէ ձեռքի տուրքն․ վասն զի ձեռք շատ անգամ չուզելով կուտայ․ զըպարտութիւնք այնչափ կազդեն անմեղներուն, որչափ որ ծովու ալիք կազդէ իւր մէջ ցցուած ժայռին․ խղճի հակառակ գործողները խթանի դէմ կից արձակողներէն աւելի կըվիրաւորուին իրենց խղճի խայ-

թէն . զարմանալի է այս աշխարհի կեանք . զի այս աշխարհի մէջ յանցաւորներէն աւելի ինքնահրաւէր դատաւորներ կան , որք իրենց անձի դատաստան թողած՝ զայլս դատելու դատաւոր հանդիսանալ կ'ուզեն . մարդկանց կիրքերը մոխիրներու տակ ծածկուած կրակներուն կը նմանին . որչափ որ ծածկես դարձեալ կրակ լինելէ չդադրիր . և օր մը երևան ելլելով հրդէհները առաջ կը բերէ ։ Առաքինութեան վարձուն յոյսը որ յաւիտենական երանութեան մէջ պահուած է . շուտով կ'սփոփէ ծերերը , աղքատները և թշուառները . և կարգելէ զանոնք յուսահատութեան զոհ լինելէ ։ Եւ յանկարծակի իւր խօսք փոխելով կ'ըսէր . կը հիանամ կզմայլիմ և կ'սքանչանամ Աստուծոյ ամենազօր կարողութեան , արարչապետութեան , իմաստութեան և անոր անսխալ օրէնքներու և գործերու վրայ . ի՜նչ մեծ հանճար . ի՜նչ մեծ իմաստութիւն և գիտութիւն և ի՜նչ հանճարով երկնից անհաստատութեան վրայ հաստատուն կամարներ յօրինելով , անոնց վրայ հաստատ և միանգամայն անհաստատ սքանչելարուեստ աստեղաց կարգադրութիւն հաստատելով այն վսեմ տեսարանը կազմակերպեց . կ'սքանչանամ այն մարմնոյ անխոտոր և անսխալ շարժումներու և թաւալումներու վրայ , նոյն պայծառ լուսոյն և ջերմութեան ու այլևայլ ներգործութեանց վրայ. երկրագունդի ծովու և ցամաքի կենդանեաց և թռչնոց . ձկանց եւայլն կենդանեաց կարգաւորութեանց և շարժմանց ու խնամուելոյն և կառավարուելոյն վրայ . ասոնց ամէնքն երբ մտացս առարկայ կընեմ , մեծ երախտագիտութեան պարտ մը կ'զգամ առ այն մեծ Հեղինակութիւն և կը պաշտեմ զայն իւր վսեմութեան համար . երբ երկրագունդիս վրայ կը տեսնեմ բուսած գեղեցիկ ծառերը և ծաղիկները , բոյսերը և խոտերը , և անոնց զանազան գոյները և տեսակները , և պտուղները , ու զանազան համերը , ծաղկանց գոյները , տեսակները և անուշահոտ բուրումները . երբ կը տեսնեմ այն բարձր հրամանը որ ամպերուն անձրևելու , արեգական ջեռուցանելու , երկրին բուսուցանելու հրահանգ կուտայ տիեզերք նախախնամելու բարձր նպատակաւ . երբ կը տեսնեմ երկնային հեղինակութեան սիրոյ կապը որ իւր անհուն հեռաւոր և անընդմիջական մերձաւոր առանձնական զօրութեամբ տիեզերք միմեանց հետ կապելով յարաբերութեան մէջ

կըլլնէ․ հոն կըհարկադրուիմ ընդունիլ ամենակարողի և ամենիմաստի սանդղագործութիւնն․ և արարչապետութեան բարձր հեղինակութիւնն ։

Մեր ծերունին յանկարծակի իւր խօսքն ընդմիջեց և ժամանակ մը լուռ մնալէն վերջ սկսաւ զանազան երկիրներու վրայ տեղեկութիւններ տալ․ Կ՚ըսէր նա․ Սիպերիա ընդարձակ աշխարհն խիստ ցուրտ է․ և Սամոյեդների մէջ ձիւն կըտեղայ․ տուներու պատուհանները սառելով կըդադրին արեգական և լուսնոյ լոյսը սառերու մէջէն կ՚անցնէր այն խեղճ դեղջուկ տնակները լուսաւորելու․ այս երկիրը հիւսիսային ծայրն և արեգակէն հեռի գտնուելոյն համար ամիսներով ցորեկ չէին տեսնէր․ այս երկրի կուպաշտ ժողովուրդն լեռներու գլուխ խիտ անտառներու մէջ զոհ կըմատուցանէր․ երկիրներ կան որոց վայրենի ժողովուրդն իւր մեռեալն փոխանակ թաղելու՝ շանց գիշատել կուտայ, և ինքը գետնափոր տնակներու մէջ կըբնակի և ձկամբ ու որսով կըպահէ իւր կեանքը․ մարդիկներ կըտեսնուէին որք իրենց բերնի վարի շրթունք և քիթը կըծակէին և սուրէ շինուած զարդեր կըկախէին ։

Արխանկել երկրի, որ կերթար հիւսիսային սառնապատ ծովուն կըհասնէր, բնակիչները միջահասակ էին, աչքերնին մանր, բերաննին մեծ, դէմք սեւադոյն և լերկամարմին․ սոքա ամէն կերակուր հում կ՚ուտէին․ ասոնց այրք և կանայք միևնոյն դէմք կըկրէին․ անոր համար դժուարաւ կըզանազանէին իրարմէ․ ասոնք կ՚ըսէին երկու Աստուած կայ, մինն կըբարերարէ, միւսն կըպատուհասէ, և ժողովուրդն եղան գլուխ կըպաշտէր ։

Խալանտիոյ կղզւոյն ժողովուրդն սաստիկ ցուրտերէն նեղուելով գետնափոր տեղեր կըբնակէին․ երկիրը ինն ամիս ձմեռ ունէր․ ամառը ցերեկը քսան երեք ժամ էր․ իսկ կարճ գիշերն միայն մէկ ժամ էր․ ասոր հակառակ ձմեռը գիշերը քսան երեք իսկ ցերեկը մէկ ժամ էր ։ Հրաբուխ լեռներ կային սոյն երկրի մէջ, որոցմէ սոսկալի ճայթումներ և որոտումներ կըլսուէին, որոյ կըհետևէր հրեղէն լաւաներու գետեր հոսել ։ Կրենլանտայի հիւսիսային կողմերը սառերէն կազմուած և բարձր լեռներով պատուած կըտեսնուէր․ այս երկիրը ամառը երեք ամիս շարունակ ցերեկ, և ձմեռն ալ երեք ամիս շարունակ գիշեր կունենայ ․

բնակիչները խիստ կարճ հասակ ունէին ։ Արջային շրջանին մօտ մեր հիւսիսային բեւեռ Սբիցպէրկ անբնակ երկիրը վեց ամիս ցերեկ ունէր շարունակ , և վեց ամիս գիշեր ․ երբեմն սառերէ կազմուած բարձր լեռները հողմերէն մղուելով կուգային սոյն երկրի բոլորտիք շրջան կըկատարէին ․ սոյն երկիրներէն դէպի հիւսիս գնալը անկարելի է , վասնզի ծովը սառուցեալ դաշտի մը կերպարանի որու վրայ նաւարկելը անհնարին է ։

Մեր ծերունոյն սոյն տեղեկութիւնները տալէն քիչ մը հանգստանալէն յետոյ մեզ աւետիս տուին թէ նաւը հիւսիսային Ամերիկայի նաւահանգիստներու միոյն մէջ մտնելով իր խարիսխ նետեց ․ ես և մեր ծերունին անմիջապէս դուրս ելլելով սկսանք հարեւանցի պտոյտ մը կատարել սոյն կիսագնտոյն հետաքրքրական մասերը տեսնելու համար ։

# ԳԻՐՔ ՔՍԱՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ

Ամերիկայի հին ժողովրդեան նկարագրութիւն . Ձեւ և կեանք . տա-
ճարները , կռները , ծովերը և գետերը . Ոմանց վարէին կեանքը . Այն
ժողովրդէ յանկարծակի գտնուէլը , յաջողեալ ագևոց ուրիշ մէջ
մտնելը : Ուրիշ կղզիներու ժողովրդէ կեանք և կենակցութիւն . Նոցա
ողորմելի վիճակ : Կրկին ծովային ճանապարհորդութիւն դէպի Ասիա .

Ամերիկա՝ որ մեր բնակած երկրագնդի կէսն է , երկար ժամանակէ ի վեր անծանօթ էր մարդկանց : Սոյն երկիր ազգաց բաժանումէն սկսեալ իւր ծոց կըպահէր և կըսնուցանէր մաս մը Ասիոյ արեւելեան ժողովուրդ , սոյն ժողովուրդ երկար ժամանակ ուրիշ երկիրներու և ազգերու հետ հաղորդակցութիւն և յարաբերութիւն չունենալուն պատճառաւ թէ անծանօթ մնացած էր և թէ իւր նախնի ազնուութիւն կորսնցուցած էր և վայրենի կենցաղավարութեամբ կ'ապրէր : Ցեղեր կային սոյն երկիրներու մէջ որք շատ ողորմելի վիճակ ունէին , Ափրիկեցւոց պէս իրենց թշնամի մարդիկը բռնելով կըմորթէին . ասոնց կերակուրն էր մեծաւ մասամբ ձկի , և վայրի ծառոց խակ պտուղներ . որսուած թռչուններ և ձուկեր , սոքա մերկ կըշրջէին և իրենց մարմինը կըներկէին : Սոյն ժողովրդեան դէմք կլոր էր , մարմինը պղնձագոյն , ճակատը նեղ . շրթունքն թանձր . քթերնին սուր և ծուռ , աչքերնին մանր և սև , մազերնին խիստ սակաւ բայց սև : Ցեղեր կային որք անտառներու մէջ լերանց խորշերու մէջ և թռչնոց պէս ծառոց վրայ բոյն շինելով կ'բնակէին , ասոնք իրենց սիրտ և միտք չ'մշակելով այնքան տգէտ էին որ մինչև երեք թիւ հազիւ գիտէին հաշուել . խիստ թանձրամիտ , աղայամիտ ու կասկածոտ էին , դատարկութիւնը մեծ երջանկութիւն էր իրենց : Կանայք իրենց արանց գերիներն էին և աշխատութիւնը կանանց յատկացեալ էր , շատ մայրեր իրենց աղջիկները կ'մահացնէին որ վերջէն իրենց վիճակակից չ'լինին : Երբ վերջին ժամանակներս այս անծանօթ ժողովուրդ Եւրոպացւոց նա-

ւերը կըտեսնէր, կ՚ըսէր, ասոնք հողի ունեցող կենդանիներ են որ ծովու վրայ կըշրջին. և թնդանօթներու ձայն լսելով կ՚ըսէին. այս մարդիկ երկինքէն իջած թևաւոր մարդիկ են և երկնային թևաւոր կրակներ բերած են զմեզ և մեր աշխարհ այրելու ։

Թիթեղէ բաժակները ոսկիէն և արծաթէն նախապատիւ կըհամարէին և իբրև զարդ կ՚գործածէին ։ Կրօնք և առաքինութիւն անծանօթ էր․ մարդապաշտութիւն ևս կար անոնց մէջ, տէր մը մեռած ժամանակ նորա ծառաներ հետը կըթաղէին որ երթան հետը ծառայութիւն ընեն ։ Նաև կային ցեղեր որք քիչ շատ սրտի ազնուութիւն ունէին և իրենց նախնեաց հին յատկութիւնները կըպահէին․ Եւրոպական արշաւանք սոյն վայրենի ժողովուրդ ընտանի ըրաւ և քաղաքակրթութեան մէջ դրաւ և անոնց սիրտն ազնուացնելով ուսման և գիտութեան տաճարներ դարձուց․ որք այսօր գիտութեամբ, արհեստով և վաճառականութեամբ նախանձելի օրինակ մը կընծայեն ։ Այժմ ունին սոքա կրթութիւն և դաստիարակութիւն, ազնիւ զգացում, մարդասիրութիւն, բարձր հանճար, հիւրասիրութիւն և ընկերսիրութիւն, որոցմով այդ վայրենի երկիր քաղաքակրթութեան վերին աստիճանին հասած է․ ունին այժմ սոքա մարդկութեան պահանջած ամէն կատարեալ ձիրքեր և յատկութիւններ, ազնուութիւն և աշխատասիրութիւն ։ Այն խոպան դաշտեր և լեռներ և անտառներ իրենց հանճարով ամուլ դիրքէն հանելով բեղմնաւորութեան վիճակի մէջ դրած են․ վերջապէս քաղաքներով աւաններով և գիւղերով ու բարեբեր դաշտերով փառաւոր և նախանձելի դրից մէջ կըգտնուին ։

Նոյն ծաղկեալ երկրի մէջ այսօր երկաթեայ գծերու վրայէն շարժուն մեքենաներ սաստիկ շառաչմամբ և սուլելով երկրի մէկ ծայրէն միւսն կ՚անցնէին, անթիւ շոգենաւներ մեծամեծ ծովերու ալիքներ ճեղքելով կ՚անցնէին կերթային և իրենց նպատակին կըհասնէին մեծամեծ շահեր ընելով․ Գաղթականութեան կացինն և տապար այն մացառախիտ անտառները անօրայնելով․ և երկրագործութեան պանծալի արհեստը քայլ ընդ քայլ առաջ տանելով․ երկիրը բազմածնունդ մօր մը վիճակին հասուցած էին ։ Թէպէտ կըգտնուէին նաև ցարդ ստուերամած անտառնե-

րու տակ ցրուեալ խումբ մը ժողովուրդներ , որք իրենց հայրենաժառանգ սովորութեամբ ապրիլ կը սիրէին . Այն Հնդիկ և պատերազմասէր ժողովուրդ որք սոյն երկրի վաղեմի տէրեր կը համարուէին՝ քաղաքակրթութենէն հալածեալ օր քան զօր նուազելով խիտ անտառներու խորերը կը թափանցէին : Այս հին ազգի աւանդական պատմութիւն կը պարունակէ ութհարիւրէն աւելի ցեղերու և լեզուներու անուններ , որք ժամանակին սոյն կիսագնդի վրայ տարածուած կ'ապրէին , սակայն այժմ գրեթէ անհետացած են նոցա մեծ մասերը և մնացեալները խիտ անտառներու խորերէն հառաչանքներ կ'արձակեն իրենց հայրենի երկիրը ուրիշներէն յափշտակուած ըլլալուն համար : Հնութեանց մասունքներ որք հետզհետէ երևան կուգան՝ մատնանիշ ցոյց կուտան թէ ժամանակին քաղաքակիրթ ազգեր բնակած են սոյն երկիրներու մէջ . Ամերիկայի հնութեանց սոյն բեկորներ խիստ մօտ նմանութիւն ունէին Եգիպտական և Փիւնիկեան հնութեանց հետ . Սոյն Հնդիկ ժողովուրդ աշխարհի ո՞ր դարուն մէջ Արևելեան կիսագնդէն դէպի Արևմտեան կիսագունդ արշաւած է , զայն պատմութիւն ցարդ մթութեանց մէջ կը պահէ : Ուրիշ մաս մը հին ժողովուրդ ևս տեսնուած է Ամերիկայի մէջ որք Կովկասեան տիպարին կը համապատասխանէին , նոցա վսեմ և հաստատ կերպարանք , համարձակ և թափանցողական հայեցուածք զիրենք տեսնողներու վրայ ակնածում մը կազդէին . և կը համոզէին թէ այս ժողովուրդ հին հեթանոս ազնիւ ցեղերու մի հատուածն է . Ասոնք երբեմն մինչև հարիւր ժամ հեռաւորութիւն ունեցող ընդարձակ և խիտ անտառներէն և դաշտավայրերէն զարմանալի դիւրութեամբ և ճշդութեամբ կը ճամբորդէին առանց իրենց աչքի առջև արահետ ունենալու :

Ամէն ժամու մէջ կարող էին ասոնք արեգական ո՛ր կէտի մէջ լինելը ճշդիւ ցոյց տալ եթէ արեգակն թանձր ամպերով և մթնոլորտի մառախլապատերու մէջ շրջապատեալ իսկ լինէր : Նոքա մարդու մը և կամ անասունի մը հետք կարող էին գտնել մինչև անգամ չորացեալ տերևներու և խոտերու վրայ հետազօտելով . Սոցա զարմանալի նրբութեան հետ կ'միանար նաև սուր յիշողութիւն մը , որքա իրենց ցեղապետներու հետ ունեցած անցքեր դաշինք ու պայմաններ կարող էին շատ տարիներէ վերջ մանրա-

մասնաւոր յիշել․ Կը յիշէին ծառի մը տեղը, դիրքը, պարունակութիւնը, ձեւը, բարձրութիւնը և տեսակը և որու վերաբերիլը։ Ասոնք գուրկ էին ուսմունքէ բայց բնական հանճարով կարող էին անասնոց մորթերու և կամ հաստ ծառերու վրայ իրենց արշաւած երկիրներու ձեւ ամենաճիշդ կերպով գծել․ Սոքա եթէ բարկութեամբ գրգռուած չ՚լինէին խիստ շատ մարդասէր էին և դիւցազնական ոգի ու մեծասրտութիւն ունէին․ խիստ հիւրասէր էին այնպէս որ հիւրը իրենց խուղի ամենապատուական կողմը կ՚բնակեցնէին, չքաւորները իրենք անօթի կըմնային և իրենց հիւրը կըկերակրէին ու մարդասիրութեամբ կըպատուէին։

Ամերիկա շրջապատուած էր, հիւսիսէն սառուցեալ ովկիանոսէն, Արեւելքէն՝ ատլանդեան ովկիանոսէն, հարաւէն՝ գարայիպի ծոցով․ արեւմուտքէն՝ խաղաղական ովկիանոսէն, սոյն երկիր տասնեւօթն ծոց կըկրէր և տասն նեղուցներ ունէր ու տասնեւմէկ հրուանդան, և իր շուրջ քանիլեց կղզի և թերակղզիներ, կըպարունակէր նաեւ տասներկու լիճեր․ Հիւսիսային Ամերիկա իւր ծոցէն քանիերեք գետերու ծնունդ տալով դաշտեր կ՚ոռոգէր, խիստ ընդարձակ էր երկրի աշխութիւն և վաճառականութիւն․ Այն վայրենին՝ որ այսօր ամենէն նրբամիտ և ընտանի է, իմաստութեամբ կըտնտեսէ և խոհեմութեամբ կըկառավարուի․

Մեքսիգայի հանճարաւոր ժողովուրդ իւր բարեկի երկրի լիճերու երես և կղզիներու վրայ շարժական պարտէզներ կըսահմանէր, և անկէ բարեհամ պտուղներու և հոտաւէտ ծաղիկներու ծնունդ կուտար․ Երկրի օդ և կլիման լաւ էին և առողջարար, բայց ի տեղիս տեղիս խոնաւ և վատառողջ, երկիրներ կային որոց վրայ ինն ամիս շարունակ անձրեւ կըտեղար, և երեք ամիս սաստիկ չորութիւն կըտիրէր և շատ վնասներ տեղի կունենար․ Հարաւային Ամերիկայի Արեւմտեան կողմ գտնուող Պրազիլ այրեցեալ գօտիի տակ գտնուելուն համար խիստ տաք էր թէեւ անձրեւներ շատ կըտեղային, այն երկրի հողը խիստ բարեբեր էր․ Հարաւային ովկիանոսի մէջտեղ ցրուեալ Ովկիանիա անուն կրող կղզիները խիստ ընդարձակէին, իսկ բնակիչները վայրենի և սեւ ու չափազանց պակասամիտ և տգէտ էին, սորա հիւղերու մէջ կ՚բնակէին և որսորդութեամբ կապրէին․ Ցամերիկա մեր ըրած

ճամբորդութեանց մէջ տեսանք այն երկիրները որք եւրոպացւոց ձեռքն անցած և խիստ ճոխ և քաղաքակրթեալ էին. իսկ այն երկիրներ որք տակաւին բնիկներու ձեռքն էին , ամուլ յետադէմ և թշուառ կացութիւն մը ունէին , բնակիչք անճաշակ, անդէտ , անխորհուրդ և գրեթէ անասնական կենօք և կրիւք կ'ապրէին

Մեր ուղևորութիւն երկարայաւ դէպի Աւստրալիոյ կղզիներ , որոց ժողովրդեան կեանք խիստ ողորմելի է . Նոքա մեծ մասամբ իրենց մարմինը ազատ կը պահէին , դէմք և ձայներնին խիստ տձև էր , լեզունին անախորժ մերկ և թափառական կը շրջէին, ոչ ուսումն ունէին ոչ օրէնք և ոչ գիր , այր մարդիկ կիներէն աւելի բոժոժներով կ'զարդարուէին , բարկացած ժամանակ իրար կը մեռցնէին և իրենց թշնամւոյն միսը առանց եփելու կ'ուտէին , ոմանք իրենց մեռելները ծով կը նետէին , այլք իրենց մարմնոյ և թևոց վրայ կենդանակերպներ կը նկարէին , ասոնք գողութեան շատ հետամուտ էին , ոմանք տերևներով հիւսուած շալիկներ կը հագնէին , երկաթ գործածելու եղանակ չգիտնալով քարէ կացիններ կը գործածէին , ծառերու մէջ փորելով իբր նաւակ կը գործածէին , և ծովու ձուկեր կ'որսային : Ասոնցմէ ոմանք Արու և էգ Աստուածներ կայ կ'ըսէին , այր մարդիկ արու , իսկ կանայք էգ կը պաշտէին , ուրիշներ աներևոյթ Աստուած մը կայ կ'ըսէին և անոր երկրպագութիւն կ'ընէին , իրենց նուիրական տաճար մտած ժամանակ լաթերնին մինչև կէս մէջք կ'իջեցնէին իբրև պատկառանաց մեծարանք .

Մենք մեր պտոյտ կատարելով, կրկին կը պատրաստուէինք մեր տեղ վերադառնալ յանկարծակի մեր ծերունին սկսաւ խօսիլ հետևեալ եղանակաւ . Ամերիկայի վայրենի ժողովուրդ և երկիր խոր խաւարի մէջէն յանկարծ երկնային հրաշիւք մը տեսակ մը վիճակ ունեցաւ որու վրայ շատեր կ'զարմանան. վայրենին ընտանի եղաւ և երջանկացաւ . եթէ սոյն ժողովուրդ իւր նախնի խաւար վիճակի մէջ մնար և ուրիշներէն լոյս չառնէր և անոնց բարի օրինակին չհետևէր , եթէ իւր մէջ չար նախանձ և երկպառակութիւն սնուցանէր , եթէ մեղք և անգործ կեանք սիրէր , եթէ մշակութիւն աշխատութիւն և տնտեսագիտութիւն չունենար , և գիտութիւն ուսմունք ու արհեստ ու վաճառականութիւն արհամարհէր , եթէ ձեռագործներու զարգացման հոգ չտանէր և ար-

հետմեր օրըստօրէ չ՚կատարելագործէր, ճշմարիտ կ՚ըսեմ թէ այս ժողովուրդ Ափրիկէի ժողովրդէն աւելի յետադէմ և կոպիտ պիտի մնար ։ Սխալ է այն առարկութիւն թէ՝ օդ և կլիման մարդկանց մինն իմաստուն և միւսն տգէտ կընէ. եթէ այսպէս լինէր միևնոյն օդի և կլիմայի տակ ապրող վայրենի ժողովուրդ ինչպէս այլափոխելով ընտանի և քաղաքակիրթ դարձաւ և մարդու մը ամէն կատարելութիւնները ստացաւ, որովհետև օդէն և կլիմայէն աւելի աշխատութիւնն է՝ որ մարդկանց վիճակ կըփոխէ. Զ՚ուրացուիր օդի և կլիմայի մասնաւոր ներգործութիւն, բայց աշխատութիւն ամէն բանի կըյաղթէ ։ Զարմանալի էր այն երկրի դաշտերու վրայ սփռուած առատութիւն, պարզ ուրախութիւն, սիրտ կ՚սքանչանար նոցա բարեկարգութեան վրայ, աղքատն իր իրաւունք լիովին կըվայելէր, հարուստ կըքաջալերուէր ։ Արու և էգ զաւակաց դաստիարակութիւն հաւասարապէս կըմատակարարուէր, մատաղ զաւակաց անսանձ բաղձանքները ճնշելով ուղղութեան կապարի տակ կըդնէին ։ Արու զաւակաց հօր մը վերաբերեալ պարտք և իրաւունք ի մանուկ հասակի աննախանձաբար կուսուցանէին գործնական և գիտական եղանակներով. Օրիորդաց սիրտը կ՚ազնուացնէին միտք կըմշակէին և տընտեսագիտութեան դասեր կ՚աւանդէին և զայն ճշմարիտ մայր մը լինելու կ՚պատրաստէին ։ Կուսուցանէին նոքա փոքր զաւակները լինիլ համեստ և առաքինի պարկեշտ և երկիւղած, աշխատասէր և ուսումնասէր, կուսուցանէին լինիլ Աստուածասէր, ծնողասէր, եղբայրասէր, ընկերասէր և գործնական կերպով իրենց սիրոյ արդիւնք ցոյց տալ, կըսորվեցնէին մարդասիրութեամբ և գթութեամբ վարուիլ տկարներու և թշուառներու հետ ։ Այն ժողովուրդ կրօնի երկիւղածութեան հետ ունէր իր սրտի մէջ պատուասիրութեան զգացում և շատեր հաւատարիմ էին իրենց խոստման, ուղղութիւն զանոնք իրեն թևերու տակն առած կըպահպանէր առաքինական մէթոտներով.

Քաղաքներն մաքուր էին, հարուստ և մեծաշէն. շքեղ կառքերն երկաթուղիներու ընդարձակածաւալ ճանապարհներէն իրենց մագիլներու վրայ հոլովուելով արծւոյ պէս կըսաւառնէին կերթային և յանկարծակի աներևոյթ կըլինէին ։ Ամէն կարգի հսկայ գործարաններ արհեստներու զարգացում, ճոխ վաճառա-

կանութիւն , հասարակութեան ապահովութիւն իրենց փառաց կատարելութեան հասած էին , հրապարակները իրենց պարզ բայց մաքուր բարեձևութեամբ սրտեր կը հիացնէին . Նոքա իրենց օտարական հիւրերու հետ քաղցրութեամբ կը խօսէին . Նոցա երկիրներու վրայօք տեղեկութիւններ կուզէին , և նոցա կենցաղավարութիւն , վարուց և բնաւորութեանց վրայ հարցումներ կ'ուղղէին .

Նոքա մարդկանց կեանք ապահով , յաջող և ախորժելի ընող ամէն ուսմունք , գիտութիւն և արհեստ ունէին , գարուն պսակող ծաղիկներ իրենց անուշահոտութեամբ նոցա պտղաբեր դաշտերը անմահական կ'ընէին , ամառուան հեշտալի գիշերները իրենց զովարար հովերով զմարդիկ թմրեցնելով նոցա յոգնած մարմնոյն նոր զօրութիւններ կուտային . Երկնային ցօղը նոյն երկրի դաշտերու վրայ տարածելով կը զովացնէր և արգասաւորութեան նոր զօրութիւն կուտար , աշնան գեղատեսիլ և բարեհամ արմտիք և ամէն բարութիւններ մշակաց աշխատութիւն վարձատրելով անոնց համար ձմեռուան հանգիստ կը պատրաստէին , ասոնց գեղջկական կեանք պարզ էր . սիրուն և անմեղ սոքա խնամօք կը վարուէին իրենց ընտանի կենդանեաց հետ , կառնէին ոչխարի կաթ և բուրդ , բայց գալիք տարուան կաթ և բրդէն չ'զրկուելու համար իրենք զիրենք կ'զրկէին նոյն ոչխարի միսն ուտելէ , Նոքա առհասարակ ազատ էին բարիք գործելու , սակայն չարիք գործել ուզողներու թևեր կապուած էր արդար օրինաց անխզելի կապերով .

## ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

[illegible]

Մեր նաւ երբ սոյն երկիրներու եզերքէն կը հեռանար, թէ առագաստները բացուած յաջողակ հովերու դէմ և թէ շոգեշարժ մեքենաներն սկսան իրենց թևեր ջուրերու վրայ հոլովել և զանոնք ետ մղելով իրենց յառաջադիմութեան մղում տալ։

Ժամանակը գիշեր էր և լուսնոյ լոյսը ծովու վրայ սփռուած կ'տեսնուէր մեր ծերունին սկսաւ խօսիլ. Կ'ըսէր նա, աս աշխարհիս մէջ մարդիկ հանգիստ ապրելու համար միմեանց օգնելու մարդասիրական և ընկերական պարտք ունին, սակայն անկեղծ ընկեր գտնելն խիստ դժուարին է, մանաւանդ անոնց համար, որք միշտ կոյր են իրենց ընտրութեանց մէջ, անոնք որ իրենց գործակից և վստահակից ընկերներ ունենալ կուզեն՝ պէտք է որ զանոնք լաւ գիտեն և ճանաչեն ու ճանաչելու համար նոցա հետ ստէպ տեսակցին, խօսին և խօսեցնեն, խորհուրդ տան և խորհուրդ առնուն. փոքր հաշիւներու մէջ անոնց հաւատարմութեան աստիճանը իմանան. պակասութիւններ և կատարելութիւններ, բարք և բնաւորութիւններ, յատկութիւն և հանգամանքներ, մոլութիւն և առաքինութիւններ քննել և իմանալ հարկաւոր է։ Վասնզի մարդկանց հետ տեսնուիլ և խօսել անոնց հետ ընկերակցութիւն ունենալ մեծ դասեր են մարդ ճանաչելու և ըստ այնմ նոցա հետ ընկերական կապով կապուելու։ Ի՞նչպէս կարողեն մարդիկ իրենց գործակից ընկեր ընտրել այն մարդը զոր չեն ճանաչեր, ուրեմն ընտրելէն առաջ պէտք է նոցա սրտերը քննել, գործերն իմանալ. գաղտնեացը հետամուտ լինիլ, ճանաչել նոցա լաւ և յոռի ընթացքն, մտաւորական կարողութիւն և փորձառութեան աստիճանն և ապա կապուիլ նոցա հետ։

Մարդիկ առաքինութիւն բառը սուէպ կըյեղյեղեն և այս ձայնը գրեթէ ամէնուն ախորժելի կերևի . բայց երբ նորա նեղ դռներէն ներս կըմտնեն և դժուար գործառնութեանց կըհանդիպին , առանց նորա քաղցրութիւն ճաշակելու ետ կըդառնան ։ Ուղիղ դատաստան ընելու համար ճշմարտութեան հաստատուն սկզբունքներն ճանաչել պէտք է , այսպէս անխռով սիրտ և անվրդով միտք , և աւելի նորա կրնան ուղիղ դատաստան ընել՝ որոց որ բացատրուած է մարդկային կենաց վերջին վախճանն ։ Այն մարդիկ որ ուղղութեան ճանապարհէն կըխոտորին անոնք որ ճշմարտութենէն կըվրիպին . նոքա կ՚նմանին ղեկ կորսնցունող նաւերուն որք իրենց բաղդն խռովութեան ալիքներուն յանձնած կըծփան աշխարհի բազմադիմի ալէկոծութեանց մէջ , առանց գիտնալու թէ ո՞ւր է իրենց հանգիստն և խաղաղութիւն ։ Անոնք որ չեն գիտեր թէ ճշմարտութիւն և արդարութիւն ի՞նչ է նոքա նաև ! չեն գիտեր թէ առաքինութեան և մարդկութեան վախճանն ի՞նչ է իմաստուններն իրենց յոյսը առաքինութեան վրայ միայն կըհաստատեն հաւատալով թէ՝ նա միայն գիտէ յաւիտենական կենաց ուղիղ ճանապարհը ։

Մարդկանց պարտականութիւնն է սիրել իրենց նմանը և տեսակը . և անձնասիրութիւնն կըպահանջէ իրենք զիրենք եւ սիրել տալ՝ բայց իմաստունները միայն կըսիրեն և հոգ չէ որ չսիրուին ։ Կ՚ըսեն նորա . բարերարելը պարտք մի է , փոխարէն չառնալը բարերարութիւնը չարատաւորէր և արդէն այնպէս պէտք է որ լինի , բարերարութիւնը իւր վարձքը չունի , նորա ակնկալութիւն յերկինս է ։

Որչափ որ կարող ես բարերարէ , եթէ մարդիկ մոռանան Աստուած կըյիշէ . ներելու իրաւունք մը կայ որ յանցաւորներու համար կըգործածուի , որչափ որ հնար է մարդիկ պէտք է որ զայն ի գործ դնեն , վասնզի ամէնքն ալ նոյն բան կ՚ակնկալեն վերջի օրը անսահմանութենէն ։ Թշուառներ կան որոց սրտի մէջ ամէն բան կըմարի և կանհետանայ բայց յոյս մը կայ որ կենդանի կըմնայ , թշուառը այն յուսոյ թևերուն վրայ նստած շարունակ տիեզերաց վրայ կըսաւառնի , երբ հանգիստ չ՚գտնէ՝ ապաւէն նաւահանգիստ մը կայ որ ամէն մարդու կայանքն է , հոն կերթայ և ամէն թշուառութեանց վախճան տալով հանգիստ կընէ ։

Այս աշխարհի բարիքներ մէկ կողմէն զմարդիկ կըգրգռեն, միւս կողմէն զանոնք կըմատնեն. քիչերն են որ այն մասնութենէն ազատ կըմնան։ Բնութիւն այլերախտ է, միայն ներկային կընայի և անցեալը կ'մոռնայ, եկողները դէպի լոյս կըտանէ, գնացողները դէպի խոր մթութիւն, երիտասարդները դէպի ուրախութիւն. Ծերերը դէպի գերեզման կըմղէ, հոն ամէն բան կըվերջանայ, վանդի մեռելոց վրայ հսկող չ'կայ։ Հոն յուսահատութեան վայր մը պիտի գտնար եթէ երկնային մխիթարութիւն մի զիրենք չ'սփոփէր։

Մարդկանց սկզբնական նիւթն է իսկ վերջակէտն հողին։ Անարդար բաշխումէն առաջ եկաւ մէկ կողմի աղքատին փարթամութիւնն միւս կողմի անհանդուրժելի թշուառութիւնն, այս է մարդկանց խաղաղութիւնն վրդովող ժանտախտն, հարուստը քաջալերելու է' սակայն աղքատն ալ ոտնահարելու չէ այլ պաշտպանելու է. վարձը ոչ թէ մարդոյն, այլ մարդու աշխատութեան արդար բաշխումը տալն է։ Տգիտութիւնն կընմանի այն ջահերուն որ հովերէն շարժելով իւր լոյսը կայլայլի և ընթերցողաց ուղիղ ընթերցման խանգարում կըպատճառէ, բայց երբ հովերը կըհանդարտին, ջահը կ'սկսի հանդարտ վառիլ և մարդկանց աչքի առաջէն այն ստուերամած շարժումներ կ'անհետանան, յետ այնորիկ յայտնապէս կըկարդացուի անթերի խաղաղութիւն, քաղցր եղբայրսիրութիւն, մարդասիրութիւն և մաքուր խղճի ազատութիւն, մտաց անդորրութիւն։

Մանուկը կ'զգայ ինչ որ մեծ է, սակայն չ'զգար ինչ որ բարի է և վայելուչ, ասոնք իրենց ժպիտներու պահապան պաշտպաններն ունին և կ'արգիլեն ուղիղ տեսնել։ Այս տեսակները իրենց ձեռքի սրով աւելի իրենց խանձարուրը կըվիրաւորեն քան թէ թշնամին, իսկ իմաստունները ուրիշներու խորհուրդ կառնեն, նոցա ձայն կըլսեն, կարծիքներ կըյարգեն, բայց իրենք խորհուրդներով ամէնքը կըգերազանցեն, նոքա ստեղծելու մէջ մեծ կարողութիւն ունին, իրենց թափանցիկ տեսութեամբ կըշօշափեն մարդկանց գաղտնի միտումները, թաքուն խորհուրդները, հանճարը, կիրքերը, ներքին իղձերը, հոգւոյն թաքուն և անյայտ յուզումները, խղճի աներևոյթ հոսանքն։ Ասոնք կըկառավարեն առանց իշխելու, կ'ուղղեն առանց պատժելու, ասոնք երիտա-

սարդութեան մէջ գեղեցիկ, ծերութեան մէջ շնորհալի և ամենուն հաճելի կըհանդիպիմ՝ ազնուութեան և քաղաքավարութեան խառնուրդ մը կըտեսնուի անոնց վեհ դէմքի վրայ, անոնք հասարակաց հայր կըհամարուին քան թէ իշխան ։ Բարկացողներ կան՝ որք ինչպէս իրենց լուրջ ժամանակի մէջ մտքով և հասուն խորհրդով կըշինեն՝ նոյն իրենց բարկութեան ժամանակի մէջ ձեռքով կըքանդեն ։ Երկիրս ահագին ապշութիւն մի է, խիստ շատ իրեր կան որք դէպքերու բացարձակ անստուգութեան և անթափանցելի մշուշներու մէջ քօղարկուած կըտատանին և մարդկանց աչքին չեն տեսնուիր, նոքա յանկարծական ժամանակի մը մէջ բորբոքեալ երևան կուգան, ոմանք կ'ուրախացնեն և ոմանք կըտրտմեցնեն ։ Ուրեմն մարդկանց պարտք մը կայ կատարելու, այն է՝ բարերարել միշտ, և այն ոչ թէ իրենց սիրոյն համար այլ Աստուծոյ կամք կատարելու համար ։ Իմաստունները ամէն աւելորդ խօսքերու դէմ իրենց շրթունքները կըփակեն, որպէս զի իրենց սրտի խորերէն ազնիւ և փառաւոր խօսք մի դուրս ելլէ ։ Տկարամիտները անստուգութեան և թշուառութեան մէջ կըթափառին, առանց աշխատութեան բարին կըյուսան և այն յուսացեալ բարիքները թեթև երազներու պէս կուգան սոցա աչքին կ'երևնան և կրկին կ'անհետանան ։

Ծերունին սոյն խօսքերէն վերջ ինձ դառնալով ըսաւ, բարեկամ, ինձ հետ ընկերանալէդ ի վեր շատ բաներ տեսար և լսեցիր, տեսար ամենաբարձր, հաստատ և անհաստատ տեղեր, երկնային հրաշքներ և սքանչելիքներ, երկրի վրայ մարդկանց գործեր, ալէկոծութիւններ և անոնց վտանգներ, անծանօթ երկիրներ. տեսար թշուառներ և կրեցիր թշուառութիւններ, բանտեր, չարիքներ ու բարիքներ. դու տեսար այն ամէն բաները որք մարդուս սիրտ կըկրթեն և մեծամեծ գործնական դասեր կըլինին, զգալի փորձերով ցոյց տուի քեզ ճշմարտութեան և ստութեան, արդարութեան և անիրաւութեան, հաւատարմութեան և անհաւատարմութեան, կարեկցութեան և մարդասիրութեան սկզբունքները ։ Պէտք է որ գիտնաս թէ՝ մարդիկ իրենց հմտութիւնն աւելցնելու համար շատերուն լսելու են և քիչերուն հաւատալու են, թէ հեռատես լինին և թէ իրենց գործերու հետևանաց վրայ նախատես, զգուշանալ և զգուշացնել

պէտք է զմարդիկ ամէն վնասակար և վտանգաւոր գործերէ ։ խորշիլ պէտք է անձնահաճ հպարտութենէ որ զմարդիկ մինչև ի գերեզման կը հալածէ և անհանգիստ կ՚ընէ ։ Հպարտութիւն մարդկանց ազգային յօժարութիւն կը գրգռէ , ընչին պատճառ-ներով մեծամեծ վնասներ կը պատճառէ , հանճարը կընսեմացնէ , մարդիկ անհաստատութեան մէջ դնելով զանոնք կ՚ալէկոծէ ։ Մարդկանց հանգստութիւն տուողը Աստուածային երկիւղածու-թիւնն է . մարդկանց սրտի հանդարտութիւնը անոր մէջ կը կա-յանայ , զի մարդկանց վերջին յոյսը անոր վրայ հաստատուած է , քաղցր ուրախութիւն , անմեղ զուարճութիւն , ճշմարիտ ազատութիւն , մաքուր կեանք , անարատ փառք Աստուծոյ եր-կիւղածներն միայն կրնան ձեռք բերել ։ Մարդկանց պարտքն է ունենալ անարատ վարք . ողջախոհ կեանք , բարի գործ , Աս-տուածասիրութիւն , ծնողասիրութիւն , մարդասիրութիւն ։ Ասոնք զմարդն թէ Աստուծոյ հաճելի կ՚ընեն և թէ ի պատուի կը պա-հեն ։ Որբերն և այրիները զրկողները զԱստուած կը բարկացնեն , իսկ աղքատաց և թշուառաց ողորմութիւն ընողները և անոնց գթութեան աչքով նայողները Աստուծոյ օրհնութեանց կ՚արժա-նանան ։ Սուտ համբաւոյն ետևէն գնացողները հողմ կարածեն , չարեաց ետևէն գնացողները մահուան տեղէն կը բռնուին ։ Անոնք որ ուրիշներու իրաւունք կը բռնաբարեն՝ նոքա արդարութիւն սահման կոխոտող անիրաւագործներ են ։ Անոնք որ ուղիղ դատաս-տան չեն տեսներ , արդարութեան դաւաճաններն են ։ Անոնք որ ուղղութիւն թողած ստութեան ետևէն կերթան , նոքա լոյսէն խոյս տուող գիշերայէն ջղջիկներն են՝ որք խաւարի մէջ թա-փառելով կը զրկուին Աստուծոյ այցելութենէն ։ Աստուծոյ կա-մաց հակառակողներու բաժինը մահ է և վարձը խղճի խայթ ։ Անոնք որ իմաստութիւն կըմերժեն՝ նոքա ալէկոծեալ և նաւա-հանգիստ չ՚տեսնող էակներ են ։

Աստուած երկնից բարձրութենէն իր ամենատես աչքով կը-դիտէ զմարդիկ և նոցա գործեր , նորա թափանցողական աչք անտառներու խորեր , լերանց խորշեր , ծովերու յատակ , դաշ-տերու երես , գեղերու և քաղաքներու մէջ , սրտերու և խոր-հուրդներու մէջ եղածները կը քննէ , կը տեսնէ , կը դատէ , կը-պատժէ , և կը վարձատրէ ։ Այս աշխարհն եւ իր դժոխքն է

արքայութիւնն ունի , խռովեալ սրտեր մէկ մէկ դժոխքեն իսկ խաղաղ սրտեր՝ արքայութիւններ են ։

Ծերունին սոյն յորդորական խրատներն աւարտելէն վերջ երկար ժամանակ լռութիւն պահեց , ինք իր մէջ զբաղեալ կըտեսնուէր խոր մտածմունքներու մէջ ընկղմած , երբեմն անիմանալի խօսքեր կըսահէին նորա շրթունքներէն , մեր նաւն ալ ուրախ զուարթ իր ճանապարհ շարունակելով զմեզ կրկին Ասիոյ այն նաւահանգիստն բերաւ ուրկէ որ առաջին անգամ նաւ մտած էինք ։ Մենք ցամաքային տաժանելի ճանապարհորդութիւն մը ընելով գնացինք այն անտառը մտանք , ուր որ երբեմն թշուառի մը հառաչանքները լսած և տեսած էինք , որը երեկոյ էր և մենք հարկադրեալ էինք այն գիշերը հոն անցընել ։ Նոյն գիշեր մեր ծերունւոյն վրայ սրտի տագնապ և ալէկոծութիւն կըտեսնուէր , յոգնած մարդու մը պէս քրտունքներ կըհոսէին նորա երեսէն ։ Բարձր ծառի մը տակ նստած լուսնոյ աղօտ լուսով կըլուսաւորուէինք , կրկին սկսաւ խօսիլ մեր ծերունին այսպէս ։

Այս աշխարհ տակաւին տղայ է և կաթի պէտք ունի քան թէ հաստատուն կերակուրի , ասոր միտքն մշակելու և զարգացնելու մեծ պէտք կայ , այս աշխարհ տակաւին իրականութիւնն չէ կարողացած ըմբռնել , այլ ստուերի մէջ է և անոր շուրջ կըթափառի , արդարութիւն և ճշմարտութիւն տակաւին ճնշման ներքև են ։ Մարդկանց մեծ մասը թշուառ և ողորմելի կենօք կապրի , տակաւին սրտեր չեն ազնուացած որ կարողանան ճշմարտութեան լոյսը իրենց մէջ ընդունիլ , սրտերու շատերն մշուշներով պատուած են և մութեր ցնորքներով լեցուած , չկայ հասուն խորհուրդ և ոչ ուղիղ դատում ։ Ըստ ինձ , անկեղծ խօսելու մէջ վտանգ չկայ , դու ինձ ընկերանալով՝ թէպէտ արկածներու մէջ վիշտ և նեղութիւն կրեցիր , սակայն մեծ բաներ ես շահեցար և ամենէն մեծ շահդ է փորձառութիւն ։

Դու սիրտդ առաքինութեամբ կրթեցիր թշուառութիւններ կրելով և տեսնելով ամէն թշուառաց կարեկից լինելու մեծ դասը սորվեցար , ձախորդութեան դէմ տոկալ և համբերել , մարդկանց հետ սիրով և խաղաղութեամբ վարուիլ , և խռովութեանց և աղմուկներու մէջ անվրդով մնալ , չարութեանց դէմ բարիք փոխարինել , ասոնց ամէնքը սորվեցար քու ուղևորութեանդ

մէջ, դու սորվեցար մերժել յաջողութեանց մէջ ծայրայեղ հպարտութիւն, ձախողութեանց մէջ յուսահատ լքում. Նաև վարժուեցար զգաստ, չափաւոր, պարզ և անմեղ կենօք ապրելու եղանակն, սորվեցար ձեռքի աշխատութեամբ ապրիլ, սորվեցար կրից կատաղի յուզումներ և ալէկոծութիւններ համբերութեամբ սանձահարել։ Մինչ նա այս խօսքեր կըխօսէր, իմ սիրտս սաստիկ յուզուելով արտասուքներս սկսան այտերէս վար սահիլ, սրտիս այլայլութիւնէն այլագունեցայ, այն այլայլութիւն թացուն պահելու համար երեսս մէկ կողմ կըդարձընէի, սակայն միթէ կարելի՞ էր իմ ներքին յուզումներս ծածկել այն զօրաւոր աչքէն որ անընդհատ վրաս կընայէր ու ամէն գաղտնեացս խորը թափանցելով յղացեալ խորհուրդներս կընշմարէր։ Ըսաւ նա. մի՛ ծածկեր զգացումներդ զի այդ անկեղծ սրտի և սիրոյ հաւատարիմ նշան մի է, զոր սիրտդ կ'զգայ և դէմքդ ցոյց կուտայ։ Մեր բարեկամութիւն որ առաքինութեան վրայ հաստատուած է՝ թող անքակտելի մնայ, եթէ Անմահին կամքն չ'հաճի կրկին այս հողագնտիս վրայ տեսակցիլ, թող զմեզ միացնէ յաւիտենական անմահութեան մէջ ուր որ ամէն անմեղներու հոգիներ անբաժանելի սիրով կըմիանան միմեանց հետ։ Նոյն միջոցին ինչպէս որ քնոյ շողին ախորժելի կերպով կիջնէ վաստակաբեկ մարդկանց ծանրացած աչաց և յոգնած մարմնոյ վրայ այսպէս նորա վեհ և անմահական խօսքերն մագնիսական զօրութեամբ կերթային սրտիս վրայ խոր տպաւորութիւն կընէին և յանկարծակի թմրութենէ արթնցած մարդու մը պէս՝ աչքիս ամէն բան տարբեր կերպով կ'երևէր, բոլոր անձս խռովութեան մէջ կըծփար, ձեռքերս դէպի երկինք տարածելով այլայլեալ ձայնով պաղատախառն արտասուքներով հանդարտութիւն կըհայցէի։

Սոյն միջոցին ծերունոյն կերպարանք և վեհ դէմք խիստ շնորհալի կերևէր, մօտէն նայողը նորա դէմքի վրայ իմաստութիւն և առաքինութիւն կըտեսնէր հանդերձ սքանչելի աղուապետութեամբ. անոր շնորհալի երեսէն բղխած լուսոյ ճառագայթները անհամեմատ կերպով գերազանց էին քան որ ուրիշ մարդոց վրայ տեսնուած են. վասնզի անոր վրայ շնորհք, ողորմութիւն, մարդասիրութիւն, կարեկցութիւն, գութ, ուրախութիւն, զուարթութիւն, կեանք, փառք և անմահութիւն, սէր

և մշտնջենաւոր երջանկութիւն կըտեսնուէր ։ Ըստ նա , ժամանակն հասաւ , որչափ որ ուշանամ այնչափ դժուարին կըլլնի մեր բաժանումն ։ Ըսի իրեն. ծերունի հայր, դուք իբրև երկնային էակ մը մարդկանց սիրտ հրահանգելու համար երկրի վրայ երևցաք , բայց իմ սիրտս տրտմութեամբ լեցնելով կերևի թէ բաժնուիլ կուզէք ։

Ըստ նա , այս աշխարհ Ովկիանոսի կոհակներէն աւելի աղմկալի է . ջնջին բաներով կըյուզուի և երկար ժամանակ հանգարտութիւն չ'գտներ , մարդիկ միշտ իրարու կ'ընդհարին և վառած մոմերու պէս կըհալին և կ'սպառին , այս աշխարհ հալոց մի է , որու մէջ գաղափարներ կըհալուին և կըձուլուին և ձևեր կառնուն . սակայն քիչ մը վերջ կրկին կըլուծուին և յօդս կըցնդին , մարդկանց կարծիքները մեծ մասամբ աշխարհ յուզելու կըծառայեն քանթէ հանդարտեցնելու , պէտք է որ բաժնուիմ, ինչոր պէտք է խօսիլ ամէնքն ալ խօսեցայ և իմ պաշտօնս կատարեցի ։ Ցաւելցուց ըսել. ինչու մարդիկ կոշտ մը հողի և քանի մը կտոր ժուփի խոտի տերևներու վրայ այս աստիճան կըյուզուին և կըպատերազմին ։ Միթէ Ստեղծիչը կարող չէ ամէն մարդու պիտոյքն հոգալ, ինչու չափէն աւելի նշանակութիւն կուտան այն բաներուն որք հողերով տանջանքներով և թշուառութիւններով լի են , այն բաները զորս մարդիկ հազարաւոր հնարքներով և մեղքերով ձեռք կըբերեն , որոցմով երջանիկ լինիլ կերազեն սնոտի ամէնքն ալ միտք և սիրտ կըծող և մաշեցնող ցեցեր են ։ Մինչ նա այս խօսքերը կըխօսէր, արշալոյսը առաւօտ կ'աւետէր , արեգական ճառագայթներու նախանձաւոր աստղները արշալուսի լոյսէն հալածուելով կերթային Արևմտեան աղօտ լոյսերու մէջ թաղուելու ։

Վրաս թմրութիւն մը տիրեց , պահ մը վերջ երբ սթափելով աչքս բացի այլևս իմ պատկառելի ծերունի ընկերս չ'տեսայ , չ'գիտեմ արդեօք Ենովն էր անիկա որ ամպոց թևերու վրայ նստելով կրկին երկինք գնաց թէ ուրիշ մը էր . սակայն այս գիտեմ թէ նա Աստուծոյ իմաստութենէն օժանդակուած մարդկային ընկերութեան բարերարներէն մէկն էր որ Սիրաքայ ձեռքէն յանկարծակի յափշտակուեցաւ ։

Վ. Ե Ր Ջ.



# ՑԱՆԿ ԳՐՈՑ


## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

[illegible] ․․․․․․․․․․․․․․ 5

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

[illegible] ․․․․․․․․․ 17

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

[illegible] ․․․․․․․․․․․․․․․․․․․․․․․․․ 21

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

[illegible] ․․․․․․․․․․․․․․․․․․․․․ 37

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

[illegible] ․․․․․․․․․․․․․․․․․․․․․․․ 44

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

[illegible] ..... 53

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

[illegible] ..... 64

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

[illegible] ..... 84

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

[illegible] ..... 95

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ..... 108

ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

[illegible] ..... 118

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

[illegible] ..... 129

ԳԻՐՔ ԵՐԵՔՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 137

ԳԻՐՔ ՉՈՐԵՔՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 148

ԳԻՐՔ ՀՆԳԵՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 156

ԳԻՐՔ ՎԵՇՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 164

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ 176

ԳԻՐՔ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ... 186

ԳԻՐՔ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] ... 196

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

[illegible] ... 212

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ

[illegible] ... 217

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

[illegible] ... 224

[illegible] ԳՐԱԴԱՐԱՆ [illegible]